ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-3

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-3

YEREVAN
IAE PUBLICATION 2019

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-3

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 902:391/395
ԳՄԴ 63.4:63.5
Հ 720

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Պավել Ավետիսյան (գլխավոր խմբագիր), Լևոն Աբրահամյան, Գրիգոր Արեշյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Տորք Դալալյան (պատասխանատու խմբագիր), Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Թամար Հայրապետյան, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի

Editorial Board
Pavel Avetisyan (editor-in-chief), Levon Abrahamyan, Gregory Areshyan, Ruben Badalyan, Peter Cowe, Tork Dalalyan (associate editor), Patrick Donabédian, Mihran Galsyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Редакционная коллегия
Павел Аветисян (главный редактор), Левон Абрамян, Тамар Айрапетян, Григорий Арешян, Рубен Бадалян, Мигран Галстян, Торк Далалян (ответственный редактор), Патрик Донабедян, Петер Кауи, Тео ван Линт, Арутюн Марутян, Армен Петросян, Гамлет Петросян, Гагик Саргсян, Адам Смит, Джусто Траина, Лори Хачадурян

Համարի խմբագիրներ՝
Տորք Դալալյան, Ռոման Հովսեփյան, Աստղիկ Բաբաջանյան

Volume editors:
Tork Dalalyan, Roman Hovsepyan, Astghik Babajanyan

Редакторы выпуска:
Торк Далалян, Роман Овсепян, Астхик Бабаджанян

Հ 720 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 3: / ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգագր. ինստ.: Խմբ. Տ. Դալալյան, Ռ. Հովսեփյան, Ա. Բաբաջանյան, – Եր., ՀԱԻ հրատ., 2019. – 252 էջ: (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 3):

ՀԱԻԱ մատենաշարի հերթական՝ 3-րդ հատորն ընդգրկում է երիտասարդ և փորձառու հետազոտողների հոդվածներ, որոնք վերաբերում են վաղ և միջնադարյան հնագիտությանը, ավանդական ծեսին, բանարվեստին ու աշխարհայացքային ընկալումներին, խորհրդային և ետխորհրդային շրջանի մարդաբանությանն ու մշակութաբանությանը, ինչպես նաև արդի աշխարհաքաղաքական խնդիրներին: Ժողովածուն օգտակար կարող է լինել Հայաստանի և հարակից երկրների պատմությամբ, մշակույթով ու քաղաքագիտությամբ զբաղվող հետազոտողների, ինչպես նաև հայագիտության ամենալայն ու բազմազան խնդիրներով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 902:391/395
ԳՄԴ 63.4:63.5

ISBN 978-9939-9178-9-4

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՆՐՈՒՅԹՆԵՐ

Ա. Ա. Բորոիյան
Վիշապ կոթողներն՝ ըստ Ատրպետի արխիվային նյութերի 8

Մ. Մ. Շահմուրադյան
«Անապատի օդապարուկների» կառուցվածքի և ձևերի քննություն 21

Ա. Կ. Ջուհարյան
Վանակատի հումքի օգտահանման սկզբունքները
բրոնզի դարում՝ ըստ ՀՀ տարածքից գտնված նմուշների
PXRF վերլուծության տվյալների 36

Տ. Է. Հարությունյան
Քարաշամբի հնավայրի նորահայտ շքասեղների
ժամանակագրությունը և տիպաբանությունը 47

Բ. Վ. Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանային
համալիրների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության
խնդիրներն՝ ըստ Լճաշենի տվյալների (մ. թ. ա. 16–13-րդ դդ.) 65

Ռ. Ա. Հովսեփյան
Բուսական մնացորդներ Մաստարա–3 հնավայրի
անտիկ դարաշրջանի կարասային թաղումներից 79

ՄԻՋՆԱԴԱՐ

Տ. Մ. Դալալյան
Դիտարկումներ՝ 13-րդ դարում երաժշտական գործիքներին
առնչվող աշխարհայացքային ընկալումների վերաբերյալ 92

Դ. Հ. Միրիջանյան. Մ. Հ. Աղայան
Դիտարկումներ Գնթունյաց իշխանների տիրույթների մասին՝
ըստ արձանագիր և մատենագիր աղբյուրների 106

Ա. Լ. Գրիգորյան
Սոթք–1 ամրոցը և Դվին-Պարտավ
առևտրական ճանապարհի սոթքյան հատվածը 117

Ա. Ա. Բաբաջանյան, Ք. Ջ. Ֆրանկլին
Միջնադարյան մշակութային լանդշաֆտը Վայոց ձորում՝
Մետաքսի ճանապարհի համակարգում 125

Ա. Ա. Մարտիրոսյան
Դաշտադեմի ամրոցի 2015 թվականի պեղումներով
հայտնաբերված կենցաղային քարե առարկաների
տնտեսական բաղադրիչի շուրջ 137

Ե. Ե. Վասիլևա
Եկեղեցիների տապանաքակերի և վանական գերեզմանատների
հնագիտական ուսումնասիրությունն արդի Ռուսաստանում 148

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍ ԵՒ ԲԱՆԱՐՎԵՍՏ

Ն. Խ. Վարդանյան
«Թագվորի՛ մեր, դու՛րս արի» հարսանեկան կատակերգի հորինվածքը
և գործառնականությունը ծեսում 160

Ն. Յ. Խաչատուրեան
Երաժշտաբանահիւսական տարբեր ժանրերի փոխազդեցութիւնն
ու փոխներթափանցումը հայ ժողովրդական օրօրներում 173

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՒ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ
ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. Միքայելյան
Բանտի մշակութային մարդաբանությունն՝
ըստ Փարաջանովի ստեղծագործությունների 186

Հ. Մ. Մուրադյան
Մշակույթի տները խորհրդային և ետխորհրդային
Հայաստանում. ժառանգականությունը, գործառութային
և իմաստային փոխակերպումները 194

Ա. Ն. Նալբանդյան
Թուրքիայի մշակութային քաղաքականությունը Վրաստանում 204

ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Գ. Անդրիկյան
Կ. Պոլսի պատրիարքարանի ներկայիս իրավիճակը 215

Հեղինակների մասին 224

I

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՆՐՈՒՅԹՆԵՐ

Արսեն Բորոիյան, *պ. գ. թ.*
ՀԱԻ, ԵՊՀ

ՎԻՇԱՊ ԿՈԹՈՂՆԵՐՆ՝ ԸՍՏ ԱՏՐՊԵՏԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

150–550 սմ բարձրությամբ՝ ձկնակերպ, ցլակերպ և ձկնացլակերպ քարե այս հուշարձաններն ի հայտ են գալիս բարձրալեռնային (մոտ 2400–3200 մ), ավելի քիչ՝ նախալեռնային (մոտ 1400–2400 մ) գոտիներում և առայժմ թվագրվում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջերից մինչև 1-ին հազարամյակի սկզբները: Վիշապ կոթողների մասին առաջին անգամ տեղեկություն հաղորդած հեղինակներից է արձակագիր, հանրային գործիչ Ատրպետը: Գեղարվեստական գործերից բացի՝ նա հեղինակ է նաև գիտական ոճի աշխատանքների, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության և հնագիտության զանազան խնդիրների: Ատրպետը հիշատակում է վիշապ կոթողների կուտակումներ պատմական Հայաստանի տարբեր շրջաններում: Ըստ նրա տվյալների՝ վիշապներն ի հայտ են գալիս ինչպես «միայնակ» (եզակի), այնպես էլ զույգերով և խմբերով. խոսքն, ընդհանուր առմամբ, մոտ 50–60 առանձին կոթողների մասին է, որոնք գտնվում են Ծաղկավետ, Քառասնից, Բյուրակնյան, Մեծրանց, Հայկական Պար, Արագած, Գեղամա և Վարդենիսի լեռնահամակարգերում, հիմնականում՝ այդ լեռներից սկիզբ առնող գետերի (Արաքս, Արածանի, Կուր, Ձորոխ) ակունքների մոտ, ինչպես և լճերի առկայությամբ բնորոշվող սարահարթերում: Ներկա հոդվածում առաջին անգամ հետազոտվում և դասակարգվում են Ատրպետի՝ վիշապ կոթողներին առնչվող արխիվային նյութերը:

Հիմնաբառեր՝ Ատրպետ, վիշապ կոթողներ, ուսումնասիրության պատմություն, տարածույթ, լանդշաֆտ, հնագիտական համատեքստ:

Ներածություն

Գրող և ճանապարհորդ Ատրպետը (Սարգիս Մկրտչի Մուբայաջյան. 1860, Կարս –1937, Գյումրի) 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ իրականության նշանավոր դեմքերից է: Նրա թողած տպագիր և անտիպ ճանապարհորդական նոթերը և դրանց հիման վրա գրած աշխատանքները կարևոր տեղեկություններ են հայտնում Հայաստանի և հարակից շրջանների հնությունների վերաբերյալ:

Ատրպետի բազմաթիվ աշխատանքներ, սակայն, մնում են չհրատարակված: Գրողի հիմնական ժառանգությունը պահպանվում է երկու հաստատություններում՝ Գրականության և արվեստի թանգարանում (մեծ մասը) և Հայաստանի պատմության թանգարանում (փոքր մասը): Բացի այդ, որոշ գրու-

թյուններ առկա են նաև Հայաստանի Ազգային արխիվում: Ներկա հոդվածը, հենվելով հիմնականում Ատրպետի արխիվային նյութերի վրա, փորձ է կատարում անդրադառնալու հնագույն Հայաստանի կարևոր մշակութային մի երևույթի՝ վիշապ կոթողներին: Ատրպետի տեղեկությունները բացառիկ են նրանով, որ պարունակում են մեկդարյա վաղեմություն ունեցող տվյալներ, որոնց մեծ մասը հիմնականում անհայտ է այսօրվա գիտական աշխարհին:

Ատրպետը վիշապ կոթողներն ուսումնասիրել է հիմնականում 1880–1915 թթ.: Բյուրակնի և Տայքի վիշապաքարերը նա տեսել է 1880-ականներին: Առաջին վիշապն Արագածի վրա հայտնաբերել է 1885-ին: Գեղամա լեռներում եղել է 1906–1907 թթ., 1909 թ. ուսումնասիրել է Վարդենիսի լեռների վիշապները, իսկ Շիրակի կողմերում աշխատել է հատկապես 1909–1915 թթ.[1]:

Վիշապների մասին տեղեկությունները

Ատրպետը քննարկվող կոթողները կոչում է *վիշապ*, *վիշապական արձան/կոթող*, *վիշապ կոթող*, *վիշապային կոթող*, *վիշապի արձան*, *Անահիտի կոթող*[2]:

Մեր վերակազմությամբ՝ Ատրպետն իր անտիպ և տպագիր աշխատանքներում հիշում է 31 միավոր վիշապ կոթողներ, որոնցից յոթը՝ Տայքում (№№1–7), մեկը՝ Գուգարքում (№8), տասնհինգը՝ Այրարատում (№№9–23), երեքը՝ Տուրուբերանում (№№24–26), հինգը՝ Սյունիքում (№№27–31): Քանի որ կոթողների նկարագրական մանրամասները հիմնականում բացակայում են, ապա «միավորի» տակ հասկանում ենք հիշատակման բոլոր տեսակները՝ կոնկրետ և անորոշ, եզակի, զույգով և խմբային [տե՛ս աղ.1]: Այս իմաստով չի բացառվում, որ այդ միավորներից որոշները համընկնեն, մյուսները՝ ենթադրեն նոր ենթաբաժանումներ: Սակայն այդ տատանումները էական չեն: Խոսքը մոտ 50–60 և ավելի՝ առանձին կոթողների մասին է:

Վիշապ կոթողներն, ըստ Ատրպետի, շինված են գլանաձև (№1–Ոլուխլի, №2–Ջիարեթ, №4–Հովտակ), տաշման, ողորկման, հղկման մեթոդով (№2–Ջիարեթ, №3–Սրբահան)[3]: Քառակուսի ձևով պատրաստված և վեղարի գլխով կոթողները (№19–Մեծրանց, №20–Սարիղամիշ) հիշեցնում են վիշապանման մենհիրներ. դրանք, որպես կանոն, սրանում են վերնամասում: Կոթողները որձաքարից են (№2–Ջիարեթ, №3–Սրբահան, №4–Հովտակ, №9–Ամբրոյի լիճ), բազալտից (№9–Ամբրոյի լիճ, №24–Սրբահան), կամ բազալտից ու գրանիտից (№1–Ոլուխլի):

Ընդհանուր առմամբ, վիշապները «վիթխարի», «շատ մեծ» հուշարձաններ են (№3–Սրբահան, №9–Ամբրոյի լիճ): Առկա են համեմատաբար փոքրերը՝ մոտ 3 մ (№16–Սառնաղբյուր, №8–Փարվանա) կամ 3–4 մ[4] , և դրանցից ավելի

1 Տե՛ս Ատրպետ 1912գ, 5; 1913, 168; 1929, 54–59:

2 ԱԱ 182, 1927, էջ 4; հմմտ. ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ.1; Ատրպետ 1931, 316–317:

3 Հմմտ. Ատրպետ 1929, 162–163:

4 ԳԱԹ Ատրպետ 39, թ.58:

մեծերը (№1–Ոլուխլի, №10–Արքաշեն, №17–Տիգնիս, №27–Սանդուխտասար, №30–Մաքենյաց), որոնք կարող են հասնել մինչև 5–7 մ (№2–Ջիարեթ):

Տայքի կոթողների մասին իմանում ենք, որ դրանց վրա քանդակված են օձի, մողեսի, եզի, գոմեշի, առյուծի և այլ կենդանիների պատկերներ, գլուխներ (№2–Ջիարեթ): Գառնի-Գեղարդից անդին՝ Գեղամա լեռների կոթողներն ավելի ճոխ են՝ գեղեցիկ քանդակներով, ունեն սլաքների պատկերներ (№10–Արքաշեն): Ատրպետը շեշտում է, որ դրանք ձկնանման են. մի գծապատկերում տեսնում ենք ընդհանուր ձկնակերպությունը և ցլան, առյուծի, օձի պատկերները՝ կոթողի գլխամասում, ինչպես նաև թռչնապատկերը՝ միջնամասում[5]:

Ատրպետի աշխատանքները վերլուծելիս՝ հանգում ենք այն եզրակացության, որ նա տարբերակում է միայն ձկնակերպ վիշապներ. ցլակերպի և ձկնացլակերպի մասին չի խոսում, կամ ցլան մասին խոսում է որպես վիշապ կոթողի պատկերի՝ և ոչ ձևի:

Ատրպետի ուսումնասիրած վիշապներից ութ միավոր նրա օրերում կանգուն են եղել (№2–Ջիարեթ, №8–Փարվանա, №16–Սառնաղբյուր, №17–Տիգնիս, №18–Թիքմա, №24–Սրբահան, №29–Ալլիճ, №30–Մաքենյաց), մնացածը՝ ընկած: Ատրպետը, սակայն, համոզված է, որ ժամանակին դրանք բոլորն էլ կանգնած պիտի լինեին, ընդ որում, որպես կանոն՝ լճակի ափերին, ջրերի/ավազանի մեջ, գլուխը «դեպի երկինք ուղղված»[6]: Այն հարցին, թե ինչու՞ են ձկան արձանները ուղղաձիգ, պոչի վրա կանգնեցրել, չէ՞ որ ձկները հորիզոնական ուղղությամբ են լողում ջրի մեջ, Ատրպետը պատասխանում է, որ դրանք ինչ դիրքով որ երևացել են ժողովրդին դարերի ընթացքում, կամ թե նրանց ինչպես որ երևակայել են քրմերը, այնպես էլ արձանագրել են քանդակագործները[7]:

Կարելի է ենթադրել, որ Ատրպետի ժամանակներում վիշապները եղել են իրենց նախնական տեղերում, մեծ մասամբ՝ ընկած վիճակում: Երկուսը դիտավորյալ կոտրվել են (№9–Ամբրոյի լիճ), մի քանիսից էլ հեղինակը հիշատակում է միայն բեկորներ (№17–Տիգնիս): Որոշ վիշապ կոթողներ էլ տեղափոխվել են Կարսի այգի (№20–Մեծրանց, №21–Սարիղամիշ):

Ատրպետը չի խոսում այն մասին, թե ուրիշ ինչ հնագիտական հուշարձաններ կան վիշապների անմիջական շրջակայքում: Մի առիթով գրում է, թե արձանները ծածկույթ չունեին, նրանց պաշտամունքը բացօդյա էր[8]: Մեկ այլ տեղ, վիշապները ներկայացնելիս, նշում է, թե նրանք «1½ մինչև երկու մետր շրջապատով» են[9]:

Ատրպետը նշում է, որ վիշապները հիմնականում գտնվում են լեռնային գոտիներում՝ սարահարթերում, գետերի ակունքների, լճերի շրջակայքում: Ընդհանուր առմամբ, վիշապների կենսատարածքը բնորոշվում է լանդշաֆտի բնական (*սարահարթ*՝ №№17,18, *լեռ*՝ №№2,10,24,26, *լիճ/լճակ*՝ №№2,4,5,6,8,9,13,

5 Ատրպետ 1912ա, 17–18:

6 ԳԱԹ Ատրպետ 39, թ. 58; հմմտ. Ատրպետ 1912ա, 18:

7 Ատրպետ 1912ա, 18–17 (գծանկար):

8 Ատրպետ 1912ա, 28:

9 ԳԱԹ Ատրպետ 39, թ. 58:

15, 16, 24, 25, 29, 30, *ճահիճ*՝ №№1, 3, 9, 19, 24, *ակունք*՝ №№1, 2, 3, 4, 9, 23, 30, 31) և մարդածին (*ուխտավայր*՝ №№1, 22, 23, 24, 25, *ամառանոց/լեռնային արոտավայր*՝ №№3, 10, *ավերակներ*՝ №№2, 11, 12, *փաճար*՝ №16, *բագին*/«քեռոր օղլի Ղալասի», աշտարակաձև կառույց՝ №№8, 24, *ոռոգման ջրանցք*՝ №4) միավորներով:

Վիշապների պաշտամունքի և սրբավայրերի հետ կապված հարցերը

Ատրպետը համոզված է, որ վիշապ կոթողները նվիրված են եղել Մեծ Մայր դիցուհուն՝ Անահիտին (№3–Սրբահան, №24–Սրբահան) և ջրի համապատասխան աղբյուրների (№16–Սառնաղբյուր, №27–Սանդուխտասար) պաշտամունքին[10]: Հեղինակը խոսում է վիշապային «Ձուկն» աստվածության մասին, որը ջրերից երկինք է բաձրացել փոթորկի ձևով[11]: Բազմիցս շեշտում է վիշապի տարերային բնույթը՝ կապված օդի (փոթորկի), ջրի, կրակի, հողի հետ[12]:

Ատրպետը վիշապի պաշտամունքին ձոնված սրբավայրը կոչում է *զվարթնոց*, որը մեկնաբանում է որպես «զվարթանքի վայր, զվարթարան, հայտնության վայր»՝ այս իմաստով կապելով հայերեն *զվարթնոց* և շումերաաքքադական *զուհուրաթ*, արաբա-պարսկական *զիարաթ* բառերը. առաջիններն, ըստ նրա, որպես պաշտոնական տաճարներ՝ գտնվել են ստորին դաշտավայրերում, իսկ երկրորդները՝ լեռնային բարձունքների վրա[13]:

Ըստ Ատրպետի՝ վիշապների պաշտամունքը կապված է եղել դեպի բարձրալեռնային գոտիներ կատարվող ուխտագնացությունների հետ (№1–Ոլուխլի, №17–Տիգնիս, №23–Մանկասար, №24–Սրբահան, №25–Հավատամք), որոնք իրականացվել են Վարդավառի տիպի տոների ընթացքում (№24–Սրբահան)[14]: Սրբավայրերում տեղի են ունեցել *Ուշապի/Վիշապի* պաշտամունքին առնչվող ծեսեր, որոնք ուղեկցվել են զոհաբերություններով, գինով, երգով, պարով, նվագարաններով ու կաքավներով. դրանք միջնադարում շարունակվել և հասել են մեր օրերը[15]:

Բյուրակնի Սրբահանի և այստեղի վիշապ արձանի մասին խոսելիս՝ Ատրպետը նշում է, որ ուխտավորներն այցելում են այս վայրերը Վարդավառի տոնին և ծեսեր կատարում թմբուկներով, ծնծղաներով, փողերով[16]: Փարվանայի վիշապի մոտ գտնվող Թալին դաղի սուրբ այցելելիս՝ նույնպես զոհեր էին մատուցում, նվագարաններով երգեր ու տաղեր ասում[17]: Մեկ այլ սրբավայրում՝ Տիգնիսի Ձիարեթում ևս մոտ 1500 ուխտավորները մեկ շաբաթ տևող տոնակատարության ընթացքում երգում, պարում, խաղում, կաքավում էին. նվագա-

10 Ատրպետ 1912ա; 1931, 311:
11 ԱԱ 187, 1935, էջ 1:
12 ԱԱ 177, 1931, էջ 52–59; ԱԱ 180, էջ 5–9; ԱԱ 187, 1935, էջ 1–5:
13 ԱԱ 187, 1935, էջ 40, 43, 54; հմմտ. ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 2:
14 Հմմտ. նաև Ատրպետ 1912ա, 39; 1929, 93; 1931, 311, 318:
15 ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 27; հմմտ. Ատրպետ 1912ա, 33–39:
16 Ատրպետ 1931, 310:
17 Ատրպետ 1928, 138:

ծուները բաժանվում էին պոեմ ասողների, հեքիաթ պատմողների, վիպաշարեր երգում: Տեղի էին ունենում զոհաբերություններ և *օրգիաստիկ* ծեսեր[18]: Վիշապային տոնախմբությունների ժամանակ պարում էին կլոր պար[19]:

Ատրպետի կարծիքով՝ ժամանակին գոյություն է ունեցել վիշապական ծեսերն իրականացնող հատուկ քրմական դաս[20]: Ընդ որում, այդ քրմերը կարող էին իրականացնել նաև կազմակերպչական գործառույթ, օրինակ՝ համակարգել ջրանցքաշինությունը և լինել ջրպետեր: Դրա հետևանքով, ժամանակի ընթացքում, նրանց ձեռքում պիտի կուտակվեր մեծ իշխանություն, որն աստիճանաբար նրանց պիտի վերածեր նաև աշխարհիկ կառավարիչների: Ամրոցները կարող էին պատկանել այդ ջրպետ պաշտոնյաներին[21]:

Ինչ վերաբերում է վիշապ կոթողների գործառույթների գոյատևմանը, ապա Ատրպետը ենթադրում է, որ դրանք կործանվել են Քրիստոնեական Դարձի ընթացքում[22], այդ թվում և՝ Արագածի կատարի վիշապները[23]: Համեմատելով փոքր (№8–Փարվանա, №16–Սառնաղբյուր) և մեծ (№1–Ոլուխլի, №9–Ամբրոյի լիճ, №10–Արքաշեն, №17–Տիգնիս, №28–Դիք–Չինիլի, №30–Մաքենյաց) վիշապ կոթողները՝ նա նշում է, որ առաջիններն իրենց չափերի շնորհիվ կանգուն վիճակում հասել են մեր օրերը՝ խուսափելով տապալվելուց, իսկ մեծերը կործանվել են[24]:

Վերջաբան

Ատրպետի ճանապարհորդական նոթերն ու հետազոտությունները անգնահատելի սկզբնաղբյուր են վիշապ կոթողների ուսումնասիրության պատմության համար: Դրանց քննարկումը հնարավորություն է տալիս հետևյալ եզրահանգումների.

1. Ատրպետի տվյալները վերարտադրում են պատմական մի լանդշաֆտ, որը բաղկացած է ստորին աշխարհում՝ բնակավայրերին կից գտնվող ամրոցներից և տաճարներից, վերին աշխարհում՝ լեռների վրա տեղադրված սրբերից, բագիններից, վերինն ու ստորինը իրար կապող ջրանցքներից:

2. Սա երկրագործների մի հանրույթ է, որը զբաղվում է ակտիվ հեռագնա անասնապահությամբ և իր սրբազան լանդշաֆտը կերտում է թե՛ բնակավայրերում ու դրանց մոտ, թե՛ լեռներում (լեռնային արոտավայրերին կից):

3. Այդ համակարգի առանցքային հասկացությունը վիշապ կոթողներն են, որոնք կարմիր թելի նման անցնում են Ատրպետի գրեթե բոլոր աշխատանքներում:

18 Ատրպետ 1931, 317–319:
19 Ատրպետ 1912ա, 33–34:
20 ԳԱԹ Ատրպետ 63, էջ 7; հմմտ. ԱԱ 177, 1931, էջ 1–2; Ատրպետ 1929, 62:
21 Ատրպետ 1929, 107–108, 113; հմմտ. Ատրպետ 1931, 310:
22 ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1; ԳԱԹ Ատրպետ 69, 1934, թ. 4:
23 ԱԱ 187, 1935, էջ 90:
24 ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5:

4. Նկարագրված նախնադարյան հանրույթը, Ատրպետի եզրաբանությամբ, «վիշապազանց» դարաշրջանի Հայաստանն է, որի տակ նա հասկանում է նախապատմական և վաղ պատմական շրջանները[25]:

5. Թեև Ատրպետի տարատեսակ մեկնաբանությունները (հատկապես վիշապների պաշտամունքի և սրբավայրերի մասին) հաճախ պայմանական են, սակայն մեր օրերի վերջին հետազոտություններն, ընդհանուր առմամբ, հաստատում են հնագույն լանդշաֆտի կազմակերպման՝ նման մոդելի գոյության հավանականությունը:

Աղյուսակ 1. Ատրպետի հիշատակած վիշապ կոթողների ցանկը

կոթող(ներ)ը	**վիշապ կոթողների միջավայրում հիշված տեղանունների նույնականացումը**	**քանակը**	**աղբյուր(ներ)ը**
	ՏԱՅՔ		
1. Ոլուխլի	*Ոլուխլի* (Օլուխլի/ու) – գետակ, որ սկիզբ է առնում Սարխան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթի (բ.ծ.մ. 1995 մ) հյուսիս-արևելյան լանջերից և հասնելով համանուն գյուղ (Սպերից 26 կմ հարավ)՝ խառնվում Ճորոխի վերին հոսանքին՝ Չերմեսին: Կոթողները կոչվում են Մեծ և Փոքր Դիքմաներ:	զույգ	ԱԱ 177, 1931, էջ 23–24; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ.1, 26; ԳԱԹ Ատրպետ 63, թ.5; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ.5; հմմտ. Ատրպետ 1929, 169
2. Ջիարեթ	*Ջիարեթ լճակ* – Էրզրումի նահանգի Կիսկիմի (Օկդեմ) գավառակում՝ Թորթում լճակի մոտ: *Փաշա-Փագի* – ավերակներ Ճորոխի վերին հոսանքի (Չերմեսի) ակունքից 5 կմ հեռու: *Չոխուր Յուրդ* – լեռնագագաթ Թորթում գետի ձախ կողմում՝ Սպեր/Իսպիր քաղաքից 20 կմ հարավ-արևելք: *Կազան Բաշի* – լեռնաճյուղ Ծաղկավետ (Դյումլիդաղ) լեռնաշղթայում (բ.ծ.մ. 2500–3200 մ), որի շրջանից է սկիզբ առնում Ճորոխը: Ջրբաժան է Ճորոխի ու Թորթումի միջև:	25–30 հատ	ԱԱ 187, 1935, էջ 92; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ.23–24; ԳԱԹ Ատրպետ 28, 1924, թ.31–32; ԳԱԹ Ատրպետ 69, 1934, թ.4; հմմտ. Ատրպետ 1928, 138; 1929, 54–55, 58, 78, 81, 169–170
3. Սրբահան	*Սրբահան* – ամառանոցավայր Կիսկիմի գավառում՝ Սրբահան գետի (Ոդեկի ձախ օժանդակը) հովտում, Սուրբ Օհան (Սրբահան) գյուղից ոչ հեռու (բ.ծ.մ. մոտ 2500–3200 մ):	խմբային անորոշ	Ատրպետ 1929, 55–56

25 Ատրպետի երկերում վիշապների թվագրությունը շատ ընդհանուր է. սկիզբը նա տեսնում է մ.թ.ա. 7000–5000 թվականների միջև (ԱԱ 187, 1935, էջ 15, 24; ԳԱԹ Ատրպետ 39, թ.58; հմմտ. Ատրպետ 1929, 162–163, 165), իսկ վերջը՝ Քրիստոնեական Դարձի շրջանում (ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ.1; ԳԱԹ Ատրպետ 69, 1934, թ.4):

4. Հովտակ	*Այղր լիճ* – Բաբերդից 25 կմ հյուսիս (Սողանլու լեռան գագաթին):	խմբային անորոշ	Ատրպետ 1929, 56, 58, 87, 97
5. Ցել	*Ցել լիճ* – Ծովակ Հիւսիսոյ (Պալակցիս, Չըլդր լիճ) Կարսից 40 կմ հյուսիս (բ. ծ. մ. մոտ 2000 մ):	խմբային անորոշ	Ատրպետ 1929, 56
6. Կող	*Կող* (թուրք. Գյոլեհ, վրաց. Կոլա) – քաղաք և գավառ Տայքում: Կուր գետը սկիզբ է առնում Կողի ճահիճ-լճակներից (բ. ծ. մ. 2025 մ):	խմբային անորոշ	ԱԱ 182, 1927, էջ 28; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1; ԳԱԹ Ատրպետ 62, 1926; հմմտ. Ատրպետ 1928, 138
7. Վոսխիան	*Վոսխիան* – Օլթի գետի ձախ վտակը, որի ափին է համանուն գյուղը՝ Կիսկիմից 24 կմ հյուսիս-արևելք: Սարը (թերևս Լեանչը, որտեղից սկիզբ է առնում Վոսխիանը) պետք է որ գտնվի դրա մոտ (բ. ծ. մ. 2500–3000 մ):	խմբային անորոշ	ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1
ԳՈՒԳԱՐՔ			
8. Փարվանա	*Փարվանա* – լիճ Ջավախքում. կոթողը գտնվում է լճից 2–3 կմ հյուսիս-արևմուտք, Ռադիոնովկա գյուղից 6 կմ հեռու, Բոգդանովկայից Ծալկա տանող խճուղու աջ կողմում (բ.ծ.մ. մոտ 2100 մ):	եզակի	ԱԱ 177, 1931, էջ 3, 18; ԱԱ 180, էջ 9; ԱԱ 182, 1927, էջ 2; ԱԱ 187, 1935, էջ 91; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1, 15; ԳԱԹ Ատրպետ 69, 1934, թ. 4; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; հմմտ. Ատրպետ 1928, 138; 1931, 310
ԱՅՐԱՐԱՏ			
9. Ամբրոյի լիճ	*Ամբրոյի լիճ* – Արագածի հյուսիս-արևելյան բարձունքներին, նախկին անվանումը՝ Կազնաֆար (բ. ծ. մ. 3054 մ): Ըստ ավանդության՝ պատմական անունն է Աստղկա լիճ: Ներկայումս վիշապները չեն պահպանվել:	զույգ	ԱԱ 177, 1931, էջ Գ, 3; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 26; ԳԱԹ Ատրպետ 28, 1924, թ. 31–32; ԳԱԹ Ատրպետ 63, թ. 5; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; հմմտ. Ատրպետ 1928, 138; 1931, 310
10. Արքաշեն	*Արքաշեն* – Արխմիշա, Արխիշան, Արխաշեն տեղանունները նույնը պետք է լինեն՝ կապված Արխաշեն/Արքաշենի հետ՝ լեռնագագաթ Գեղամա լեռներում (այժմ՝ Ծաղկավետ, բ. ծ. մ. 3076 մ), Վեդի գետի ակունքի շրջանում:	30-ից ավելի	ԱԱ 177, 1931, էջ 3, 23–24; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1, 26; ԳԱԹ Ատրպետ 63, թ. 5; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; հմմտ. Ատրպետ 1912ա; 1912գ, 13–14; 1928, 138; 1929, 57–58
11. Խոսրով-շահ	*Խոսրով-շահ* – Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերին, ուր Խոսրովի արգելոցն է (բ. ծ. մ. մոտ 1500–2000 մ):		Ատրպետ 1929, 58

12. Մանկունք	*Մանկունք* – բնակավայր Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերին, ուր Խոսրովի արգելոցն է (բ. ծ. մ. մոտ 1500–2000 մ):	30-ից ավելի	ԱԱ 181, 1927, էջ 1; հմմտ. Ատրպետ 1929, 58
13. Կարագյոլ	*Կարագյոլ* – լճակ Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերին, ուր Խոսրովի արգելոցն է, Մանկունքից հյուսիս (բ. ծ. մ. մոտ 3000 մ):		ԱԱ 181, 1927, էջ 1; հմմտ. Ատրպետ 1929, 58
14. Ակ Քիլիսե	*Ակ Քիլիսե* – Սպիտակ Աղբյուր վանքը Ուրծում կամ գուցե Գեղամա լեռների Սպիտակասարը (բ. ծ. մ. 3555 մ):		ԱԱ 181, 1927, էջ 1
15. Արփակ	*Արփակ լիճ* – նախկին անվանումը՝ Արփա-գյոլ, լճակ Գեղամա լեռնեռում, Սևանա լճից հյուսիս-արևմուտք, Գավառագետի (սկիզբ է առնում Գեղամա լեռների հյուսիսային լանջերից՝ բ. ծ. մ. 3050 մ, և լցվում Սևանա լիճ Նորատուսի մոտ) ձախափնյակում:		ԱԱ 181, 1927, էջ 1
16. Սառնաղբյուր	*Սառնաղբյուր* – նախկին անվանումը՝ Սոգյուդլի, գյուղ Շիրակում: Վիշապ կոթողը կանգուն վիճակում է նաև այսօր (բ. ծ. մ. 1867 մ):	եզակի	ԱԱ 180, թ. 2; ԱԱ 177, 1931, էջ 3; ԱԱ 187, 1935, էջ 90–91; ԳԱԹ Ատրպետ 69, 1934, թ. 4; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 2–5; հմմտ. Ատրպետ 1931, 310
17. Տիգնիս	*Տիգնիս* – գյուղ (տարբերակներ՝ Թիգնիս, այսօր՝ Կալկանկալե), Կարս քաղաքից 50 կմ հյուսիս-արևելք, Ախուրյան գետի աջ կողմում (բ.ծ.մ. մոտ 1500 մ):	խմբային անորոշ	ԱԱ 177, 1931, էջ 9; ԱԱ 187, 1935, էջ 91; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; հմմտ. Ատրպետ 1931, 316–317
18. Թիքմա	*Թիքմա* – կամ Դիքմե/Նովոմիխայլովկա, գյուղ Կարս քաղաքից 15 կմ հարավ-արևմուտք, Կարս գետի ձախ ափին (բ. ծ. մ. մոտ 2000 մ):	խմբային անորոշ	ԱԱ 187, 1935, էջ 91; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5
19. Մեծամոր	*Մեծամոր* – Կարսի մոտ գտնվող ճահճուտ (բ. ծ. մ. մոտ 1800 մ):	խմբային անորոշ	ԳԱԹ Ատրպետ 16, 1927, 1920, թ. 1
20. Մեծրանց	*Մեծրա(ն)ց լեռներ* – Կարսի բարձրավանդակի արևմտյան մասում, թուրքական անվանումը՝ Սողանլու (ամենաբարձրը Մեծրանց գագաթն է՝ բ. ծ. մ. 2850 մ):	խմբային անորոշ	ԱԱ 188/2, էջ 62–63; հմմտ. Ատրպետ 1931, 313–314
21. Սարիղամիշ	*Սարիղամիշ* – գյուղաքաղաք Կարսից 50 կմ հարավ-արևմուտք, Մեծրանց լեռների հարավային ստորոտին (բ. ծ. մ. մոտ 2100մ):	խմբային անորոշ	ԱԱ 188/2, էջ 62–63; հմմտ. Ատրպետ 1931, 313–314

22. Սրբահան	*Դիադին* – ավան Ծաղկոտն գավառում (բ. ծ. մ. մոտ 2200 մ)՝ Ծաղկանց լեռներում, դրանց ամենաբարձր գագաթ Թոնդրակի (բ. ծ. մ. 3542 մ) մոտ, որտեղից սկիզբ է առնում Արածանին (Մուրադ): *Դիադինի Սրբահան* – քաղաքից հյուսիս-արևմուտք՝ Սրբահան կամ Վանք գյուղի Ս. Հովհաննես վանքի մոտ:	խմբային անորոշ	ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1
23. Մանկասար	*Մանկասար* – Արածանիի աջ վտակը, սկիզբ է առնում Հայկական Պարի Սինակ լեռնաճյուղի հարավ-արևմտյան լանջերից և անցնելով Մանկասար, Խդըր, Նավիկ, Չամոլու գյուղերով՝ լցվում մայր գետը: *Կըզըլ-Ջիարեթ* – լեռնագագաթ Հայկական Պարում (բ. ծ. մ. 2897 մ), Սինակ (բ. ծ. մ. 2774 մ) գագաթի մոտ, Գայլատու լճի (բ. ծ. մ. 2247 մ) արևմտյան կողմում. գագաթին կար մատուռ և սառնորակ աղբյուր:	խմբային անորոշ	ԱԱ 177, 1931, էջ 33; ԱԱ 182, 1927, էջ 29
ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ			
24. Սրբահան	*Սրբահան* – սրբավայր Բյուրակնյան լեռների հիմնական՝ արևմտյան գագաթ Սրմանցին = Բինգյոլ-դաղ (բ. ծ. մ. 3250 մ) կից, որի հյուսիս-արևմտյան փեշերից սկիզբ է առնում Արաքս գետը:	եզակի	ԱԱ 177, 1931, էջ 3; ԱԱ 187, 1935, էջ 24–25; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1; հմմտ. Ատրպետ 1931, 308, 310, 311
25. Հավատամք	*Հավատամք* – լեռնագագաթ Մեր Գիմերի լեռնաշղթայում (բ. ծ. մ. 2465 մ), Մուշից 40,5 կմ հյուսիս-արևմուտք, Ս. Կարապետի մոտ:	եզակի	ԱԱ 177, 1931, էջ 28–32
26. Մեղաբուխ	*Մեղեք/դուխ, Խալխալ* – լեռներ և լեռնագագաթ Բյուրակն-Մնձուրյան լեռնահամակարգում (բ. ծ. մ. 2200–2600 մ): Սրա արևելյան ծայրամասից սկիզբ է առնում Արածանիի վտակ Քղիի Լեչեկ ենթավտակը:	անորոշ	Ատրպետ 1928, 138
ՍՅՈՒՆԻՔ			
27. Սանդուխ տասար	*Սանդուխտասար* – լեռնագագաթ (բ. ծ. մ. 3480 մ) Վարդենիսի լեռնաշղթայում, Մեծ Ալ լճից մոտ 6 կմ արևմուտք, այլ անվանումներն են՝ *Դիքբիլաքան* կամ *Դաշբիլաքան*:	խմբային անորոշ	ԱԱ 181, 1927, թ. 1; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; հմմտ. Ատրպետ 1929, 58–59

28. Դիք-Չինիլի	*Դիք-Չինիլի* կամ *Դիք-Ջինիլիքյանդ* – գագաթ Վարդենիսի լեռնաշղթայի արևելյան ծայրում՝ Սանդուխտասար լեռնագագաթի մոտ, Սևանա լճից հյուսիս-արևելք (բ. ծ. մ. մոտ 3400 մ):	խմբային անորոշ	ԱԱ 181, 1927, թ. 1; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5; Ատրպետ 1929, 58–59
29. Ալլիճ	*Ալ լիճ* (*Ալա գյոլ*) – երկու լճակներ (Մեծ և Փոքր Ալ) Սևանա լճից հարավ-արևելք՝ Մարալդաղ, Դիքբելյական, Ալլագյոլլարի, Դիքթափա գագաթների միջև ընկած գոգավորությունում՝ Թարթառ և Արփա գետերի ջրբաժանում, (բ. ծ. մ. մոտ 2730–2740 մ):	խմբային անորոշ	ԱԱ 181, 1927, թ. 1; ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ 26
30. Մաքենյաց	*Մաքենյաց գետ* – սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի արևելյան մասի հյուսիսային լանջերից (բ. ծ. մ. մոտ 3000 մ) և Կարճաղբյուր գյուղի մոտ լցվում Սևանա լիճ:	խմբային անորոշ	ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1, 26; ԳԱԹ Ատրպետ 91, 1929, թ. 5
31. Արփա	*Արփա գետ* – սկիզբ է առնում Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաների կազմած անկյունից (բ. ծ. մ. մոտ 2800 մ):	խմբային անորոշ	ԳԱԹ Ատրպետ 16, 1927, թ. 1ա, 26

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱ ՀՀ Ազգային արխիվ
բ. ծ. մ. բարձրությունը ծովի մակերևույթից
ԳԱԹ Գրականության և արվեստի թանգարան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային նյութեր

ԱԱ 177, 1931
Վիշապազանց կուլտը և Անահիտ, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 177, 1931 թ., Լենինական, 84 էջ:

ԱԱ 180
Վիշապազանց վորորանը, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 180, Տարեթիվ-տեղ բացակայում է, 38 էջ:

ԱԱ 181, 1927
Վիշապազանց վորորանը, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 181, 1927 թ., Լենինական, 25 էջ:

ԱԱ 182, 1927
Վիշապազանց վորորանը, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 182, 1927 թ., Լենինական, 44 էջ:

ԱԱ 187, 1935
Նահիրի ճարտարապետության յոթ հրաշալիքները, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 187, 1935 թ., Երևան, 95 էջ:

ԱԱ 188/2
Հուշիկներ, 2-րդ մաս, 1876–1890, Հայաստանի պատմության թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 188/2, Տարեթիվը բացակայում է (թերևս 1920-ական թթ.), Լենինական, 96 էջ:

ԳԱԹ Ատրպետ 16, 1927
Վիշապազանց վորորանը // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 16, 1927 թ. (II տետրը), Լենինական, 52 թ.:

ԳԱԹ Ատրպետ 28, 1924
Ճորոխի ավազանը. աշխարհագրական և պատմական // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 28, 1924 թ., 72 թ.:

ԳԱԹ Ատրպետ 39
Առաջավոր Ասիայի և Հայաստանի քաղաքակրթության պատմությունը // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 39, Տարեթիվ-տեղ բացակայում է, 70 թ.:

ԳԱԹ Ատրպետ 62, 1926
Օխթն անուն Անահիտ // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 62, 1926 թ., 2 թ.:

ԳԱԹ Ատրպետ 63
Վիշապ // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 63, Տարեթիվ-տեղ բացակայում է, 8 թ.:

ԳԱԹ Ատրպետ 69, 1934
Գրախոսություն՝ Պրոֆ. Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատությունը // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 69, 1934 թ., Երևան, 4 թ.:

ԳԱԹ Ատրպետ 91, 1929
«Ուռինոց», Սօգիտլի // Գրականության և արվեստի թանգարան, Ատրպետ 91, 1929 թ., Լենինական, 7 թ.:

Ուսումնասիրություններ

ԱՏՐՊԵՏ 1912ա
Ատրպետ, Վիշապամայր. պատմվածք, Ալեքսանդրապոլ, «Շիրակ», 1912:

ԱՏՐՊԵՏ 1912բ
Ատրպետ, Եզի պաշտամունքը հին Հայաստանում // Ազգագրական հանդէս (Թիֆլիս), 1912, № 23/2, 114–124:

ԱՏՐՊԵՏ 1912գ
Ատրպետ, Դիրաքլարի տաճարը // Հանդէս ամսօրեայ (Վիեննա), 1912, № 1, 5–15:

ԱՏՐՊԵՏ 1913
Ատրպետ, Թաթար-Միքո (Վիշապ) // Աղբիւր (Թիֆլիս), 1913, № 11, 205–298:

ԱՏՐՊԵՏ 1928
Ատրպետ, Եօթը տաճար // Հայաստանի կոչնակ (Նիւ-Յեորք), 1928, № 5, 138–139:

ԱՏՐՊԵՏ 1929
Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, Մխիթարեան տպ., 1929:

ԱՏՐՊԵՏ 1931
Ատրպետ, Վիշապազանց պաշտամունքը // Բազմավէպ (Վենետիկ), 1931, № 7/8, 308–319:

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Ա. Բոբոխյան, *պ.գ.թ.*
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան

Վիշապ կոթողներն՝ ըստ Ատրպետի արխիվային նյութերի

Հիմնաբառեր՝ Ատրպետ, վիշապ կոթողներ, ուսումնասիրության պատմություն, տարածույթ, լանդշաֆտ, հնագիտական համատեքստ

Հայ գրող և ճանապարհորդ Ատրպետի (1860–1937) աշխատանքներում արժեքավոր տվյալներ են պահպանվել հին Հայաստանի մշակույթի նշանավոր կոթողների՝ «վիշապների» վերաբերյալ: Այդ տվյալների քննարկումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հեղինակը բավական խորը գիտելիքներ է ունեցել իր երկրի հնագույն պատմամշակութային միջավայրի և դրա կազմակերպման գործընթացների մասին: Մասնավորապես, Ատրպետի տվյալները վերարտադրում են պատմական մի լանդշաֆտ, որը բաղկացած է ստորին աշխարհում՝ բնակավայրերին կից գտնվող ամրոցներից և տաճարներից, վերին աշխարհում՝ լեռների վրա տեղադրված սրբերից, բագիններից, վերինն ու ստորինը իրար կապող ջրանցքներից: Սա երկրագործների մի հանրույթ է, որը զբաղվել է գործուն հեռագնա անասնապահությամբ, և իր սրբազան լանդշաֆտը կերտել՝ ինչպես բնակավայրերում ու դրանց մոտ, այնպես էլ լեռներում: Այդ համակարգի առանցքային հասկացությունը վիշապ կոթողներն են, որոնք հանրույթի անդամները տեղադրել են իրենց մշակութային աշխարհի կարևորագույն կետերում:

A. A. Bobokhyan, PhD
Institute of Archaeology and Ethnography

Vishap Stelae according to Archival Materials of Atrpet

Keywords: Atrpet, vishap stelae, history of research, distribution, landscape, archaeological context.

In the works of the Armenian writer and traveler Atrpet (1860-1937) important data have been preserved on ‘vishap’ stelae (dragon stones) – well-known monuments of ancient Armenia. The discussion of those data enables to conclude that the author had quite a deep knowledge of the ancient historical-cultural environment of his country and its social organization. According to the data acquired mainly in the archives, Atrpet mentions 31 clusters of vishaps – 7 of which in Tayk, 1 in Gugark, 15 in Ayrarat, 3 in Turuberan, 5 in Syunik provinces of historical Armenia. Vishaps can be encountered both as single, double and group units, hence, on the whole, it goes about ca. 50-60 stelae. They are situated in the mountain systems of Tsaghkavet, Karasnits, Byuraknyan, Metsrants, Haykakan Par, Aragats, Geghama and Vardenis, mainly on sources of the rivers (Araxes, Aratsani, Kura, Chorokh) beginning in those mountains, in small plateaus marked by lakes. Particularly, Atrpet’s data reproduces a historical landscape consisting of fortresses and temples, caves in lowland and sanctuaries in the mountains, as well as channels connecting the upper and lower altitudes. This was a community of farmers, engaged in active pastoral cattle-breeding, who created their sacred landscape both in and around the settlements as well as in the mountains. The key concept of that system was the dragon stones placed on the most important points of that cultural world. The analysis of the data handed down by Atrpet, their obvious coincidences with present-day evidence on vishap distribution traits indicate a fairly high degree of probability of this information.

А. А. Бобохян, *к.и.н.*
Институт археологии и этнографии

Вишапоидные стелы согласно архивным материалам Атрпета

Ключевые слова: Атрпет, стелы «вишапы», история изучения, дистрибуция, ландшафт, археологический контекст.

В работах армянского писателя и путешественника Атрпета (1860–1937) имеются важные сведения о стелах-«вишапах» – известных памятниках культуры древней Армении. Обсуждение этих данных позволяет заключить, что автор глубоко осознавал особенности древней историко-культурной среды своей страны и ее социальной организации. Согласно архивным материалам, Атрпет упоминает 31 единицу вишапов в следующих регионах исторической Армении: Тайк (7 единиц), Гугарк (1), Айрарат (15), Туруберан (3), Сюник (5). Причем, вишапы встречаются как отдельно, так и парами или группами: речь идет в целом о 50–60 стелах. Они находятся в горных системах Цахкавет, Карасниц, Бюракнян, Мецранц, Айкакан Пар, Арагац, Гегама и Варденис, в основном у истоков рек (Аракс, Арацани, Кура, Чорох), берущих начало в этих горах, и в плоскогорьях, для которых характерно наличие озер. В частности, данные Атрпета воспроизводят исторический ландшафт, состоящий из крепостей и храмов в низменностях, святилищ, расположенных в горах, и каналов, соединяющих верхние и нижние высоты. Это было обществом земледельцев, занимающихся активным отгонным скотоводством и создающих свой священный ландшафт как в поселениях и возле них, так и в горах. Ключевой концепцией этой системы являются стелы-«вишапы», расположенные в самых важных точках исследуемого культурного мира. Анализ сведений Атрпета, их очевидное соответствие нынешней локализации «вишапов» указывает на довольно-таки высокую степень вероятности этих сведений.

Մարիամ Շախմուրադյան
ՀԱԻ

«ԱՆԱՊԱՏԻ ՕԴԱՊԱՐՈՒԿՆԵՐԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՁԵՎԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում քննարկվում են «անապատի օդապարուկներ» անունով հայտնի՝ քարե խոշոր շինությունների կառուցվածքը և ձևերը: Հիմնվելով դաշտային դիտարկումների և հազարավոր «օդապարուկների» արբանյակային լուսանկարների ուսումնասիրության վրա՝ հոդվածում ներկայացվում են այդ շինությունների բաղադրիչների (քարաշարեր, շրջապարիսպ, աշտարակներ) յուրահատկությունները: Առանձնացվում են օդապարուկների հիմնական ձևերն իրենց ենթաձևերով՝ այդ թվում և նախկինում չհրապարակվածները: Տարբեր տարածաշրջաններում դրանց քանակական բաշխվածությունը պարզելու համար իրականացրել ենք ձևերի վիճակագրություն, որի արդյունքը վկայում է, որ Հայաստանում, Հյուսիսային Միջագետքում և Կենտրոնական Սիրիայում «օդապարուկների» ձևերի քանակական բաշխվածությունը միակերպ է դրսևորվում: Այն մասնակի շեղում է ստանում Հարրաթ ալ-Շաամ անապատում, որը ձգվում է Սիրիայից Հորդանանով դեպի Սաուդյան Արաբիա, և զգալի շեղում՝ կենտրոնական Սաուդյան Արաբիայում:

Նախկինում տեսակետ է հայտնվել, թե «օդապարուկները» կարող էին առաջացացած լինել առավել պարզ կառուցվածք ունեցող նախատիպերից (V-աձև կառույցներ): Սույն հոդվածում քննարկում ենք նաև այս խնդիրը՝ փորձելով հիմնավորել, որ «օդապարուկները» որևէ նախատիպ չեն ունեցել, այլ ի սկզբանե եղել են իրենց դասական կառուցվածքով: Հոդվածում անդրադարձ ենք անում նաև այն խնդրին, թե արդյո՞ք երկար քարաշարերից և աշտարակից կազմված պարզ V-աձև կառույցները պետք է որպես «օդապարուկներ» դիտարկվեն:

Հիմնաբառեր՝ «օդապարուկ», կառուցվածք, ձև, վիճակագրություն, քանակական բաշխվածություն, V-աձև կառույց:

Ներածություն

«Անապատի օդապարուկները» վիթխարի չափերով քարե կառույցներ են, որոնք սովորաբար կազմված են երկու երկար քարաշարերից և դրանց միացված ընդարձակ շրջապարսպից, որին, իր հերթին, կցակառուցված են փոքր չափերի աշտարակներ [նկ.1ա,բ, էջ 226]: Այս կառույցներն առաջին անգամ հայտնաբերել են Առաջին աշխարհամարտի օդաչուները՝ Սիրիայի և Հորդանանի անապատներում[1]:

[1] Holt 1923, 261; Maitland 1927, 202–203. Նշված կառույցներն օդապարուկ են կոչվում, որովհետև օդաչուներից մեկը դրանց տեսքը նմանեցրել էր խաղալիք օդապարուկի [Rees 1929, 395]: Հետագայում այս անվանումը լայն տարածում գտավ հետազոտողների մեջ և շարունակում է գործածվել մինչ օրս:

Ներկայումս *օդապարուկներ* հայտնաբերվել են Առաջավոր և Կենտրոնական Ասիայում (Հայաստան, Ուզբեկստան, Ղազախստան, Թուրքիա, Իրաք, Սիրիա, Հորդանան, Սաուդյան Արաբիա)։ Թեև դրանց ուսումնասիրությունն ունի արդեն շուրջ մեկդարյա պատմություն, սակայն բազմաթիվ առանցքային հարցեր մինչ օրս լուծում չեն ստացել։ Օրինակ, հայտնի չէ, թե երբ և որտեղ են այս կառույցներն առաջացել։ Հայտնի չէ նաև դրանց գործառույթը։ Ամենից տարածված տեսակետն այն է, որ դրանք ծառայել են որպես որսադարաններ՝ կճղակավոր կենդանիներ բռնելու համար[2]։ Այլ վարկածի համաձայն՝ դրանք փարախներ են[3] կամ էլ պաշտամունքային նշանակության կառույցներ[4]։ Թվագրության վերաբերյալ դեռևս հստակ տվյալներ չկան։ Առաջավոր Ասիայի *օդապարուկներ*ից առ այսօր ստացված տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ այս տարածաշրջանում դրանք կառուցվել են նոր քարի դարից երկաթի դար ընկած ժամանակահատվածում[5]։

«Օդապարուկների» կառուցվածքը

Ինչպես նշվեց, հազարավոր *օդապարուկներ*ի արբանյակային լուսանկարների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս կառույցներն ունեն երեք հիմնական բաղադրիչներ՝ քարաշարեր, շրջապարիսպ և աշտարակներ։

Քարաշարերն անմշակ քարերի ցածր շարքեր են, որոնց երկարությունը մի քանի տասնյակ մետրից կարող է հասնել մի քանի կիլոմետրի[6]։ Դրանք սովորաբար երկուսն են, սակայն հանդիպում են *օդապարուկներ*, որոնք բազմաթիվ քարաշարեր ունեն, ինչը հատկապես նկատելի է Հարրաթ ալ-Շաամ անապատում։ Կան նաև դեպքեր, երբ օդապարուկը միայն մի քարաշար ունի կամ էլ ընդհանրապես չունի, ինչը հիմնականում հետևանք է կառույցի ավերվածության կամ պայմանավորված է տեղանքի առանձնահատկություններով, երբ որպես քարաշար են ծառայել տեղանքի բնական գծերը։

Շրջապարիսպն անմշակ քարերով շարված պատ է, որի բարձրությունը կարող է հասնել ընդհուպ մինչև 2 մետրի։ Սակայն հանդիպում են շրջապարիսպներ, որոնք ուրվագծվել են կողք-կողքի դրված քարերի միաշար գծով, որը դժվար է պատ անվանել։ Շրջապարսպի ընդգրկած տարածքի մակերեսը կարող է կազմել մեկից մինչև մի քանի տասնյակ հեկտար։ Եթե *օդապարուկ*ը կառուցվել է բեկվող տեղանքում, ապա շրջապարիսպը հաճախ գտնվում է քարաշարերի կողմից անտեսանելի լանջին։ Հանդիպում են նաև այլ դիրքեր ունեցող շրջապարիսպներ։ Շրջապարսպի դիրքերի առանձնահատկությունները ժայռապատկերների տեսքով վերարտադրված են Ջեբել Քուրմա հնավայրում (Հոր-

[2] Helms, Betts 1987, 63; Zeder et al. 2013, 119; Kempe, Al-Malabeh 2013, 126.

[3] Echallier, Braemer 1995, 61–62.

[4] Kobusiewicz 1999, 179–180.

[5] Helms, Betts 1987, 54; Van Berg et al. 2004, 97; Morandi Bonacossi 2014, 37; Brochier et al. 2014, 37–46; Nadel et al. 2015, 135–138.

[6] Barge et al. 2015a, fig. 5; Barge et al. 2015b, fig. 11.

դանան) հայտնաբերված ժայռաբեկորներին[7]: Բացառված չէ, որ օդապարուկի ձևն ու կառուցվածքը շինարարության ընթացքում ճշտությամբ վերարտադրելու համար՝ ապագա կառույցի «հատակագիծը», որպես բնօրինակ, նախ փորագրած լինեին որևէ առարկայի (տվյալ պարագայում՝ ժայռաբեկորի) վրա և հետո միայն սկսեին շինարարությունը: *Օդապարուկներ* պատկերող ժայռանկարներ հայտնի են նաև Ազրաքից (Հորդանան) և Հեմմա սարահարթից (Սիրիա)[8]:

Օդապարուկների գերակշիռ մեծամասնությունն ունի միայն մեկ շրջապարիսպ, սակայն կան դեպքեր, երբ հիմնական շրջապարսպին կցված է ևս մեկը՝ նվազ չափերով [նկ. 2ա]: Երբեմն փոքր չափերով շրջապարիսպներ են հանդիպում նաև քարաշարերի ծայրերին: Բացի այդ, կան *օդապարուկներ*, որոնք կազմված են իրար մեջ ագուցված մի քանի շրջապարիսպներից, ինչը հատկապես նկատելի է կենտրոնական Սաուդյան Արաբիայում [նկ. 2բ, գ]: Շրջապարիսպը հաճախ ունենում է ելուստներ, որոնք այդ պարսպի ներսի տարածքից տարանջատված են պատով [նկ. 3ա]: Հանդիպում են նաև ելուստներ, որոնք շրջապարսպի ներսի տարածքից տարանջատված չեն [նկ. 3բ], դրանց համար կօգտագործենք *խորշ* եզրույթը: Նշված խորշերն ու ելուստները ամենից հաճախ անկյունաձև են, սակայն կարող են նաև այլ ձևեր ունենալ (քառակուսի, շրջանաձև): Երբեմն շրջապարիսպն ունենում է ներքին բաժանմունքներ [նկ. 3գ, դ]:



Նկար 2. Մի քանի շրջապարիսպներից կազմված «օդապարուկների» նմուշներ
ա. Օդապարուկ, որի շրջապարսպին կցված է փոքր չափերի ևս մեկ շրջապարիսպ
բ, գ. Օդապարուկներ՝ կազմված իրար մեջ ագուցված մի քանի շրջապարիսպներից
(Հարրաթ Խայբար, կենտրոնական Սաուդյան Արաբիա)



Նկար 3. Շրջապարսպի կառուցվածքային առանձնահատկությունները
ա. Օդապարուկ, որի շրջապարիսպն ունի ելուստներ (Քարակերտ, ՀՀ)
բ. Օդապարուկ, որի շրջապարիսպն ունի խորշեր (Հարրաթ ալ-Շաամ, Սիրիա)
գ, դ. Ներքին բաժանումներ ունեցող օդապարուկների նմուշներ
(Հարրաթ ալ-Շաամ, Հորդանան)

7 Akkermans et al. 2014, fig. 4.

8 Betts, Helms 1986, fig. 3; Van Berg et al. 2004, fig. 2–4.

Աշտարակներ: Շրջապարսպին դրսի կողմից կցակառուցված են փոքր չափերով շրջանաձև կամ քառանկյուն աշտարակներ, որոնք ևս հիմնականում շարված են անմշակ քարերով [նկ. 4, էջ 226]: Դրանք փակ են և ելք չունեն ոչ դեպի շրջապարիսպը, ոչ դեպի դուրս: ՀՀ-ում եզակի մի դեպք է գրանցված, երբ աշտարակն արտաքին մասում ունի դուռ հիշեցնող փոքր բացվածք: Աշտարակների մակերեսը հաճախ կազմում է 15–30 մ^2, իսկ քանակը տարբեր է: Վիճակագրության արդյունքները վկայում են, որ ամենից շատ աշտարակներ ունեն Հարրաթ ալ-Շաամ անապատի *օդապարուկներ*ը[9]:

«Օդապարուկների» ձևերի դասակարգումը

Ձևերի որոշման ու դասակարգման գործում քարաշարերի և աշտարակների դերը որոշիչ չէ, քանի որ *օդապարուկներ*ի գերակշիռ մեծամասնությունն ունի նույն քանակի (հիմնականում երկու) քարաշար և նույնաձև աշտարակներ: Ի տարբերություն սրանց՝ շրջապարիսպն ունի ձևերի բազմազանություն: Տարբեր ձևի շրջապարիսպներ ունեցող *օդապարուկներ*ը կարող են ունենալ նույն քանակի ու ձևի աշտարակներ ու քարաշարեր, ինչը նշանակում է, որ *օդապարուկներ*ը տարբերակելի են միայն իրենց շրջապարսպի ձևով: Այլ կերպ ասած՝ *օդապարուկներ*ի ձևերի որոշման խնդիրը հանգում է դրանց շրջապարիսպների ձևերի որոշմանը:

*Օդապարուկներ*ի ձևերի դասակարգման առաջին փորձերն արվել են 20-րդ դարի վերջին: Ս. Հելմսն ու Ա. Բեթսը առանձնացրել են *օդապարուկներ*ի 9 ձև[10], իսկ Ժ. Էշալիեն ու Ֆ. Բրայմերը՝ 5 ձև՝ իրենց ենթաձևերով[11]: Դ. Քենեդին, Ռ. Բանքսը և Մ. Դալթոնը դասակարգել են կենտրոնական Սաուդյան Արաբիայի *օդապարուկներ*ի ձևերը, ինչի արդյունքում առանձնացրել են 8 ձև՝ իրենց ենթաձևերով[12]:

Վերոհիշյալ դասակարգումներն ընդհանուր պատկերացում տալով հանդերձ՝ չեն արտացոլում *օդապարուկներ*ի ողջ բազմազանությունը: Սա հաշվի առնելով՝ փորձել ենք առավել ընդգրկուն վիճակագրական տվյալների հիման վրա ներկայացնել *օդապարուկներ*ի ձևերի ողջ երանգապնակը:

Նախկինում արված դասակարգումները հիմնված են բացառապես հարավային տարածաշրջանների տվյալների վրա (Հարրաթ ալ-Շաամ, կենտրոնական Սաուդյան Արաբիա): Սույն հոդվածում օգտագործվել են նաև հյուսիսային տարածաշրջանների (ՀՀ, Հյուսիսային կամ Վերին Միջագետք[13], կենտրոնական Սիրիա) տվյալները: Կենտրոնական Ասիայի (Ուզբեկստան, Ղազախստան) տվյալները չենք ներգրավել՝ նյութի ուսումնասիրվածության թերի վիճակի պատճառով:

9 Barge et al. 2015b, fig. 11.

10 Helms, Betts 1987, fig.14.

11 Echallier, Braemer 1995, fig. 13.

12 Kennedy et al. 2015, fig. 15.

13 Հյուսիսային (Վերին) Միջագետքն ընդգրկում է հարավային Թուրքիան, հյուսիսային Սիրիան և հյուսիսային Իրաքը:

Աղյուսակ 1. Օդապարուկների ձևերը

ա. հիմնական ձևեր	խորշերով ու ելուստներով ենթաձևեր			

բ. այլ ձևեր						

գ. բարդված օդապարուկների նմուշներ

Դասակարգումն իրականացրել ենք շուրջ 3000 *օդապարուկների*ի արբանյակային լուսանկարների հիման վրա: Սրանցից ընտրվել է 2376 պատկեր (ՀՀ-ից՝ 148, Հյուսիսային Միջագետքից՝ 262, կենտրոնական Սիրիայից՝ 784, Հարրաթ ալ-Շաամից՝ 800, կենտրոնական Սաուդյան Արաբիայից՝ 382), որոնցում *օդապարուկների*ի պատկերները հստակ ու ամբողջական են և թույլ են տալիս միարժեքորեն որոշել շրջապարսպի ձևը: Վերլուծության արդյունքում առանձնացվել են *օդապարուկների*ի 12 հիմնական ձևեր՝ իրենց ենթաձևերով [աղ. 1ա][14]: Սրանք բոլոր տարածաշրջաններում հաճախակի հանդիպող ձևերն են: Առանձին ներկայացվել են եզակի օրինակներով հայտնի ձևերը [աղ. 1բ], ինչպես նաև կենտրոնական Սաուդյան Արաբիայում հաճախ հանդիպող՝ բարդված *օդապարուկների*ի նմուշներ [աղ. 1գ]:

«Օդապարուկների» ձևերի վիճակագրություն

Կարևոր խնդիր է՝ պարզել, թե ինչպիսին է *օդապարուկների*ի ձևերի քանակական բաշխվածությունն ըստ տարածաշրջանների: Այս նպատակով վիճակագրել ենք օդապարուկներ ունեցող բոլոր տարածաշրջանների տվյալները՝ բացառությամբ Ուստյուրտ սարահարթի (Ուզբեկստան և Ղազախստան), քանի որ այդ տարածաշրջանի *օդապարուկների*ի արբանյակային լուսանկարների որակը հնարավորություն չի տալիս որոշելու դրանց ձևերը: Ստորև ներկայացվում են տարբեր տարածաշրջաններից ստացված տվյալները:

Հայաստան: ՀՀ տարածքում առ այսօր քարտեզագրված է 205 օդապարուկ, որոնցից հնարավոր եղավ որոշել 148-ի ձևերը: Վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ-ում ամենից հաճախ հանդիպում են շրջանաձև, ուղղանկյուն, եռանկյուն, սեղանաձև, բահաձև *օդապարուկները* [գծ. 1]: Կան նաև բազմաթիվ այլ ձևեր, սակայն դրանք շատ քիչ տոկոս են կազմում:

Հյուսիսային Միջագետք: Քարտեզագրված 436 *օդապարուկներ*ից հնարավոր եղավ որոշել 262-ի ձևերը: Ըստ վիճակագրության՝ այստեղ ևս ամենից հաճախ հանդիպում են ուղղանկյուն, շրջանաձև, սեղանաձև, եռանկյուն, տնակաձև և բահաձև *օդապարուկները* [գծ. 2]: Կան նաև այլ ձևեր, որոնք, սակայն, եզակի օրինակներով են հանդես գալիս:

Կենտրոնական Սիրիա: Քարտեզագրված 1106 *օդապարուկներ*ից որոշվել են 784-ի ձևերը: Ըստ վիճակագրության՝ այստեղ ամենից տարածված են ուղղանկյուն, շրջանաձև, եռանկյուն, սեղանաձև, բահաձև և մականաձև *օդապարուկները* [գծ. 3]: Մեծ քանակությամբ (≈ 5 %) հանդես է գալիս նաև «*գուլպա-օդապարուկը*», որը մյուս տարածաշրջաններում չի նկատվում:

Հարրաթ ալ-Շաամ: Ներկայումս այստեղ քարտեզագրված է ≈2350 *օդապարուկ*: Սրանց վիճակագրությունն իրականացվել է պատահականության սկզբունքով ընտրված 800 *օդապարուկների*ի հիման վրա, որոնց մեջ հնարավոր եղավ որոշել 497-ի ձևերը: Վիճակագրությունը վկայում է, որ ամենից հաճախ հանդիպում են եռանկյուն, ուղղանկյուն, շրջանաձև, բահաձև, կիսալուսնաձև և մականաձև *օդապարուկները* [գծ. 4]: Հարրաթ ալ-Շաամում շատ հաճախ ի

[14] Աշխատանքում ներկայացված են միայն տարածված ենթաձևերը:

հայտ է գալիս նաև աստղաձև *օդապարուկը*, որը հյուսիսային տարածաշրջաններում գրեթե չի հանդիպում[15]:



Գծապատկեր 1. Օդապարուկների ձևերի վիճակագրությունը Հայաստանի Հանրապետությունում



Գծապատկեր 2. Օդապարուկների ձևերի վիճակագրությունը Հյուսիսային Միջագետքում



Գծապատկեր 3. Օդապարուկների ձևերի վիճակագրությունը Կենտրոնական Սիրիայում



Գծապատկեր 4. Օդապարուկների ձևերի վիճակագրությունը Հարրաթ ալ-Շաամում



Գծապատկեր 5. Օդապարուկների ձևերի վիճակագրությունը կենտրոնական Սաուդյան Արաբիայում

---

15 Կարծում ենք, որ աստղաձև *օդապարուկներն* իրականում խորշեր ունեցող շրջանաձև, եռանկյունաձև, սեղանաձև և այլ հայտնի ձևերի *օդապարուկներ* են: Այս ենթադրության համար հիմք է ծառայում այն փաստը, որ եթե մտովի հանվեն աստղաձև *օդապապարուկների*ի խորշերը, ապա ստացվում են *օդապարուկներ*ի հայտնի ձևերը: Այսուհանդերձ, սույն հոդվածում աստղաձև *օդապարուկներ*ը դեռևս առանձին են հաշվարկվել:

Կենտրոնական Սաուդյան Արաբիա: Այս տարածաշրջանում քարտեզագրված 500 *օդապարուկներ*ից հնարավոր եղավ որոշել 382-ի ձևերը: Վիճակագրության համաձայն՝ այստեղ ամենից տարածված են եռանկյուն, ուղղանկյուն, սեղանաձև և բահաձև *օդապարուկներ*ը [գծ. 5]: Եթե Հարրաթ ալ-Շաամում տարածված ձևերի բաշխվածության մեջ որպես մի նոր ձև հանդես է գալիս աստղաձև օդապարուկը, ապա կենտրոնական Սաուդյան Արաբիայում դա երկգագաթ եռանկյունու ձև ունեցողն է, որն այլ ձևերի նկատմամբ բացարձակ մեծամասնություն է կազմում: Կենտրոնական Սաուդյան Արաբիայում շատ հաճախ հանդիպում են նաև իրար ագուցված մի քանի շրջապարիսպներից կազմված *օդապարուկներ*, որոնք մյուս տարածաշրջաններում գրեթե հայտնի չեն:

Վիճակագրության արդյունքներն ամփոփել ենք՝ տարբեր տարածաշրջաններում «հաճախադեպ ձևերի» բաշխվածությունները համեմատության մեջ դնելով[16] [աղ. 2]: Այս աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես է հաճախադեպ ձևերի քանակը փոխվում ըստ տարածաշրջանների: Հաճախադեպ ձևերի առաջին վեցյակը որակապես նույն ձևով է բաշխված ՀՀ-ում, Հյուսիսային Միջագետքում, կենտրոնական Սիրիայում և Հարրաթ ալ-Շաամում: Սակայն Հարրաթ ալ-Շաամում մեծ քանակությամբ հանդես է գալիս աստղաձև *օդապարուկ*ը [աղ. 2/13], որի քանակը մյուս տարածաշրջաններում չնչին է: Հյուսիսային տարածաշրջաններում *օդապարուկներ*ի հաճախադեպ ձևերի առաջին վեցյակի միասնական բաշխվածությունն ամբողջովին խախտվում է կենտրոնական Սաուդյան Արաբիայում: Այստեղ գերակշռում են 2 ձևի *օդապարուկներ*՝ սեղանաձևը [աղ. 2/6] և երկգագաթ եռանկյունաձևը [աղ. 2/18]:

Եթե որպես հիմք ընդունենք այն ենթադրությունը, որ *օդապարուկներ*ի ձևերի բաշխվածությունն արտացոլում է դրանց գործառույթի որոշ առանձնահատկություններ, ապա կարելի է եզրակացնել, որ *օդապարուկներ*ի գործառույթը Հայաստանում, Վերին Միջագետքում և կենտրոնական Սիրիայում միասնական ձևով է դրսևորվել: Այն մասնակիորեն շեղվում է Հարրաթ ալ-Շաամում և լիարժեքորեն շեղվում՝ կենտրոնական Սաուդյան Արաբիայում:

V-աձև կառույցներ և օդապարուկներ

ՀՀ-ում, Նեգևի անապատում (Իսրայել) և Սինայի թերակղզում (Եգիպտոս) հայտնաբերվել են կառույցներ, որոնք կազմված են երկու երկար քարաշարից և կցակառույց աշտարակից: Հետազոտողների մի մասն այս շինությունները նույնացնում է *օդապարուկներ*ի հետ՝ դրանք անվանելով «V-աձև օդապարուկներ»[17]: Ըստ Բորիս Գասպարյանի՝ V-աձև կառույցները կարող են *օդապարուկներ*ի վաղագույն տեսակը ներկայացնել[18]: Հետազոտողների մյուս մասի կարծիքով՝ V-աձև կառույցները չեն կարող նույնացվել *օդապարուկներ*ի

16 «Հաճախադեպ» ենք համարում այն ձևերը, որոնք տվյալ տարածաշրջանի *օդապարուկներ*ի ընդհանուր թվի 2%-ից ավելին են կազմում:

17 Holzer et al. 2010, 2; Nadel et al. 2010, 977; Bar-Oz, Nadel 2013, 4–5.

18 Բանավոր հաղորդում (2017 թ. նոյեմբեր):

Աղյուսակ 2.
Օդապարուկների փարածված ձևերի բաշխվածությունն ըստ փարածաշրջանների



հետ, որովհետև նախ՝ դրանք չունեն շրջապարիսպ, որը *օդապարուկ*ի հիմնական բաղադրիչն է, և երկրորդ՝ դրանք շատ քիչ քանակությամբ են հանդես գալիս՝ շատ սահմանափակ տարածքներում[19]:

Իրականում, եթե *օդապարուկ*ն ու V-աձև կառույցը միևնույն նշանակության շինությունը լիներ, ապա ինչ կարիք կար մի դեպքում՝ այդքան ուժ ու ժամանակ ներդնել մի քանի հեկտար մակերես ընդգրկող շրջապարիսպ կառուցելու և դրան որոշակի ձև տալու համար, իսկ մյուս դեպքում՝ կառուցել միայն մի փոքր աշտարակ: Այս հարցի միակ տրամաբանական բացատրությունն այն է, որ մարդիկ որոշակի գործառութային տարբերություն են դրել *օդապարուկնե-ր*ի և V-աձև կառույցների միջև: Հաշվի առնելով այն, որ V-աձև շինությունն իր կառուցվածքով ու չափերով համապատասխանում է *օդապարուկ*ի խորշին և որ հաճախ է հանդիպում *օդապարուկներ*ի մոտակայքում, կարելի է ենթադրել, որ այդ երկու կառույցներն ունեցել են գործառութային մասնակի ընդհանրություններ, սակայն որպես միևնույն տեսակի շինություն չեն կարող դիտարկվել:

Օդապարուկների նախատիպերի առկայության հարցը

Վերջերս որոշ հնագետներ այն կարծիքն են հայտնել, թե *օդապարուկներ*ն ի սկզբանե չեն ունեցել իրենց դասական կառուցվածքը, այլ առաջացել են առավել պարզ կառույցներից[20]: Ըստ Ա. Բեթսի՝ *օդապարուկներ*ի հնագույն և պարզագույն տեսակը «մեանդրաձև պատերն» են, որոնց և *օդապարուկներ*ի միջև միջանկյալ օղակ են կազմել «պայուսակաձև» և «երեքնուկաձև» կառույցները [նկ. 5][21]: Ինչպես նշում է հեղինակը՝ Հարրաթ ալ-Շաամ անապատում կան դեպքեր, երբ «երեքնուկաձև» կառույցի տեղում աստղաձև օդապարուկ է կառուցված, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մի ձևից առաջացել է մյուսը: Այս ենթադրության օգտին է բերվում նաև այն փաստը, որ Սաուդյան Արաբիայում *վադիներից*[22] մեկում մեանդրաձև պատերից ոչ հեռու գտնվել են *օդապարուկներ*, որոնք երեքնուկաձևի և աստղաձևի միջանկյալ մի տարբերակ են ներկայացնում[23]:

Թեև Ա. Բեթսի առաջարկած վարկածի համար կան հիմքեր, սակայն որոշ հանգամանքներ անհավանական են դարձնում *մեանդրաձև պատերի*ց՝ կանոնավոր ձև ունեցող *օդապարուկ*ի առաջացման տեսակետը: Նախ, խնդիրն այն է, որ ներկայումս հնարավոր չէ ասել, թե արդյո՞ք *մեանդրաձև պատերը* և *օդապարուկ*ն ունեցել են միևնույն գործառույթը: Ըստ Ս. Քեմփիի, Ա. ալ-Մալաբեհի և Ա. Բեթսի՝ *մեանդրաձև պատերը*, «պայուսակաձև» և «երեքնուկաձև» կառույցներն ու *օդապարուկներ*ը ունեցել են միևնույն գործառույթը՝ եղել են որս անելու համար նախատեսված կառույցներ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ որևէ հետազոտող երբևիցե հիմնավորապես չի ապացուցել վերոհիշյալ կառույցների և, մասնավորապես, *օդապարուկներ*ի որսադարան լինելու ենթադրությունը:

19 Barge et al. 2015, 164–165.

20 Kempe, al-Malabeh 2010; 2013; Betts, Burke 2015.

21 Betts, Burke 2015, 80–83.

22 Արաբերեն վադի/ուադի (وادي [wādī]) նշանակում է «ցամաքած գետահուն»:

23 Betts, Burke 2015, 79.



Նկար 5. Օդապարուկների զարգացման փուլերն՝ ըստ Ա. Բեթսի և Դ. Բարքի (Betts, Burke 2015, fig. 5)

Երկրորդ խնդիրն այն է, թե ինչպե՞ս էր հնարավոր ստանալ *օդապարուկների* կանոնավոր ձևեր՝ *մեանդրաձև պատերից* առաջացած «պայուսակաձև» ու «երեքնուկաձև» կառույցներից: Եթե նույնիսկ ընդունենք Ա.Բեթսի այն տեսակետը, թե «երեքնուկաձև» կառույցից է առաջացել աստղաձև *օդապարուկը*, ապա այդ դեպքում կրկին հարց է մնում, թե ինչպես կարող էին առաջացած լինել *օդապարուկների* բազմաթիվ մյուս ձևերը, որոնք ամենևին էլ չեն համապատասխանում երեքնուկի ձևին: Եթե առաջադրված վարկածը ճշմարտացի լիներ, ապա այն պիտի վերաբերեր բոլոր դեպքերին, այնինչ այդ վարկածը հաստատվում է միայն աստղաձև *օդապարուկի* պարագայում (այլ ձևերի համար նախատիպեր չեն գտնվել): Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ աստղաձև *օդապարուկը* միայն Հարրաթ ալ-Շաամում է մեծ տոկոս կազմում [գծ.1–5]:

Երրորդ խնդիրն այն է, որ եթե *օդապարուկները*, *մեանդրաձև պատերը*, «պայուսակաձև» ու «երեքնուկաձև» կառույցները մի համակարգ են, ինչպես պնդում են հեղինակները[24], ապա կառույցների այդ համակարգը պետք է նկատելի լիներ բոլոր այն տարածաշրջաններում, ուր կան *օդապարուկներ*: Մինչդեռ արբանյակային լուսանկարների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ *մեանդրաձև պատերն* ու դրանց ելուստներից առաջացած «երեքնուկաձև» կառույցները հանդիպում են միայն հարավային տարածաշրջաններում՝ Հարրաթ ալ-Շաամում և Սաուդյան Արաբիայում[25]:

Ներկայացված խնդիրները վկայում են, որ դեռևս չկան բավարար փաստեր՝ *օդապարուկի* ծագումը հանգեցնելու պարզ ձևեր ունեցող կառույցներին,

24 Betts and Burke 2015.

25 Տե՛ս http:: //www.globalkites.fr/Interactive-Map

ուստիև դրանց փոխհարաբերությունը հասկանալու համար անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

AKKERMANS et al. 2014
Akkermans P.M.M.G., Huigens H.O., Brüning M.L., A landscape of preservation: late prehistoric settlement and sequence in the Jebel Qurma region, northeastern Jordan // Levant, 2014, №46/2, 186–205.

BARGE et al. 2015a
Barge O., Brochier J.É., Crassard R., Morphological diversity and regionalization of kites in the Middle East and Central Asia //Arabian Archaeology and Epigraphy, 2015, №26/2, 162–176.

BARGE et al. 2015b
Barge O., Brochier J.É., Régagnon E., Chambrade M.–L., Crassard R., Unity and diversity of the kite phenomenon: a comparative study between Jordan, Armenia and Kazakhstan // Arabian Archaeology and Epigraphy, 2015, №26 (2), 144–161.

BAR-OZ, NADEL 2013
Bar-Oz G., Nadel D., Worldwide large-scale trapping and hunting of ungulates in past societies // Quaternary International, 2013, №297, 1–7.

BETTS, HELMS 1986
Betts A.V.G, Helms S.W., Rock art in eastern Jordan: 'kite' carvings? // Paléorient, 1986, №12/1, 67–72.

BETTS, BURKE 2015
Betts A.V.G., Burke D., Desert kites in Jordan – a new appraisal // Arabian Archaeology and Epigraphy, 2015, №26/2, 74–94.

BROCHIER et al. 2014
Brochier J.É., Barge O., Karakhanyan A.S., Kalantarian I.A., Chambrade M.–L., Magnin F., Kites on the margins: the Aragats kites in Armenia // Paléorient, 2014, №40/1, 25–53.

ECHALLIER, BRAEMER 1995
Échallier J., Braemer F., Nature and functions of the desert kites: new data and hypothesis // Palnorient, 1995, №21, 35–63.

EDDY, WENDORF 1999
Eddy F.W., Wendorf F. (ed.-s), An Archaeological Investigation of the Central Sinaıı, Egypt, Cairo-Boulder, University Press of Colorado, 1999.

HELMS, BETTS 1987
Helms S.W., Betts A.V.G., The desert "kites" of the Badiyat Esh-Sham and North Arabia // Paléorient, 1987, №13/1, 41–67.

HOLT 1923
Holt A.L., The future of the north Arabian desert // The Geographical Journal, 1923, №62/4, 259–268.

HOLZER et al. 2010
Holzer A., Avner U., Porat N., Horwitz L.K., Desert kites in the Negev desert and north-east Sinai: their function, chronology and ecology // Journal of Arid Environments, 2010, №74, 806–817.

KEMPE, AL-MALABEH 2010
Kempe S., Al-Malabeh A., Hunting kites ('desert kites') and associated structures along

the eastern rim of the Jordanian Harrat: a geo-archaeological Google Earth images survey // Zeitschrift für Orient-Archäologie, 2010, №10/3, 46–86.

KEMPE, AL-MALABEH 2013
Kempe S., Al-Malabeh A., Desert kites in Jordan and Saudi Arabia: structure, statistics and function, a Google Earth study // Quaternary International, 2013, №297, 126–141.

KENNEDY et al. 2015
Kennedy D.L., Banks R., Dalton M., Kites in Saudi Arabia // Arabian Archaeology and Epigraphy, 2015, №26, 177–195.

KOBUSIEWICZ 1999
Kobusiewicz M., Excavations at Sinai-10: the kite site, Romythi locality // Eddy, Wendorf 1999, 173–180.

MORANDI BONACOSSI 2014
Morandi Bonacossi D., Desert-kites in an Aridifying Environment. Specialised Hunter Communities in the Palmyra Steppe during the Middle and Late Holocene // Studia Chaburensia, 2014, №4, 33–47.

NADEL et al. 2010.
Nadel D., Bar-Oz G., Avner U., Boaretto E., Walls, ramps and pits: the structure of the Samar desert kites, southern Negev, Israel //Antiquity, 2010, №84, 976–992.

NADEL et al. 2015
Nadel D., Bar-Oz G., Malkinson D., Spivak P., Langgur D., Porat N., Khechoyan A.H., Nachmias A., Crater-Gershtein E., Katinaa A., Bermatov-Paz G., Nahapetyan S.A., Gasparyan B.Z., New insights into desert kites in Armenia: the fringes of the Ararat Depression // Arabian Archaeology and Epigraphy, 2015, №26, 120–143.

MAITLAND 1927
Maitland I., The 'Works of the old men' in Arabia // Antiquity, 1927, №1, 197–203.

MALKINSON et al. 2017
Malkinson D., Bar-Oz G., Gasparyan B.Z., Nachmias A., Gershtein E.C., Nadel D., Seasonal use of corrals and game traps (desert kites) in Armenia // Quaternary International, 2017, №484, 285–304.

REES 1929
Rees L.W.B., The Transjordan desert // Antiquity, 1929, №3, 389–407.

VAN BERG et al. 2004
Van Berg P.-L., Vander Linden M., Lemaitre S., Cauwe S., Picalause V., Desert kites of the Hemma Plateau // Paleorient, 2004, №30, 89–99.

ZEDER et al. 2013
Zeder M.A., Bar-Oz G., Rufolo S., Hole F. 2013, New perspectives on the use of kites in mass-kills of Levantine gazelle: A view from northeastern Syria // Quaternary International, 2013, №297, 110–125.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Մ. Ս. Շախմուրադյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Անապատի օդապարուկների» կառուցվածքի և ձևերի քննություն

Հիմնաբառեր՝ օդապարուկ, կառուցվածք, ձև, վիճակագրություն, քանակական բաշխվածություն, V-աձև կառույց:

Շուրջ 3000 *օդապարուկների*ի արբանյակային լուսանկարների վերլուծության հիման վրա հոդվածում առանձնացվել են *օդապարուկների*ի յոթ հիմնական ձևեր (ուղղանկյուն, շրջանաձև, բահաձև, եռանկյուն, շեղանկյուն, սեղանաձև, աստղաձև), որոնք հանդես են գալիս բոլոր տարածաշրջաններում: Դրանցից վեցը (ուղղանկյուն, շրջանաձև, բահաձև, եռանկյուն, շեղանկյուն, սեղանաձև) ներկայացնում են ՀՀ-ի, Հյուսիսային Միջագետքի և Կենտրոնական Սիրիայի *օդապարուկների*ի 80%-ը: V-աձև կառույցների և *օդապարուկների*ի կառուցվածքների համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք չեն կարող դիտարկվել որպես միևնույն կառույց, ուստի օդապարուկներն ի սկզբանե պետք է ունեցած լինեին իրենց բնորոշ դասական կառուցվածքն ու ձևերը:

M. S. Shakhmuradyan
Institute of Archaeology and Ethnography

Structure and Forms of ‘Desert Kites’

Keywords: ‘Desert kites’, structure, form, statistics, quantitative distribution, V-shaped structures.

‘Desert kites’ are large-scale stone structures of different forms, which are spread in the Anterior and Central Asia. The study of the structure of these constructions enables to conclude that they have three main and stable parts: an enclosure, stone rows, and towers. Some ‘kites’ may have secondary parts as well, such as points and niches. Though the complete form of a ‘kite’ is comprised of these parts, enclosure plays a major role in determining the form of the structure.

Based on the study of thousands of satellite images of kites, this paper presents the main forms of kites with their sub-forms, as well as the forms that have not been published previously. The analysis of the kite forms indicates that some of them are geometrical (square, triangle, circle, trapezoid, etc.), while others remind of images of different shapes. Similar forms of ‘kites’ occur in regions that are thousands of kilometers apart. Seven main forms of ‘kites’ have been distinguished (rectangular, circular, triangular, trapezoidal, mace-shaped, spade-shaped, star-shaped. Six of them (rectangular, circular, triangular, trapezoidal, mace-shaped, spade-shaped) constitute approximately 80% of ‘kites’ in Armenia, Northern Mesopotamia, and Central Syria. In these regions, not only the main forms, but also quantitative distributions, are nearly identical. In Harrat al Shaam, the distribution of the six main forms is the same, but the star-shaped ‘kites’ are quantitatively dominant, though they account for an insignificant percent in other regions. The ‘kites’ of Central Saudi Arabia differ from the ‘kites’ of other regions both by the main forms present in this region and their quantitative distribution.

There exists a view, according to which kites originally did not have their classical structure, but rather originated from prototypes. This paper addresses that issue and tries to prove that kites did

not have simpler prototypes but had the classical structure from the beginning. The problem whether structures consisting of long stone rows and a tower (V-shaped structures) should be considered as kites or not is also considered in the given work.

М. С. Шахмурадян
Институт археологии и этнографии

Структура и формы «пустынных змей»

Ключевые слова: «пустынные змеи», структура, форма, статистика, количественная дистрибуция, V- евидные сооружения.

«Пустынные змеи» представляют собой крупномасштабные каменные сооружения различных форм, которые распространены на территории Передней и Средней Азии. Изучение структуры этих сооружений дает возможность заключить, что они состоят из трех основных частей: ограждения, выложенных из камней ряда и башен. Они могут иметь также второстепенные элементы, такие как ниши и выступы. Несмотря на то, что конечная форма «змей» образуется совокупностью трех основных элементов, решающую роль в определении формы сооружения играет ограждение.

На основе изучения тысяч спутниковых снимков «змей» в работе представлены основные формы змей и в том числе их суб-формы, а также формы змей, которые ранее не были опубликованы. Анализ форм дает возможность утверждать, что одну их часть представляют геометрические формы (квадрат, круг, треугольник, ромб, трапеция), а другие напоминают изображения разных предметов. Статистические данные свидетельствуют о том, что эти формы повторяются в разных регионах. В работе выделены семь основных форм, которые встречаются во всех регионах. Шесть из них представляют 80% форм «змей» Армении, Северной Месопотамии и Центральной Сирии. В перечисленных регионах идентична также количественная дистрибуция большинства форм. В пустыне Аррат аль-Шаам количественная дистрибуция шестерки основных форм сохраняется, но здесь заметно преобладает звездовидный «змей», который в северных регионах встречается довольно-таки редко. «Змеи» Центральной Саудовской Аравии как по основным формам, так и по их количественной дистрибуции значительно отличаются от «змей» других территорий.

Согласно одной теории, изначально существовали более примитивные формы каменных сооружений, которые легли в основу более поздних классических «змей». В настоящей работе наряду с рассмотрением данной проблемы предпринята попытка доказать, что «змеи» не были образованы от более простых сооружений, а имели свою классическую структуру. Помимо сказанного, в статье также обсуждается вопрос о том, можно ли V-евидные сооружения отнести к «змеям».

Ալեքսան Զոհարյան, ե.գ.թ.
ՀԱԻ

ՎԱՆԱԿԱՏԻ ՀՈՒՄՔԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԳՏՆՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐԻ pXRF ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ[1]

*Բրոնզի դարաշրջանում ամբողջ Հարավային Կովկասում ծաղկում ապրող կուրարաքսյան մշակույթի կրողները, չնայած մետաղագործության զարգացմանը, տարբեր ոլորտներում բավական լայնորեն օգտագործում էին նաև վանակատ (*օբսիդիան*): Վանակատի հումքի այս կամ այն աղբյուրի ընտրությունը կախված էր տվյալ բնակատեղիին բնորոշ մի շարք պայմաններից: Սույն հոդվածում քննարկվում են մ.թ.ա 3-րդ հազարամյակում ներկայիս ՀՀ տարածքի տարբեր շրջանների բնակիչների կողմից վանակատի աղբյուրների օգտագործման սկզբունքները: Ուսումնասիրել ենք կուրարաքսյան մշակույթին պատկանող երեք հուշարձանի՝ Ծաղկասարի, Թեղուտի և Ագարակի՝ վանակատի օգտահանման մոդելները: Վերոնշյալ հուշարձանների վաղբրոնզեդարյան կոնտեքստից պեղված նյութից ընտրել ենք վանակատե 292 նմուշներ, որոնք ենթարկվել են երկրաքիմիական անալիզի: Աշխատանքի հիմքում ընկած վերլուծությունը կատարված է շարժական ռենտգենային ֆլյուորեսցենցիայի (pXRF) մեթոդով: Այս մեթոդի օգնությամբ՝ որևէ նմուշի քիմիական կազմի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում որոշելու դրա ծագումնաբանությունը: Ստացված անալիտիկ տվյալների վերծանումը բացարձակ տարբեր օգտահանման մոդելներ է տվել ուսումնասիրվող երեք հուշարձաններից յուրաքանչյուրի համար: Հոդվածում զատ-զատ դիտարկվում են ամեն մի մոդելն ու իր առանձնահատկությունները:*

Հիմնաբառեր՝ բրոնզի դար, կուրարաքսյան մշակույթ, վանակատ (օբսիդիան), երկրաքիմիական անալիզ, pXRF:

Ներածություն

Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսից սկսած՝ ամբողջ Այսրկովկասում տեղի են ունենում մշակութային կտրուկ փոփոխություններ: Դրանք տեղ են գտնում բրոնզ ծաղկում ապրող և մերօրյա գրականության մեջ *կուրարաքսյան* կամ այլ կերպ՝ *շենգավիթյան* կոչվող մշակույթում[2]: Այս փոփոխու-

[1] Խորհին շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանին՝ Ծաղկասարի և Ագարակի, ինչպես նաև պ.գ.դ. Ռուբեն Բաղալյանին՝ Թեղուտի հուշարձանների նյութը տրամադրելու համար:

[2] Кушнарева 1993, 98.

թյունները հիմնականում նկատելի են հողագործության, անասնապահության ու արհեստագործության մեջ:

Առաջին հերթին, տարածաշրջանում նկատվում է բնակչության կտրուկ աճ, որն աննախադեպ առաջընթաց է ապահովում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Զարգանում է գյուղատնտեսությունը, հիմնականում՝ հողագործությունն ու անասնապահությունը, որոնց համար մշակվում են ամբողջապես նոր համակարգեր: Արհեստագործության մեջ սկսում են կիրառվել շատ ավելի բազմազան և տեխնիկապես նոր գործիքներ, իսկ խեցեգործությունը միանգամայն նոր մակարդակի է հասնում՝ դառնալով կուրարաքսյան մշակույթի առաջնահերթ բնութագրիչը:

ՀՀ սահմաններում, ըստ վերջին տվյալների, կուրարաքսյան մշակույթի տարբեր ժամանակագրական փուլերին պատկանող՝ առնվազն 200 հուշարձան է արձանագրվել[3]:

Վաղ բրոնզի դարաշրջանի Այսրկովկասում մետաղագործությունը հասել էր համեմատաբար բարձր մակարդակի և ենթադրաբար ընկալվում էր որպես անասնապահությունից ու հողագործությունից առանձին մի արհեստ[4]: Այդ ժամանակաշրջանում էր, որ անցում կատարվեց մետաղյա գործիքների, որոնք կիրառվում էին կյանքի բոլոր ոլորտներում: Մետաղն օգտագործվում էր ոչ միայն զարդերի, այլև գործիքների պատրաստման ու հատկապես՝ զինագործության մեջ[5]: Կուրարաքսյան մշակույթի կրողները հստակ հասկանում էին մետաղի առավելությունները տարատեսակ քարերի, փայտի ու ոսկրի նկատմամբ, որոնք կիրառվել էին նախորդ դարաշրջաններում՝ նեոլիթում և էնեոլիթում: Այս պատճառով՝ քարը, որպես հումք, վաղ բրոզնի դարում մեծ մասամբ դուրս է գալիս շրջանառությունից:

Այսուհանդերձ, մի շարք ոլորտներում քարե հումքը շարունակում է օգտագործվել դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Խոսքը վերաբերում է հիմնականում վանակատին, ավելի փոքր չափաբաժնով՝ *կայծքար*ին, *դացիտ*ին և *հասպիս*ին: Այդ հումքն անփոխարինելի էր տնտեսության որոշ ճյուղերում. մասնավորապես, դրանից էին պատրաստում մի շարք գործիքներ (մանգաղի ներդիր, քերիչ), զարդեր, զենքեր (սետասլաքներ), ինչպես և խեցեղեն (մանրացված տեսքով)[6]:

Երկրաբանական բնութագիրը

Քարի և մասնավորապես՝ վանակատի արդյունաբերության մասին խոսելիս՝ անհրաժեշտ է անդրադառնալ տարածաշրջանի երկրաբանական բնութագրին՝ տվյալ հումքի աղբյուրների մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար: Ողջ պատմության ընթացքում Հայկական լեռնաշխարհում տեղի են ունեցել մի շարք տեկտոնական շարժեր, որոնց պատճառով Հայաստա-

3 Badalyan 2014, 72–80.

4 Кушнарева, Марковин 1994, 58.

5 Геворкян 1980, 67.

6 Palumbi et al. 2014, 43–44.

նը համարվում է երիտասարդ հրաբխականության՝ դասական ակտիվ շրջան: Տեկտոնական գործընթացներում առանձնահատուկ տեղ ունի *ռիոլիտային* հրաբխականությունը, որի լավաների արտավիժման շնորհիվ էլ առաջանում են վանակատի հոսքերը[7]: Այս տիպի հրաբխականության հետևանքով՝ միայն ՀՀ տարածքում առկա են շուրջ 450 հրաբխային գմբեթներ և վանակատի՝ 20-ից ավելի մերկացումներ: Այդ պատճառով է, որ Հայաստանն աշխարհում վանակատով ամենահարուստ տարածաշրջաններից է: Տեղի բնակչությունը բոլոր ժամանակներում օգտագործել է լավային հոսքերը՝ որպես տարածաշրջանի համար գլխավոր քարե հումք ծառայող վանակատի աղբյուրներ:

Զարմանալի չէ, որ մեր տարածաշրջանի կուրարաքսյան բոլոր բնակատեղիների քարի արդյունաբերությունն ավելի քան 90%-ով ներկայացված է հենց վանակատով: Չնայած ՀՀ տարածքում վանակատի մի շարք խոշորագույն աղբյուրների առկայությանը՝ որոշ դեպքերում, այլևայլ պատճառներով, բավական լայնորեն շահագործվել են նաև հարակից տարածքներում՝ հատկապես ներկայիս Թուրքիայում և Վրաստանում գտնվող՝ վանակատի առատ մերկացումները:

Սույն հոդվածում անդրադարձ ենք կատարում կուրարաքսյան մշակույթի կրողների օգտագործած՝ վանակատի հումքի ծագումնաբանությանը, փորձելով պարզել մի շարք հուշարձաններից հայտնաբերված վանակատե գտածոների աղբյուրը: Սա հնարավորություն է տալիս վանակատի աղբյուրների օգտագործման սկզբունքների մասին որոշակի դատողություններ անելու:

Մեթոդաբանություն

«Հրաբխային ապակու»՝ վանակատի հետազոտման համար ամբողջ աշխարհում բավական լայն կիրառություն ունեն արդի *անալիտիկ* մեթոդները, որոնք փոխարինել են նախկին՝ օպտիկական սպեկտրոսկոպիկ մեթոդին[8]: Անալիտիկ մեթոդների շարքում են՝ *նեյտրոնային ակտիվացման* (INNA), *պլազմային սպեկտրոմետրիայի* (LA-ICP-MS) և *ռենտգենային ֆլյուորեսցենցիայի* (XRF) մեթոդները՝ իրենց գերժամանակակից և պրակտիկ շարժական տարատեսակներով[9]: Հենց այս մեթոդներով են ներկայումս ուսումնասիրում վանակատի քիմիական կազմը՝ պարզելու համար տվյալ նմուշի ծագումնաբանությունը:

Մեր աշխատանքի ընթացքում հավաքած նմուշներն ուսումնասիրելիս՝ օգտագործել ենք շարժական Brucker Tracer III SD մոդելի *սպեկտրոմետրը*: Այս սարքի առավելությունը ոչ միայն նրա շարժունակությունն է, այլև անալիզի արագությունն ու բավական մեծ ճշգրտությունը, որոնք հատուկ են միայն *ռենտգենային սպեկտրոմետրի*երի լաբորատոր տեսակին: Դրա պատճառը սարքի ստուգաճշտման սխեման է: Տվյալ մեթոդի առանձնահատկությունները մանրամասնորեն ներկայացված են մի շարք աշխատություններում[10]:

7 Карапетян 1972, 15; Karapetian et al. 2001, 194–198.

8 Cann, Renfrew 1964.

9 Frahm 2013; Frahm et al. 2014.

10 Shakley 2011; 2012; Goodale et al. 2012; Speakman, Shakley 2013; Frahm 2013; Frahm et al. 2014.

Սարքը համալրված է նաև ալյումին, տիտան և կապար պարունակող գերզգայուն *սիլիկոնե դետեկտոր*ով և համապատասխան զտիչով, որն ունակ է անալիզի ենթարկելու ամեն տեսակի նյութ՝ ապահովելով անալիզի կարճ ընթացքն ու *սպեկտրոմետրի* բարձր էներգետիկ թափանցելիությունը: Սարքի *ռենտգենային* ճառագայթումն իրականացնում է *ռոդիումային ռենտգենային* խողովակը: *Անալիզի* տևողությունն ընտրվել է 90 վայրկյան, իսկ լուսածորման լարման պարամետրերը՝ 40 000 V, 25 μA:

Օգտագործելով նշված մեթոդը՝ նախ անալիզի ենք ենթարկել ՀՀ տարածքի 20 և Վրաստանի տարածքի 1 վանակատի աղբյուրներից վերցրած մերօրյա «հում» նմուշներ, որոնց հետ նույնականացնելու համար համեմատել ենք մեր հնագիտական գտածոները: Թե՛ երկրաբանական և թե՛ հնագիտական նմուշների համար ստացվել է ppm արժեքներով 12 քիմիական տարրերի պարունակություն, որոնց թվում են՝ K, Ca, Mn, Fe, Zn, Ga, Th, Rb, Sr, Y ,Zr, Nb տարրերը [նկ. 1, էջ 227]:

Աղբյուրագիտական հիմքը և վերլուծության արդյունքները

Ուսումնասիրվող նյութը, ինչպես նշեցինք, բաղկացած է կուրարաքսյան մշակույթի երեք բնակատեղիների պեղածոներից: Այս երեք հուշարձաններն աշխարհագրորեն գտնվում են ՀՀ տարբեր մասերում. ներկայացնում են կուրարաքսյան մշակույթի տարբեր մշակութային ենթախմբեր և ժամանակագրական փուլեր: Ընդհանուր առմամբ, տվյալ հուշարձաններից անալիզի համար ընտրվել են վանակատե 292 նմուշներ, որոնք էլ կազմում են սույն հոդվածի աղբյուրագիտական հիմքը:

ա) Ծաղկասար–1 հնավայրը միաշերտ բնակատեղի է, որը բնակեցված է եղել կարճ ժամանակահատվածում՝ կուրարաքսյան մշակույթի առաջին ժամանակագրական փուլում: Գտնվում է Արագածոտնի մարզի Ծաղկասար գյուղից 2 կմ հյուսիս-արևելք: Ծաղկասարն անմիջապես Արագածի լեռնազանգվածի արևմտյան լանջին է՝ Արտենի հրաբխի հարևանությամբ: Ծաղկասար–1 հուշարձանի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40°28′ և արևելյան երկայնության 43°55′: Բնակավայրն ունի մոտ 10 հա մակերես: Տվյալ հուշարձանը պեղել է Պ.Ս. Ավետիսյանի ղեկավարած արշավախումբը 2005–2008 թվականներին. պեղումների արդյունքները հիմնականում հրատարակված չեն[11]:

Ծաղկասար–1 հուշարձանի վաղբրոնզեդարյան համատեքստից պեղվել և վերլուծության համար ընտրվել է վանակատե 122 նմուշ: Վերլուծության արդյունքում՝ նմուշները հիմնականում բաժանվել են երկու հիմնական խմբի, որոնք ակնառու են Fe/Rb, Zr/Nb [նկ. 2, 3, էջ 227] գծապատկերներում: Այդ խմբերը վերաբերում են Արտենի հրաբխային համալիրի երկու գմբեթների հումքին՝ համապատասխանաբար Փոքր և Մեծ Արտենիների վանակատին:

[11] Հուշարձանի առավել մանրամասն նկարագրությունը տես՝ Hovsepyan, Mnatsakanyan 2011:

Ծաղկասար–1 հուշարձանը գտնվում է տարածաշրջանում վանակատի վերոնշյալ կարևոր աղբյուրներից ընդամենը 15 կմ հյուսիս-արևմուտք, և զարմանալի չէ, որ նմուշների գերակշիռ մասը պատկանում է հրաբխային այս հզոր համալիրի հումքին: Ըստ այդմ, 122 նմուշից 108-ը (89%) նույնականացվել է որպես Փոքր Արտենիի հումք, իսկ 11 նմուշ (9%) բաժին է ընկել Մեծ Արտենիին: Ակնհայտ է, որ նախապատվությունը տրվել է Փոքր Արտենիին: Դա կարելի է բացատրել նրանով, որ Մեծ Արտենիի համեմատ՝ Փոքր Արտենիում վանակատի կուտակումներն ավելի առատ են և ունեն շատ ավելի բարձր որակ: Նույնականացված է Ծաղկասար–1-ի նմուշների մոտ 98%-ը, իսկ 3 նմուշների ծագումնաբանությունն էլ, ցավոք, հնարավոր չեղավ պարզել:

Ստացված պատկերով հստակ ուրվագծվում է Ծաղկասար–1 վաղբրոնզեդարյան բնակատեղիի վանակատի օգտահանման միաղբյուր մոդելը, որի ամենահավանական պատճառը պետք է լիներ հուշարձանի աշխարհագրական դիրքը: Հարևանությամբ ունենալով առատ վանակատի կուտակումներ՝ տեղի բնակիչները կարիք չեն ունեցել օգտագործելու վանակատի այլ աղբյուրներ [նկ. 4, էջ 228]:

բ) Ագարակ–1 հնավայրը 5600 մ^2 տարածք զբաղեցնող հուշարձանախումբ է՝ Արագածոտնի մարզի Ագարակ գյուղի հարևանությամբ: Ագարակն աշխարհագրորեն գտնվում է Շամիրամի սարահարթի արևելյան մասի և Արարատյան դաշտի միջև: Հուշարձանի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40°17′ և արևելյան լայնության 44°16′[12]: Հուշարձանը բազմաշերտ է. ամենավաղ ժամանակաշրջանը պատկանում է կուրարաքսյան մշակույթին[13]: Հուշարձանից պեղված նյութը ներկայացված է Շրեշ-Մոխրաբլուրի և Կառնուտ-Շենգավիթի տիպերին պատկանող խեցեղենով[14]:

Ագարակ–1-ից առկա էին 130 վանակատե նմուշներ: Աղբյուրների բազմազանության տեսանկյունից՝ Ագարակ–1-ն ամենաուշագրավն է մեր ուսումնասիրած հնավայրերի շարքում: Ի տարբերություն Ծաղկասար–1-ի՝ այստեղ առանձնացրել ենք առնվազն 7 խումբ, որից վեցի ծագման աղբյուրները հայտնի են: Ընդհանուր առմամբ, առանձնանում է 9 աղբյուր, որից մեկի տեղադրությունն անհայտ է:

Առաջին և երկրորդ խումբ: Այս խմբերն ընդգրկում են Արտենիի նմուշները (ընդհանուր՝ մոտ 47%), որոնք, ինչպես և նախորդ հուշարձանում, կազմում են բացարձակ մեծամասնություն: Սրանք հստակ բնորոշվում են՝ իրենց ցածր Fe-ի և Sr-ի, և միմյանցից տարբերվում են՝ Nb-ի և Rb-ի պարունակություններով[15]:

Երրորդ խումբ: Այստեղ նմուշներ են Ծաղկունյաց լեռնաշղթայից, ընդ որում համալիրի բոլոր երեք ելքերից՝ Դամլիկ, Կամաքար և Թթվաքար[16]:

12 Badalyan, Avetisyan 2007, 25.

13 Թումանյան 2013:

14 Badalyan 2014, 71–73.

15 Տես Fe/Rb, Zr/Nb, Sr/Nb գծապատկերները [նկ. 5–7, էջ 229–230]:

16 Տես Fe/Rb գծապատկերը [նկ. 5, էջ 229]:

Չորրորդ խումբ: Այստեղ ներառված են Հատիսի նմուշները, որոնք զանազանելու համար, ելնելով դրանց նմանությունից, կիրառվել է (Ca*Y)/Th գործակիցը: Ըստ ներկայացված (Ca*Y)/Th գործակցի՝ Դամլիկի նմուշներում այն չի գերազանցում 4000 միավորը: Մնացած 6 նմուշները վերագրվել են Հատիսին:

Հինգերորդ խումբը կազմում են Գութանասարի նմուշները, որոնք ներկայացված են 21 գտածոներով (16%): Սրանք ակնհայտորեն առանձնանում են Zr/Nb և Sr/Nb գծապատկերներով [նկ. 6, 7, էջ 229]: Այս խմբի նմուշներից մեկը տարբերվում է իր Rb-ի և Nb-ի արժեքներով և հավանաբար պատկանում է Կարենիսի հոսքին:

Վեցերորդ խումբը կազմում են ևս 4 նմուշ, որոնք հստակ առանձնանում են իրենց անհամեմատ բարձր Rb և Nb տարրերի արժեքներով. սրանք վերագրվել են Գեղասարին:

Յոթերորդ անհայտ խումբ: Չնույնականացված 15 նմուշներից 7-ը միանման են և միասին կազմում են առայժմ անհայտ, բայց համասեռ մի խումբ, ինչը բավական ուշագրավ է: Այս խմբի նմուշները բնութագրվում են ցածր Sr-ի և բավական բարձր Zr-ի պարունակությամբ:

Մնացած 8 նմուշները հնարավոր չեղավ ո՛չ խմբավորել և ո՛չ էլ նույնականացնել:

Այսպիսով, Ագարակ–1 վաղբրոնզեդարյան բնակատեղիի վանակատի օգտահանման մոդելի մասին կարելի է ասել հետևյալը: Հումքի գլխավոր աղբյուրը Արտենին է, որը գտնվում է հուշարձանից մոտ 42 կմ հյուսիս-արևմուտք: Արտենիի նմուշները միասին կազմում են ընդհանուրի գրեթե 50%-ը: Չափաբաժնով հաջորդը Գութանասարն է, որը գտնվում է 35 կմ հյուսիս-արևմուտք (16%): Մոտ 38 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող Ծաղկունյաց լեռնաշղթայի աղբյուրներից Դամլիկին, Թթվաքարին և Կամաքարին են վերագրվել նմուշների համապատասխանաբար 7%, 5% և 4%-ը: 38 կմ դեպի արևելք գտնվող Հատիսի և ավելի հեռու՝ մոտ 65 կմ դեպի հարավ-արևելք գտնվող Գեղասարի չափաբաժինը կազմում է համապատասխանաբար 5% և 3%: Նմուշների ևս 5%-ը պատկանում է առայժմ անհայտ Y խմբին: Հետաքրքիր է, որ այս խմբի նմուշներ հայտնաբերվել են նաև Շիրակի մարզի Ոսկեհասկ հուշարձանից: Այս անհայտ խմբի ծագման հումքը, անալիտիկ արդյունքներից դատելով, ենթադրաբար վերաբերում է ներկայիս Թուրքիայի արևելքում գտնվող աղբյուրներից որևէ մեկին:

Ինչպես տեսնում ենք, Ագարակ–1-ում առկա պատկերը բոլորովին տարբեր է նախորդ հուշարձանի համաժամանակյա մոդելից: 9 տարբեր աղբյուրների հումքի առկայության փաստը խոսում է հուշարձանի բազմաղբյուր օգտահանման մոդելի մասին: Ագարակում արդեն նախապատվությունը չի տրվում ամենամոտ գտնվող մեկ աղբյուրին: Փոխարենը՝ առկա են բավական լայնորեն շահագործվող՝ մի քանի տարբեր կուտակումներ:

գ) Թեղուտ–1 և **Թեղուտ–2** պայմանական անունով կոչում ենք Լոռու մարզի երկու հնավայրեր, որոնք գտնվում են Թեղուտ գյուղի մոտակայքում: Նշված հուշարձանները համաժամանակյա են և պատկանում են կուրարաքսյան մշակույթի երկրորդ ժամանակագրական փուլին: Միմյանց հարևան այս

երկու հնավայրերը գտնվում են համապատասխանաբար Զորի Գեղ և Խառատանոց բնակատեղիների մոտ: Այստեղից ուսումնասիրել ենք վանակատի 20-ական նմուշ՝ հայտնաբերված Ս.Հոբոսյանի ղեկավարությամբ ընթացող պեղումների արդյունքում (2010–2016 թթ.):

Նախնական արդյունքների համաձայն՝ այս նմուշների մեծամասնությունը գրեթե միանման է: Սկզբում նույնականացվեցին միայն 3 նմուշներ: Առաջին երկուսը միանգամից վերագրվեցին Գեղասարին՝ ըստ իրենց բարձր Nb և Rb արժեքների: Երրորդ նմուշը հստակ համապատասխանեց Գութանասարի համալիրի վանակատին[17]: Հավանական է, որ ըստ իր տվյալների՝ նմուշը պատկանում է Գութանասարի Կարենիս գյուղի հարևանությամբ գտնվող հոսքին:

Մնացած նմուշներն առանձնացնելու համար կառուցվեցին բոլոր հնարավոր գծապատկերները: Դրանցից ամենաուշագրավը Sr/Zr հարաբերությունն էր, որով մի շարք նմուշներ հստակ վերագրվեցին Չիքիանիին (Վրաստան)՝ ըստ իրենց համեմատաբար ցածր Sr և Zr ցուցանիշների: Մնացյալ նմուշների՝ Կամաքարին և Թթվաքարին պատկանելությունը բացառելուց հետո ակնհայտ դարձավ, որ դրանք վերաբերում են կամ Հատիսին, կամ Դամլիկին: Դա պարզելու համար կառուցվեց (Ca*Y)/Th գծապատկերը: Այդպիսով առանձնացվեցին երեք նմուշներ, որոնց արժեքը գերազանցում էր 6000 միավորը, և դրանք վերագրվեցին Հատիսին: Մյուս 17 նմուշները, որոնց վերոնշյալ գործակիցն անհամեմատ ցածր էր, վերագրվեցին Դամլիկին: Եւս 4 նմուշի ծագումնաբանությունը պարզել չհաջողվեց:

Այսպիսով, հիմնվելով ստացված արդյունքների վրա՝ կարելի է նշել, որ Թեղուտի համար որոշվեց առնվազն 5 խումբ: Անալիզը ցույց տվեց, որ այս հուշարձանի համար առաջնային աղբյուրներ են եղել Չիքիանին և Դամլիկը: Հատկանշական է, որ Վրաստանի տարածքում գտնվող, մեր հուշարձանից բավական հեռու՝ 117 կմ հյուսիս-արևմուտք ընկած Չիքիանիին բաժին է ընկնում նմուշների 42%-ը: Չափաբաժնով երկրորդին՝ Դամլիկին է վերագրվել գտածոների 32%-ը: Այս աղբյուրը, Չիքիանիի հետ համեմատած, գտնվում է Թեղուտին շատ ավելի մոտ՝ ընդամենը 42 կմ դեպի հարավ-արևմուտք: Նույնականացված մյուս նմուշները պատկանում են Գութանասարի համալիրին (3%), Գեղասարին (ավելի քան 5%) և Հատիսին (8%):

Հետևաբար, Թեղուտի վաղբրոնզեդարյան հնավայրերի 5 նույնականացված աղբյուրների հումքը, ինչպես և Ագարակում, խոսում է վանակատի օգտահանման բազմաղբյուր մոդելի առկայության մասին: Սակայն, ի տարբերություն Ագարակի, այստեղ հիմնական աղբյուրը գտնվում է բնակատեղիից բավական մեծ հեռավորության վրա՝ չնայած մի շարք ավելի մոտ աղբյուրների առկայությանը: Նման պատկեր են դիտարկել նաև Է.Շատենիեն և Օ.Բարժը մի շարք հնավայրերում[18]: Թեղուտում հումքի աղբյուրի՝ նման տեղադրությունը

17 Տես Fe/Nb և Sr/Zr դիագրամները [նկ.10, 11]:

18 Chataigner, Barge 2010, 10.

կարող է վկայել տեղացիների՝ հյուսիսային շրջանների բնակիչների հետ ունեցած որոշակի կապերի մասին:

Եզրակացություն

Շարժական *ռենտգենային ֆլյուորեսցենցիայի* մեթոդի օգնությամբ վերլուծվել են վանակատե 292 նմուշների համար ստացված արդյունքները: Հաջողվել է խմբավորել նմուշների 94,86%-ը և նույնականացնել՝ 92.50%-ը, ինչը լավ արդյունք է նմանատիպ հետազոտության համար: Կուրարաքսյան երեք ուսումնասիրված հուշարձաններից յուրաքանչյուրի համար ունենք վանակատի օգտահանման համապատասխան մոդել՝ ներկայացված քարտեզի տեսքով: Նշված հնավայրերի տվյալների համեմատության արդյունքում ի հայտ են գալիս հումքի օգտագործման՝ 3 ամբողջովին տարբեր սկզբունքներ: Առաջին մոդելը միաղբյուր է, որը շեշտադրում է միայն մեկ՝ հնավայրին հարակից աղբյուրի հումքի վրա: Երկրորդ մոդելում շահագործվում են վանակատի՝ միանգամից մի քանի աղբյուրներ: Երրորդ մոդելը նույնպես բազմաղբյուր է, սակայն, ի տարբերություն նախորդի, բնակատեղիի մոտակայքում վանակատի բավական խոշոր աղբյուրի առկայության պարագայում, այնուամենայնիվ, լայնորեն օգտահանվում է այլ՝ ավելի հեռու գտնվող աղբյուրի հումքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ 2012
Թումանյան Գ.Ս., Ագարակ I բնակավայրը (2001–2008թթ.). Հնագիտական պեղումները Հայաստանում, № 25, Երևան, «Գիտություն», 2012:

ГЕВОРКЯН 1980
Геворкян А.Ц., Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, Изд. АН Арм. ССР, 1980.

КАРАПЕТЯН 1972
Карапетян С.Г., Особенности строения и состава новейших липаритовых вулканов Армянской ССР, Ереван, Изд. АН Арм. ССР, 1972.

КУШНАРЕВА, МАРКОВИН 1994
Кушнарева К.Х., Марковин В.И., Археология Эпохи бронзы Кавказа и Средней Азии, Москва, “Наука”, 1994.

КУШНАРЕВА 1993
Кушнарева К.Х., Южный Кавказ в IX-II тыс. до н.э. Этапы культурного и социально-экономического развития, Санкт Петербург, “Петербургское Востоковедение”, 1993.

BADALYAN 2014
Badalyan R.S., New data on periodization and chronology of the Kura-Araxes culture in Armenia // Paleorient, 2014, № 40/2, 71–92.

BADALYAN, AVETISYAN 2007
Badalyan R.S., Avetisyan P.S., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia // BAR International Series 1697, Oxford, Archaeopress, 2007.

CANN, RENFREW 1964
Cann J.R., Renfrew C., Caracterization of obsidian and it’s application to the Mediterranean region // Proceedings of the prehistoric society, 1964, XXX, 111–133.

CHATAIGNER, BARGE 2010
Chataigner C., Barge O., GIS (Geographic Information System) and obsidian procurement analysis: pathway modelisation in space and time // Hansen S., Hauptmann A., Motzenbäcker I., Pernichka E. (Hrsg.), Von Maikop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien, im 4. – 2. Jt. v. Chr. Bonn, «Rudolf Habelt Gmbh.», 2010, 1–14.

FRAHM 2013
Frahm E., Validity of "of-the-shelf" handheld portable XRF for sourcing Near Eastern obsidian chip debris // Journal of Archaelogical Science, 2013, № 40, 1080–1092.

FRAHM et al. 2014
Frahm. E., Shmidth B. A., Gasparyan B. Z., Yeritsyan B. G., Karapetian S. G., Meliksteyan Kh., Adler D. S., Ten seconds in the Field: Rapid Armenian obsidian sourcing with portable XRF to inform excavations and surveys // Journal of Archaelogical Science, 2014, № 41, 333–348.

GOODALE et al. 2012
Goodale N., Bailey D. G., Jones G. T., Prescott C., Scholz E., Stagliano N., Lewis C., pXRF: a study of inter-instrument performance // Journal of Archaelogical Science, 2012, № 39, 875–883.

HOVSEPYAN, MNATSAKANYAN 2011
Hovsepyan I., Mnatsakanyan A. Kh., The technological specifics of Early Bronze Age ceramics in Armenia: Tsaghkasar I and Talin Cemetery // Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2011, vol. 6. 2, 24–54.

KARAPETIAN et al. 2001
Karapetian S. G., Jrbashian R. T., Mnatsakanyan A. Kh., Late collision rhyolitic volcanism in the north-eastern part of the Armenian Highland // Journal of volcanology and geothermal research, 2001, № 112, 189–220.

PALUMBI et al. 2014
Palumbi G., Gratuze B., Harutyunyan A., Chataigner C., Obsidian-tempered pottery in the Southern Caucasus: a new approach to obsidian as a ceramic-temper // Journal of Archaeological Science, 2014, № 44, 43–54.

SHAKLEY 2011
Shackley M. S., X-ray Flourescence Spectrometry (XRF) in Geoarchaeology // Springer Science + Business Media, 2011, LLC, 109–142.

SHAKLEY 2012
Shackley M. S., Portable X-ray Flourescence Spectrometry (pXRF): The Good, the Bad, and the Ugly // Archaeology Southwest Magazine, 2012, № 26/2, 1–8.

SPEAKMAN, SHAKLEY 2013
Speakman R.J., Shackley M.S., Silo science and portable XRF in archaeology: a response to Frahm // Journal of Archaelogical Science, 2013, № 40, 1435–1443.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Կ. Ջուհարյան, *Ե.գ.թ.*
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Վանակատի հումքի օգտահանման սկզբունքները բրոնզի դարում՝ ըստ ՀՀ տարածքից գտնված նմուշների PXRF վերլուծության տվյալների

Հիմնաբառեր՝ բրոնզի դար, կուրարաքսյան մշակույթ, վանակատ (օբսիդիան), երկրաքիմիական անալիզ, pXRF:

Հոդվածում ՀՀ տարբեր շրջանների բնակիչների կողմից մ.թ.ա 3-րդ հազարամյակում վանակատի աղբյուրների օգտահանման սկզբունքներն ուսումնասիրվել են երեք հուշարձանի՝ Ծաղկասարի, Թեղուտի և Ագարակի օրինակներով: Նշված հուշարձանների վաղբրոնզեդարյան համատեքստից պեղված նյութից ընտրված 292 վանակատե նմուշների երկրաքիմիական անալիզի արդյունքներով խմբավորվել է նմուշների 94,86%-ը, նույնականացվել՝ մոտ 92.50%-ը: Վանակատի օգտահանման՝ ստացված երեք մոդելները, ներկայացված քարտեզների տեսքով, ի հայտ են բերում երեք տարբեր սկզբունք, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տեղական դրդապատճառները:

A. K. Juharyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography

Principles of Using Obsidian on the Territory of the Republic of Armenia in the Bronze Age according to the Data of pXRF Analysis

Keywords: Bronze Age, Kura-Araxes culture, obsidian, geochemical analysis, pXRF.

During the Bronze Age, the Kura-Araxes culture flourished throughout the South Caucasus. Despite the extensive development of metallurgy, people continued also intensively use obsidian. Studying the principles of this raw material use has always been and still is an actual problem. For the study of volcanic glass (obsidian), there is currently a wide range of modern, precise analytical methods. This article discusses the principles of obsidian sources use by residents in different parts of the territory of Armenia in the third millennium BC. For the three monuments belonging to the Kura-Araxes culture, Tsaghkasar, Teghut and Agarak, patterns of the utilization of obsidian sources were revealed. A total of 292 samples from the Early Bronze Age cultural layer, collected during excavations of the listed monuments, were subjected to geochemical analysis. The assays were performed by portable X-ray fluorescence (pXRF), and a portable spectrometer of the Brucker Tracer III SD model was used. As a result of the analytical work, 94.86 % of the archaeological samples were grouped, and 92.50 % were identified, which is undoubtedly a good result for this type of study. According to our data, models for the utilization of obsidian sources were developed for the following settlements – Tsaghkasar, Agarak and Teghut, which are also presented in the form of maps. Comparing their results, three completely different models of source utilization were identified, including one mono-source and two poly-source models, each of which has its own local motives.

А. К. Джугарян, *к.г.н.*
Институт археологии и этнографии

Принципы утилизации обсидиана в эпоху бронзы по данным pXRF анализа образцов с территории РА

Ключевые слова: бронзовый век, куро-араксская культура, обсидиан, геохимический анализ, pXRF.

В эпоху бронзы на всей территории Южного Кавказа процветала куро-араксская культура. Носители данной культуры, несмотря на обширное развитие металлургии, продолжали интенсивно использовать обсидиан. Настоящая статья посвящена исследованию принципов поступления обсидианового сырья в поселения территории современной Республики Армения в эпоху ранней бронзы (около 3500–2500 гг. до н.э.). С трех куро-араксских памятников – Цахкасара, Техута и Агарака – методом портативной рентгенной флуоресценции (pXRF), посредством использования портативного спектрометра модели Brucker Tracer III SD было проанализировано в общей сложности 292 образца обсидиана. Результаты агрегативного кластерного анализа позволили идентифицировать, т.е. установить принадлежность к конкретному локализованному источнику, 92,50% археологических образцов. Данные, полученные для каждого памятника, свидетельствуют о различных принципах получения сырья и могут быть определены как моноисточниковая (Цахкасар) и полиисточниковая (Агарак, Техут) модели. Ориентация населения на различные источники была обусловлена в каждом конкретном случае прежде всего географическим положением того или иного поселения.

Տաթևիկ Հարությունյան
ՀԱԻ

ՔԱՐԱՇԱՄԲԻ ՀՆԱՎԱՅՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՇՔԱՍԵՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ներկայացված են Քարաշամբի դամբանադաշտի 2009–2016 թթ. պեղումներով հայտնաբերված բրոնզե շքասեղների ձևատիպաբանական վերլուծության արդյունքները: Շքասեղներ գտնվել են՝ պեղված 500 դամբարաններից 16-ում: Քննարկվող 17 շքասեղների վաղ օրինակները թվագրվում են մ. թ. ա. 19–18-րդ դարերով, իսկ առավել ուշ նմուշները՝ մ. թ. ա. 9–8-րդ դդ. սահմանագծով:

Շքասեղների դասդասման համար հիմք ենք ընդունել դրանց ձևաստեղծ կառուցվածքային տարրի՝ գլխիկի պատրաստման և ձևավորման առանձնահատկությունները: Ըստ գլխիկների ձևատիպաբանական հատկանիշների՝ քննարկվող շքասեղները ստորաբաժանել ենք 8 տիպի: Տիպերն, իրենց հերթին, ներկայացված են տարբերակներ կազմող օրինակներով[1]*:*

ՀՀ-ից և հարևան երկրներից հայտնաբերված նույնատիպ զարդի օրինակների, շքասեղներ պարունակող դամբարանների մշակութային համատեքստի, արձանագրված թաղման ծեսի, ննջեցյալների սեռատարիքային տվյալների համալիր քննությամբ փորձել ենք ներկայացնել միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի տարբեր ենթափուլերին բնորոշ դեկորատիվ-կիրառական արվեստի մաս կազմող այս զարդերի ձևավորման, գոյատևման ժամանակագրական սահմանները, տարածման արեալը:

Քարաշամբյան շքասեղներից մի քանիսի տեղի ու դիրքի փաստագրումները թույլ են տալիս հստակություն մտցնել նաև շքասեղների կիրառության շուրջ, քանի որ այս հարցի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են շրջանառվում:

Հիմնաբառեր՝ Քարաշամբ, շքասեղ, զարդ, հագուստ, բրոնզի դար, վաղ երկաթի դար, դեկորատիվ-կիրառական արվեստ:

Ներածություն

Հայաստանի և հարևան երկրների հուշարձաններից հայտնաբերված շքասեղների նկարագրությանը և դասակարգմանը վերաբերող առաջին դիտարկումները կատարվել են դեռևս 19-րդ դ. վերջին քառորդին: Այսպես, Ժակ դը Մորգանը, անդրադառնալով Լոռիում (հետագայի Թումանյանի շրջանում)

[1] Աղյուսակները կազմեց Վարդուհի Մելիքյանը, գրչանկարների հեղինակ՝ Արտակ Հախվերդյան:

Շեյթան դաղի դամբարանների պեղման արդյունքներին (1887–1888 թթ., 138 դամբարան), տեղեկացնում է, որ դրանցից յուրաքանչյուրում կար մեկական բրոնզե շքասեղ՝ երբեմն զարդարված շղթայով կամ զանգուլակներով[2]:

Երվանդ Լալայանը Սևանա լճի հարավային և արևելյան ափերին իր պեղած 516 դամբարաններից գտնված նյութերից շքասեղների վերաբերյալ գրում է, որ դրանք շատ քիչ քանակությամբ են հայտնաբերվել, բաժանվում են առանձին տիպերի, որոնցում առկա են մեզ հետաքրքրող տիպերից՝ երկճյուղկենդանագլուխ, հնգելուստ գլխիկներով և այլ տիպի շքասեղներ[3]:

Շիրակի տարածքից հայտնի շքասեղների ժամանակագրության հարցերին է անդրադաձել Տ. Խաչատրյանը[4]: Լոռի բերդի՝ Միջին բրոնզի թռեղք-վանաձորյան հարուստ մշակույթին վերագրվող դամբարաններից գտնված շքասեղների վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Ս. Դևեջյանը[5]: Բ. Տեխովն իր՝ կենտրոնական Կովկասի պատմամշակութային զարգացմանը վերաբերող աշխատությունում մեծ տեղ է հատկացրել Թլիի հնագիտական հուշարձանից հայտնի հարյուրավոր շքասեղների ուսումնասիրության հարցերին և տիպաբանությանը[6]:

Ներկա տվյալների հիման վրա կարող ենք ասել, որ ՀՀ տարածքի շքասեղների հնագույն նմուշները պատրաստվել են ոսկրից և հայտնի են Առատաշենի, Ակնաշենի, Արենի 1-ի, Գոդեձորի մ.թ.ա. 6–4-րդ հազարամյակների առաջին քառորդի սահմաններում թվագրվող նեոլիթ-էնեոլիթյան շերտերից[7]: Բրոնզից պատրաստված շքասեղների վաղ օրինակները հանդես են գալիս վաղ բրոնզի դարից: Մասնավորապես, երկպարույր գլխիկներով շքասեղների օրինակներ են պեղվել կուրարաքսյան մշակույթի տարբեր փուլերին վերաբերող բնակատեղիներում և դամբարաններում[8]:

Մասնագիտական գրականության մեջ շքասեղները հիշատակվում են տարբեր անվանումներով՝ *քորոց*, *զարդասեղ*, *գնդասեղ*, *զարդաքորոց*, ևն: Որպես կանոն, շքասեղների դասակարգման համար հիմք է ընդունվում գլխիկի կառուցվածքը:

Քարաշամբի շքասեղների տիպերը

1-ին տիպին ենք դասել թիվ 50 և 555 դամբարաններից գտնված սնկաձև գլխիկով շքասեղները: Դրանք լինում են երկու տարբերակներով՝ ա) գլխիկի տակ ձվաձև անցքով [աղ. 1, նկ. 1] և բ) առանց անցքի [աղ. 1, նկ. 2]: Երկու օրինակների խրոցները՝ կարճ, կտրվածքում կլոր կամ վերին կեսում կլոր, ստորինում՝ քառակող ձողեր են: Դամբարաններից հայտնաբերված՝ թռեղք-վանաձո-

2 Morgan de 1889, 45–55.
3 Լալայան 1931, 180–183, նկ. 156–159:
4 Хачатрян 1975, 186–187.
5 Դևեջյան 2006, 124:
6 Техов 1977, 34–51, 148–150, 156–160.
7 Ըստ Պ.Ս. Ավետիսյանի և Ռ.Ս. Բաղալյանի բանավոր հաղորդման:
8 Кушнарева, Чубинишвили 1970, рис. 43/1, 2, 3; Սիմոնյան 2013, 30:

ոյան մշակույթին բնորոշ նյութի քննությունը թույլ է տալիս այն թվագրել մ. թ. ա. 19–18-րդ դարերով:

Մնկաձև գլխիկ և միջանցիկ անցք ունեցող շքասեղներ հայտնի են Լոռի բերդի հնավայրի՝ թռեղք-վանաձորյան մշակույթին պատկանող թիվ 94 դամբարանից[9], Միջին բրոնզի տարբեր փուլերին վերագրելի այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Կարմիր վանքը, Ռվելի գյուղի թիվ 61 դամբարանը, Նուլին[10], ևն: Առաջին տարբերակի նմուշը շատ նման է Թռեղքի թիվ 17 դամբանաբլուրից հայտնի արծաթե օրնակներին՝ միակ տարբերությամբ, որ Թռեղքի օրինակներում գլխիկի տակ միջանցիկ անցքը կլոր է[11]: Երկրորդ տարբերակին ձևով մոտ է Թլիի թիվ 43 դամբարանի օրինակը: Ընդ որում, ըստ Բ. Տեխովի՝ այս ձևերը հատկապես լայն տարածում են ստանում մ. թ. ա. 14–12-րդ դարերով թվագրվող դամբարաններում[12]:

2-րդ տիպին ենք վերագրում թիվ 321 դամբարանից գտնված բրգաձև գլխիկով շքասեղը[13]: Այն ունի ուռուցիկ եզրագծերով քառանիստ-բրգաձև գլխիկ [աղ. 1, նկ. 3]: Սրացող ծայրով խրոցը վերին կեսում՝ գլխիկի տակ, քառակող է (մոտ 0,7 մմ երկարությամբ հատված), ստորինում՝ կլոր: Ձվաձև անցքը գտնվում է քառակող հատվածի տակ՝ ձողի լայնացող մասում: Ուղեկցող նյութերը բնորոշ են թռեղք-վանաձորյան մշակույթի «ծաղկման փուլի» համալիրներին հաջորդող Հառիճ-Թրելիի խմբի դամբարաններին, որոնք ներկայումս թվագրվում են մ.թ.ա 18–17-րդ դդ. սահմանագծից մինչև մ. թ. ա. 16-րդ դ. վերջին քառորդն ընկած սահմաններում[14]:

Քարաշամբյան նմուշին ձևով շատ մոտ են Թրելիի համաժամանակյա մի շարք դամբարաններից հայտնաբերված շքասեղները (դամբ. թիվ 43, 53, 99)[15]: Այդպիսիք հայտնի են նաև մոտավորապես նույն դարերով թվագրվող կարմիրբերդյան, կարմիրվանքյան մշակույթներին վերագրված Վերին Նավերի (դամբ. թիվ 12 և 13)[16], Մեծամորի (դամբ. թիվ 31)[17], Ծաղկալանջի (դամբ. թիվ 8) դամբարաններից[18], Ազնեբյուրտի[19] համալիրներից, մ. թ. ա. 16–15-րդ դարերով թվագրված Թլիի թիվ 59 դամբարանից[20]: Ազնեբյուրտի օրինակները առանձնանում են գլխիկի նիստերի սուր ընդգծվածությամբ: Շքասեղների այս տիպի վաղա-

9 Դևեջյան 2006, 124, աղ. 6/8, նկ. 112/3:

10 Мартиросян 1964, 54–55, рис. 20а-1, Гамбашидзе, Квижинадзе 1981, 60, табл. XXXV/20, Куфтин 1949, 33–34, табл. XVII/1.

11 Жоржикашвили, Гогадзе 1974, 96, табл.87/731.

12 Техов 1971, 103, рис. 28.

13 Պետրոսյան 2014, 2, 283, աղ. I/4:

14 Ավետիսյան 2014, 37–38:

15 Абрамишвили 1978, рис. 19/410, рис. 23/431,432, Абрамишвили, Рамишвили 1976, 27 , табл. XX/2.

16 Симонян 1990, 205; Արեշյան և այլք, 1979, 212:

17 Khanzadian 1995, 17–20, pl. 4:1.

18 Badalyan, Avetisyan 2007, 276, pl. IV/15.

19 Bahşaliev 1997, plate VIII/10-13, IX.

20 Техов 1971, 102–103, рис. 27–6, 7; Техов 1980, табл. 24/1, 2, 4.

գույն օրինակները տեսանելի են թռեղք-վանաձորյան մշակույթի վաղ փուլերում, ինչի մասին են վկայում մ.թ.ա. 21–19-րդ դարերով թվագրվող Լոռի բերդի՝ թիվ 61 և 61-1 դամբարաններից հայտնաբերված նմուշները[21]: Քննարկվող զարդաձևի գոյատևման վերին սահմանն, ըստ ամենայնի, պետք է համարել մ.թ.ա. 16–15-րդ դարերը: Մեզ հայտնի ամենաուշ տարբերակը՝ Միջին բրոնզից Ուշ բրոնզի անցման փուլի նյութերով, Ցագվլիի թիվ 40 դամբարանից հայտնաբերված օրինակն է[22]:

3-րդ տիպը կազմում են հնգելուստ գլխիկով օրինակները, որոնցից հայտնի է 3 նմուշ: Այս տիպի շքասեղների գլխիկներն օժտված են մեկ կենտրոնական և չորս կողային ելուստներով: Կտրվածքում կլոր ձողի վերին՝ լայնացող հատվածում ունեն անցքեր: Ելուստների չափերն ու ձևերը թույլ են տալիս այս տիպը ստորաբաժանել երկու տարբերակի:

ա) տարբերակին վերաբերող՝ թիվ 750 դամբարանից գտնված օրինակը չափերով առավել խոշոր է [աղ.1, նկ.4]: Ունի կանոնավոր գլխիկ. համաչափ ելուստները, ճառագայթելով կենտրոնից, աստիճանաբար լայնանում են՝ եզրափակվելով 0.5 մմ տրամագիծ ունեցող ոսպնյակաձև-ուռուցիկ մակերևույթով: Խրոցը կտրվածքում կլոր է՝ հաստացող մասի վրա կլոր անցքով: Անցքի և գլխիկի միջակա հատվածը զարդարված է երեք ակոսագոտիներով: Թվագրվում է 19–18-րդ դարերով (Միջին բրոնզ՝ թռեղք-վանաձորյան մշակույթ):

բ) տարբերակ: Թիվ 675 [աղ.1, նկ.5] և 725 [աղ.1, նկ.6] դամբարաններից գտնված երկրորդ տարբերակի նմուշների գլխիկների ելուստները համեմատաբար կարճ են, կլորավուն և ոչ-համաչափ: Օրինակներից մեկի ձողն ավելի երկար է, կլոր անցքը գլխիկից ներքև՝ ձվաձև հաստացող հատվածում է [աղ.1, նկ.5]: Թվագրվում է մ.թ.ա. 18–16-րդ դարերով (դամբարաններից հայտնաբերված նյութերը բնորոշ են կարմիրբերդյան և սևան-արցախյան մշակույթներին): Ուշ բրոնզի երկրորդ փուլին բնորոշ նյութերով թիվ 725 դամբարանի օրինակը հնարավոր է թվագրել մ.թ.ա. 15-րդ դ. վերջ – 13-րդ դ. առաջին կեսով:

Հնգելուստ գլխիկով շքասեղների ա) տարբերակին մոտ ձևերով օրինակներ ունենք մ.թ.ա. 18–16-րդ դարերով թվագրվող կարմիրբերդյան մշակույթին բնորոշ նյութերով Մեծամորի թիվ 57 դամբարանում[23], կարմիրվանքյան նյութերով Ն.Վ. Ֆյոդորովի հավաքածուում[24], ինչպես նաև Ուշ բրոնզի առաջին և երկրորդ փուլերի՝ մ.թ.ա 16–15-րդ դարերից մինչև 13-րդ դ. առաջին կես թվագրվող դամբարաններում (Արթիկի թիվ 203, 466, 535, Թլիի թիվ 56, Ցագվլիի թիվ 91[25]):

բ) տարբերակի նմուշներին կրկնող հատկանիշներով շքասեղների օրինակները հայտնի են մ.թ.ա. 15-րդ դ. երկրորդ կեսից մինչև 13-րդ դ. կեսն ընկած ժամանակահատվածով թվագրվող Հոռոմի թիվ 87 դամբարանից[26], Թլիի

21 Դևեջյան 2006, 124, նկ. 79/2, 80/6:

22 Рамишвили 1981, 52 , табл. XXX/174.

23 Khanzadian 1995, 23 , pl. III/1, pl. 11/1.

24 Bahşaliev 1997, pl. 8/2, 3.

25 Хачатрян 1979, 192, 317; Техов 1980, 9 ,табл. 21, рис.II/9, 8; Рамишвили 1982, 35, табл. XXI.

26 Gevorgyan 2017,146, fig.1–3.

մ.թ.ա. 16–13-րդ դդ. թվագրվող բազմաթիվ դամբարաններից (դամբ. թիվ 27, 33, 43, 203, ևն[27]): Հարկ է նշել, որ Բ.Տեխովը դրանք համարում է տեղական արտադրանք՝ որպես կենտրոն առանձնացնելով Մեծ Լիախվիի կիրճը: Թլիի պեղումներով փաստագրվել է նաև, որ համեմատաբար փոքր չափերի՝ հնգելուստ գլխիկով շքասեղները ծառայել են որպես գլխազարդ, իսկ առավել խոշորները գտնվել են կմախքի կրծքավանդակի կամ ուսոսկրերի մոտ[28]:

Հնգելուստ գլխիկով շքասեղների՝ մեզ հայտնի օրինակների համեմատականները ցույց են տալիս, որ վերն առանձնացված ձևերից բացի՝ տարածաշրջանում դրանք հանդես են գալիս բազմաթիվ տարբերակներով: Նախքան թռեղք-վանաձորյան մշակույթի միջին փուլին բնորոշ նյութերով Քարաշամբի 750 դամբարանի պեղումները՝ հնգելուստ գլխիկով շքասեղների՝ մեր առանձնացրած առաջին տարբերակի վաղագույն օրինակները հայտնի էին կարմիրբերդյան/կարմիրվանքյան մշակույթով բնորոշվող համալիրներից: Ակնհայտ է նաև, որ այս զարդաձևն իր բոլոր տարբերակներով լայն տարածում է ստանում Ուշ բրոնզի վաղ փուլերում՝ մ.թ.ա. 15–13-րդ դարերում: Հնգելուստ գլխիկով շքասեղների օրինակներ են պեղվել նաև վաղ երկաթի դարի համալիրներում, օրինակ՝ Հոռոմի թիվ 124 դամբարանում, Շիրակավանում՝ «ավերված դամբարանում»[29], Թլիում[30]:

4-րդ տիպ: Ի տարբերություն վերը քննարկված շքասեղների անզարդ՝ «պարզ» ձևերի, ուշ բրոնզի դարում հայտնվում են մեծ վարպետությամբ և բարձր ոճով զարդարված օրինակներ: Սրանց մեջ առանձնանում են Քարաշամբում պեղված՝ կապօղով օժտված գդակավոր շքասեղները, որոնք խմբավորել ենք ***4-րդ տիպ***ում: Շքասեղների վերին հատվածների զարդաբանվածքի հորինվածքային տարբերությունները նկատի ունենալով՝ դրանք կարելի է ստորաբաժանել երկու առանձին տարբերակների: Երկու նմուշներն էլ ունեն դեպի ստորին ծայրը աստիճանաբար բարակող, կտրվածքում կլոր ձողից պատրաստված խրոցներ:

ա) տարբերակը ներկայացված է թիվ 613 դամբարանի շքասեղով [աղ. 2, նկ. 1]: Երկարավուն գլխիկը վերին հատվածում եզրափակվում է հատած կոն հիշեցնող պսակով (գդակով), իսկ ստորին հատվածում՝ ձողը բոլորող ռելիեֆ գոտիով, որի վրա «հենված» է կապօղը: Պսակի և բոլորագոտու միջակա տիրույթը երկու կողմից հավելազարդված է հակադիր ուղղություններով պտտվող զույգ պարույրների վերադիր զարդապատկերներով: Շքասեղի խրոցը վերնամասում կարծես թե հարդարված է ծաղկաթերթեր հիշեցնող պատկերով (այս հատվածը խիստ մաշված է): Ուշ բրոնզի ավարտական փուլին բնորոշ նյութերով դամբարանից գտնված զարդի այս օրինակը թվագրվում է մ.թ.ա. 13–12-րդ դարերով:

---

27 Техов 1977, 41–42, рис.16/1, 2; 19/ 1, 9; 21/6-8; 22/ 1, 2; Техов 1980, 7–8, 11, табл.8, рис1/1, 2, табл.9 рис.2/1, 2, табл.15, рис.2/6–8, табл.29/1, 2.

28 Техов 1977, 41.

29 Տես Սարդարապատի հուշահամալիր. Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, ՀԱՊԹ, 1978 թ., 266/150, Հ-6:

30 Техов 1977, 41; Gevorgyan 2017, XI, 146.

բ) տարբերակին ենք դասել թիվ 593 դամբարանից գտնված, իրար վրա՝ կրկնապսակ գլխիկով օրինակը [աղ. 2, նկ. 2]: Գլխիկի ավարտական՝ կիսագնդաձև մակերևույթով պսակը զարդարված է խորադիր գծերով, որոնք այն բաժանում են չորս հավասար՝ կենտրոնում փոսիկներով զարդարված եռանկյունիների: Շքասեղի գլխիկի ստորին մասը կազմող մյուս պսակը ձևավորված է ռելիեֆ բոլորագոտով, որը վերին պսակից և խրոցից սահմանազատվում է երեքական ակոսագոտիներով: Ռելիեֆ բոլորագոտու մակերևույթն, իր հերթին, պատված է մատնեքազարդով: Կրկնապսակ գլխիկի տակ շքասեղի ձողին ուղղահայաց դիրքով ամրացված է կապօղակ: Դամբարանից հայտնաբերված խեցեղենի՝ Ուշ բրոնզի երկրորդ փուլին բնորոշ օրինակները թույլ են տալիս շքասեղի վերոհիշյալ նմուշը թվագրել մ. թ. ա. 15-րդ դ. վերջից 13-րդ դ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածով:

Կապօղով շքասեղներ հայտնի են Արթիկի՝ մ. թ. ա.14–13-րդ դարերով թվագրվող թիվ 2, 6, 118, 432, 640 դամբարաններից[31], Մուսիերիում դը Մորգանի պեղած մի դամբարանից[32]: Որոշ ընդհանրություններ ունեն երկրորդ տարբերակի օրինակը և Սապուրցլեի թիվ 1 դամբարանից գտնված երեք շքասեղները, որոնք թվագրվում են մ. թ. ա. 14–12-րդ դարերով[33]: Վերոնշյալ շքասեղներից և ոչ մեկը քարաշամբյան տարբերակների անմիջական զուգահեռները չեն:

5-րդ տիպին ենք դասել գալարաձև ծալված գլխիկով շքասեղները, որոնք ներկայացված են երկու՝ օղակաձև/ձվաձև ոլորված կամ ծալված վերնամաս ունեցող տարբերակներով:

ա) տարբերակում ընդգրկված է 4 շքասեղ, որոնցից երկուսը գտնվել են՝ թիվ 251, և մեկական օրնակով՝ թիվ 625 և 678 դամբարաններից: Այս տարբերակի շքասեղների գլխիկները ստացվել են կլոր ձողի վերին հատվածը տափակեցնելու, ապա ոլորելու միջոցով: Թիվ 251 դամբարանի օրինակներում շքասեղի 1.5 պտույտով գալարափաթ գլխիկները քիչ գոգավոր են [աղ. 2, նկ. 6, 7]: Երկու շքասեղներն էլ ձևով և չափերով (գլխիկի լայնություն, ձողի հաստություն, ևն) միմյանց ճիշտ կրկնօրինակ են: Թիվ 625 [աղ. 2, նկ. 4] և 678 [աղ. 2, նկ. 5] դամբարանների շքասեղները պատրաստված են շատ ավելի բարակ, թեթև ձողից, ունեն ողորկ մակերես: Այս երկուսը իրարից տարբերվում են խրոցների տրամագծով և գալարափաթ գլխիկների պտույտների քանակով (625-ի գլխիկը ոլորած է մեկ, իսկ 678-ինը՝ 1.5 պտույտ): Քննարկվող տարբերակի քարաշամբյան բոլոր օրինակներն էլ հայտնաբերվել են Ուշ բրոնզի ավարտական փուլին բնորոշ (մ. թ. ա. 13–12-րդ դդ.) նյութերով դամբարաններում:

Ոլորուն գլխիկով շքասեղների վաղ օրինակները, տարածաշրջանում հայտնվելով վաղ բրոնզի դարաշրջանում[34], զանգվածային տարածում են ստանում միջին և ուշ բրոնզի դարերում (տե՛ս, օրինակ, Սամթավրոյի թիվ 16, Վերին Նավերի թիվ 9, Արթիկի թիվ 109, Շիրակավանի թիվ 58 և թիվ 88 դամբարան-

31 Хачатрян 1979, 109, 112, 160, 301, 402; Хачатрян 1975, 186–187, рис. 91.

32 Morgan de 1889, 123, fig. 98.

33 Абрамишвили и др. 1980, 49–50, табл. XXIX.

34 Սարդարյան 1967, 164, աղ. XLVI/6:

ներից[35], ևն): Քննարկվող տիպին վերագրելի՝ Թալինի թիվ 57 դամբարանից գտնված օրինակը թվագրվում է մ.թ.ա. 12–11-րդ դարերով[36]: Շքասեղների այս տիպին բնորոշ մեծաքանակ օրինակներ հայտնի են Վրաստանի՝ մ.թ.ա 14–13-րդ դդ., ինչպես նաև մ.թ.ա. 12–10-րդ դդ. հուշարձաններից[37]:

բ) տարբերակը ներկայացված է թիվ 455 դամբարանից գտնված՝ ծալված գլխիկ ունեցող շքասեղով [աղ.2, նկ.3]: Գլխիկը ստացվել է ձողի վերին հատվածը մինչև թիթեղ ստանալու աստիճանը ծեծելու և խրոցի վրա կիպ ծալելու միջոցով այնպես, որ գագաթին միջանցիկ անցք է գոյացել: Խրոցը կտրվածքում գրեթե ուղղանկյուն է, դեպի ստորին ծայրը աստիճանաբար բարակում է: Դամբարանից հայտնաբերված խեցանոթների տեսականին բնորոշ է Ուշ բրոնզի երկրորդ փուլին (մ.թ.ա. 15-րդ դ. վերջից 13-րդ առաջին կես): Մեզ առայժմ հայտնի չէ քննարկված տարբերակի որևէ զուգահեռ:

6-րդ տիպին ենք դասել թիվ 444 դամբարանի՝ սրացող վերնամասով շքասեղը [աղ.3, նկ.3]: Խրոցը հատույթում կլոր է, վերին մասում ունի լայն բացված ձվածիր անցք: Անցքից վերև շքասեղի ձողի շարունակությունը կազմող՝ բթացող ծայրով վերնամասը նույնպես կտրվածքում կլոր է: Նշված զարդերը տարբեր հուշարձաններում գտնվել են բաղադրյալ՝ վերնամասին ագուցված ոսկուց, արծաթից, անտիմոնից կամ ծովախխունջից գլխիկներով: Կարծում ենք, որ քարաշամբյան այս օրինակը նույնպես ունեցել է բաղադրյալ գլխիկ: Թիվ 444 դամբարանում արձանագրված իրավիճակը թույլ է տալիս եզրակացնել, որ այստեղ առնվազն երեք անգամ թաղում է կատարվել: Երկաթի լայն յուրացման շրջանում կատարված թաղման հետևանքով հիմնովին խաթարվել է վաղ երկաթի դարին բնորոշ նյութերի բեկորներով վերականգնվող նախորդ թաղումը, որն էլ, իր հերթին, հիմնովին խաթարել էր սկզբնական՝ Ուշ բրոնզի վաղ փուլի թաղումը: Շքասեղի տարբեր մասերը բացվել են բազմակի անգամ խաթարված շերտի տարբեր հատվածներից, ինչը թույլ չի տալիս այն հստակ շաղկապել վերոհիշյալ փուլերի մասին վկայող նյութերին, և քննարկվող նյութի թվագրության հարցը դարձնում է խնդրահարույց:

Այս տիպի շքասեղներ հայտնի են թռեղք-վանաձորյան մշակույթի վաղ փուլերին բնորոշ նյութեր ունեցող Ներքին Նավերի թիվ 4 դամբարանից, որը Հ.Սիմոնյանը վերագրել է միջին բրոնզի դարի ամենավաղ փուլին և թվագրել մ.թ.ա. 25–23-րդ դարերով[38], Մոզի թիվ 2 դամբարանից՝ սնկաձև գլխիկով շքասեղի հետ[39]: Քննարկվող շքասեղի զուգահեռն ունենք նաև մ.թ.ա. 17–16-րդ դարերով թվագրվող, կարմիրբերդյան մշակույթին վերագրելի Մեծամորի թիվ 31 դամբարանից՝ բրգաձև գլխիկով շքասեղի հետ[40]: Ի տարբերություն

35 Садрадзе 1993, табл.IV; Սիմոնյան 2006, Ա, 80–81,աղ.XVI; Хачатрян 1979, 36, 156; Թորոսյան և այլք 2002, 48, 58, աղ.XXX/7, XXXVIII/3:

36 Ավետիսյան, Ավետիսյան 2006, 38–39, 53, աղ.62 /5:

37 Тушишвили 1981, 91–94, табл.XLI/15, 18, 28, XLIII/16, 28; Тушишвили и др.1982, 23–26, табл.XXIX/7,8; Техов 1977, 148–150, рис.106/ 17, 18, 20–22.

38 Սիմոնյան 2010, 7–17, նկ.3–6:

39 Xnkikyan 2002, 23, pl.IV/14.

40 Khanzadian 1995, 19–20, pl.4:2.

Քարաշամբի օրինակի՝ վերջինիս գլխիկի ծայրը սրված է, ինչպես Ցագվլիից հայտնի օրինակներինը, որոնք՝ նշված սրացող մասի վրա կրել են *անպիմոնից* (*ծարիր*, *սուրմա*) բրգաձև գլխիկներ և վերագրվել են միջինից ուշ բրոնզ անցումային փուլին[41]: Ցագվլիի թիվ 91 դամբարանից էլ գտնվել է քարաշամբյանի ձևը կրկնող օրինակը, որը թվագրվում է ուշ բրոնզի վաղ փուլով[42]: Դամբարանից հայտնաբերված առավել վաղ՝ Ուշ բրոնզին բնորոշ նյութերը և բերված համեմատականները թույլ են տալիս շքասեղի քննարկվող նմուշը թվագրել ուշ բրոնզի վաղ փուլով՝ մ.թ.ա. 15–14-րդ դարերով:

Վերը դիտարկեցինք քարաշամբյան շքասեղների՝ միջին և ուշ բրոնզի դարաշրջանների տարբեր փուլերին բնորոշ ձևերը: Հաջորդիվ ներկայացվելիք վերջին երկու տիպերը համալրում են շքասեղների՝ երկաթի դարում տարածում գտած օրինակների շարքերը:

7-րդ տիպ: Մ.թ.ա. 12–11-րդ դարերով թվագրվող թիվ 182 դամբարանից գտնված քառակող գլխիկ ունեցող շքասեղը դասել ենք այս տիպին [աղ.3, նկ.4]: Այն ունի ուղղանկյուն՝ չորս կողերը հորիզոնական կարճ գծիկներով ոճավորված վերնամաս և կտրվածքում կլոր հաստ խրոց: Գլխիկից ձողի անցման հատվածում շքասեղն ունի կլոր անցք: Քառակող վերնամասի և խրոցի չափերի հարաբերակցությունը գրեթե հավասար է:

Այս տիպի զուգահեռները հայտնի են դը Մորգանի պեղած Մուսիերիի ամենավաղ դամբարաններց[43], Սաֆար Խարաբայի մ.թ.ա. 12–9-րդ դարերին բնորոշ նյութերով հայտնի թիվ 20 և 34, Դմանիսիի դամբարանադաշտի՝ Ուշ բրոնզ–Վաղ երկաթի թիվ 4 դամբարաններից[44], ևն: Բերված զուգահեռները ցույց են տալիս, որ այս տիպը, ուշ բրոնզի վերջին շրջանում հայտնվելով, առավել լայն տարածում է ստանում վաղ երկաթի դարում և առավել հայտնի է Վրաստանի հուշարձաններից:

8-րդ տիպին ենք դասում կենդանակերպ երկճյուղ գլխիկով շքասեղները: Գտնվել են թիվ 644 և 674 դամբարաններից, հայտնի են երկու՝ կենդանագլուխ և թռչնագլուխ տարբերակներով [աղ.3, նկ.1, 2]: Երկու օրինակներում էլ կենդանիների/թռչունների՝ հակադիր կողմեր ուղղված գլուխները ճյուղավորվում են կտրվածքում ձվաձև հիմքից:

ա) տարբերակում [աղ.3, նկ.1] կենաղանիների գլուխներն արտահայտված են լավ ուրվագծված ականջներով և սրացող դնչով: Երախն ընդգծված է փոքրիկ ակոսի միջոցով: Դրանք ճյուղավորվում են եռանկյունաձև հիմքից, որն էլ կենտրոնում կրում է հիմքի ձևը կրկնող անցք: Հիմքի տակ՝ ձողի վերնամասում, շքասեղը գոտեզարդված է 4 ակոսներով: Շքասեղի սրացող ծայրով խրոցը կտրվածքում կլոր է:

41 Рамишвили 1981, 55, табл.XXIX/205.

42 Рамишвили 1982, 35, табл. XXI.

43 Morgan de 1889, 118, fig. 90.

44 Куфтин 1941, 65, 70, таб. XXXVIII, рис. 80-2; Кахиани и др. 1985, 30, табл. XXXIV.

բ) տարբերակին վերաբերող օրինակում զույգ թռչունների գլուխները ներկայացված են կլոր, ռելիեֆ, լավ արտահայտված աչքերով, տափակ, լայն, փոքր-ինչ բացված կտուցներով, կարճ պարանոցներով [աղ. 3, նկ. 2]: Գլուխները ճյուղավորվում են սեղանաձև հիմքից, որի կենտրոնում կա ձվաձև անցք: Շքասեղի խրոցը վերին հատվածում՝ սեղանաձև հիմքի տակ, ոճավորված է տակառաձև մակերևույթով գնդիկազարդերով: Դամբարաններից հայտնաբերած գույքի տեսականին զուգորդվում է Հ. Մարտիրոսյանի առանձնացրած վաղ ուրարտական համալիրների նյութերի հետ, ինչը թույլ է տալիս այս շքասեղները թվագրել ոչ վաղ, քան մ. թ. ա. 8-րդ դարով:

Երկճյուղ կենդանակերպ գլխիկով շքասեղների զուգահեռները հայտնի են Աստղի բլուրից (Եղնիկներ, մ. թ. ա. 7–6-րդ դդ.)[45], Ծովակ (հնում՝ Ձաղալու) գյուղի տարածքում Ե. Լալայանի պեղած դամբարանից[46], Տախտիձիրիի թիվ 5 դամբարանից[47], որտեղի օրինակը ոճավորումով Քարաշամբի թռչնագլուխ շքասեղի գրեթե կրկնօրինակն է, բայց՝ դրա խոյագլուխ տարբերակը, Սերժեն Յուրտի թիվ 35 դամբարանից (երկու օրինակ, ձիերի գլուխներ նույն կաղապարից, 9-րդ դ. վերջ – 8-րդ դ.) և այլ հուշարձաններից: Ընդհանուր առմամբ, մինչև 20-րդ դարի 80-ականները մասնագիտական գրականության մեջ առկա տվյալներով երկճյուղ շքասեղներ՝ զարդարված ձիերի, խոյերի, եղնիկների գլուխներով, մեծ քանակությամբ գտնվել էին Հյուսիսային Կովկասի հուշարձաններից, և շատ քչերը՝ Հայաստանից ու Վրաստանից, ինչը որոշ ուսումնասիրողների հիմք է տվել այս տիպը վերագրելու կոբանյան մշակույթին՝ թվագրելով այն մ. թ. ա. 10–5-րդ դարերով[48]:

Եզրափակում

Մասնագիտական գրականության մեջ շքասեղների դասակարգմանը միտված ուսումնասիրությունները կարևորվում են մի շարք առումներով:

Քանի որ շքասեղները դիտարկվում են որպես՝ ա) գլխազարդ և բ) հագուկապի պիտույք՝ հագուստի մաս, հետևաբար դամբարաններում շքասեղների տեղադրության և համատեքստի փաստագրումները հաճախ թույլ են տալիս վերակազմել թաղված հանգուցյալի գլխի հարդարանքն ու հագուստը: Սրանք էլ, իրենց հերթին, ազգաբանական և մշակութաբանական առանձնահատկությունների փաստագրման կարևոր բաղադրատարր են: Ավելին, թաղումն ուղեկցող գույքի տեսականու այլ նմուշների հետ միասին՝ այս զարդատեսակը (թաղման ծեսի համատեքստում) ցուցիչ է տվյալ հանրույթի սոցիալական և սեռատարիքային տարբերակվածության ու կառուցվածքի վերակազմության համար:

Այս առնչությամբ ուշագրավ է Քարաշամբի թիվ 182 դամբարանում *in situ* բացված պատկերը: Թաղման խցում ամփոփված՝ հասուն տարիքի տղա-

45 Есаян 1968, 90, табл. IV/10; Есаян 1976, 152–153, табл.140, рис. 10.

46 Լալայան 1931, 183, նկ. 159:

47 Gogibiridze 2008, 169, pl. I/5.

48 Козенкова 1972, 12–15, рис. 1/6, 7.

մարդն, ըստ ամենայնի, զինվորական վերնախավի ներկայացուցիչ է. ուղեկցող գույքի կազմում առկա են նաև դաշույն, նիզակ: Շքասեղն արձանագրվել է կմախքի գանգի մոտ, որին կիպ գտնվել է նաև մի զրահակոճակ: *In situ* պատկերից երևում է, որ այս երկուսն օգտագործվել են միմյանց համադրությամբ:

Դասդասված և տիպաբանական միավորների զուգահեռներով ներկայացված շքասեղները խիստ զգայուն ցուցիչ են որոշակի հնագիտական մշակույթների տեղային-ժամանակագրական, տեղային-տարածական դրսևորումների: Հատկանշական են թռեղք-վանաձորյան մշակույթի գույքի կազմում առաջին անգամ արձանագրված շքասեղների նմուշները, որոնք լրացնում են դրանց մշակութա-ժամանակագրական պատկանելության մասին մինչ օրս ունեցած մեր պատկերացումները:

Որպես դեկորատիվ-կիրառական արվեստի հետաքրքրական նմուշներ՝ խնդրո առարկա զարդատեսակը տվյալ հանրույթի գեղարվեստական ընկալումների, շրջակա աշխարհի գեղարվեստական արտացոլման ուսումնասիրության կարևորագույն աղբյուր է: Ուշագրավ նմուշներ են նաև երկճյուղ կենդանակերպ գլխիկով շքասեղները: Այս տիպին առավել մոտ օրինակները հայտնի են Հյուսիսային Կովկասից (Հայաստանի տարածքում ունենք հատուկենտ նմուշներ): Այդուհանդերձ, քարաշամբյան օրինակները ոճական հատկանիշներով, ներկայացված կենդանատեսակներով ակնհայտորեն տարբերվում են նշվածներից և, ամենայն հավանականությամբ, պետք է վերագրվեն լճաշեն-մեծամորյան մշակույթին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

դամբ. դամբարան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ 2006
Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս., Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. XI–VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 2006:

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014
Ավետիսյան Պ. Ս., Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում (սոցիալ- մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների) Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պ.գ.դ. աստիճանի հայցման գիտական զեկուցում, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 2014:

ԱՐԵՇՅԱՆ և այլք 1979
Արեշյան Գ. Ե., Սիմոնյան Հ. Ե., Սարգսյան Գ. Գ., Քոչարյան Գ. Գ., Օհանյան Հ. Ա., Հայագիտական կենտրոնի 1977–78 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները // Բանբեր Երևանի համալսարանի, 1979, № 2 (38), 205–224:

ԴԵԻԵՋՅԱՆ 2006
Դևեջյան Ս. Հ., Լոռի բերդ II (միջին բրոնզ), Երևան, «Գիտություն», 2006:

ԼԱԼԱՅԱՆ 1931
Լալայան Ե. Ա., Դամբանների պեղումները խորհրդային Հայաստանում, Յերևան, Պետհրատ, 1931:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2014
Պետրոսյան Լ. Ա., Պեղումներ Քարաշամբում (2010 թ.) // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2014, № 2, 279–293:

ՍԱՐԴԱՐՅԱՆ 1967
Սարդարյան Ս. Հ., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 1967:

ՍԻՄՈՆՅԱՆ 2006
Սիմոնյան Հ. Ե., Վերին Նավեր, Գիրք Ա (1976–1990 թթ. պեղումների արդյունքները), Երևան, ԵՊՀ հրատ., 2006:

ՍԻՄՈՆՅԱՆ 2010
Սիմոնյան Հ. Ե., Ներքին Նավերի № 4 Դամբարանը // Հուշարձան, Տարեգիրք Ջ, Երևան, 2010, 7–20:

ՍԻՄՈՆՅԱՆ 2013
Սիմոնյան Հ. Ե., Հայաստանը վաղ բրոնզի դարում (Ք. ա. 3500–2400 թթ.) // Հայաստանի հնագիտական ժառանգությունը (խմբ. Հ. Ե. Սիմոնյան). Պատմամշակութային ժառանգության մատենաշար, հ. Է, Երևան, «Հուշարձան», 2013, 28–31:

АБРАМИШВИЛИ, РАМИШВИЛИ 1976
Абрамишвили Р. М., Рамишвили А. Т., Трельский Могильник и Поселения // Полевые археологические исследования в 1974 году, Тбилиси, «Мецниереба», 1976, 27–32.

АБРАМИШВИЛИ 1978
Абрамишвили Р. М., Основные итоги археологической экспедиции Большого Тбилиси, 1, «Мецниереба», 1978.

АБРАМИШВИЛИ и др. 1980
Абрамишвили Р. М., Апресов Л., Глонти Л. И., Загнури А., Кахиани К. К., Небиеридзе Л. Д., Окропиридзе Н., Татиашвили Т., Джавахишвили А. И., Археологические раскопки в Тбилиси // Полевые археологические исследования в 1977 году, Тбилиси, «Мецниереба», 1980, 39–54.

ГАМБАШИДЗЕ, КВИЖИНАДЗЕ 1981
Гамбашидзе О. С., Квижинадзе К. Д., Работы Месхет-Джавахетской экспедиции // Полевые археологические исследования в 1978 году, Тбилиси, «Мецниереба», 1981, 57–64.

ЕСАЯН 1968
Есаян С. А, Астхиблурский могильник // Вестник общественных наук, 1968, № 6, 82–97.

ЕСАЯН 1976
Есаян С. А, Древняя культура племён Северо-восточной Армении (III–I тыс. до н. э.) Ереван, Изд. АН Арм. ССР, 1976.

ЖОРЖИКАШВИЛИ, ГОГАДЗЕ 1974
Жоржикашвили Л. Г., Гогадзе Э. М., Памятники Триалети эпохи ранней и средней бронзы // Каталог триалетских материалов 2, Тбилиси, «Мецниереба», 1974.

КАХИАНИ и др. 1985
Кахиани К. К., Иремашвили Ш. А., Иорданишвили Ж. В., Цквитанидзе З. Р., Археологическая экспедиция Машаверского ущелья // Полевые археологические исследования в 1982 году, Тбилиси, «Мецниереба», 1985, 29–31.

КОЗЕНКОВА 1972
Козенкова В. И., Об одном типе кобанских булавок // Краткие сообщения Института археологии, вып. 132, Москва, «Наука», 1972, 12–15.

КУФТИН 1941
Куфтин Б. А., Археологические раскопки в Триалети, 1 // Опыт периодизации памятников, Тбилиси, Изд. АН Груз. ССР, 1941.

КУФТИН 1949
Куфтин Б. А., Археологическая маршрутная экспедиция 1945 года в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, Изд. АН Груз. ССР, 1949.

КУШНАРЕВА, ЧУБИНИШВИЛИ 1970
Кушнарева К. Х., Чубинишвили Т. Н., Древние Культуры Южного Кавказа (V–III тыс. до н.э.), Ленинград, «Наука», 1970.

МАРТИРОСЯН 1964
Мартиросян А. А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, Изд. АН Арм. ССР, 1964.

РАМИШВИЛИ 1981
Рамишвили А. Г., Археологические раскопки в с. Цагвли // Полевые археологические исследования в 1978 году, Тбилиси, «Мецниереба», 1981, 52–56.

РАМИШВИЛИ 1982
Рамишвили А. Г., Археологические Работы в с. Цагвли // Полевые археологические исследования в 1979 году, Тбилиси, «Мецниереба», 1982, 34–37.

САДРАДЗЕ 1993
Садрадзе В. Г., Археологические памятники «Мцхета Великой» эпохи средней бронзы (вопросы хронологии и периодизации памятников Шида-Картли), Тбилиси, «Мецниереба», 1993.

СИМОНЯН 1990
Симонян А. Е., Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении // Историко-филологический журнал, Ереван, 1990, №1 (128), 188–208.

ТЕХОВ 1971
Техов Б. В., Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси, «Мецниереба», 1971.

ТЕХОВ 1977
Техов Б. В., Центральный Кавказ в XVI–X вв. до н. э., Москва, «Наука», 1977.

ТЕХОВ 1980
Техов Б. В., Тлийский могильник (комплексы XVI–X вв. до н. э.), Тбилиси, «Мецниереба», 1980.

ТУШИШВИЛИ 1981
Тушишвили Н. Н., Результаты археологической экспедиции Алгетского ущелья // Полевые археологические исследования в 1978 году, Тбилиси, «Мецниереба», 1981, 89–101.

ТУШИШВИЛИ, АМИРАНАШВИЛИ 1982
Тушишвили Н. Н., Амиранашвили Дж. Ш., Итоги работ Алгетской археологической экспедиции // Полевые археологические исследования в 1980 году, Тбилиси, «Мецниереба», 1982, 23–29.

ХАЧАТРЯН 1975
Хачатрян Т. С., Древняя Культура Ширака III–I тыс. до н.э., Ереван, Изд. ЕГУ, 1975.

ХАЧАТРЯН 1979
Хачатрян Т. С., Артикский некрополь, Каталог, Ереван, Изд. ЕГУ, 1979.

BADALYAN, AVETISYAN 2007
Badalyan R. S., Avetisyan P. S., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its Surrounding Regions // BAR International Series, №1697, 2007.

BAHŞALIEV 1997
Bah_aliev V., The Archaeology of Nakhichevan, Istanbul, Arkeoloji ve Sanat Yay1nlar1, 1997.

GEVORGYAN 2017
Gevorgyan A. Ts., Non-ferrous metal of the Horom necropolis // Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2017, vol. 10. 1–2, 145–160.

GOGIBIRIDZE 2008
Gogibiridze N., For Dating of Some Types of Pins and Ear-cleaners // Iberia-colchis, 2008, 4, Tbilisi, 5–13.

KHANZADIAN 1995
Khanzadian E. V., Metsamor 2, La nncropole, vol. 1 : Les tombes du Bronze moyen et rncent, Paris, «Neuchâtel» : Recherches et publications, 1995.

MORGAN DE 1889
de Morgan J. J. M., Mission Scientifique au Caucase // Etudes archéologiques et historiques, Tome 1, Paris, 1889.

XNKIKYAN 2002
Xnkikyan O. S., Syunik During the Bronze and Iron Ages, Mayreni Publishing, 2002.

Աղյուսակ 1



Աղյուսակ 2



Աղյուսակ 3

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Տ. Է. Հարությունյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Քարաշամբի հնավայրի նորահայտ շքասեղների ժամանակագրությունը եւ տիպաբանությունը

Հիմնաբառեր՝ Քարաշամբ, շքասեղ, զարդ, հագուստ, բրոնզի դար, վաղ երկաթի դար, դեկորատիվ-կիրառական արվեստ:

Քարարաշամբի՝ 2009–2016 թթ. պեղված դամբարաններից հայտնաբերված շքասեղների ձև ակազմ հատկանիշների համադրությունը հիմք ընդունելով՝ առանձնացրել ենք շքասեղների 8 մորֆոտիպեր, որոնք, իրենց հերթին, հանդես են գալիս տարբերակներ կազմող օրինակներով: Հոդվածում հանգամանորեն քննարկել ենք յուրաքանչյուր օրինակի թվագրության հիմնավորման, մշակութային պատկանելության և առանձնացված տարբերակների ու տիպերի տարածքային ընդգրկմանն առնչվող հարցերը:

T. E. Harutyunyan
Institute of Archaeology and Ethnography

Chronology and Typology of the Newly Discovered Pins of the Karashamb Site

Keywords: Karashamb, pin, decoration, clothes, Bronze Age, Early Iron Age, decorative and applied arts.

Taking into account the morphological characteristics of the pins found during the excavations of burial chambers in Karashamb between 2009 –2016, we have classified those into 8 types which are further subcategorized into representative variants. We have laid out a detailed discussion of the issues associated with the criteria underlying the dating of each sample, as well as problems with defining the cultural and geographical identity of these samples. Summarizing our observations aimed at proposing a typological classification of the items in discussion, we can note the following: according to the current literature, the importance of the research on classification of pins is determined by several factors. First of all, pins can be considered as: a) hair accessories or b) clothing accessories. This being said, the pins found in burial chambers often allow us to determine and reconstruct the hairstyle and the clothes of the buried person which are important for defining ethno-cultural characteristics in general. Moreover, alongside the other accompanying items found in burial chambers, this decoration (in the context of burial rites) is suggestive of social differences and of the sex and age ratio in the given community. The burial tomb №182 in Karashamb is of particular interest in this respect. Apparently, the adult male buried in this tomb represents the high military class: a dagger and a lace were found among other items in this tomb. A pin was found near the skull. An armor button was located right next to the pin. The in situ image shows that the two items were used together. The typological comparative framework allows the pins in discussion to be regarded as chronological and geographical indicators of the given archaeological culture. Of particular interest in this context are the pins discovered in the Trialeti-Vanadzor culture which allow us to have a more accurate understanding of the temporal and cultural pertinence of these items. As samples of Applied Arts, these decorations are of paramount importance for studies of the artistic perception and depiction of the world by the members of the given society. The pins with bifurcated animal

heads are also of major interest. These samples are mostly found in Northern Caucasus (they are rare in the territory of Armenia). It should be mentioned that the samples discovered in the Karashamb site are significantly different in style and in the types of depicted animals. They should most probably be attributed to the Lchashen-Metsamor culture.

Т. Э. Арутюнян
Институт археологии и этнографии

Хронология и типология новонайденных карашамбских булавок

Ключевые слова: Карашамб, булавки, украшения, одежда, эпоха бронзы, эпоха раннего железа, декоративно-прикладное искусство.

Исходя из морфологических особенностей булавок, обнаруженных во время раскопок погребальных камер в Карашамбе в 2009–2016 гг., их можно классифицировать на 8 типов, которые в свою очередь подразделяются на отдельные варианты. В статье подробно рассмотрены вопросы, связанные с критериями, лежащими в основе датировки каждого образца, а также с определением их культурной и географической идентичности. Резюмируя наши наблюдения, направленные на предложение типологической классификации обсуждаемых предметов, можно отметить следующее: важность исследования по классификации булавок в текущей литературе определяется несколькими факторами. Прежде всего, булавки рассматриваются как: а. украшения для волос и б. как деталь одежды, ее часть. При этом булавки, найденные в погребальных камерах, часто позволяют определить и восстановить в какой-то степени головной убор/прическу и одежду погребенного человека, которые важны для определения этнокультурных характеристик в целом. Помимо этого, наряду с другими сопровождающими предметами, найденными в погребальных камерах, это украшение (в контексте погребального обряда) выступает в качестве индикатора для восстановления структуры социальных и половозрастных различий данного общества. В свете сказанного весьма интересна представшая in situ картина погребения №182 Карашамба. Погребенный взрослый мужчина – представитель высшего военного сословия: среди сопутствующего инвентаря имеется также кинжал и копье. Булавка находилась возле черепа, а рядом с булавкой была выявлена броневая пуговица. Из открывшейся картины in situ видно, что эти два предмета были использованы в сочетании друг с другом. Сравнительная типология позволяет рассматривать булавки в качестве хронологических и географических показателей данной археологической культуры. В этой связи следует отметить, что образцы, впервые обнаруженные в триалетско-ванадзорской культурной среде, дополняют наше представление о культурно-хронологической принадлежности этих образцов. Особый интерес представляют и булавки с навершиями в виде парных головок животных/птиц. Эти образцы в основном встречаются на Северном Кавказе (они редко встречаются на территории Армении). Следует отметить, что образцы, найденные в Карашамбе, значительно отличаются по стилю и типам изображенных животных. Скорее всего их следует отнести к Лчашен-Мецаморской культуре.

Բենիկ Վարդանյան
ՀԱԻ, ՇՀՀԿ

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ՝ ԸՍՏ ԼՃԱՇԵՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ (Մ.Թ.Ա. 16–13-ՐԴ ԴԴ.)[1]

Կուրի և Արաքսի միջագետքի բրոնզ-երկաթեդարյան հանրույթների[2] հնաժողովրագրական և սոցիալական վերակազմության նպատակով՝ սույն հոդվածում քննվում են Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբանադաշտի՝ թվով 186 դամբանում առկա 196 աճյունների հնագիտական և հնամարդաբանական տվյալները: Օգտագործված մեթոդաբանությունն առաջարկում է դամբանային կառույցների ձևաբանական վերլուծության միջոցով կատարել թաղման ծեսի դասակարգում և դրա բազմակողմանի ուսումնասիրություն, որը տեսանելի է դարձնում սոցիալական լանդշաֆտի փոփոխությունները:

Հիմնաբառեր՝ Հարավային Կովկասի հնագիտություն, ուշ բրոնզի դարաշրջան, հնաժողովրդագրություն, զինվորական դաս, բրոնզեդարյան բնակավայր, Լճաշեն, դամբարանային համալիր:

Դիրքը և ուսումնասիրության պատմությունը

Լճաշենի դամբանադաշտը տեղադրված է Սևան քաղաքից 5 կմ հարավարևմուտք, ծովի մակերևույթից շուրջ 2000 մ բարձրության վրա: Այն ձգվում է մինչև Չկալովկա գյուղի տարածքը (ընդհանուր երկարությունը՝ 4 կմ): Դամբանադաշտում և ամրոցում պեղումներ են իրականացվել մի քանի փուլերով:

Լճաշենի ամրոցում առաջին անգամ ուսումնասիրություններ՝ թեև ոչ-կանոնավոր, իրականացրել են Ի.Պոլյակովը, Ե.Լալայանը, Ա.Իվանովսկին[3]: 1956–75 թթ. Լճաշենի ամրոցում և դամբանադաշտում կանոնավոր պեղումներ է կատարել Հ.Մնացականյանը, ով ընդհանուր առմամբ ուսումնասիրել է 295 մեծ

---

1 Խորին երախտագիտություն ենք հայտնում պ.գ.թ. Լ.Ա. Պետրոսյանին՝ Լճաշենի դամբանադաշտի 1986–2006 թթ. պեղումների արդյունքին [տես Պետրոսյան 2015] ծանոթացնելու և դրանից օգտվելու հնարավորություն տալու համար:

2 Հին հանրույթը (*պալեոպոպուլացիա*)՝ մեկ դամբանադաշտի տարածքում թաղված *օբյեկտների* ամբողջությունն է, որը, սակայն, չի ներկայացնում թաղումների պատահական կուտակում (օրինակ՝ մարտում զոհված զինվորների թաղումներ) կամ ծիսական թաղում («քրմերի» դամբաններ, *կենոտաֆներ*, «սրբազան կենդանինների» թաղումներ», ևն [տես Алексеев 1989, 75]):

3 Ավետյան 2003, 12–13:

ու փոքր դամբան[4]: Լճաշենում մասնավոր պեղումներ են իրականացրել նաև Հ. Իսրայելյանը[5], Է. Խանզադյանը[6] և ուրիշներ:

Լճաշենի դամբանադաշտում և ամրոցում 1975–1986 թթ. պեղումներ է կատարել Վ. Ավետյանը՝ ուսումնասիրելով շուրջ 200 դամբան[7]: Լճաշենի դամբանադաշտի ուսումնասիրության երրորդ փուլը կապված է Լ. Պետրոսյանի հետ. նա այս հնավայրում 1989–2006 թթ. ուսումնասիրել է 223 դամբան, որոնց ժամանակագրական ընդգրկումը տատանվում է մ. թ. ա. 3-րդ հազարամյակից մինչև մ. թ. ա. 13-րդ դ.[8]: Հ. Մնացականյանի և Վ. Ավետյանի պեղած դամբանների նկարագրությունների մասնակի հրատարակումը[9] դժվարացնում է Հարավային Կովկասի այս կարևոր հուշարձանի ամբողջական ուսումնասիրությունը, ուստի սույն հոդվածում կօգտագործվեն Լ. Պետրոսյանի պեղումների արդյունքները[10]:

Դամբանադաշտում պեղումներն իրականացվել են երեք տեղամասերում: Ներկայումս առաջին տեղամասը գրեթե ամբողջությամբ ծածկված է գյուղի նորակառույց տներով[11], երկրորդը գտնվում է գյուղից մոտ 1 կմ արևելք գտնվող լճի անտառամերձ հատվածում[12]: Երրորդ տեղամասը սկսվում է երկրորդի հարավ-արևելյան եզրից և հասնում մինչև Չկալովկա գյուղի մերձակա տարածքներ[13]:

Դամբանադաշտի կառուցվածքը

Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի բրոնզ-երկաթեդարյան դամբանադաշտերը ձևավորվել են տեղանքի բնական տարրերի, մարդակերտ կառույցների և որևէ կարևոր դամբանաբլուրի շուրջ[14]: Սակայն համայնական դամբանադաշտում նոր դամբանի կառուցումը պայմանավորված է եղել հանգուցյալի սոցիալական դիրքով կամ սեռատարիքային պատկանելությամբ[15]: Լճաշենի սեպագիր արձանագրության դիմաց՝ լճի ջրերից ազատված

4 Мнацаканян 1957, 192–207; Մնացականյան 1965, 95–114:

5 1978 թ. Հ. Իսրայելյանը Լճաշենում բացեց տարաժամանակյա թաղումներ պարունակող դամբաններ, որոնցից առաջինը թվագրվում է՝ 15–14-րդ (անհատական), երկրորդը՝ 10–8-րդ (խմբային), երրորդը՝ 6–4-րդ (անհատական) դարերով [Իսրայելյան 1979, 6]:

6 Խանզադյան 1960, 65–78:

7 Ավետյան 1986, 90–96; 2003, 51–57:

8 Петросян 1988, 99–101; Պետրոսյան 2015, 291–295:

9 Լճաշենի մ. թ. ա. 15–13-րդ դդ. մեծ դամբանաբլուրների կառուցվածքի և ուղեկցող գույքի նկարագրությունները տես Ավետյան 2003, 58–67:

10 Պետրոսյան 2015:

11 Մեծ դամբանաբլուրները գտնվում են առաջին տեղամասի հարավային ծայրին [Ավետյան 2003, 49]:

12 Այստեղ հաշվվում է մոտ 400 դամբան [Ավետյան 2003, 50]:

13 Այստեղ հաշվվում է մոտ 500 դամբան, որոնք դասավորված են խմբերով, յուրաքանչյուրում՝ 3–15 դամբան [Ավետյան 2003, 50; Պետրոսյան 2015, 6–7]:

14 Սյունիքի ու Արցախի դամբանադաշտերի կառուցապատման սկզբունքների մեջ բնական միջավայրի գործոնի մասին տես Ավետիսյան և այլք 2017, 160–164:

15 Матвеева 2007, 32.

բնակավայրից 150 մ արևելք ընկած հարթ ու քարազուրկ մի տարածքում, կենտրոնացած են տարբեր չափերի մեծ դամբանաբլուրներ[16], որոնց մոտից սկսվել է շարքերով դասավորված մյուս դամբանների կառուցումը՝ հասնելով մինչև Չկալովկա գյուղ: Նույնատիպ իրավիճակ է Թռեղքում և մի շարք այլ հնավայրերում, որտեղ մեծ դամբանաբլուրների շուրջը տեսնում ենք անհամեմատ փոքրերի անհամաչափ կուտակումներ[17]:

Հնագիտության մեջ հայտնի երևույթ է, որ դամբանադաշտերում հասարակական շերտերի հստակ տարբերակումը նկատելի է միայն այդ շերտերի առաջացման նախնական փուլերում, երբ հասարակական որևէ խումբ նոր է սկսում առանձնանալ, տարբերակվել համայնքի մյուս անդամներից[18]: Միջին բրոնզի դարաշրջանից մինչև 15-րդ դ. նկատվում է միևնույն դամբանադաշտում մեծ դամբանաբլուրների քանակային աճ: Հետագա դարերում նույն դամբանադաշտում նմանատիպ ծախսատար կառույցներ այլևս չեն հանդիպում, ինչպես, օրինակ, Թռեղքի, Ուչ Թեփեի, Լճաշենի և այլ դամբանաբլուրների պարագայում: Դրա փոխարեն, տարբերակումը շարունակում էին կատարել անհամեմատ քիչ մարդկային և նյութական ռեսուրսների վատնումով: Այս համատեքստում է պետք քննարկել Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբանադաշտում՝ պատմական շատ փոքր միջակայքում մեծ քանակությամբ տարբերակվող «առանձնաշնորհյալ անձանց» դամբանների առկայությունը[19]:

Հաճախ թաղման հուշարձանների նկարագրության և սոցիալական մեկնաբանության մեջ գործածվում են «*մեծ*», «*միջին*» և «*փոքր*» դամբանաբլուր եզրույթները, որոնք, սակայն, կարիք ունեն հիմնավորման: Լ. Մարսադոլովը դամբանաբլուրի սոցիալական պատկանելությունը, աստիճանակարգությունը ցույց տալու համար առաջարկել է «կարգային» բաժանման համակարգ, ըստ որի՝ տարբերակման միավոր է ընդունվում դամբանաբլուրի չափը՝ համապատասխանաբար սահմանվելով *մեծ*, *միջին* և *փոքր* բառեզրերը[20]: Քանի որ Լճաշենի ոչ բոլոր դամբանաբլուրների ու դամբանային վերգետնյա մասերն են պահպանվել, ուստի սույն հոդվածում սոցիալական աստիճանակարգության վերհանման համար որպես առանցքային միավոր կընդունվի խցի չափը՝

16 Ավետյան 2003, 40, 42:

17 Awalischili 1987, 71. Մեսխեթի դամբանադաշտում նույնպես մեծ դամբանաբլուրը շրջապատված է ավելի փոքրերով: Նման տեղադրությունը, ինչպես և Թռեղքի մի շարք դամբանադաշտերում ու Լճաշենում, ենթադրաբար պայմանավորված էր համայնքի սոցիալական հարաբերությունների պատկերով [Авалишвили 1991, 173]:

18 Childe 1944, 94–97; Массон 1971, 110.

19 Թռեղքի միջին և ուշ բրոնզի դարերով ժամանակագրվող դամբանադաշտերում Գ. Ավալիշվիլին հակված է տեսնելու դամբանադաշտի կառուցապատման վերոնշյալ սկզբունքը: Մեծ հողաթմբով դամբանաբլուրները պատկանել են «ցեղապետին», որի ձեռքերում կենտրոնացած էր հոգևոր և աշխարհիկ իշխանությունը: Միջին մեծության դամբանաբլուրները մեկնաբանվում են որպես «կենտրոնական խցում թաղվածին պատկանող վարչակարգում ծառայածի», այսինքն՝ համայնական ազնվականության ներկայացուցչի դամբանաբլուր: Սոցիալական այս խավի ներկայացուցիչները մահանալուց հետո թաղվել են իրենց համայնքի առաջնորդի շուրջը [Awalischili 1987, 71–73]:

20 Марсадолов 1997, 98; հարցի վերաբերյալ գրականությունը տես Дашковский 2015, 15:

առանձնացված միջակայքերով, որն ամբողջովին արտահայտում է արտաքին կառույցի գաղափարական ծանրաբեռնվածությունը:

Լճաշենում 16–13-րդ դարերի դամբանների կազմում առանձնանում են հետևյալ տեսակները.

ա) *մեծ դամբանախցեր* (I և II կարգ[21])՝ համայնքի առաջնորդների թաղումներ,

բ) *միջին մեծության դամբանախցեր* (III կարգ)՝ ցեղային ազնվականության ներկայացուցիչների թաղումներ,

գ) *փոքր դամբանաբլուրներ, կրոմլեխներ* (IV–VIII կարգ)՝ հիմնական բնակչության թաղումներ. յուրաքանչյուր կարգի մեջ նկատելի են տարբերություններ[22]:

Լճաշենի «*մեծ դամբանախցերն*» ունեն 3մ և ավելի երկարություն: Դրանք՝ ուղեկցող գույքի քանակական և որակական հատկանիշներով տարբերվում են համայնքի մյուս բոլոր թաղումներից (I–II կարգ)[23]: Ցեղային ազնվականության ներկայացուցիչների դամբանախցերը սահմանվում են 2,5 – 3/4մ չափերով[24]: Բնակչության հիմնական շերտերը ներկայացնող թաղումները տեսանելի են 0,5 – 2,5մ երկարություն ունեցող դամբաններում (IV–VIII կարգ), որտեղ ևս նկատվում է ներքին աստիճանակարգություն: Երրորդ խմբի փոքր հողաթմբերով թաղումների գույքը սակավաթիվ է: Սա ամենաշատ հանդիպող ենթատեսակն է[25]:

Երրորդ տեղամասի ժողովրդագրական պատկերը

Լճաշենի դամբանադաշտում ուշ բրոնզի դարում աճյունի մնացորդներ պարունակող 186 դամբանում առկա են 196 աճյուններ, որոնցից տղամարդկանց են պատկանում 96-ը, կանանց՝ 72-ը, երեխաներին՝ 30-ը: Լճաշենում աճյունի ուղղությունը պայմանավորված է եղել հանգուցյալի սեռով. աջ կողքի թաղվածներն արական սեռի են (56%), ձախ կողքի թաղվածները՝ իգական (58%) [աղ. 2–3, էջ 230]:

21 Հին հանրույթների սոցիալական կառուցվածքը կարելի է պատկերացնել կոորդինատային համակարգում, որտեղ հորիզոնական առանցքին գտնվում են տարբեր գործառույթ կամ կարգավիճակ ունեցող խմբերը (զինվորական, քրմական դասեր, գուշակներ, ևն), իսկ ուղղահայաց առանցքին՝ սոցիալական արժեքականությանը կամ կարգերին առնչվող խմբերը: Համայնքի յուրաքանչյուր անդամ այս համակարգում ունի իր տեղը: Սոցիալական կարգավիճակը, որպես կանոն, ժառանգական է, իսկ կարգի բարձրացումը պայմանավորված է անհատի ձեռքբերումներով: Հին հանրույթներում կարգը չի արտահայտում քաղաքական առաջնորդություն կամ հեղինակության աստիճան, այլ ցույց է տալիս սոցիալական մի խմբի ներսում շերտավորման աստիճանը [Матвеева 2009, 19–20]:

22 Марсадолов 1997, 99.

23 Դամբանադաշտի այս հատվածում, մեր հաշվարկներով, հանգչում է Լճաշենի իշխանական տան առնվազն 6–8 սերնդի ներկայացուցիչ (№№ 1–5, 8–11, 40, 97) [Мнацаканян 1957, 146–153; Մնացականյան 1965, 95–114; Ավետյան 2003, 58–67; Sagona 2013, 287]:

24 Լճաշեն №№ 3, 6, 12, 36, ևն [Մնացականյան 1965, 95–114; Ավետյան 2003, 58–67]:

25 Երրորդ տեղամասում պեղված 186 ուշբրոնզեդարյան դամբանները կարելի է գնահատել որպես IV–VIII կարգի թաղումներ:

Չնայած Լճաշենի, Արթիկի, Շիրակավանի, Մաղնիսճալայի և այլ ուշբրոնզեդարյան դամբանադաշտերում պեղված դամբանների մեծաքանակությանը, այս համայնքներն, ըստ վիճակագրական արժևորման, դասվում են փոքր և միջին համայնքների շարքին:

Արթիկում ու Լճաշենում անհատի մահացության ցուցանիշը գրեթե նույնն է, ինչ Հարավային Կովկասի համաժամանակյա մյուս դամբանադաշտերում. 35–40 տ.՝ տղամարդկանց, և 20–35 տ.՝ կանանց համար[26]: Այսպես, Արթիկում պեղված 640 *կապակոմբային* թաղումներում առկա են 650-ից ավելի աճյուններ, որոնցից եթե առնվազն 40-ը իրենց ընտանիքներով ապրեին համայնքում միաժամանակ, ապա այդ պարագայում ևս տարեկան մահացության քանակը պետք է կազմեր մոտավորապես 6–10 մարդ[27] (աղ. 2, էջ 230):

Ըստ հնաժողովրդագրական ուսումնասիրություններում առաջարկված մեթոդաբանության[28]՝ փորձենք դիտարկել ուշ բրոնզի դարի տարբեր շրջափուլերում Լճաշենի և Արթիկի բնակչության քանակական տատանումները: Այսպես, մ.թ.ա. 16–15-րդ դդ. Լճաշենում միաժամանակ ապրած բնակչության միջին թիվը պետք է կազմեր մոտ 100 մարդ ($n=22$), համաժամանակյա Արթիկում՝ 10 ($n=1$), մ.թ.ա. 15–13-րդ դդ. Լճաշենում՝ մոտ 700 ($n=165$)[29], Արթիկում՝ 2300–2330 ($n=629$), իսկ մ.թ.ա. 13–9-րդ դարերում և՛ Լճաշենում ($n=2$)[30], և՛ Արթիկում ($n=11$) նկատվում է բնակչության թվաքանակի կտրուկ նվազում:

Մ.թ.ա. 15–13-րդ դարերում, բնակչության քանակական աճին զուգահեռ, մեծանում է կանանց և երեխաների մահացության ցուցանիշը: Այսպես, ի տարբերություն Հայաստանի ուշբրոնզեդարյան մյուս հնավայրերի, ուր մանկա-

---

26 Мкртчян 2001, 111; Худавердян и др. 2015, 50–51.

27 Neiling 2009, 137.

28 Այստեղ n -ը մեկ ընտրույթի մեջ միավորների քանակն է՝ $n=Z(a+m)/t$, որտեղ a-ն մահացության միջին տարիքն է, m-ը՝ քանակը, t-ն՝ դարաշրջանի կամ փուլի տևողությունը, Z-ը՝ միաժամանակ ապրած բնակչության մոտավոր քանակը (պայմանական նշանները – Բ.Վ.) [Матвеева 2007, 98; Епимахов 2009, 99–101]: Այս մեթոդով հաշվվել է Արթիկի դամբանադաշտի բնակչության կենսագործունեությունը [Neiling 2009, 137]:

29 Լճաշենում մ.թ.ա. 15–13-րդ դդ. բնակչության քանակական աճի այս տվյալները համապատասխանում են ամրոց-բնակավայրի շերտագրությանը: Ամրոցի 1–2, 4 կացարանների երրորդ շերտը հասնում է 1,5–2 մետրի: Այստեղից հայտնաբերված խեցեղենը թվագրվում է ուշբրոնզեդարյան երկրորդ փուլով: Սա խոսում է երկարատև բնակեցվածության մասին [Ավետյան 2003, 33]: Ամրոցի շուրջ տեղադրված բնակավայրն ընդարձակվել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին: Լճաշենում պեղված 35 կացարանների չափերը տատանվում են 15–20 մ^2 սահմաններում [Ավետյան 2003, 36]: Այսպես, մեկ շնչին բաժին ընկող մակերեսը տատանվում է 3–4 մ^2, իսկ, օրինակ, Լճաշենի ամրոցի 9-րդ կացարանն ունի 12 մ^2 մակերես, որտեղ կարող էր ապրել առնվազն 3–4 հոգի: Ամրոցի արևելյան պարսպից դուրս իրար մոտ կառուցված 7 կացարանների չափերը տատանվում են 9,95×4/5 մ չափերի (42.75 մ^2) մեջ, որտեղ ենթադրաբար պետք է ապրած լիներ 12–14 հոգի: Այս թիվը համապատասխանում է ավանդական բրոնզեդարյան ընտանիքի վերակազմելի մոդելին [Обыденнов, Домрачева 2005, 200–205]:

30 Այս հաշվարկներն արված են Լճաշենի դամբանադաշտի միայն երրորդ տեղամասի տվյալներով: Սակայն եթե հաշվարկի մեջ ներառվեին Հ.Հ.Մնացականյանի և Վ.Վ. Ավետյանի պեղած դամբանների հնամարդաբանական տվյալները, ապա պատկերը կտրուկ կփոխվեր:

կան մահացության ցուցանիշը փոքր է (Բարձրյալ՝ 7.7% [$n=39$], Բաղերի չալա՝ 15.6% [$n=32$], Բովեր՝ 5%[31]), Լճաշենի երրորդ տեղամասի մ.թ.ա. 14–13-րդ դդ. դամբանները (№№157–208) ներկայանում են 2–22 տարեկանների՝ երեխաների, դեռահասների, պատանիների և երիտասարդների 37 (92,5%) թաղումներով ($n=40$)[32]: Լճաշենի վերոնշյալ դամբաններում տարբերակում ենք երեխաների թաղման երկու եղանակ՝ ա) երբ մանկահասակ աղջիկները կամ տղաները թաղվել են առանձին պատրաստված հատուկ խցերում և բ) երբ երեխաներին թաղում էին մեծահասակի հարևանությամբ՝ ոտքերի կամ գլխի մոտ, հազվադեպ՝ որովայնին դրված:

Առաջին տեսակի թաղումներից №№180, 184, 74–75 դամբաններում թաղված էին 1,5–4 տարեկան, ապա №№102, 112, 128, 160–161, 166 դամբաններում՝ 6–9 տարեկան և №№72, 103, 132, 157, 163, 183, դամբաններում՝ 12–15 տարեկան երեխաներ: Երեխաների բոլոր դամբաններում ուղեկցող գույքը 1–5 խեցանոթներ էին: Հազվադեպ հանդիպում են նաև մանր և խոշոր եղջերավոր կենդանու մնացորդներ:

Երկրորդ տեսակի մանկական թաղումներից է №171-ը, որտեղ թաղված՝ 22–25 տարեկան տղամարդու ոտքերի մոտ փաստագրվեցին 9–10 տարեկան երեխայի կմախքի մնացորդներ: №181 դամբանում երկու ննջեցյալ կար՝ 18–22 տարեկան կին և 5–6 տարեկան երեխա[33]: №№190–193 դամբանները կազմում են մեկ շարք, ուր №190-ում հասակավոր տղամարդու թիկունքին հարող մասում դրված էին երկու մանկահասակ երեխաների ոսկորներ, №191-ում թաղված էր 15–17 տարեկան տղա, իսկ №192-ում՝ 18–20 տարեկան կին (աջ կողքի) և 10–12 տարեկան երեխա[34]: №194-ում 45–50 տարեկան տղամարդու հետ 13–15 տարեկան աղջկա աճյունի մնացորդներ են փաստագրվել: №196-ում 22–25 տարեկան տղամարդու գլխավերևում թաղված էր 10–11 տարեկան՝ նստած դիրքով երեխա: №198-ում պեղվել են երեք ննջեցյալներ. մոտ 77 տարեկան տղամարդ, 12–13 տարեկան տղա և 11–12 տարեկան աղջիկ, իսկ №199-ում՝ հասակավոր տղամարդու թիկունքի մոտ 15–16 տարեկան երեխա (իմա՝ կին)[35]: №202-ում երեք ննջեցյալներից մեկը 25–30 տարեկան տղամարդ էր, մյուս երկուսը՝ 5–6 տարեկան երեխաներ: №206-ում՝ 25–30 տարեկան կնոջ գլխավերևում բացվեցին 5–6 տարեկան, նստած դիրքով թաղված երեխայի աճյունի մնացորդներ[36]:

Պետք է նշել, որ անհատական մանկական 16 թաղումներից 8-ում կմախքի անատոմիական դիրքը խախտված էր, իսկ մեկ դեպքում՝ №128-ում, աճյունի գլուխն առանձնացված էր: Այս և այլ փաստերը վկայում են, որ մանկական մահացությունը պայմանավորված է եղել բնական մահով և ծիսական զոհաբերու-

31 Худавердян и др. 2015, 50–51.
32 Պետրոսյան 2015, 157–171:
33 Պետրոսյան 2015, 148:
34 Պետրոսյան 2015, 150–151:
35 Պետրոսյան 2015, 152–153:
36 Պետրոսյան 2015, 156:

թյամբ[37]: Երեխաների դամբաններն իրենց չափերով և կառուցման եղանակով չեն տարբերվում մեծահասակների թաղման կառույցներից, ինչը հիմք է տալիս կարծելու, որ Լճաշենի ուշբրոնզեդարյան հասարակությունում երեխաներն ընդունվում էին որպես համայնքի լիիրավ անդամ, սակայն նվիրաբերման անցումային ծես (*ինիցիացիա*) չանցածները թաղվել են համայնքի դամբանադաշտի առանձնացված, եզրային հատվածում՝ «մանկական գերեզմանատանը»[38]:

Թաղման խցի ուղղությունը

Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբանադաշտում թաղման խցի ուղղությունը կախված է դամբանաբլուրի կառույցի ձևից, այսինքն՝ թաղման խցի ուղղությունն ունի սոցիալական հիմնավորում: Լճաշենի 16–13-րդ դդ. մեծ և միջին դամբանաբլուրներն (I–III կարգ) ունեն այլ կողմնորոշում, որը տարբերվում է *կրոմլեխներով* շրջապատված հասարակ դամբանախցերի կողմնորոշումից (IV–VIII կարգ): Այսպես, Լճաշենի ուշբրոնզեդարյան 227 դամբաններում արևելք-արևմուտք ուղղությունը կազմում է 11%, իսկ համաժամանակյա 30 դամբանաբլուրներում այն 76% է: Ինչպես տեսնում ենք, IV–VIII կարգի դամբաններում գերակշռում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք կողմնորոշումը (50%), իսկ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կողմնորոշումը կազմում է 19% [աղ. 4, էջ 231]: Այն լիովին համապատասխանում է կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանների կողմնորոշմանը, որտեղ միջին բրոնզից ուշ բրոնզի անցումային փուլում հյուսիս-հարավ կողմնորոշումը (47%) փոխարինվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք կողմնորոշմամբ (60%) [աղ. 5, էջ 231]:

Մեր կարծիքով՝ Լճաշենի ուշբրոնզեդարյան հանրույթի վերնախավի թաղման կառույցների ձևաբանական, ինչպես և որակական տարբերությունը պայմանավորված էր վերջիններիս գործունեության փոխկապակցված հատկանիշներով՝ *աշխարհայացքային* (ընակչության «*սակրալ*» և «*պրոֆան*» խմբերի տարբերակում), *գործառութային* (աշխարհակառուցվածքային, որն արտահայտվում էր իշխողի և հովանավոր աստծո միջև եղած կապով) և *մշակութային* (թաղման վերգետնյա ու ստորգետնյա կառույցի բարդություն, ուղեկցող իրերի քանակական և որակական կտրուկ տարբերություն)[39]: Համայնական դամբանադաշտի և իշխողների «*սակրալ*» խմբերի բաժանումով է պետք

---

37 Անդրոնովյան մշակույթի (Կենտրոնական Ասիա, Ղազախստան) շատ դամբանադաշտերում նկատվում է մանկական թաղումների նույնական պատկեր, որտեղ, ի թիվս երեխաների մահացության քանակական նույն ցուցանիշի, ինչ Հայկական լեռնաշխարհում է, տարբերվում են նաև բնական մահով կամ ծիսական զոհաբերությամբ մահացած երեխաների թաղումներ [տես Хоружая 2015, 257–287]: Հասակավոր տղամարդու և երկու մանկահասակ երեխաների համատեղ թաղումներ փաստագրվել են նաև Շիրակավանում [Թորոսյան և այլք 2003, 33–34]:

38 Հատկանշական է, որ Հայաստանի վաղերկաթեդարյան մի շարք դամբանադաշտերում (Թալին, Հոռոմ) բացակայում են երեխաների աճյունները, ինչն ուսումնասիրողները բացատրում են այդ ժամանակ տիրապետած հատուկ ծեսով, որով երեխաներին կամ չեն թաղել ընդհանուր դամբանադաշտում, կամ թաղել են առանձնացված մի վայրում [Ավետիսյան, Մկրտչյան 1994]:

39 Дашковский, Мейкшан 2015, 15.

բացատրել հասարակության հիմնական զանգվածների թաղման սրահների կողմնորոշման տարբերությունը, ինչով ընտրախավի ներկայացուցիչները փորձել են առանձնանալ ու սահմանազատվել:

Ուշբրոնզեդարյան հանրույթում տարբեր դասերի առաջացումը

Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան հանրույթներում հատուկ մասնագիտացված խմբերի կազմավորումը համընկնում է առանձնաշնորհյալների (զինակիրներ) և ոչ-առանձնաշնորհյալների (համայնքի վերարտադրությունն ապահովող մյուս անդամներ) դասերի առաջացմանը: Հենց զինակիրների ռազմականացված խումբն է հին հանրույթներում ստանձնում ավագանու, առաջնորդի դերը, որոնք կատարում են տարատեսակ արշավանքներ նն: Լճաշենի I–III կարգի դամբանները, որոնք ենթադրաբար առանձնաշնորհյալ անձանց թաղումներ են, պարունակում են ծիսական զենքի մեծաքանակ տեսականի և անվավոր փոխադրամիջոցներ (աղ. 7, էջ 73): Փորձենք համեմատել Հարավային Կովկասի ուշբրոնզեդարյան առանցքային հուշարձանների տվյալները:

Այսպես, Արթիկի 640 *կապակումբ*ներից միայն 21 խցերում առկա 34 աճյունի հետ է դրված եղել զենք (10%)[40], Շիրակավանի ուշբրոնզեդարյան 72 դամբանում զենքի տեսականի առկա էր 11 դամբանում՝ 11 աճյունի հետ (15%)[41], իսկ Մադնիսճալայի համաժամանակյա 210 դամբանում միայն 11-ում է փաստագրվել զենք (5%)[42]: Նույն պատկերը տեսնում ենք Լճաշենի դամբանադաշտում, ուր 227 դամբանում զենք առկա է միայն միայն 23 աճյունի հետ (10%), ընդ որում՝ զինակիրների տարիքը տատանվում է 30–45 տ. սահմաններում[43] (աղ. 6, էջ 231):

Սակայն կուր-արաքսյան միջագետքում անվավոր փոխադրամիջոցները վերոնշյալ առանձնաշնորհյալների դամբաններում չեն խորհրդանշում ռազմական իշխանությունը, այլ վերնախավի *ռեդիստրիբուտային* և *ռեցիպրոկացիոն* (վերաբաշխում և փոխանակում) գործառույթների արտահայտությունն են[44]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Հարավային Կովկասի ուշբրոնզեդարյան հանրույթներում (Արթիկ, Շիրակավան, Մադնիսճալա, Լճաշեն, նն) յուրաքանչյուր տոհմ դամբանախցում միայն մեկ սերնդի արական ներկայացուցչի հետ զենքի մեկ կամ կոմբինացված տեսականի դնելու հնարավորություն է ունեցել, ինչը, ի թիվս այլ հատկանիշների, խոսում է առանձնաշնորհյալ կարգավիճակի մասին:

40 Хачатрян 1979, 9.

41 Թորոսյան և այլք 2002, 30–39, 58–60: Ընդ որում, №№ 6 և 114 դամբաններն իրենց գույքի տեսականիով ենթադրում են կանացի թաղում:

42 Тушишвили 1978, 25–128.

43 Դամբաններ №№ 104, 198, 119, նն [Պետրոսյան 2015, 133–137]: Երկաթեդարյան Թալինի և Հոռոմի դամբանադաշտերում «զինակիրների» թաղումների քանակական աննախադեպ աճը և այդ դամբաններում տղամարդկանց մահացության 20–30 տարեկան սահմանը, խոսում է հաճախակի ռազմական բախումների և կանոնավոր զինվորական գործով զբաղվող խմբերի գոյության մասին [տես Ավետիսյան, Մկրտչյան 1994, 26]:

44 Sagona 2013, 287.

Աղյուսակ 7.

Ջենքի, անվավոր փոխադրամիջոցների և ձիերի բաշխվածությունը Լճաշենի դամբանադաշտի փղամարդկանց թաղումներում

Դամբ. №	Սակր	Հարթ տապար	Դաշույն	Սուր	Նիզակ	Գուրզ	Նետա-սլաք	Աղեղ	Լանջա-պնակ	Կառք/Սայլ		Բրոնզե մոդել	Ձի
										Քառանիվ	Երկանիվ		
1	2	1		1		1	1		1	1		1	
2	2	1	3		3	1	7			1	3		1
3	1		1	1	1	1	2	1	1	աղեղ			1
5	1		1	1		1	3				1		2
8			2			1	30	1			թափք		2
9			1			1				1	կառք	1	2
10	1			1	1			1		1	1 կառքի անիվ	1	
11							70			1	1		4
12			1				3						
Պ12							6						
36			1		1 տեգ		70						
52							3						
78			1										
Մ97				1		1	5				1		սանձ
98						1							
104			1			1	3						
108							6						
Մ110			1								1		
119			1			1							
121			1										
143						1							
198						1							
Ընդ.	7	2	15	5	6	12	209	3	2	6	10	3	13

Եզրակացություն

Լճաշենի ուշբրոնզեդարյան հանրույթի կարգային դասակարգման մեջ առանձնանում են մի քանի հստակ տարբերակվող սոցիալական և մասնագիտական շերտեր, որոնցում սոցիալական դիրքը պայմանավորում էր թաղման ծեսը և ձևը. I–III կարգի մեծ դամբանաբլուրներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում, մինչդեռ IV–VIII կարգի դամբաններում տիրապետում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք կողմնորոշումը:

Լճաշենի դամբանադաշտում տղամարդկանց մահացության ցուցանիշը՝ 30–40, իսկ կանանցը՝ 20–30 տարեկանն է: 14–13-րդ դդ. դամբանադաշտի արևմտյան հատվածում (40 դամբան) մանկական մահացությունը կազմում է 92,5%, ընդ որում երեխաների թաղումներում առանձնանում է երկու տեսակ. ա) առանձին կառուցված դամբաններում և բ) մեծահասակների հետ:

Ի տարբերություն վաղերկաթեդարյան դարաշրջանի, երբ «ռազմական դասը» տեսանելի է «հասարակ համայնականների խավում» ևս, Լճաշենում զենքի տեսականի առկա է միայն առանձնաշնորհյալ անձանց դամբաններում (27 աճյունի հետ՝ 12%), ինչը խոսում է վերնախավի ներսում զինվորական դասակարգի ձևավորվելու մասին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

տ. տարեկան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՄԿՐՏՉՅԱՆ 1994
Ավետիսյան Պ. Ս., Մկրտչյան Ռ. Ա., Թալինի վաղ երկաթեդարյան դամբանների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության փորձ // Հայաստանի Հանրապետությունում 1991–1992 թթ. դաշտային հնագիտական արշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, ՀԱԻ, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, 24–27:

ԱՎԵՏԻՍՅԱՆ և այլք 2017
Ավետիսյան Հ. Գ., Գնունի Ա. Վ., Բոբոխյան Ա. Ա., Մկրտչյան Լ. Ա., Սարգսյան Գ. Գ., Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի դամբարանադաշտերի տարածական և կառուցվածքային առանձնահատկությունները. նախնական դիտարկումներ // Հայագիտության հարցեր, 2017, № 2 (11), 160–176:

ԱՎԵՏՅԱՆ 1986
Ավետյան Վ. Վ., Լճաշենի 1984–1985 թթ. պեղումները // Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 10 (90), 90–96:

ԱՎԵՏՅԱՆ 2003
Ավետյան Վ. Վ., Սևանի ավազանի մշակույթը մ. թ. ա. III–II հազարամյակում, Երևան, «Զանգակ–97», 2003:

ԹՈՐՈՍՅԱՆ և այլք 2002
Թորոսյան Ռ. Մ., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., Հին Շիրակավան (1977–1981 թթ. պեղումների արդյունքները) // Հնագիտական պեղումները Հայաստանում, № 23, ՀԱԻ, Երևան, «Գիտություն», 2002:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 1979
Իսրայելյան Հ.Ռ., Լճաշենի դամբանի պեղումները // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1977–78թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, 1979, 6–7:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1960
Խանզադյան Է.Վ., Լճաշենի №6 կուրգանը // ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1960, №2, 65–78:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1965
Մնացականյան Հ.Հ., Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները // Պատմա-բանասիրական հանդես, 1965, №2, 95–114:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2015
Պետրոսյան Լ.Ա., Լճաշենի դամբարանադաշտի 1986–2006 թթ պեղումները, ՀԱԻ, Երևան, 2015 (անտիպ):

АВАЛИШВИЛИ 1991
Авалишвили Г.Б., Попытка социологической интерпретации некоторых памятников юго-восточной Грузии эпохи полиметалла // Кавказ в системе полиметаллических культур Евразии (Телави–Сигнахи 1986), Тбилиси, «Мецнереба», 1991, 172–177.

АЛЕКСЕЕВ 1989
Алексеев В.П., Палеодемография: содержание и результаты // Историческая демография: проблемы, суждения и задачи (отв. ред. Ю.А.Поляков), Москва, «Наука», 1989.

ДАШКОВСКИЙ 2015
Дашковский П.К., Мейкшан И.А., Элита в социальном пространстве кочевого общества (теоретический и методический аспекты) // Элита в истории древних и средневековых народов Евразии (коллективная монография), отв. ред. П.К. Дашковский, Барнаул, Издательство Алтайского государственного университета, 2015, 11–20.

ЕПИМАХОВ 2009
Епимахов А.В., От археологии памятника к археологии социума. Эпоха бронзы Южного Зауралья // Проблемы истории, филологии, культуры, вып. 3 (25), Москва-Магнитогорск-Новосибирск, 2009, 92–104.

МАРСАДОЛОВ 1997
Марсадолов Л.С., Социальные ранги курганов кочевников Алтая VI–IV вв. до н.э. // Социально-экономические структуры древних обществ Западной Сибири: материалы всероссийской научной конференции, Барнаул, Издательство Алтайского государственного университета, 1997, 96–99.

МАССОН 1971
Массон В.М., Древние гробницы вождей на Кавказе (Некоторые аспекты социологической интерпретации) // Кавказ и Восточная Европа в Древности (ред. Р. Мунчаев, В. Марковин), Москва, «Наука», 1973, 102–112.

МАТВЕЕВА 2007
Матвеева Н.П., Реконструкции социальной структуры древних обществ по археологическим данным, Тюмень, Издательство Тюменского государственного университета, 2007.

МКРТЧЯН 2001
Мкртчян Р.А., Палеоантропология Оромского могильника, Ереван, «Зангак-97», 2001.

МНАЦАКАНЯН 1957
Мнацаканян А.О., Раскопки курганов на побережье оз. Севан в 1965 // Советская археология, 1957, № 2, 146–153.

ОБЫДЕННОВ, ДОМРАЧЕВА 2005
Обыденнов М.Ф., Домрачева М.Е, Очерки истории экономики и палеодемографии Урало-поволжского региона в древности, Уфа, Юридический Колледж, 2005.

ПЕТРОСЯН 1988
Петросян Л.А., Раскопки Лчашенского могильника // Археологическая конференция Кавказа, №1, Тбилиси, «Мецнереба»,1988, 99–101.

ТУШИШВИЛИ 1978
Тушишвили Н.Н., Маднисчальский могильник, Тбилиси, «Мецнереба», 1972.

ХАЧАТРЯН 1979
Хачатрян Т.С., Артикский некрополь, Ереван, Издательство ЕГУ, 1979.

ХОРУЖАЯ 2015
Хоружая М.В., Детские погребения из катакомб Верхне-Салтовского археологического комплекса (попытка половозрастной и социальной интерпретации) // «Древности» 2014–2015, Харьков, Харьковское историко-археологическое общество, 2015, 257–274.

ХУДАВЕРДЯН 2016
Худавердян А.Ю., Биоархеологические подходы к изучению следов исскусственого воздействия на череп (на примере популяции эпохи бронзы и раннего железного века с территории Армении) // Вестник археологии, антропологии и этнографии, Тюмень, 2016, №1 (32), 101–112.

ХУДАВЕРДЯН и др. 2015
Худавердян А.Ю., Енгибарян Н.Г., Обосян С.Г., Основные адаптивно значимые факторы природной и социальной среды у древнего населения бассейна р. Шнох (Лорийская область, Армения) // Биологический журнал Армении, №3 (67), 2015, 48–61.

AWALISCHILI 1987
Awalischili G.B., Zur sociologischen Interpretation der GrabstՊtten der Trialeti-Kultur (nach Materialen von Meshheti) // Georgica, Heft 10, Jena-Tbilisi, 1987, 71–73.

CHILDE 1944
Childe G.V., Progress and Archaeology, London, Watts & Co., 1944.

NEILING 2009
Neiling J., Die Einführung der Eisentechnologie in Südkaukasien und Ostanatolien während der Spätbronze- und Früheisenzeit // Black Sea Studies 10, The Danish National Research Foundation's Centre for Black Sea Studies, Dissertation zur Erlangung des akademischen Graden Doktors der Philosophie der Fakultät für Kulturwissenschaften, der Eberhard-Karls-Universität Tübingen, Aarhus University Press, 2009.

SAGONA 2013
Sagona A.G., Wagons and Carts of the Transcaucasus // Tarhan Armaani, Essays in Honour of M.Taner Tarhan, Istanbul, 2013, 277–297.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Բ. Վ. Վարդանյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության խնդիրներն՝ ըստ Լճաշենի տվյալների (մ. թ. ա. 16–13-րդ դդ.)

Հիմնաբառեր՝ Հարավային Կովկասի հնագիտություն, ուշ բրոնզի դարաշրջան, հնաժողովրդագրություն, զինվորական դաս, բրոնզեդարյան բնակավայր, Լճաշեն, դամբարանային համալիր:

Լճաշենի հնագիտական հուշարձանը գտնվում է Սևան քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք: Հուշարձանը բաղկացած է բազմաշերտ բնակավայրից, կիկլոպյան մի քանի ամրոցից և ընդարձակ դամբանադաշտից: Դամբանադաշտի կառուցապատման սկզբունքի մեջ հայելային ձևով տեղ է գտել համայնքի սոցիալական հարաբերությունների արտահայտումը, որի ուսումնասիրման համար օգտագործվել է «կարգային բաժանման համակարգը»: Լճաշենի դամբանադաշտի հնամարդաբանությունն ունի հետևյալ պատկերը. ուսումնասիրվող 186 դամբանում առկա է 196 աճյուն, որոնցից 96-ը բնորոշվել են որպես տղամարդկանց (56%-ը դրված աջ կողքի), 72-ը՝ կանանց (58%-ը դրված ձախ կողքի) և 30-ը որպես երեխաների աճյուններ (աղ. 2–3): Լճաշենի բրոնզեդարյան հասարակության մահվան ցուցանիշը 35–40 տարեկանն է, կանանց համար՝ 20–35 տ.: Մեծ թիվ է կազմում երեխաների մահացության ցուցանիշը, ինչը կապված է ինչպես բնական գործոններով, այնպես էլ ունի ծիսական ետնախորք: Այն դամբանաբլուրները, որոնք վերակազմվում են որպես համայնքի առանձնաշնորհյալ կարգավիճակ ունեցող անձանց թաղումներ, պարունակում են մեծ քանակությամբ ծիսական առարկաներ, անվավոր փոխադրամիջոցներ և զինատեսակներ:

B. V. Vardanyan
Institute of Archaeology and Ethnography
Shirak Center for Armenological Studies

Issues of Sociodemographic Differentiation for the Late Bronze Age in the Territory of Kura-Araxes Interfluve according to the Lchashen Necropolis (16–13th cc. BC)

Keywords: Archaeology of the South Caucasus, Late Bronze Age, paleodemography, military class, Lchashen necropolis, burial rite, burial structure.

The study brings into question the burial hierarchy of the Lchashen necropolis with regard a fieldwork performed at ground level. The impelemented fieldwork regards the archaeology's task to dig for concrete pieces of evidence so as to focus the old site of Sevan, which will then through analysis inquire thought-provoking clues in this respect. Therefore, the study would cover the issue in depth, besides to dissect data's ground in an attempt to speculate vital hypothesis apropos. The fieldwork was conducted in the archaeological site of Lchashen. The latter used to be a settlement, where an eventful life through the Late Bronze Age is observed. Indeed, the task performed upon, was to excavate around 800 graves of the old site and to observe the burial hierarchy which was eminent for the Bronze Age epoch. The observation witnesses a vital system of stratification standing on a

social hierarchy that processed the order of noble graves' category to low class graves. Besides to the burials' pattern that notices a difference according to the gender. The witness of weapons is within the noble class graves. That would allow a historical testimony with regard to this period. Unfortunately, the subject is still under-researched. The scope is to highlight the different circumstances related to life in Lchashen and the conduct of the society during the Late Bronze Age that remains unreachable.

Б. В. Варданян
Институт археологии и этнографии
Ширакский центр арменоведческих исследований

Вопросы палеодемографических исследований в эпоху поздней бронзы Куро-араксского междуречья по материалам лчашенского могильника (16–13 вв. до н. э.)

Ключевые слова: археология Южного Кавказа, эпоха поздней бронзы, палеодемография, военное сословие, Лчашен, погребальный обряд, погребальное сооружение.

Археологический памятник Лчашен, расположенный в 5 км к юго-западу от города Севан, состоит из многослойного поселения, циклопической крепости и погребального поля. Отражением социальных отношений является принцип планировки могильника, для прояснения которого используется методика «рангового дроблении общества». Палеодемография лчашенского могильника следующая: в изучаемых 186 погребениях 196 скелетов, 96 из которых – мужские (56 % на правом боку), 72 – женские (58 % на левом боку) и 30 – детские [табл. 2–3]. Маркер смертности в Лчашене для людей мужского пола составляет 35–40 лет, для женской части население – 20–35 лет. Очень высок уровень смертности детской части населения, что связано как с естественными факторами, так и с ритуальными (жертвоприношение) [табл. 2]. В тех погребениях, которые считаются погребениями племенной знати, в числе сопровождающего материала имеются разнообразные виды оружия и колесный транспорт (10%) [табл. 7].

Roman Hovsepyan, *PhD*
IAE

PLANT REMAINS FROM THE CLASSICAL PERIOD JAR-BURIALS IN THE MASTARA–3 ARCHAEOLOGICAL SITE (REPUBLIC OF ARMENIA)

Archaeologists presume that vessels found in pre-Christian period burials mostly contained food and drink intentionally put with the deceased for the afterlife. I agree with the above-mentioned theory as it is the most logical explanation and, as many studies showed, it is valid and applicable for the most of pre-Christian burials in the Old World. But, as there were not any studies regarding the content of the vessels from the Classical period burials in the territory of the Republic of Armenia, I tested that presumption having several vessels (dated with the 2nd–1st centuries B. C.) from the archaeological site of Mastara–3. Revealing the particular food component of the burial vessels was one of the primary objectives of this study. Archaeobotanical methods were applied to conduct the planned investigation.

For the first time in Armenia, contents of Classical period jar-burials were examined for plant remains to reveal possible rituals of burial ceremonies involving plants and vegetal food. There where human skeletons present in all three jar-burials; in two of them there were adults and there was a child skeleton in the smallest jar. Few charred grains and other remains of cereals and seeds of some segetal weeds were recovered. Tetraploid or hexaploid wheat (Triticum aestivum/durum), possibly bread wheat, emmer (T. dicoccum) and barley (Hordeum vulgare) were identified among cultivated plants. Remains of the recovered cereals possibly represent remnants of a porridge-like food put in the pithoi with the bodies[1].

Keywords: jar-burials, pithos, afterlife, food, ritual, cereals.

Introduction

The investigated archaeological site of Mastara–3 is located 2–3 km to the west from the present-day Mastara town: N 40°27′10.90″, E 43°51′6.31″, 1815 m above sea level. The "Antic" settlement, particularly the investigated jar-burials are attributed to the Middle Classical period and preliminarily dated to the 2nd–1st centuries B.C.[2].

There are no other archaeological sites of the middle stage of the Classical period (Artashesid) in Armenia investigated for archaeobotany. Situation with archaeobotanical investigation is somewhat better for the Early Classical, so called Yervandid

1 I wish to thank the coordinator of the excavations, archaeologist Varduhi Melikyan, and physical anthropologist Levon Aghikyan for their support during the fieldwork and sampling

2 Melikyan 2018, 1–2.

period (600–200 B.C.[3]); several sites have been studied: Tsaghkahovit[4], Shaghat–1, Shaghat–3, Uyts[5], Odzaberd[6], and Yervandashat[7]. Free-threshing wheat, hulled barley and, in much lesser proportions, also emmer were the main cultigens for all of the above-mentioned Early Classical period archaeological sites. Middle-Late Classical period archaeobotanical material is recovered in comparably large amounts in the site of 'Tigranakert of Artsakh', which is located in the province of Martakert in the Republic of Artsakh, approximately four kilometers south of the Khachenaget River[8]. There is also some archaeobotanical material examined for the end of 1st – beginning of 2nd centuries A.D. Artashat[9]. As for the Early Classical period sites, free-threshing wheat and hulled barley were the primary crops also in the Middle and Late Classical period Tigranakert and in Artashat.

For the first time for the territory of Republic of Armenia, the content of jar-burials were examined to recover plant remains. The goal of this study was to reveal any possible use of plants and vegetal material during burial ceremonies in the Classical period. There were attempts to recover plant remains from funeral contexts of burials also for other cultural and chronological periods. For example, vessels contents and-or burial soil fills from an Early Bronze Age tomb of Shengavit[10], several Middle Bronze Age tombs of Nerkin Naver[11], Aghavnatun and Sotk–10 cemeteries[12], Late Bronze Age tombs of Tsaghkahovit, Gegharot and Tsaghkasar–1 sites, an Early Iron Age tomb from Uyts site[13] were examined but, for the majority of burials and also individual vessels, there were no plant macroremains present (preserved) and only few of them revealed little quantity of seed material. All seeds of cultivated plants re-

3 Avetisyan, Bobokhyan 2012, 18.

4 Khatchadourian 2014, 152–153, 163–164.

5 Zardaryan, Hovsepyan 2017, 385–398.

6 Badalyan et al. 2017, 215–217.

7 The content of a vessel (alabastron) found on the floor N5 of I10 square in the Yervandashat settlement (excavations of 2012) was examined. The vessel dated to the 3rd century B.C. (Syuzanna Muradyan, personal communication). Several charred grains of cereals were found in 0.5 liter sample: free-threshing wheat (*Triticum aestivum/durum*; 3 grains), species unidentified wheat (*Triticum sp.*; 1 grain fragment), cultivated barley (*Hordeum vulgare*; 1 grain fragment), and an unidentified cultivated cereal (*Triticeae gen. sp.*; 1 grain fragment).
According to ethnographic parallels, e.g. village Vahan in Gegharkunik, vessels of similar shape (a bit elongated and with not wide opening/mouth) and volume (1–3 litres) have been used (mostly until 1990s) to prepare yeast to use in the cheese preparation (locally called 'maya'). A piece of calf or pig stomach, a palm of cereals grains, several fruits of cornel (*Cornus mas*), an egg and a spoon of salt were put in a vessel with water, covered and left approximately 10 days for fermentation. Yeast preparation was the same also in village Tatev in Syunik: pieces of cow stomach with barley grains have been used. Discussions with Dr. Mkrtich Zardaryan and Syuzanna Muradyan lead us to the idea that the examined vessel from the Yervandashat site also might have been used as a container for the yeast fermentation for cheese preparation.

8 Petrosyan et al. 2014, 91–93.

9 Palanjyan, Murashev 2007, 131–133.

10 Hovsepyan 2007c, 25–29.

11 Hovsepyan 2007a, 215–217; 2007b, 233–234.

12 Hovsepyan 2017b, 273–274.

13 Zardaryan, Hovsepyan 2017, 394.

covered from the above-mentioned funeral contexts represent cereals, free-threshing wheats, barley and emmer in particular.

Material and Methods

The soil fills of four vessels were sampled during the excavations of 2017. Three of those four vessels represented jar-burials (Burials №2 and №3 in square H2, and burial №4 in square H3). Burials №2 and №3, both are just buried vessels (jars), there were no visible structures associated to those jars, so, for these cases, burial = vessel (jar) (i.e. Burial №2 = Vessel №2.1, Burial №3 = Vessel №3.1). Situation is not the same with the Burial №4 in square H3; it is a tomb with stone-walled chamber that includes several human skeletons in a back side and a large jar-burial (the largest one among three studied) in the front side. Conditionally this jar-burial is named Vessel №4.1 (Vessel №4.1 ≠ Burial №4); on its turn this jar contained human skeletons, a small jug (Vessel №4.2) and a small bowl (Vessel №4.3)[14].

In sum, 95.5 liters of sediments were sampled and processed (Table 1). Human bones were present in all three excavated pithoi (jars); there were adults' bones in two comparably larger pithoi – Vessel №2.1 (sq. H2), and Vessel №4.1 (sq. H3), and a child bones in the smallest pithos – Vessel №3.1 (sq. H2) (Table 1).

Accustomed classical technique of archaeobotanical studies was applied for the current study[15]. Flotation and wet-sieving methods were co-applied to separate plant macroremains from the archaeological sediments (flotation machine was used). Mesh size of the used sieve for flotation was 0.3 mm, and for the wet-sieving it was 1 mm. There were no large (larger than few milimeters) fragments of charcoal in the separated floating concentrate.

219 seeds and fruits of Flowering Plants are recovered during our archaeobotanical investigations. Those seeds are either charred or mineralized, hence considered ancient. There are also 126 uncharred, possibly modern seeds, which are not counted for calculations (e.g. concentration). Concentration of the carpological material is from 0.2 to 4.0 seeds/liter in the studied samples (Table 1). The highest, 4.0 seeds/liter concentration is recorded for the small jug (Vessel №4.2) from the largest pithos (Vessel №4.1). Circa 3.5 seeds/liter concentration is recorded for this, the largest of the studied vessels (Vessel №4.1), which contained the most of seeds remains. In general, concentration of carpological material is low in the sampled archaeological sediments (Table 1).

Stereoscopic microscope was used to study the recovered specimens (magnification: x10–100). Corresponding literature and a reference collection were used to identify the recovered carpological material[16]. A computer scanner was used to prepare images for some of the specimens (scanning resolution: 4800 ppi; Fig. 1, p. 232).

14 Cf. Melikyan 2018, 10–20.

15 Cf. Hovsepyan 2017a, 212–216.

16 E.g. Zohary et al. 2012; Takhtajan 1957–2011.

Results and Discussions

Majority of the recovered carpological material are seeds of wild and weedy plants. On their turn, a part of these wild and weedy plants' seeds are modern (marked as uncharred in Table 1); these seeds appeared in the vessels presumably in a result of insects activity or spontaneously, when the surrounding soil moved into the vessels because of gravity or because of the rain waters flow. Although the recovered archaeocarpological material has bad preservation and the concentration of seed material is low, 14 taxa of the Flowering Plants are identified (excluding the recent seeds, which are 6 taxa; Table 1).

Here is the description and interpretation of all studied samples.

Jar-burial №2 (Vessel №2.1; 32 liters sediment from the vessel content) – 81 units of carpological material are found from this jar-burial of an adult (2.5 seeds/litre). Most of the carpological findings are charred grains of cultivated cereals and their fragments: tetraploid or hexaploid wheat (*Triticum aestivum/turgidum*), species unidentifiable wheat (*Triticum* spp.), genus and species unidentifiable cultivated cereals (Triticeae gen. spp. & cf. Triticeae gen. spp.) were identified among grains findings. In addition, biomineralized erems of field gromwell (*Buglossoides arvensis*) were recovered from this pithos (Table 1).

Jar-burial №3 (Vessel №3.1; 25 liters) – Only 5 charred seeds are recovered from this pithos, which was a child burial with some preserved skeletal remains. There is one charred fragment of a plant, possibly cereal grain (cf. Triticeae gen. spp.), mericarps of false cleavers (*Galium cf. spurium*), a seed of, probably, mitnan (cf. *Thymelaea sp.*) and an unidentified seed of a herbaceous plant (Table 1).

Jar-burial №4.1 (38 liters) – This pithos was the largest among the examined ones. It was inserted in a stone-walled small tomb in the horizontal position after the skeletons from the earlier inhumations were pushed to the backside of the tomb. There were remains of an adult's skeleton, a small jug and a bowl as well as several beads in this pithos. The majority of the plant macroremains were found from this pithos, 257 units of carpological material. Unfortunately, there was a later intrusion and the 126 of the recovered seeds are uncharred, thus considered as modern (*Euphorbia sp.*, *Chenopodium sp.*, Lamiaceae gen. sp.1, Lamiaceae gen. sp.2, Fabaceae gen. sp. 2, cf. Caryophyllaceae gen. sp.; Table 1). Nevertheless, the rest of the carpological material, represented by charred and biomineralized seeds and fruit remains, still showed an essential diversity. 102 of 131 ancient seeds remains, i.e. 78%, are remains of cultivated cereals (Triticeae). The recovered grains made possible the identification of at least three cultivated cereals: tetraploid and/or hexaploid wheat (*Triticum aestivum/turgidum*), emmer (*Triticum cf. dicoccum*) and barley (*Hordeum vulgare*). A part of the tetraploid and/or hexaploid wheat (*Triticum aestivum/turgidum*) belongs to free-threshing wheat (*Triticum aestivum/durum*). There are more wheat grains recovered than barley. Most of the recovered cereals' grains are badly eroded thus allowing the identification only on a tribe level (Triticeae gen. spp.). The findings of cereals are not limited to grains; there are also remains of a straw node (Triticeae gen. spp.),

a glume of wheat (*Triticum* spp.), an internode of common bread wheat (*Triticum aestivum* ssp. *vulgare* (*aestivum*)) and two spikelet bases, without the lower part of the internode, identified as emmer (*Triticum* cf. *dicoccum*). There is also one poorly preserved grain that resembles that of millet (cf. *Panicum sp.*). All findings of the cultivated cereals are charred (Table 1; Fig. 1, p. 232).

Non-cultivated species recovered from the content of this pithos, represent charred grains of grasses (species of Poaceae family), mericarps of Rubiaceae family species, false cleavers (*Galium* cf. *spurium*) and probably woodruff (cf. *Asperula* sp.), a nutlet of an unidentified species of Polygonaceae family, a capsule of Syrian mustard (*Euclidium syriacum*), a seed of adonis (*Adonis sp.*), biomineralized erems of species of Boraginaceae family, field gromwell (*Buglossoides arvensis*), small bugloss (*Anchusa arvensis*) and alkanet (*Alkanna orientalis*), as well as several charred seeds of an unidentified herbaceous plant (Table 1; Fig. 1, p. 232).

Small jug (Vessel №4.2) from Jar-burial №4.1 (0.5 liters) – The soil content of the small vessel, a jug from the largest pithos was sampled to check the presence of plant macroremains. Only two charred remains of cultivated cereals were found from this jug; one of those is a grain of tetraploid and/or hexaploid wheat (*Triticum aestivum/turgidum*) (Table 1).

There was a large amount of mouse droppings (coprolite) in all examined vessels. The presence of mouse coprolite may serve an indirect evidence for a large quantity of cereals grains[17].

Summing up with the recovered plants taxa list, we may state that at least three taxa of cultivated cereals and eleven of wild plants, which probably are segetal weeds, were recorded for the Mastara–3 site (Table 1). All of the recorded plant taxa are already known from other archaeological sites of the country and region[18] and grow in the vicinity of the site. In general, all three recorded cultivated cereals, free-threshing wheat, which probably is common bread wheat, barley, in all probability hulled barley, and emmer are the most common cultigens for the prehistory of the South Caucasus. In the region, these cereals have been grown since the Neolithic period to present days without a visible interruption, i.e. they are recorded for all archaeological periods[19].

Preliminary archaeobotanical studies at the Tigranakert of Artsakh revealed practically the same assemblage of cultivated plants in the sediments of the Classical period settlement: hulled barley (*Hordeum vulgare*), tetraploid and-or hexaploid wheat (*Triticum aestivum/turgidum*), including common bread wheat (*Triticum cf. aestivum ssp. aestivum* (*vulgare*)) and club wheat (*Triticum cf. aestivum ssp. compactum*), emmer (*Triticum cf. dicoccum*) and broomcorn millet (*Panicum miliaceum*). In addition to these cultivated cereals, grape (*Vitis vinifera*), fig (*Ficus carica*) and greek walnut

17 Cf. Willcox et al. 2008, 313–325.

18 E.g. Lisitsina, Prishchepenko 1977, 61–76; Gandilyan 1998; Hovsepyan 2011, 2015, 2017b.

19 Lisitsina, Prishchepenko 1977, 61–76; Gandilyan 1998; Hovsepyan, Willcox 2008; Hovsepyan 2015.

(*Juglans regia*) were cultivated or gathered (referring to fig and walnut) from the wild along with hackberry (*Celtis sp.*)[20]. The assemblage of wild and weedy plants also mostly repeats in the Classical period Mastara–3 and Tigranakert; some taxa such as *Alkanna orientalis*, *Euclidium syriacum* and *Thymelaea sp.* were not recorded for the Classical period Tigranakert, which may be conditioned by the altitudes of the sites and environmental conditions in general. Only one small jar-burial, found[21] under the entrance of a room in the Classical period quarter of the Tigranakert site, was examined for plants remains; the vessel content contained bone remains of fetus[22], but no plants remains.

Cultivated plants recovered in various funeral contexts (Europe, first millennium B.C. – first millennium A.D. period sites) in general are the most common ones cultivated and consumed by that community and mainly represented with cereals. Other most common plants in funeral context are cultivated pulses and fruits[23]. There is an opinion that the cereal grains presence in the graves had symbolic meaning related to dying, burial and re-birth[24].

Conclusions

As a part of the burial rite, food was buried with the bodies of deceased in the Classical period. The afterlife food included cereals grains and possibly was some kind of porridge. Although we have a clear evidence of this practice in the Mastara–3 site, more investigations are necessary to reveal whether this practice was an obligatory part of the burial rites in the Classical period or it was casual.

REFERENCES

AVETISYAN, BOBOKHYAN 2012
Avetisyan P. S., Bobokhyan A. A., Archaeology of Armenia in regional context: achievements and perspectives // *Archaeology of Armenia in regional context*, Yerevan, "Gitutyun", 2012, 7–20.

BADALYAN et al. 2017
Badalyan M., Mikʿayelyan A., Kyoureğyan H., Iskra M., Hovsepʿyan R., Nahapetyan S., Yeğiazaryan A., Oʒaberdi 2014–2016 tʿtʿ. peğoumneri naxnakan ardyounkʿnerə [Օձաբերդի 2014–2016 թթ. պեղումների նախնական արդյունքները] (Preliminary Results of the 2014–2016 Archaeological Excavations in Odzaberd // *Metsamor readings*, 2017, 1, Yerevan, "Service for protection of historical environment and historical-cultural museum reserves", 205–246 (in Armenian).

GANDILYAN 1998
Gandilyan P. A., Archaeobotanical evidence for evolution of cultivated wheat and barley in Armenia // *Origins of Agriculture and Crop Domestication*, Aleppo, "ICARDA", 1998, 280–285.

20 Petrosyan et al. 2014, 91–93.

21 According to personal communication of Dr. Inesa Karapetyan (IAE, Armenia).

22 According to personal communication of Dr. Valentin Radu (MNIR, Romania).

23 E.g. Matterne, Derreumaux 2008, 107–112; Šoštarić et al. 2018, 4–12; Reed et al. 2018, 3–8.

24 Hansson, Bergström 2002, 54–55.

HANSSON, BERGSTRÖM 2002
Hansson A.-M., Bergström L., Archaeobotany in prehistoric graves – concepts and methods // *Journal of Nordic Archaeological Science*, 2002, 13, 43–58.

HOVSEPYAN 2007a
Ovsepjan R. A., Paleo-ètnobotaničeskij material iz sosudov kurgana № 3 mogil'nika Nerk'in Naver [Палео-этноботанический материал из сосудов кургана № 3 могильника Неркин Навер] (Palaeoethnobotanical material from pots of tomb № 3 of Nerk'in Naver tombfield) // *Archaeology, Ethnography and Folklore of the Caucasus*, Makhachkala, "Èpoxa", 2007, 215–217 (in Russian).

HOVSEPYAN 2007b
Hovsepyan R. A., Pots contents at Nerkin-Naver tomb № 4 (Republic of Armenia) // *Archaeology, ethnology and folklore of the Caucasus*, Tbilisi, "Universal", 2007, 233–234.

HOVSEPYAN 2007c
Hovsep'yan R. A., Bousakan mnac'ordner Šengavit'i № 3 dambarani kavanot'neric' [Բուսական մնացորդներ Շենգավիթի № 3 դամբարանի կավանոթներից] (New archaeological finds from Shengavit site: plant remains from vessels of tomb № 3) // *Problems of Armenian Ethnography and Archaeology* (ed.-s P.S. Avetisyan, L.H. Hmayakyan, T.S. Dalalyan, A.A. Bobokhyan), 2007, 3, Yerevan, "Gitutyun", 25–29 (in Armenian).

HOVSEPYAN 2011
Hovsepyan R. A., Palaeoethnobotanical data from the high mountainous Early Bronze Age settlement of Tsaghkasar-1 (Mt. Aragats, Armenia) // *Ethnobiology Letters*, 2011, 2, 58–62.

HOVSEPYAN 2013
Hovsepyan R. A., First archaeobotanical data from the basin of Lake Sevan // *Veröffentlichungen des landesamtes für denkmalpflege und archäologie Sachsen-Anhalt*, 2013, 67 (Archäologie in Armenien II), 93–105.

KHATCHADOURIAN 2014
Khatchadourian L., Empire in the Everyday: A Preliminary Report on the 2008–2011 Excavations at Tsaghkahovit, Armenia // *American Journal of Archaeology*, 2014, 118 (1), 137–169 (Appendix 1 by Hovsepyan R.A. Archaeobotanical Investigations at Iron Age III Tsaghkahovit, 152–153, 163–164 [Table & Fig.]).

HOVSEPYAN 2015
Hovsepyan R.A., On the agriculture and vegetal food economy of Kura-Araxes culture in the South Caucasus // *Paléorient*, 2015, 41 (1), 69–82.

HOVSEPYAN 2017a
Hovsepyan R.A., Archaeobotanical sampling: Instructions for fieldwork // *Proceedings of the Institute of Archaeology and Ethnography* [*Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ* (*Hnagitout'yan ev azgagrout'yan institouti ašxatoutyounner*)], 2017, № 2, Yerevan, "Gitutyun", 212–216.

HOVSEPYAN 2017b
Hovsepyan R.A., New data on archaeobotany of the Lake Sevan basin // *Iran and the Caucasus*, 2017, 21 (3), 251–276.

HOVSEPYAN, WILLCOX 2008
Hovsepyan R. A., Willcox G., The earliest finds of cultivated plants in Armenia: evidence from charred remains and crop processing residues in pisé from the Neolithic settlements of Aratashen and Aknashen // *Vegetation History and Archaeobotany*, 2008, 17 (1), 63–71.

LISITSINA, PRISHCHEPENKO 1977
Lisicina G.L., Priščepenko L.V., Paleo-ètnobotaničeskie naxodki Kavkaza i Bližnego Vostoka [Палео-этноботанические находки Кавказа и Ближнего Востока] (Palaeoethnobotanical finds of Caucasus and Near East), Moscow, "Nauka", 1977 (in Russian).

MATTERNE, DERREUMAUX 2008
Matterne V., Derreumaux M., A Franco-Italian investigation of funerary rituals in the Roman world, "les rites et la mort à Pompéi", the plant part: a preliminary report // *Vegetation History and Archaeobotany*, 2008, 17, 105–112.

MELIKYAN 2018
Melikyan V., Mastarayi vağ bronz, antik žamanakašrǰanneri norahayt bnakavayrn ousoumnasiroğ hnagitakan aršavaxmbi 2017 t'. daštayin ašxatank'nerə [Մաստարայի վաղ բրոնզ, անտիկ ժամանակաշրջանների նորահայտ բնակավայրն ուսումնասիրող հնագիտական արշավախմբի 2017թ. դաշտային աշխատանքները] (2017 fieldwork report of the archaeological expedition investigating newly discovered Early Bronze Age and Classical period settlement of Mastara // Report for the Institute of Archaeology and Ethnography NAS, Armenia, Yerevan, 2018 (unpublished; in Armenian).

PALANJYAN, MURASHEV 2007
Palanjyan R. S., Murashev R. S., Paleobotaničeskie naxodki Antičnogo vremeni pri raskopkax stolicy drevnej Armenii Artašata [Палеоботанические находки Античного времени при раскопках столицы древней Армении Арташата] (Classical period paleobotanical findings from excavations of Artashat, ancient capital of Armenia) // *Almanac of modern science and education*, 2007, 7 (2), Tambov, "Gramota", 131–133 (in Russian).

PETROSYAN et al. 2015
Petrosyan H. L., Kirakosyan L., Safaryan V., Karapetyan I., Vardanesova T., Hovsepyan R. A., Arc'axi Tigranakerti 2012 t'. hnagitakan hetazotout'yan himnakan ardyounk'nerə [Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները] (Main results of archaeological excavations of Tigranakert in Artsakh, 2012) // *Archaeological studies in Artsakh 2011–2012*, Stepanakert, "Dizak plus", 2015, 73–108 (in Armenian).

REED et al. 2018
Reed K., Lodwick L., Leleković T., Vulić H., Exploring Roman Ritual Behaviours Through Plant Remains from Pannonia Inferior // *Environmental Archaeology: The Journal of Human Palaeoecology*, 2018, 24(1), 28–37.

ŠOŠTARIĆ et al. 2017
Šoštarić R., Potrebica H., Hršak J., Essert S., Archaeobotanical components of grave goods in prehistoric tumuli 6 and 7 at the archaeological site of Kaptol-Gradci, near Požega (Croatia) // *Acta Botanica Croatica*, 2017, 76(2), 183–190.

TAKHTAJYAN 1954–2011
Taxtadžjan A. L. (ed.), Flora Armenii [Флора Армении] (Flora of Armenia), vol. 1–11, 1954–2011 (in Russian).

WILLCOX 2008
Willcox G., Fornite S., Herveux L., Early Holocene cultivation before domestication in northern Syria // *Vegetation History and Archaeobotany*, 2008, 17(3), 313–325.

ZARDARYAN, HOVSEPYAN 2017
Zardaryan M., Hovsepyan R. A., The agriculture of Western Syunik, Armenia in the light of archaeological and archaeobotanical data (preliminary study on the economy of Early Yervandid settlements) // *Bridging Times and Spaces: Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies*, Oxford, "Archaeopress", 2017, 385–398.

ZOHARY et al. 2012
Zohary D., Hopf M., Weiss E., Domestication of Plants in the Old World, New York, "Oxford University Press", 2012.

Table 1.
Carpological material recovered from the Mastara–3 archaeological site (2017).

Square			H2	H2	H3	H3
Burial			2	3	4	4
Vessel			2.1	3.1	4.1	4.2
			jar-burial	jar-burial	jar-burial	jug from jar-burial 4.1
Sediment volume (liter)			32	25	38	0.5
Concentration of carpological material (*units/liter*)			2.53	0.20	*3.45	4.00
Plant taxa	Finding / Organ	Preservation	81	5	*131	2
CULTIVATED CEREALS						
cf. Triticeae gen. spp.	possibly grains fragments	charred	58	1	36	1
Triticeae gen. spp.	grains fragments	charred	5		45	
Triticeae gen. spp.	straw nodes	charred			1	
cf. *Triticum* spp.	grains	charred	3		4	
Triticum spp.	grains	charred	1			
Triticum spp.	spike glumes	charred			1	
Triticum aestivum/turgidum	grains	charred	1		6	1
Triticum aestivum/durum (naked)	grains	charred			1	
Triticum aestivum ssp. *vulgare* (*aestivum*)	rachis internodes	charred			1	
Triticum cf. *dicoccum*	grains	charred			1	
Triticum cf. *dicoccum*	spikelet bases	charred			2	
cf. *Hordeum vulgare*	grains	charred	4		1	
Hordeum vulgare	grains	charred			2	
cf. *Panicum sp.*	grains	charred			1	
WEEDS & WILD PLANTS						
Poaceae						
cf. Poaceae gen. sp.	grains fragments	charred			2	
Poaceae gen. spp. div. (longer grains)	grains	charred			7	
Rubiaceae						
Galium cf. *spurium*	mericarps	charred		2	2	

cf. *Asperula sp.*	mericarps	charred			1	
Polygonaceae						
Polygonaceae gen. spp.	nutlets	charred			1	
Brassicaceae						
Euclidium syriacum	capsules	charred			1	
Ranunculaceae						
Adonis sp.	seeds	charred			1	
Thymeleaceae						
cf. *Thymelaea sp.*	seeds	charred		1		
Boraginaceae						
Buglossoides arvensis	erems	biomineral-ized	4		9	
Anchusa arvensis	erems	biomineral-ized			1	
Alkanna orientalis	erems	biomineral-ized			1	
Euphorbiaceae						
Euphorbia sp.	nutlets	uncharred			17	
Lamiaceae						
Lamiaceae gen. sp.1	nutlets	uncharred			66	
Lamiaceae gen. sp.2	nutlets	uncharred			24	
Fabaceae						
Fabaceae gen. sp. 2	seeds	uncharred			17	
Caryophyllaceae						
cf. Caryophyllaceae gen. sp.	pods	uncharred			1	
Chenopodiaceae						
Chenopodium sp.	seeds	uncharred			1	
Unidentified group						
Various herbaceous species	seeds	charred	5	1	3	

Note: * - The uncharred seeds considered modern and were not counted in the calculations.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ռ. Ա. Հովսեփյան, *կ.գ.թ.*
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բուսական մնացորդներ Մաստարա–3 հնավայրի անտիկ դարաշրջանի կարասային թաղումներից

Հիմնաբառեր՝ կարասային թաղումներ, պիթոս, հետմահու կյանք, սնունդ, ծես, հացաբույսեր:

ՀՀ տարածքի համար առաջին անգամ կատարվել է անտիկ դարաշրջանի կարասային թաղումների հնաբուսաբանական հետազոտություն՝ նպատակ ունենալով բացահայտելու թաղման ծեսի ընթացքում բույսերի և բուսական սննդի օգտագործում: Հետազոտված երեք թաղումների դեպքում էլ առկա էին մարդկային կմախքներ. երկու համեմատաբար խոշոր կարասներում՝ չափահասների, իսկ ամենափոքրում՝ մանկան: Հետազոտված անոթներում հայտնաբերվեցին փոքր քանակությամբ ածխացած հացահատիկներ և դրանց բեկորներ, ինչպես նաև որոշ սեգետալ մոլախոտերի սերմեր: Մշակաբույսերից նույնականացվել են տետրապլոիդ կամ հեքսապլոիդ ցորեն (*Triticum aestivum/durum*), որը հավանաբար փափուկ ցորենն է, հաճար (*T. dicoccum*) և գարի (*Hordeum Vulgare*): Հացաբույսերի հայտնաբերված մնացորդները հավանաբար հանգուցյալների հետ կարասների մեջ դրված սննդի մնացորդներն են:

R. A. Hovsepyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography

Plant Remains from the Classical Period Jar-Burials in the Mastara-3 Archaeological Site (Republic of Armenia)

Keywords: jar-burials, pithos, afterlife, food, ritual, cereals.

For the first time in Armenia, contents of Classical period jar-burials were examined for plant remains to reveal possible rituals of burial ceremonies involving plants and vegetal food. There where human skeletons present in all three jar-burials; in two of them there were adults and there was a child skeleton in the smallest jar. Few charred grains and other remains of cereals and seeds of some segetal weeds were recovered. Tetraploid or hexaploid wheat (Triticum aestivum/durum), possibly bread wheat, emmer (T. dicoccum) and barley (Hordeum vulgare) were identified among cultivated plants. Remains of the recovered cereals possibly represent remnants of a porridge-like food put in the pithoi with the bodies.

Р. А. Овсепян, *к.б.н.*
Институт археологии и этнографии

Растительные остатки из карасных захоронений античного периода археологического памятника Мастара–3 (Республика Армения)

Ключевые слова: карасные захоронения, питос, загробная жизнь, еда, ритуал, зерновые.

На территории Армении впервые были проведены археоботанические исследования захоронений античного периода с целью выявления погребальных ритуалов с использованием

растений и растительной пищи. Человеческие скелеты присутствовали во всех трех исследованных нами погребениях, в двух из которых были выявлены скелеты взрослых, а в самом маленьком карасе был найден скелет ребенка. Из сосудов в небольшом количестве были извлечены обугленные зерна и остатки других злаков и семян некоторых сегетальных сорняков. Среди культурных растений были идентифицированы тетраплоидная или гексаплоидная пшеница (*Triticum aestivum/durum*), возможно – хлебная пшеница, двузернянка (*T. dicoccum*) и ячмень (*Hordeum vulgare*). Обнаруженные остатки зерновых, возможно, представляют собой остатки пищи, помещенной в сосуды вместе с телами усопших.

II

ՄԻՋՆԱԴԱՐ

Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
ՀԱԻ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 13-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ միջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվում են մի շարք նվագարաններ, որոնց առնչությամբ երբեմն բերվում են հավելյալ տեղեկություններ՝ դրանց գործածության և կառուցվածքի, նաև փիլիսոփայական ընկալումների մասին[1], հաճախակի են հանդիպում նաև երաժշտական գործիքների, երաժիշտների պատկերներ միջնադարյան մեր մանրանկարներում[2], ինչպես և հայտնի են երաժշտության դասավանդման վերաբերյալ գիտական շարադրանքներ[3]: Ջանազան միջնադարյան երկերում պահպանվել են ավանդազրույցներ և առասպելական-ծագումնաբանական պատմություններ, որոնք նկարագրում են նվագարանների առաջացումը[4]: Բնականաբար, այդ պատումները պարուրված են քրիստոնեա-կրոնական շղարշով և գաղափարախոսությամբ: Ավելի վաղ՝ հեթանոսական շրջանի հայկական ավանդազրույցներ ու առասպելներ, որոնք բացատրեին երաժշտական գործիքների երևան գալը, մեզ հայտնի չեն: Սույն հոդվածն անդրադառնում է նվագարաններին առնչվող տարատեսակ պատկերացումների, որոնք վկայված են մեր գրավոր աղբյուրներում: Քննության հստակությունը ապահովելու համար՝ ուսումնասիրության ժամանակային սահմանները գիտակցաբար պարփակվել են 13-րդ դարով:

Հիմնաբառեր՝ նվագարան, ավանդազրույց, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Վարդան Այգեկցի, քրիստոնեություն, գաղափարախոսություն, հոգևոր և աշխարհիկ երաժշտություն, առակ:

Ներածականի փոխարեն

Հայոց հին դյուցազներգական պատումները ներկայացնում էին հեթանոսական աստվածների, դյուցազուն-հերոսների և առասպելական արքաների սխրագործություններն ու արարքները: Քանի որ դրանք կտրականապես մերժվեցին վաղ եկեղեցական գաղափարախոսների կողմից, մերժվեցին նաև նվա-

---

1 Տես հատկապես Аревшатян, Тагмизян 1967, 356–368, 371–374, 378–379; Թահմիզյան 1970, 21–22; 1982, 7, 27; 1991, 184–199; Բաղդասարյան 2008, 9–11; Հարությունյան 2010, 125–163, 208:

2 Տես Խանզադյան 1959, 66–68, 78–80, ևն; Գևորգյան 1962; 1978; Թահմիզյան 1982, 11, 27–28; Բաղդասարյան 2008, 12–17; Ղարիբյան, Ենոքյան 2017:

3 Տես Mahé 1997:

4 Հմմտ., օրինակ, Марр 1894, 3, 80–81; Բաղդասարյան 1977, 158.

գարանները, որոնք նախկինում ձայնակցում էին այդ դիցավեպերի կատարմանը և զանազան հեթանոսական ծիսական արարողությունների (թաղում, հարսանիք, ևն) ուղեկիցն էին: Ըստ քրիստոնեական գաղափարաբանության՝ երաժշտական գործիքների մեծ մասը համարվեց սատանայի գործունեության արգասիք:

Նվագարանների հանդեպ նման բացասական վերաբերմունքը շարունակվեց քրիստոնեության ընդունումից հետո մի քանի հարյուրամյակ[5]: Հետագայում, սակայն, «Հայկական Վերածննդի» և «քրիստոնեական հանդուրժողականության» դարաշրջանում, ժողովրդական երգարվեստն ու նվագարվեստը սկսեցին դուրս գալ «ընդհատակից» և համընդհանուր տարածում գտնել: Եկեղեցին, ի վերջո, զգալիորեն փոխեց իր բացարձակ ժխտողական վերաբերմունքը այդ երևույթների հանդեպ[6]: Այսպես, օրինակ, 13-րդ դարի մեծ մտածող-իմաստասեր և բանաստեղծ Հովհաննես Երզնկացի Պլուզի երաժշտագիտական հայացքներում աչքի է զարնում լայնախոհությունն ու խորազննությունը, որով նա կատարում է նվագարանային երաժշտության քննությունը[7]: Պլուզի վերաբերմունքը նվագարանների հանդեպ ոչ թե բացարձակ մերժողական է, այլ նա պարզապես որոշարկում է դրանց գործածության ոլորտի սահմանները: Նույն դարից ունենք նաև նշանավոր աստվածաբան և առակագիր Վարդան Այգեկցու հաղորդած առակազրույցը, որն, ըստ ամենայնի, ժողովրդական-բանահյուսական ծագում ունի: Այստեղ նույնպես հստակ երևում է այն սահմանը, որը գծվում էր գործիքային և ոչ-գործիքային երաժշտության միջև:

«Նվագարանային պատկերները» Պլուզի երկերում

Տարբեր առիթներով Հովհաննես Երզնկացի Պլուզն անդրադառնում է նվագարաններին, նրանց տեսակներին, բազմաձևությանը, ժամանակին և ճիշտ լարելու խնդրին՝ չմոռանալով բարձր գնահատել նաև նվագավարի (*դիրիժոր*) դերը[8]:

Հովհաննես Երզնկացին իր «Քերականական մեկնություն» աշխատության մեջ գրականությունը համեմատում է նվագարանային երաժշտության հետ՝ գրելով, որ այն ստեղծվել է երկար ու սուղ նվագավոր երգերից, և ձայնն իբրև նյութ է ծառայում բանականության համար այնպես, ինչպես որ փայտը՝ հյուսնի և երկաթը՝ դարբնի համար, ուստի աշխարհի գեղեցկությունները արվեստով ու ձայնով են ներկայացվում, ուսումն ու կրթությունը նույնպես իրա-

---

5 Այս մասին հանգամանորեն տես Տեր-Պետրոսյան 1975, 46–48:

6 Հմմտ., օրինակ, Թահմիզյան 1983, 126:

7 Հովհաննես Երզնկացու կյանքի և գործունեության մասին մանրամասն տես Սրապյան 1958, 9–140; Բաղդասարյան 1977, 9–136; Թահմիզյան 1983, 124:

8 Սրապյան-Երզնկացի 1993, 115; տես ՄՄ № 2173, 127բ («Ի բան մարգարէին Դաւթի. Սքանչելի եղև գիտութիւն քո յիս…»), նաև՝ 182բ («ի ԾԲ սաղմոսն»), որոշ հատվածներ կան նաև Երզնկացու «Հաւաքումն Մեկնութեան քերականին» (այսուհետ՝ Երզնկացի ՀՄՔ) աշխատության մեջ, տես ՄՄ № 2329, 70ա–74բ, հմմտ. Аревшатян, Тагмизян 1967, 364, 366; Թահմիզյան 1991, 193:

գործվում են խոսքով ու ձայնով[9]: Ըստ Երզնկացու՝ հենց դրա համար է, որ թե՛ ուսումն ու գրականությունը, թե՛ գուսանական արվեստը կոչվում են քերթություն[10]:

Ինչպես երևում է՝ նվագարանային հարդարումը Երզնկացին համարում է պաճուճանք, որը հավելվում է բանականությունից բխող ձայնին: Հետաքրքրական է, որ մի շարք բնաձայնական գոյականների միջոցով Երզնկացին բնորոշում է տարբեր նվագարանների հնչողությունը. «*Այլեւ ամենայն այսպիսի պաճուճեալ բան, խոովական կամ խաղաղական, նման ասացեալ է կամ յառաջնոցն կամ ի մէնջ, որք են այս. խազմ, վրդով, յոյզ, ամբոխ, աղմուկ, դղրդումն, բոմբիւն, դուփիւն, որոտ, բաբախիւն, գանչիւն, կանչիւն եւ այլ այսպիսիք, որ չկարեն զիրս ստոյգ ասել, դարձեալ քերդեալ կոչի, որ ըստ արուեստական հնչմանն յարմարին, որպէս փողք, կնդրնդոցք, քնարք, տաւիղք, սրինկք եւ այսպիսիքս*»[11] (ընդգծումները – Տ. Դ.): Միևնույն ժամանակ, ռազմաշունչ կամ խաղաղ նվագի ազդեցությունը մարդու վարվելակերպի վրա՝ արտահայտվում է օրինակներով, որոնք բերում է Հովհաննես Երզնկացին՝ ի հաստատումն այն ուսմունքի, որ գործիքային երաժշտությունն ավելի շատ զգայական, քան բանական ներգործության է ունակ[12]:

Ըստ Երզնկացու՝ հին իմաստունները հորինել են երաժշտական գործիքները, որպեսզի ուրախացնեն մարդու հոգին, քանզի վերջինս, ընդունելով ուրախալի կիրքը, ներգործում է մարմնի վրա և անգամ հիվանդներին ապաքինում[13]: Ավելին, մեկ այլ տեղ Հովհաննես Պլուզը մարդու մարմինը համեմատում է փողի կամ քնարի, նաև՝ տասլարանի նվագարանի (*տասնաղի քնար*) և սաղմոսարանի (*սաղմոս*) հետ[14], և ինչպես որ նվագարաններն առանց արվեստական հպումների ու շարժումների անբարբառ են մնում, այնպես էլ մարդկային մարմինը՝ առանց զգայարանների, առանց սիրո ու իղձերի, լուռ և անտարբեր է շրջակա աշխարհի հանդեպ[15]: Մեկ այլ քարոզում նա մարդկային կյանքն է հա-

9 Аревшатян, Тагмизян 1967, 366; Սրապյան-Երզնկացի 1993, 112; Երզնկացի ՀՄՔ, 40բ–41ա (98–99):

10 Սրապյան-Երզնկացի 1993, 113; Երզնկացի ՀՄՔ, 147բ (220):

11 Թահմիզյան 1983, 125; Երզնկացի ՀՄՔ, 147բ (220): Թարգմանությամբ տես Аревшатян, Тагмизян 1967, 366:

12 Սրապյան-Երզնկացի 1993, 114, 117; Երզնկացի ՀՄՔ, 74ա (134): Ալեքսանդր Մակեդոնացուն վերաբերող այս զրույցը նույնպես բերվում է ըստ Դավիթ Անհաղթի [տես Սրապյան-Երզնկացի 1993, 234, ծան. 68]:

13 Թահմիզյան 1983, 125; Երզնկացի ՀՄՔ, 71բ. «*Երգեն եւ առ հիւանդս, զի աւգտակար է ի պէտս բժշկութեան. որպէս ըմբելիք դեղոց ընդ ճաշակելիսն, եւ սա ընդ լսելիսն: Եւ զի ձայն անմարմին է եւ մեծ զաւրութիւն ունի եւ ազգակցութիւն առ հոգին: Եւ սակս այսր պատճառի գտին զձայնական գործիքն իմաստունքն առաջին, զի ուրախացուցիչ է հոգւոյ. եւ ընդունելով հոգի զուրախականն կիրք, ներգործէ առ մարմինն եւ տրամադրեալ փոխէ զնա յուրմէ բնութենէն*»: Թարգմանությամբ տես Аревшатян, Тагмизян 1967, 363: Երաժշտաբուժության վերաբերյալ տես Վարդումյան 2007, 493–509; Vardumyan 2015, 1–5:

14 Տես Թահմիզյան 1983, 127:

15 Սրապյան-Երզնկացի 1993, 113; ՄՄ № 2173, 265աբ («ի ԽԶ սաղմոսն Դաւթի...»), տես նաև 200ա («ՁԸ սաղմոսին»). «*Սաղմոսն քնարաց եւ փողոյ անուն է, որով ի հինն*

մեմատում նվագարանի հետ. երբ որ չկա նվագող՝ կյանքը դադարում է. «*յորժամ ոչ իցէ հարկանող՝ խափանեալ, լռելալ կայ*»[16]:

Քառալար նվագարան և չորս տարերք[17]

Միջնադարյան Հայաստանում մարդու մարմինը հաճախ էր նմանեցվում քառալար նվագարանի, որի յուրաքանչյուր լարը համապատասխանում է տիեզերքի չորս տարրերից որևէ մեկին՝ ջուր, հուր, հող, օդ: Վաստակաշատ երաժշտագետ Ն.Թահմիզյանի մեկնաբանությամբ՝ այս քառալար գործիքը կամ «չորեքաղյան քնարը» պետք է որ կոթավոր լարային նվագարան լիներ և վերաբերեր *հայկական ուդին*: Վերջինս, ըստ էության, եղել է մեր վիպասանական *փանդիռ* նվագարանի ժառանգը և «հայ միջնադարյան իրականության մեջ համարվել ազգային երաժշտության հնչյունային համակարգի նյութական կրողը կամ դասական նվագարանը»[18]: Ժամանակի աշխարհայացքային մոտեցումը արտահայտելով՝ Երզնկացին գրում է, որ քառալար այս գործիքը ստեղծված է ի նմանություն մարդու բնության, քանի որ մարդն էլ, իր հերթին, տիեզերքի մարմնեղեն մանրակերտը լինելով, կազմված է տիեզերքի հիմքում ընկած չորս տարրերից[19]:

Եթե մարդկային մարմնում չորս տարրերի հավասարակշռությունը խախտվում է, ապա մարդը հիվանդանում է, և հետևաբար պետք է զանազան միջոցներով վերականգնել հավասարակշռությունը, ինչպես որ նվագարանի լարվածքի ժամանակ հարկ է լինում լարերից մեկը ձգել, մյուսը թուլացնել[20]: Այսինքն, համաձայն Հովհաննես Երզնկացու մեկ այլ աշխատանքի՝ ինչպես որ քառալար նվագարանի մեկ լարի փոփոխությունն անհարմարություն է պատճառում, այնպես էլ կենդանի էակի մեկ տարրի անհավասարությունը հիվանդության պատճառ է դառնում. «*Զի որպէս քնարի միոյ աղոյն փոփոխումն*

երգէին՝ զերաժշտականն ձայն յօրհնութիւնսն խառնելով, զի առաւել փրամադրէ զհոգի յուրախականսն եւ ի փրփրմանսն: Իսկ զայն խուրեաց Աստուած, զի մարմին էր առանց ըղձից եւ սիրոյ, այլ մեզ փող եւ քնար է մարմին եւ զգայարանք սորա, ընդ որս խառնել արժան է զմրաւորական հոգոյն երգ եւ այսու հնչակցութեամբ օրհնել զԱստուած յամենայն կեանս, որչափ եմք ի մարմնի, զի փող եւ քնար ժամանակաւ շարժի յարուեստրաւորէն, եւ ի լռելն անբարբառ կա մնայ, իսկ մարդ կենդանի տրասամբ զգայարանաւք, իբր տրասնաղի քնար յերաժշտական մտրացն, իբր յարուեստրաւորէ շարժեալ յամենայն կեանս իւր օրհնէ զԱստուած»:

16 Սրապյան-Երզնկացի 1993, 116; ՄՄ № 2173, 331բ («Վասն ննջեցելոց ի Քրիստոսի և խորհուրդ ստեղծման մարդոյն և մահու…»):

17 Այս խնդիրը մանրամասնորեն քննարկել ենք հետևյալ հոդվածում՝ Դալալյան 2018, 93–104:

18 Թահմիզյան 1982, 27; 1983, 134:

19 Երզնկացի ՀՄՔ, 72բ–73ա; Аревшатян, Тагмизян 1967, 364: Բացի այդ, քառալար նվագարանը խորհրդանշել է մարդկային չորս խառնվածքները [հմմտ. Ղարիբյան, Ենոքյան 2017, 56]:

20 Սրապյան-Երզնկացի 1993, 116; ՄՄ № 2173, 109ա («Ի բան մարգարէին Դաւթի. Սքանչելի եղև գիտութիւն քո յիս…»). «…*զորս պարտ է բժշկել՝ զոմանս բանիւ եւ զայլս՝ դեղով, որպէս յաւդումն աղեաց երաժշտականաց, զոմանս թուլացուցանել եւ զայլս պնդել, զի պատշաճ իւր կազմեսցէ՝ յարմարապէս տալով զձայն*»:

անյարմարութիւն առնէ, եւ կենդանոյն միոյ փարեր անհաւասարութիւնն հիւանդութիւն»[21]:

Միջնադարյան Հայաստանում երաժշտության միջոցով հիվանդներ բուժելու մասին գրելիս՝ Երզնկացին իր «Քերականական մեկնության» մեջ վկայում է, որ հատկապես առողջարար զորություն է վերագրվել չորեքաղյան քնարին[22]: Այստեղ Երզնկացին մանրամասնորեն նկարագրում է, թե ո՛ր բնույթի հիվանդության դեպքում ո՛ր լարի վրա է պետք նվագել[23]:

Ըստ Հովհաննես Երզնկացի Պլուզի՝ քանի որ մարդկային մարմինն արդեն մի համընդգրկուն և կատարյալ նվագարան է՝ Աստծուց արարված, մարդն, ուրեմն, Աստծո հետ հաղորդակցվելու համար կարիք չունի արհեստական նվագարանների: Դրա համար էլ նմանատիպ դեպքերում Պլուզը նախապատվությունը տալիս է հոգևոր երաժշտությանը՝ այն սահմանազատելով գուսանականից:

Գուսանական երաժշտություն

Իր «Խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից ու ժողովրդոց…» աշխատության մեջ Հովհաննես Պլուզը կանոնադրում է, որ «*ի կնունք եւ ի պսակն ոչ է պարտ արբենալ կամ գուսան կոչել կամ բոզ, զի դիւաց կոչաւոք են գուսանքն*»: Կնունքի և պսակադրության ժամանակ գուսան կանչելը նա համեմատում է հնձանում գինի տրորելու ժամանակ քացախ հիշելու կամ անուշաբույր խունկերին գարշելի իրեր խառնելու հետ. «*Ի տեղի, ուր հնձան կոխեն, զքացախն ոչ յիշեն եւ յանուշահոտ խուղ և խունկ գարշելի իրք ոչ խառնեն*»: Այդպիսով, գուսաններն ու անբարոյական կանայք նույն հարթության վրա են դիտվում, նրանք համեմատվում են սատանայական մոլախոտի հետ, որ խառնվում է Քրիստոսի խորհրդին. «*Դու ի սուրբ եւ ի սոսկալի կնունքն եւ ի մեծախորհուրդ եւ ի պարկեշտ պսակն բոզ եւ գուսան քերես եւ զորոմն սատանայի ի խորհուրդն Քրիստոսի խառնես եւ ոչ ամաչես*»[24]:

Նույն աշխատության մեջ մեկ այլ տեղում Հովհաննես Պլուզը մեղադրում է այն քահանաներին ու սարկավագներին, որոնք պահքի օրերին զվարճանում են գուսանական խրախճանքներում՝ վարձակ կանանց ընկերակցությամբ[25]: «Թուղթ առ իշխանն Եկեղեաց» գործում Երզնկացին «*գինին ու արբեցութիւն,*

---

21 Սրապյան-Երզնկացի 1993, 116; ՄՄ № 2173, 80ա («Ի տօնի ծննդեան և Մկրտութեանն Քրիստոսի…»):

22 Թահմիզյան 1983, 136; Երզնկացի ՀՄՔ, 73ա:

23 Аревшатян, Тагмизян 1967, 364–365.

24 Բաղդասարյան 1977, 177–178; ՄՄ № 8356, 168ա (ԺԷ. «Յաղագս պահոց»); Սրապյան-Երզնկացի 1993, 115:

25 Ըստ Երզնկացու՝ «*եւ լուաք վասն քահանայից, որք ի քաղաքի, եւ վասն սարկաւագաց, թէ առանց խուսփովանութեան, յաւուրս պահոց, ոչ արգելուն զինքեանս ի գինոյ, այլ եւ անչափ յագեցմամբ արբեցութեան ախտին հրապարակին ի մէջ գինարբուացն եւ անպարկեշտարար նստին ի ժողովս եւ խրախանան գուսանական երգովք ի կաբաւս լկտի խաղուց եւ այլ վասն պէսպէս իրաց եւ անասնաբարոյ մարդոց: Այլ եւ վասն ագահութեան զբոզսն, որք ի տունս պոռնկութեան եւ զկանայս այլազգեաց մեծարէին ընդ քրիստոնեայս՝ տալով նոցա զմարմինն տէրունական»* [Բաղդասարյան 1977, 194–195; Սրապյան-Երզնկացի 1993, 115]:

գուսանն եւ խաղն ամենայն մարդոյ վնաս» է համարում, բայց հատկապես՝ «*պարոն մարդոյն և իշխանին*»[26]: Այս է պատճառը, որը «Քերականական մեկնություն» երկում Երզնկացին գրում է. «*Տղային միտքն որպէս կակուղ մոմ է… Մի՛ թողուր, որ դառն եւ աղտաղտուկ ջուրն ի ներս խառնի. երգք գուսանաց, կամ խաւաք աղտեղի*»[27]:

Հոգևոր և աշխարհիկ երաժշտության սահմանազատումը

Զարգացնելով 5-րդ դարի իմաստասեր Դավիթ Անհաղթի տեսությունը երաժշտության նյութական և աննյութական բաղադրիչների մասին[28]՝ Հովհաննես Երզնկացի Պլուզն իր վերոհիշյալ «Քերականական մեկնություն» աշխատության մեջ համարում է, որ երաժշտության նյութական կողմը կազմում են նվագարանները՝ ներառյալ նաև երաժիշտ-կատարողի մարմինը՝ իբրև բանական արարածի, մինչդեռ երաժշտությունն ինքը և, մասնավորաբար, երաժշտական ելևէջը, որը Երզնկացին անվանում է «ձայն», աննյութական է: Այսինքն՝ վերջինս նույնանում է մարդու հոգևոր էությանը, իսկ նվագարանային հնչողությունը՝ մարմնականին: Ստացվում է, որ ինչպես որ մարդը հոգևոր (բանական) և հողեղեն (նյութական) էակ է, և այդ երկու էություններն ամփոփված են իր մարմնում, այնպես էլ երաժշտությունը բաղկացած է երկու էություններից: Թաքնված լինելով մարդու հոգում՝ երաժշտության այդ բանական կողմը՝ ելևէջը, լսելի հնչյունների է վերածվում երաժիշտ-կատարողի միջոցով[29]:

Շարունակելով երաժշտության երկսեռ էության այս դրույթը՝ նույն աշխատության հետագա էջերում Երզնկացին երաժշտությունը բաժանում է երկու տեսակի՝ «աստվածայինի», որ երգվում է տաճարներում, և «մարդկայինի», որ հնչում է տոնախմբությունների ժամանակ. «*բաժանի սա յաստուածայինն եւ ի մարդկայինն: Աստուածայինն երգի յեկեղեցիս, որ յաղագս հեշտութեանն զոչնումն ածէ ի հոգիս եւ փոխարկէ զմիտս մեղուցելոցն ի բարի խոկումն, իսկ մարդկայինն երգի ի ժողովս խրախութեան և յուրախական հանդէսսն*»[30]: Ընդ որում, Երզնկացին վերջինը ևս համարում է «*անհրաժեշտ հասարակության համար*»[31]:

Միջնադարից եկող այս մտայնությունը գոյատևել է ընդհուպ մինչև մեր օրերը, և հոգևորի ու աշխարհիկի տարբերակումն անմիջականորեն առնչվել է

---

26 Սրապյան-Երզնկացի 1993, 115:

27 Թահմիզյան 1983, 127:

28 Ըստ Դավիթ Անհաղթի՝ երաժշտությունը «բանական» արվեստ է, որի նյութական կողմը կազմում են նվագարանները, իսկ երաժշտությունն ինքը, ըստ նրա, աննյութական է [տես Թահմիզյան 1961, 50]:

29 Հմմտ. Թահմիզյան 1983, 124–125. «…*Կրկին են գործիք երաժշտականին: Ի նիւթական կազմածոյ անշնչից որպէս քնար եւ փող. եւ մարմին բանաւոր կենդանւոյն, յորում ծածկեալ կայ ձայնն անմարմին, եւ ի շարժել արուեստաւորին բացակատարէ զհնչումն*» [Երզնկացի ՀՄՔ, 44ա]: Տես նաև Аревшатян, Таргизян 1967, 361, 365-ում բերված հատվածները, որտեղ նույնպես՝ Երզնկացին, խոսելով երաժշտության բնույթի մասին, մեջբերում է Դավիթ Անհաղթին:

30 Թահմիզյան 1983, 128; Սրապյան-Երզնկացի 1993, 114; Երզնկացի ՀՄՔ, 71աբ (131), թարգմանությամբ՝ Аревшатян, Таргизян 1967, 363:

31 Հղումը՝ ըստ Ցիցիկյանի 2011, 45, ծան. 50:

նաև նվագարաններին: Վերջիններս համարվել են աշխարհիկության բնորոշիչներ, իսկ մարդկային մաքուր՝ անպաճույճ ձայնը կապվել է հոգևորի հետ: Այս երկուսի հակադրությունը ազգագրագետ Հ. Պիկիչյանն անվանում է «երկու տարբեր մշակութային տեքստեր», որոնց «գոյության հաստատագրումն է նաև սրբավայրի շրջակա տարածքում և եկեղեցու ներսում հնչող երաժշտությունը»[32]:

Եթե սրբավայրի ամբողջ տարածքը բաժանենք երկու գոտիների՝ *կենտրոն* (բուն տաճարը) և *շրջակայք*, ապա դրանցից յուրաքանչյուրն, ըստ Հ. Պիկիչյանի, «*ձգտում էր ապահովել իր նախընտրած նվագարանների ու մեղեդիների առավելությունը. բնականաբար առկա էր երկու երաժշտական տեքստ: Դրսի բոլոր ծեսերն ուղեկցվում էին զուռնա-դհոլի երաժշտությամբ, իսկ ներսում՝ երգեցողությամբ*»: Տաճարի բակում անգամ կարող էին հնչել մերժելի նվագարանները, չարխափան և աղմկարար տարատեսակ գործիքները: Մինչդեռ տաճարի ներսում նախընտրելի էր համարվում ձայնային (*վոկալ*) արվեստը: Պատճառն այն էր, որ «*եկեղեցին ձգտում էր հնարավորինս սահմանափակել ավանդական նվագարանների մուտքն իր տարածք՝ գերադասությունը տալով մարդու մարմնից ծնված ձայնին, և ո՛չ բնավ նրա հորինած առարկաների հնչողությանը*»[33]:

«Ուխտ միայնակեցի ընդ սատանայի»

Ներտաճարային հոգևոր և արտատաճարային աշխարհիկ մշակութային տարածքների մասին մտայնությունը պատկերավոր ձևով արտահայտված է Վարդան Այգեկցու (12–13-րդ դդ.) հաղորդած ժողովրդական մի զրույցում, որը որոշակիորեն մոտենում է առակի ժանրին: Լայն առումով վերցրած՝ այն կարելի է պարզապես առակ համարել, եթե հաշվի առնենք այդ ժանրի միջնադարյան լայն սահմանումը՝ որպես ամեն տեսակի խորհուրդ ու խրատ պարունակող բազմադիմի իմաստնություն[34]: Խնդրո առարկա զրույց-առակում հոգևորականը գաղտնի դաշինք է կնքում սատանայի հետ:

Մենակյաց մի հոգևորական սատանայի օգնությամբ եկեղեցապանի պաշտոնից հասնում է մինչև աբեղա և եպիսկոպոս. «*Ասի յառակաց, թէ միակեց մի սատանայի ուխտ եդ. որ տարի մի 'ի պահս կենայ, զի զնա 'ի մեծութիւն հասուցանէ. սատանայ յանձն էառ կատարել զինդրածս նորա. յորժամ վճարեաց զպահսն, շարժեաց զեպիսկոպոս քաղաքին, որ եդ զնա եկեղեցապան. եւ 'ի միւս տարուոջն շարժեաց, որ օրհնեաց զնա աբեղայ. եւ 'ի միւս տարուոջն եղեւ մեռանիլ եպիսկոպոսին. շարժեաց զթագաւորն եւ զքաղաքացիսն առնել իւրեանց եպիսկոպոս*»[35]:

---

32 Պիկիչյան 2001, 408; 2012, 125:

33 Պիկիչյան 2001, 408–409; 2012, 121, 125:

34 Տես Սրապյան 1981, 62:

35 Մաթ 1894, 2, 252; Տես նաև Սրապյան 1969, 264–265; № 26 («Ուխտ միակեցի ընդ սատանայի»). բնագիրը վերցված է ՄՄ № 6616 ձեռագրից (15–16-րդ դդ., էջ 12բ), իսկ վերնագիրը տրված է ըստ Ն. Մառի՝ նշված հրատարակության: Այս զրույցի տեքստի երկու նշված տարբերակների միջև կան աննշան քերականական տարբերություններ: Առաջին տարբերակի (քաղված Վարդանի ժողովածուից) բնագիրը տալիս է նաև՝ Աբեղյան 1935, 38:

Սատանան այս ամենի դիմաց պահանջում է հոգևորականից, որ նա զգեստի տակից մի չորեքաղի նվագարան դնի և եկեղեցական արարողության ժամանակ մատով զարկի մի լարին. «*եւ յորժամ կամէր զգեստաւորիլ. զի ժամ արասցէ, եկն սատանայ եւ ’ի նա փոքրիկ չորեքաղի մի եւ ասէ. իմ ամէն լաւին փոխարէն, որ զքեզ յայդ մեծագոյն ասպիճանդ հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ’ի ծոցդ դիր. և զզգեստդ ’ի վերայ հագիր եւ յորժամ ’ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ ’ի վերայ մէկ լարին զարկ*»[36]: Ուշագրավ է, որ առակում հիշվում է հենց *չորեքաղի*, որն, ըստ միջնադարյան երաժշտագետների, ամենահարմարն էր և ամենաշատն էր համապատասխանում բնության չորս տարրերին: Ընդհանրապես, ըստ ժամանակակից երաժշտագետների վերակազմության՝ քառալար նվագարան է եղել նաև հայկական փանդիռը, որը գուսան-վիպասացների անբաժան գործիքն էր[37]:

Այնուհետև առակում պատմվում է, որ երբ եպիսկոպոսը կատարում է սատանայի ուզածը, հանկարծ եկեղեցու մեջ հազարավոր-բյուրավոր նվագարանների ձայներ են հնչում. «*եւ այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսին՝ յանկարծակի հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց տասնաղի եւ թմբկի եւ սուռնայի եւ չանկի եւ չորեքաղւոյ ձայն հնչեաց՝ ’ի մէջ եկեղեցւոյն*»[38]: Ինչպես տեսնում ենք, այստեղ կրկին հիշատակվում են տասնաղին (սաղմոսարմն), թմբուկը և չանգը, նաև հանդիպում ենք զուռնայի (*սուռնայ*) առաջին հիշատակություններից մեկին[39]: Հետաքրքրական է նաև «*հազարք հազարաց և բիւրք բիւրոց*» դարձվածքը, որը հիշեցնում է Գողթան երգերի «*վիպասանական հայերենը*» («*եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց եւ բիւրս ի բիւրուց…*»):

Շարունակելով առակը՝ եկեղեցի եկած արքան ու ժողովուրդը սարսափում են, քանի որ ոչ ոք չէր տեսնում երաժիշտներին. «*Զարհուրեցան թագաւորն եւ ժողովուրդն եւ ո՛չ զոք տեսանէին հարկանօղ նուագարանացն: Հրամայեաց թագաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ եւ զիւրաքանչիւր ոք մերկացուցանել եւ փնդռել. եւ այնպէս արարեալ ո՛չ զոք գտին պատճառ, եւ մնաց թագաւորն եւ եպիսկոպոսն միայն. թագաւորն եւս մերկացաւ. եւ ո՛չ գտաւ առ նա ինչ. եւ յորժամ մերկացուցին զեպիսկոպոսն, գտին ’ի ծոցն զչորեքաղին այն*»[40]: Ի վերջո եպիսկոպոսին պատժում են՝ նրան կապելով ձիու պոչից և բաց թողնելով դաշտում, որպեսզի մարմինը կտոր-կտոր լինի[41]: Առակի բարոյախոսությունն, ըստ

36 Մաթ 1894, 2, 252.

37 Այս մասին մանրամասնորեն տես Դալալյան 2017, 48–52:

38 Մաթ 1894, 2, 252.

39 Զուռնայի մասին տես Քոչարյան 2008, 154, որն ավելացնում է նաև Առաքել Սյունեցու վկայությունը՝ ՄՄ, № 1764, 293բ: Զուռնայի պատկերներ հայտնի են հայկական մանրանկարներում՝ մոտավորապես նույն ժամանակաշրջանում [տես Գևորգյան 1962, 343–344], զուռնայի պատմա-ազգագրական մանրամասն ակնարկ է տալիս՝ Պիկիչյան 1988:

40 Մաթ 1894, 2, 252.

41 Բնագրի համաձայն՝ «*չարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւնն և զդաշինս, զոր եղեալ էր ընդ սատանայի: Յայնժամ կապեցին զնա ’ի յագի ամենի ձիոյ և թողին ’ի դաշտի. մանրամասնաբար կոտորեալ եղև մարմին նորա. և այնպէս աւանդեաց զդառնացեալ հոգին ’ի ձեռն սատանայի*» [Մաթ 1894, 2, 253]:

Այգեկցու, հետևյալն է՝ «*Ցուցանէ առակս, թէ ով որ սատանայի բարոյն եւ ուխտին հաւատայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է*»[42]:

Ամփոփման փոխարեն

Ըստ մի մեկնաբանության՝ հոգևորականի զգեստի տակ թաքցված քառալար նվագարանը խորհրդանիշն է քրիստոնեական հայ մշակույթում առկա հեթանոսական ենթաշերտի: Ասել է թե՝ մեջբերված առակազրույցում գործածված կենտրոնական խորհրդապատկերի գործողությունը, թե ինչպես է եկեղեցու մեջ գաղտագողի հնչում հեթանոսական երաժշտություն, կարելի է բացատրել իբրև ժողովրդի խորը ակունքներում և հոգևոր ծալքերում պահ մտած հնամենի մշակույթի «ընդվզում» և «դուրս սպրդում»: Արդյունքում պատժվում է եկեղեցու այն սպասավորը, որը տուրք է տալիս նախաքրիստոնեական մշակույթին: Մյուս կողմից, նշված խորհրդապատկերը կարելի է մեկնաբանել ոչ թե որպես «անցյալի» ու «ներկայի» հակադրություն, այլ իբրև բոլոր ժամանակներում ամենուրեք առկա՝ աշխարհիկ և հոգևոր հոսանքների մրցակցություն ու պայքար:

Հայ միջնադարյան գրականությունը մանրակրկիտ ուսումնասիրած Մ.Աբեղյանի կարծիքով՝ առակախոսը վերոբերյալ զրույցում ներկայացնում է 13-րդ դարում ժողովրդի մեջ տարածված մտայնությունն ու մոտեցումները. «*ինչքան էլ տեսականի մեջ դեռ իշխում է ճգնավորական հայացքը, գործնականի մեջ, ընդհակառակն, ուրախ կյանքը, աշխարհիկ ոգին է տերը*»[43]: Այն աստիճան էր աշխարհիկ երաժշտությունը տարածված, որ, ըստ Աբեղյանի, նույնիսկ միայնակյաց հոգևորականն է սատանայի հետ պայման կապում, որի հետևանքով եկեղեցին դարձնում է գուսանական նվագածության վայր: Միևնույն ժամանակ, սակայն, այս և նմանատիպ այլ առակների քննության ժամանակ, որոնցում պախարակվում են անբարո հոգևորականները, աբեղյանական վերլուծություններում զգացվում է խորհրդային ժամանակների շունչը՝ դասակարգային հակասությունների և եկեղեցու դեմ պայքարի դրսևորում տեսնելու միտումով: Հակառակ սրան, միանգամայն ընդունելի է այն մոտեցումը, որ 13-րդ դարում «*Առակները դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարրերը մեր հին գրականության մեջ մտցնելու, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում է ժողովրդին, ենթարկվում աշխարհիկ հոսանքին*»[44]: Այս մերձեցումը Ս.Հարությունյանը դիտարկում է Աբեղյանի ձևակերպած «Հայկական Վերածննդի» տեսության համատեքստում[45]:

Ինչպես տեսնում ենք Վարդան Այգեկցու հաղորդած առակազրույցի օրինակով՝ 13-րդ դարում մշակութային այդ վերածննդի տարրերն աստիճանաբար ներթափանցում էին եկեղեցու ծիրից ներս: Ճիշտ է, «օրինազանց հոգևորականը» պատժվում է, սակայն դա ցույց է տալիս ոչ թե կտրուկ մերժողական վերաբերմունք վաղնջական մշակույթի՝ մասնավորապես նվագարանների

42 Մարր 1894, 2, 253.
43 Աբեղյան 1946, 184:
44 Աբեղյան 1935, 19:
45 Հարությունյան 2006, 14:

հանդեպ, այլ՝ բարոյախրատական հաստատագրում առ այն, որ յուրաքանչյուր հոսանք (աշխարհիկ թե հոգևոր) պետք է դրսևորվի համապատասխան իր տեղում և չներխուժի հակադիր «տարածք»: Այլ խոսքով ասած՝ «ամեն բան իր տեղում»: Նույն ձևակերպումն առավել հստակ տեսնում ենք Հովհաննես Երզնկացու իմաստասիրական խորհրդածություններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրեր

ՄՄ №1764 Ժողովածոյ (1651–1654թթ.)
ՄՄ №2173 Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւնք (ԺԴ դար)
ՄՄ №2329 Ժողովածոյ (1291թ.)
ՄՄ №6616 Ժողովածոյ (1291թ.)
ՄՄ №8356 Ժողովածոյ (1322թ.) 168ա (ԺԷ. «Յաղագս պահոց»)

Սկզբնաղբյուրներ

ԵՐԶՆԿԱՑԻ, ՀՄՔ
Յովհաննէս Երզնկացի, Հաւաքումն Մեկնութեան քերականին // ՄՄ №2329, 25ա–209ա:

MAPP 1894
Марр Н.Я., Сборники притчъ Вардана. Матеріалы для исторіи средневѣковой армянской литературы (I–III, 1894–1899): часть II. Текст. Санктпетербургъ: Типография И.Н.Скороходова, 1894; часть III. Приложенія, Санктпетербургъ, Типографія Императорской Академии Наукъ, 1894.

АРЕВШАТЯН, ТАГМИЗЯН 1967
Аревшатян С.С., Тагмизян Н.К., Армения // Музыкальная эстетика стран Востока (общая редакция и вступительная статья В.П.Шестакова), Ленинградский Государственный Институт театра музыки и кинематографии, Москва, «Музыка», 1967, 330–383.

Ուսումնասիրություններ

ԱԲԵՂՅԱՆ 1935
Աբեղյան Մ.Խ., Հայոց միջնադարյան առակներն յեվ սոցիալական հարաբերությունները նրանց մեջ (առանձնատիպ), ՀՍԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտ, Յերեվան, 1935, 52 էջ (արտատպված ե «ՀՍԽՀ Կուլտուրայի պատմության ին-տի աշխատությունները» ժողովածուի I հատորից):

ԱԲԵՂՅԱՆ 1946
Աբեղյան Մ.Խ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ (XI–XIX դարի 30-ական թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1946:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 2008
Բաղդասարյան Ա.Հ., Ավանդական նվագարանները Հայաստանում. Հին ժամանակներ, Միջնադար, Նոր ժամանակներ // Հայկական ժողովրդական նվագարաններ (խմբ. Ա.Ա.Փահլևանյան), Երևան, «Կոմիտաս», 2008, 3–17:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 1977
Բաղդասարյան Է.Մ., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, [Մասն Ա. Պատմա-բանասիրական քննություն, Մասն Բ. Բնագրեր], Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:

ԳԵՒՈՐԳՅԱՆ 1962
Գևորգյան Ա.Բ., Միջնադարյան երաժշտական գործիքները հայ մանրանկարչության մեջ // Բանբեր Մատենադարանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, №6, 337–352:

ԳԵՒՈՐԳՅԱՆ 1978
Գևորգյան Ա.Բ., Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, ալբոմ, Երևան, «Հայաստան», 1978:

ԴԱԼԱԼՅԱՆ 2017
Դալալյան Տ.Ս., Վիպասանական արուեստը, երաժիշտ-կատարողները և նուագարանները վաղմիջնադարեան Հայաստանում. լեզուա-մշակութաբանական ակնարկ // Հնչյուն և լռություն. երաժիշտը և նվագարանը դարերի հոլովույթում (խմբ. Հ.Պիկիչյան), Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2017, 38–53:

ԴԱԼԱԼՅԱՆ 2018
Դալալյան Տ.Ս., Դիտարկումներ՝ նվագարանային պատկերացումներում տիեզերքի չորս տարրերի մասին ուսմունքի արտացոլման վերաբերյալ // Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, հ.Գ (պատ. խմբ. Տ.Շախկուլյան), Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2018, 91–106:

ԹԱՀՄԻԶՅԱՆ 1961
Թահմիզյան Ն.Կ., Էջեր հայկական վաղմիջնադարյան երաժշտական գեղագիտությունից // Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, №2 (փետրվար), 1961, 49–60:

ԹԱՀՄԻԶՅԱՆ 1970
Թահմիզյան Ն.Կ., Քնական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության // ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1970, հոկտեմբեր №10 (334), 13–30:

ԹԱՀՄԻԶՅԱՆ 1982
Թահմիզյան Ն.Կ., Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, «Սովետական գրող», 1982:

ԹԱՀՄԻԶՅԱՆ 1983
Թահմիզյան Ն.Կ., Հովհաննես Պլուզ Երզնկացին՝ հայ միջնադարյան երաժշտության տեսաբան // Պատմա-բանասիրական հանդես, 1983, №2–3 (101–102), 124–137:

ԹԱՀՄԻԶՅԱՆ 1991
Թահմիզյան Ն.Կ., Նիւթեր հայկական միջնադարեան երաժշտական գործիքագիտութեան // Բազմավէպ, ՃԽԹ տարի (1991), №1–2, 175–205:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1959
Խանզադյան Է.Վ., Հայկական հին երաժշտական գործիքները // Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի 5, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 63–93:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2006
Հարությունյան Ս.Բ., Մանուկ Աբեղյան. գիտական վաստակի գնահատման ուրվագիծ (ծնդյան 140-ամյակի առթիվ) // Պատմա-բանասիրական հանդես, 2006, №1 (171), 3–27:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2010
Հարությունյան Հ.Հ., Երաժշտությունը V–XV դարերի հայ մատենագրության մեջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան, «Գիտություն», 2010:

ՂԱՐԻԲՅԱՆ, ԵՆՈՔՅԱՆ 2017
Ղարիբյան Ն.Հ., Ենոքյան Ա., Հնչող պատկերներ. երաժիշտը և նվագարանը հայկական մանրանկարներում // Հնչյուն և լռություն. երաժիշտը և նվագարանը դարե-

րի հոլովույթում (խմբ. Հ. Պիկիչյան), Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2017, 54–63:

ՊԻԿԻՉՅԱՆ 1988
Պիկիչյան Հ.Վ., Ջուռնան հայոց կենցաղում // Բանբեր Երևանի համալսարանի, 1988, №2 (65), 104–111:

ՊԻԿԻՉՅԱՆ 2001
Պիկիչյան Հ.Վ., Սրբավայրի տարածքի երաժշտական և վարքագծային ծածկագրերը // Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը (խմբ. Ս.Բ.Հարությունյան, Ա.Ա.Քալանթարյան), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Հայաստան», 2001, 405–413:

ՊԻԿԻՉՅԱՆ 2012
Պիկիչյան Հ.Վ., Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում, Երևան, «Ամրոց Գրուպ», 2012:

ՍՐԱՊՅԱՆ 1958
Սրապյան Ա.Ն., Հովհաննես Երզնկացի. ուսումնասիրություն և բնագրեր (խմբ. Լ.Խաչիկյան), Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958:

ՍՐԱՊՅԱՆ 1969
Սրապյան Ա.Ն., Հայ միջնադարյան զրույցներ, ՀՍՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:

ՍՐԱՊՅԱՆ 1981
Սրապյան Ա.Ն., Առակի ժանրային ըմբռնումը միջնադարում // ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981, սեպտեմբեր, №9 (465), 61–70:

ՍՐԱՊՅԱՆ-ԵՐԶՆԿԱՑԻ 1993
Սրապյան-Երզնկացի Ա.Ն., Հովհաննես Երզնկացի Պլուզ. կյանքը և գործը, Երևան, «Նաիրի», 1993:

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ 2007
Վարդումյան Ա.Դ., Երաժշտաբուժութեան մասին պատկերացումները հայոց մէջ // Բազմավէպ. հայագիտական-բանասիրական-գրական հանդէս, 2007 (ՃԿԵ տարի), Վենետիկ – Ս.Ղազար, №1–4, 493–509:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1975
Տեր-Պետրոսյան Լ.Հ., Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը // «Էջմիածին», 1975, Ա, 41–51:

ՑԻՑԻԿՅԱՆ 2011
Ցիցիկյան Ա.Մ., Հայկական աղեղնային արվեստը, Երևան, «Մուղնի», 2011:

ՔՈՉԱՐՅԱՆ 2008
Քոչարյան Ա.Կ., Երաժշտական գործիքները Հայաստանում, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, (խմբ. Կ.Խուդաբաշյան-Սարգսյան, Հ.Պիկիչյան, Ժ.Մեհրաբյան, Ա.Բաղդասարյան), Երևան, «Ամրոց գրուպ», 2008:

MAHÉ 1997
Mahé J.-P., Les humeurs et la lyre: fragments arméniens d'un enseignement médico-musicologique // From Byzantium to Iran. Armenian Studies in Honour of Nina G. Garsoïan (ed. J.-P. Mahé & R.W. Thomson), Atlanta, 1997, 397–413.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Տ. Ս. Դալալյան, *բ.գ.թ.*
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դիտարկումներ՝ 13-րդ դարում երաժշտական գործիքներին առնչվող աշխարհայացքային ընկալումների վերաբերյալ

Հիմնաբառեր՝ նվագարան, ավանդազրույց, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Վարդան Այգեկցի, քրիստոնեություն, գաղափարախոսություն, հոգևոր և աշխարհիկ երաժշտություն, առակ:

Հոդվածում քննարկվում են 13-րդ դ. երկու հեղինակների արտահայտած պատկերացումները նվագարանների վերաբերյալ, որոնք շատ բնորոշ են տվյալ ժամանակաշրջանին: Եթե Հովհաննես Երզնկացի Պլուզի երկերում դրանք ի հայտ են գալիս իմաստասիրական մտորումներում, ապա Վարդան Այգեկցու մոտ հանդես են գալիս առակազրույցի տեսքով, որն, ամենայն հավանականությամբ, ունի ժողովրդական բանահյուսական ծագում: Հոդվածում մանրամասնորեն ներկայացվում ու վերլուծվում են նշված հեղինակների տեսակետները, որոնցով փորձ է արվում փիլիսոփայական սահման գծելու գործիքային և ոչ-գործիքային երաժշտության, աշխարհիկ և հոգևոր հոսանքների, «հեթանոսական» և «քրիստոնեական» մշակույթների միջև:

T. S. Dalalyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography

Some Notes on Conceptual Thoughts Pertaining to the Musical Instruments in the 13th Century

Keywords: musical instrument, legend, Hovhannes Yerznkatsi Pluz, Vardan Aygektsi, Christianity, ideology, spiritual and secular music, parable.

A number of musical instruments are mentioned in Armenian medieval sources, which sometimes contain additional information explaining their use and structure, and also give their philosophical connotations. Images of musical instruments and musicians are often found in our medieval miniatures. Tractates on music teaching are known, too. Legends and legendary stories preserved in medieval works describe the creation or origin of musical instruments. Naturally, these stories are covered with a Christian-religious veil and ideology. We do not know any Armenian pagan myth and legend from earlier eras which would explain the appearance of musical instruments. This article broaches various perceptions of musical instruments attested in the 13th century. The views of two great authors – Hovhannes Pluz Erznkatsi and Vardan Aygektsi, are thoroughly considered. They try to define the philosophical border between instrumental and non-instrumental music, secular and spiritual movements, 'pagan' and 'christian' cultures.

Manuk Abeghian, who thoroughly studied the Armenian medieval literature but wrote sometimes under the influence of the Marxist-Soviet ideology, believed that in the discussed parable by Vardan Aygektsi, the class contradictions and the struggle against the Church of the time was reflected. At the same time, this parable shows some secular tendencies which supplanted gradually the religious thought from the medieval literature, thus bringing it closer to the folk thinking and folklore. This process is called by specialists as 'Armenian Renaissance'.

Т. С. Далалян, *к.ф.н.*
Институт археологии и этнографии

Заметки о мировозренческом восприятии музыкальных инструментов в 13-ом веке

Ключевые слова: музыкальный инструмент, легенда, Ованес Ерзнкаци Плуз, Вардан Айгекци, христианство, идеология, духовная и светская музыка, притча.

В средневековых армянских источниках упоминается ряд музыкальных инструментов, о которых иногда приводятся дополнительные сведения, касающиеся их использования и структуры. Изображения музыкальных инструментов и музыкантов часто встречаются в армянских средневековых миниатюрах. Известны также трактаты по преподаванию музыки. В различных средневековых произведениях сохранились легенды и мифические истории, описывающие создание или происхождение музыкальных инструментов. Разумеется, эти истории окутаны христианской религиозной идеологией. Нам неизвестны армянские языческие мифы и легенды, относящиеся к более ранним эпохам, которые объясняли бы зарождение музыкальных инструментов. Данная статья посвящена рассмотрению и анализу различных представлений и восприятий музыкальных инструментов, засвидетельствованных в наших письменных источниках. Чтобы обеспечить четкость научного анализа, хронологические рамки исследования были сознательно сужены в пределах XIII века. В частности, в работе рассмотрены представления двух знаковых авторов этого периода – Вардана Айгекци и Ованеса Плуза.

Скрупулезный исследователь армянской средневековой литературы М. Абегян, под влиянием марксистско-советской идеологии, считал, что, в обсуждаемой нами притче Вардана Айгекци отразилась классовая борьба того времени. Наряду с этим, в ней можно заметить светские тенденции эпохи, которые сводились к постепенному вытеснению религиозного мышления из средневековой литературы и к приближению ее к народному мышлению и фольклору.

Դիանա Միրիջանյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ
Սոսե Աղայան
ՀԱԻ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՆԹՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ ԱՐՁԱՆԱԳԻՐ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Վաղմիջնադարյան Հայաստանի նշանավոր իշխանական տներից մեկի՝ Գնթունիների մասին տեղեկություններ են հաղորդում ինչպես մատենագրական աղբյուրները, այնպես էլ վիմագրերը: Գնթունիների տիրույթները գտնվում էին Նիգ գավառում, ինչի մասին վկայում է 1908 թ. Գարեգին Հովսեփյանի՝ Ապարանում պատահականորեն հայտնաբերած հունարեն արձանագրությունը[1]:

Ըստ «Աշխարհացույց»-ի (5–7-րդ դդ.)՝ Նիգը Այրարատ նահանգի 15-րդ գավառն էր՝ մոտ 1000 կմ[2] տարածքով, և համաձայն Ս. Երեմյանի՝ համապատասխանում էր Ապարան քաղաքի տարածքին ու շրջակայքին[2]: Նիգ գավառի սահմանները փորձել է ճշգրտել դեռևս Ղևոնդ Ալիշանը[3]: Վերջին տարիներին հետազոտողները հակված են գավառի սահմանների մեջ ներառելու նաև Տաշիրը[4]:

Մեր խնդիրն է՝ Գնթունյաց իշխանական տան տարբեր ներկայացուցիչների տապանաքարերի հիման վրա պարզել այդ տոհմի տիրույթների սահմանները միջնադարում: Հիմք ընդունելով տապանաքարերը՝ փորձելու ենք հետևել միջնադարի տարբեր փուլերում այս նախարարական տան անդամների աշխարհագրական շարժերին և հասկանալ դրանց դրդապատճառները: Պատմական համապատկերի ամբողջացման համար մեծապես օգտվել ենք նաև միջնադարյան հայ մատենագիրների տեղեկություններից:

Հիմնաբառեր՝ Նիգ գավառ, Գնթունիներ, վաղ միջնադար, տապանաքար, արձանագրություն, թաղումներ, նախարարական տուն, սահմաններ:

---

1 Յովսէփեան 1944, 30:

2 Երեմյան 1963, 72, 118:

3 «*Փոքրագոյն գաւառաց Արարատայ և սակաւայուշ 'ի պատմութեան է Նիգ կամ Նգայ-տուն. Որոյ և ըստ դրիցն անկ էր բաժին լինել Արագածոտան և Վարաժնունեաց, յարևմտից և յարևելից փարելոց զնովաւ. սահման 'ի հիւսիսոյ կուսէ ունելով զՏաշիրս (կամ զԲամբակ), ինքն իսկ միջին մասն Հրազդան գետոյ ձևէ և զսահմանն 'ի նշանակեալդ կողմանէ*» [Ալիշան 1890, 247]:

4 Հարությունյան 2001, 40; Սարգսյան 2008, 202–204:

Ուսումնասիրության պատմություն

Ապարանի հունարեն արձանագրությունն առաջինը հրատակող Միխաիլ Ռոստովցևն այն թվագրում է 3-րդ դարավերջ–4-րդ դարասկզբով[5]: Կամիլա Տրևերն այս արձանագրության տառաձևերը համեմատելով Հայաստանից (Գառնի, Տիգրանակերտ) և այլ վայրերից (Փոքր Ասիա, Սիրիա) հայտնի նմանօրինակ հունարեն վիմագրերի հետ՝ եզրակացնում է, որ Ապարանի վկայագրում խոսվում է Տրդատ II Արշակունու օրոք (217–222) կատարված իրադարձության մասին: Սիմոն Կրկյաշարյանն այն վերագրում է Տրդատ I-ին և համաժամանակյա է համարում Գառնիի հունարեն արձանագրությանը[6]: Այս խնդիրը դուրս է մեր թեմայի շրջանակից, միայն փաստենք, որ վաղ միջնադարում *Գնթունիներն* արդեն իշխում էին *Նիգում*[7]:

Ըստ *Գահնամակի*՝ Գնթունյաց նախարարական տունը 70 իշխանների շարքում գրավել է 21-րդ տեղը, իսկ ըստ *Ջօրանամակի*՝ հայոց զորքին տվել 300 հեծյալ, այսինքն՝ բավական պատկառելի դիրք է ունեցել Հայոց իշխանների աստիճանակարգում[8]: 2008 թ. հրատարակված Հայաստանի ազգային ատլասում Բաբկեն Հարությունյանը Նիգի հյուսիսային սահմանը վաղ միջնադարում հասցնում է մինչև Բազումի լեռներ: Համաձայն հեղինակի տեսակետի՝ Նիգ գավառն ընդգրկել է, Ապարանի շրջանից բացի, նաև Փամբակի հովիտը (Սպիտակի և Վանաձորի շրջանները), ինպես նաև Աղստև և Հրազդան գետերի վերին հոսանքների շրջանը, որը հետագայում առանձնացվել էր Նիգ գավառից՝ կազմելով *Վարաժնունիք* գավառը: Վերջինս, հեղինակի համոզմամբ, տարածվում էր ոչ միայն Հրազդան գետի վերին հոսանքի և Մարմարիկ գետի ավազանի շրջանում, այլև պետք է ձգվեր Փամբակի և Արեգունի լեռներից հյուսիս՝ ընդգրկելով Աղստևի վերնագավառը (Դիլիջանի տարածաշրջան), ինպես նաև Աղստևի վտակ՝ Գետիկի ավազանը (Ճամբարակի տարածաշրջան)[9]:

Վիմագրագետ Գագիկ Սարգսյանի՝ 2008 թ. հրատարակած մի հոդվածում, կարծես, փաստերով հաստատվում է վերոնշյալ տեսակետը, քանզի Սպիտակի շրջանի Գոգարան գյուղում հայտնաբերված տապանաքարի վրա առկա է *Գնթունի* տոհմի անունը: Հեղինակը տապանաքարը թվագրում է 9–11-րդ դարերով և կարծիք հայտնում, որ Գնթունիների տիրույթների հյուսիսային սահմանը տարածվել է մինչև Բազումի լեռներ[10]: Ընդգծենք, սակայն, որ խոսքը տարբեր դարաշրջանների մասին է, և հավանական է, որ 7-րդ դարից հետո Գնթունիները, քաղաքական տարբեր հանգամանքներով պայմանավորված, հողեր ունենային նաև Տաշիր գավառում:

---

5 Ростовцев 1911, 32.

6 Կրկյաշարյան 1971, 202:

7 Հայտնի է, որ ավատատիրական կարգերի օրոք, որպես վարչական միավոր, դիտարկվում էր նախարարի տիրույթը [Հարությունյան 2001, 40], որի սահմանները, սակայն, հիմնականում որոշվում էին ֆիզիկա-աշխարհագրական գործոններով:

8 Ադոնց 1987, 280–283; Յակոբեան 2011, 540, 550:

9 Հարությունյան 2008, 30–31:

10 Սարգսյան 2008, 202–204:

Տոհմական տիրույթների և տապանագրերի կապը

Տապանագրերի դիտարկումը կարևոր նշանակություն ունի, քանզի իշխանական տան ներկայացուցիչները, որպես կանոն, պետք է հանգչեին իրենց տոհմական տիրույթներում: Պատմագրության մեջ հայտնի են բազմաթիվ նման օրինակներ:

Այսպես, Սահակ Պարթևի մահանալուց հետո, ըստ Մովսես Խորենացու՝ «*զպատրուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայի հանդերձ աշակերտակցօքն եւ տիկնաւն Մամիկոնեից սորին նուաւ որում անուն էր Դստրիկ կին Վարդանայ ստրատելատի՝ տարեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօն*»[11]:

Փավստոս Բուզանդն էլ վկայում է, որ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսի մարմինը Ծոփքից տարան Եկեղյաց գավառ և թաղեցին իր հոր կալվածքում՝ Թիլ ավանում[12]:

Նմանապես Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը փաստում է, որ երբ Օրբելյան իշխան Սմբատը Թավրիզում մահացավ, նրան մեծ շուքով բերեցին և թաղեցին Նորավանքում. «*եւ բերեալ ի հայրենի դամբարանն սուրբ ռխտին Նորավանից. եւ աշխարհախումբ հանդիսիւ եդին ի տապանի ընդ հարս իւր ի թուականին 722: Վասն որոյ եւ շինէ եղբայր իւր Տարսայիճն նմա տուն տապանի, եւ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի, եւ անդ փոխէ ի հանգիստ զեղբայր իւր Սմբատ*»[13]:

Ըստ ավանդության՝ Ավարայրի ճակատամարտի նահատակներից Տաճատ Գնթունու մարմինը ևս ամփոփել են իր տիրույթներում՝ Զովունիի Սուրբ Վարդան եկեղեցում[14]:

Զովունիում և Եղիպատրուշում Գնթունյաց տապանաքարերը

Գնթունյաց նախարարական տան ներկայացուցիչների՝ մեզ հայտնի վաղմիջնադարյան տապանաքարերից երկուսը գտնվել են ներկայիս Կոտայքի մարզի Զովունի գյուղում, որը Գնթունիների հոգևոր կենտրոնն էր:

Այստեղ է գտնվում վաղմիջնադարյան նշանավոր Պողոս-Պետրոս եկեղեցին, որի հյուսիսային պատի որմնամույթին փորագրված է հետևյալ արձանագրությունը (այն, ըստ տառաձևերի, թվագրվում է 6-րդ դարով) [նկ. 1, էջ 233].

ՔՍ ԱԾ ՅԻՇԵԱ / ԶԳՐԻԳՈՐ ԳՆ/ԹՈՒՆԵԱՑ ՏԷՐ[15]:

Նույնպես Զովունիից՝ այժմ Հայաստանի պատմության թանգարանում գտնվող տապանաքարն ունի հետևյալ քառատող արձանագրությունը [նկ. 2, էջ 233].

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Դ/ԱԻԹԻ ԳԸՆԹՈՒՆԵ/ԱՑՏ(ԵԱՌ)Ն
ՈՐԴՈ(Յ) ՎԱՍ/ԱԿԱ ԲԱՐԷՊԱ(ՇՏԻ)[16]:

---

11 Մովսես Խորենացի 1913, 356:

12 Փավստոս Բուզանդ 2015, 13:

13 Ստեփանոս Օրբէլեան 1910, 419–420:

14 Տեր-Մինասյան 2001, 264:

15 Ալիշան 1890, 248; Սաղումյան 1978, 61–62:

16 Ղաֆադարյան 1952, 245:

Հաջորդ տապանաքարը գտնվել է Զովունիի Սուրբ Վարդան եկեղեցու հյուսիսային որմնախարսխի վրա: 6-րդ դարով թվագրվող տապանաքարն ունի հետևյալ արձանագրությունը[17] [նկ. 3, էջ 234].

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ. ՆԵԱՑ ՎՐԵՆԱՅ/ԳՆԹՈՒՆՈՅՆ Ե[18]:

Արագածոտնի մարզի Եղիպատրուշ գյուղի հյուսիսային կողմում՝ ոչ-բարձր բլրի վրա, կան վաղ միջնադարյան երեք տապանաքարեր [նկ. 4, 5, էջ 234–235], որոնցից մեկը արձանագիր է և ունի հետևյալ դժվարընթեռնելի վկայագիրը[19] [նկ. 6, էջ 235].

ԱՅՍ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ԿՏԸԱԿԱՈՐԴԻ/ՍԻՄԵԻՈՆՈ
ՇԱՊՈՒ ԳՆԹՈՒՆՈՅ ... / ... ՑԴ[20]:

Հայտնի է, որ միջնադարում թաղումները կատարվում էին եկեղեցիների շուրջ, ուստի տապանաքարային վկայագրերը կարող են փաստել, որ Գնթունիների հոգևոր կենտրոնը եղել է Զովունի բնակավայրը, իսկ դրան հարակից գյուղերում ապրել և թաղվել են տոհմի տարբեր անդամներ:

Այժմ Զովունի գյուղատեղին մնացել է Ապարանի ջրամբարի տակ: Բնակավայրի ճարտարապետական կառույցներից Ս. Վարդան մատուռ-դամբարանը և Թուխ մանուկ մատուռը 1960-ականներին տեղափոխվել են գյուղից արևելք գտնվող ոչ մեծ բարձունքի վրա[21], իսկ Պողոս-Պետրոս եկեղեցին, որի «գիտական նշանակությունը դուրս է գալիս ճարտարապետական ազգային արվեստի շրջանակներից»[22], ցավոք, տարվա մեջ մի քանի ամիս մնում է ջրամբարի ջրերի մեջ:

Ս. Հակոբ եկեղեցու արձանագրության շուրջ

Գնթունի իշխանական տան մասին վերջին հիշատակումը կարդում ենք պատմիչ Սեբեոսի երկում, ըստ որի՝ Նիգի տերը, մի շարք իշխանների թվում և կաթողիկոս Ներսես Տայեցու գլխավորությամբ, իր հնազանդությունն է հայտնում Բյուզանդիայի կայսրին[23]: Արդյունքում, որպես պարգև, Գնթունիները բյուզանդական կայսրից հողեր են ստացել՝ ի հաշիվ իրենց սահմանակից Կոտայք գավառի[24]:

Այս մասին հետաքրքիր վկայագիր է պահպանվել Գեղարդավանքից 35 կմ հարավ-արևելք՝ Ս. Հակոբ եկեղեցու ավերակներում, որտեղ հայտնաբերվել է *Տիրոց Գնթունու*՝ 7-րդ դարով թվագրվող արձանագրությունը: Ըստ դրա՝

17 Պետրոսյանց 1980, 305:

18 Վ. Պետրոսյանցն իր վերոնշյալ հոդվածում վիմագիրը կարդացել է «*նեացվրեն այ*», իսկ վիմագրագետ Գ. Գ. Սարգսյանի դիտարկմամբ՝ այստեղ առկա է Վրեն անձնանունը, ուստի ամբողջը պետք է կարդալ «*նեաց Վրենայ*»:

19 Պետրոսյանց 1981, 293–294:

20 Շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ Գ. Գ. Սարգսյանին՝ արձանագրությունը լրացնելու համար:

21 Սահինյան 1968, 101–116:

22 Սահինյան 1968, 118:

23 Սեբէոս 1912, 165:

24 Պետրոսյանց 1988, 8:

Բյուզանդիայի Կոստանդին II (641–668) կայսրը *Անձավ* գյուղը պարգև է տալիս *Գակ Գնթունս* որդուն՝ *Տիրոցին*, վերջինս էլ այն նվիրում է եկեղեցուն[25]: Հավանական է, որ նույն Տիրոց Գնթունին է, որ Ներսես կաթողիկոսի շքախմբում իր հավատարմությունն է հայտնել Բյուզանդիայի կայսրին:

Ժամանակին Մեծ Հայքի թագավորության գերագույն հողատերը Արշակունի թագավորն էր: Պետության մեջ վարչականորեն առանձնացված «գաւառներն» ու «աշխարհները» հայոց թագավորի կողմից կառավարման էին հանձնվում նախարարական տներին՝ ժառանգական իրավունքով, որպես կատարած ծառայությունների համար պարգև: Մասնավորապես, պատմական աղբյուրներից հայտնի է, որ Խոսրով Կոտակը Օշական գյուղը նվիրել էր Ամատունիներին՝ մասքութների դեմ արիաբար կռվելու համար[26]:

Նշենք նաև, որ վաղ միջնադարում ընդունված էր, սեփական տիրույթներից բացի, տարածքներ ունենալ այլ նահանգներում: Այսպես, *Գնունիների* իշխանական տան տիրույթները գտնվում էին Աղիովտում, սակայն արդեն 7-րդ դ. նրանք հիշատակվում են Այրարատում՝ Շիրակի նախարարական տների շարքում, որտեղ կառուցում են *Մասպարայի* նշանավոր եկեղեցին[27]: Հետաքրքիր է, որ Գնունիների նախարարական տան ուղին շատ նման է Գնթունիներին՝ խիստ ընորոշ վաղ միջնադարի համար: Գնունիները ևս 7-րդ դարից հետո կորցնում են իրենց նախկին հզորությունը և Աշոտ Մնակերի օգնությամբ նոր տարածքներ ստանում Տայքում[28]:

Իսկ ահա Տայքի տերեր Մամիկոնյանների մի ճյուղը 7-րդ դ. հաստատվում է Արագածոտնում՝ իշխանական նստոց դարձնելով Արուճ ամրոց-բնակավայրը[29]: Մյուս կողմից էլ, բազմաթիվ իշխանական տներ, չդիմանալով արաբների ճնշումներին, հեռանում են իրենց տիրույթներից. օրինակ՝ Ամատունիները գաղթում են դեպի Տայքի հյուսիս՝ *Կող* գավառ[30]:

Գնթունիները Բագրատունիների օրոք

7-րդ դարից հետո աղբյուրները որևէ վկայություն չունեն Գնթունիների մասին: Միայն 9-րդ դ. վերջերին է, որ Գնթունիները նորից հիշատակվում են՝ հանդես գալով որպես Բագրատունյաց թագավորների զինակիցներ. նրանցից *Հասան* իշխանին էր վստահվել մայրաքաղաք Կարսի պաշտպանությունը: Սակայն շուտով Կարսն ընկնում է, իսկ Հասանը և Հայոց թագուհին, որոնք պատսպարվել էին ամրոցում, գերեվարվում են արաբ կուսակալ Ափշինի կողմից 896 թ. և միայն Սմբատ I Բագրատունու ջանքերով են ազատվում գերությունից[31]: Նույն *Հասան Գնթունին* ևս մեկ անգամ հիշատակվում է՝ որպես Օղուզլուի (Արևմտյան Շիրակում) եկեղեցու մեկենաս[32]:

25 Շահինյան 1974, 74–80:
26 Մովսես Խորենացի 1913, 267:
27 Մանուչարյան 1977, 52–56:
28 Վարդան Բարձրբերդցի 1861, 10:
29 Տեր-Ղևոնդյան 1996, 105–106:
30 Ղևոնդ 1887, 168–169:
31 Յովհաննէս Դրասխանակերտցի 1912, 178–180:
32 Մանուչարյան, 1977,150:

Հասան Գնթունու որդիներ *Աշոտը* և *Վասակը* նշանակվում են Գուգարքի կառավարիչներ՝ իբրև նստավայր ունենալով *Շամշուլդե* ամրոցը[33]: Սակայն նրանք շուտով ապստամբում են Աշոտ II թագավորի դեմ և պատժվում[34]: Ապստամբության ճնշումից հետո, որը տեղի է ունեցել 10-րդ դ. 20-ական թթ., Գնթունյաց իշխանների մասին այլևս որևէ վկայություն հայտնի չէ, ինչը ենթադրել է տալիս, որ իշխանական տունն այդպիսով հեռանում է պատմության ասպարեզից:

Հավանաբար արքունիքին մատուցած ծառայությունների համար էր, որ Գնթունի իշխանները Բագրատունիներից նվեր էին ստացել Գուգարք նահանգի *Տաշիր* գավառը, որն առանձին վարչական միավոր էր և գտնվում էր Բագրատունիների տիրապետության ներքո[35]:

Գոգարանում հայտնաբերված վերոնշյալ տապանաքարը վերաբերում է հենց այս շրջանին, երբ Տաշիրում կարճ ժամանակով իշխում էին Գնթունիները. այն թվագրվում է 9-րդ դարավերջով և 10-րդ դարի առաջին երկու տասնամյակով: 10-րդ դ. Բագրատունի իշխանները, կենտրոնախույս վերակացուների նկրտումները զսպելու նպատակով, Տաշիրի կառավարումը հանձնում են իրենց տոհմակիցներին: 10-րդ դ. կեսերին արդեն Տաշիրը դիտվում էր որպես առանձին վարչաքաղաքական կազմավորում, ուր իշխում էր Աշոտ Ողորմած Բագրատունու կրտսեր որդին՝ Գուրգենը[36]:

Եզրափակում

Այսպիսով, Գնթունյաց տան ներկայացուցիչների արձանագիր տապանաքարերը կարևոր աղբյուրագիտական տվյալներ են պարունակում՝ վաղմիջնադարյան Հայաստանի նշանավոր իշխանական այս տոհմի տիրույթների սահմանները հստակեցնելու համար: Միաժամանակ, տապանագրերի և տարբեր վիմագրերի դիտարկմամբ հնարավոր է առանձնացնել Գնթունիների գործունեության ծաղկուն շրջանը, երբ այս տոհմի իշխանները կառուցում էին հոգևոր բազմաթիվ շինություններ, հիշատակվում մի շարք տապանագրերում ու տարբեր պատմիչների կողմից, ինչպես նաև՝ անկումը, երբ իշխանական տան անունը հիշվում է միայն Գոգարանի տապանագրում և մեկ պատմիչի՝ Հովհաննես Դրասխանակերտցու երկում:

10-րդ դարից սկսած՝ Նիգ և Արագածոտն գավառներում հանդես են գալիս առավել կենսունակ, հզոր նախարարական տներ, որոնց էլ վիճակված էր կերտելու տվյալ տարածքների նոր պատմությունը:

---

33 Յովհաննէս Դրասխանակերտեցի 1912, 295–297:

34 Յովհաննէս Դրասխանակերտցի1912, 316–317:

35 Ուշագրավ է, որ Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»-ում (13-րդ դ.) Հայաստանի հյուսիսային շրջաններից հիշատակվող առաջին գավառը Տաշիրն է. այստեղ ևս ասվում է, որ Տաշիր գավառը սկսվում է Փամբակի ձորից և դիտվում որպես Գուգարք աշխարհի մաս. «*Տաշրացւոց գաւառն Բամպկի ձորն է, ուր կայ սուրբ ռիւրն Որդաձորու սուրբ Նշանն: Տաշիր Լօռի է, ուր կայ Քոբարն, և Հոռոմայրի սուրբ Նշանն, և Յոհան Օձնեցոյ գերեզմանն սքանչելագործ սուրբ հայրապետին...*» [Վարդան վարդապետ, 1960, 35]

36 Մաթևոսյան1982, 65:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ 1861
Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, (ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին), Մոսկվա, Լազարյան ճեմարանի տպարան, 1861:

ԲՈՒԶԱՆԴ 2015
Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ 1912
Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, Ն. Աղանեանցի տպարան, 1912:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ 1913
Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1913:

ՂԵՒՈՆԴ 1887
Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, Ի. Ն. Սկորոխոդովի տպարան, 1887:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ 1960
Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, (քննական հրատարակություն Հ. Պերպերյանի), Փարիզ, Արաքսա տպարան, 1960:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼԵԱՆ 1910
Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, Ն. Աղանեանցի տպարան, 1910:

Ուսումնասիրություններ

ԱԴՈՆՑ 1987
Ադոնց Ն.Գ., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, «Հայաստան», 1987:

ԱԼԻՇԱՆ 1890
Ալիշան Ղ., Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1890:

ԵՐԵՄՅԱՆ 1963
Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963:

ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ 1971
Կրկյաշարյան Ս.Մ., Թագավորական իշխանությունը Արշակունյաց Հայաստանում // Պատմա-բանասիրական հանդես, 1971, №1, 196–207:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2001
Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 2001:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2008
Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, (պատասխանատու խմբագիր՝ Բ.Հ. Հարությունյան), Երևան, «Տիգրան Մեծ», 2008:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1952
Ղաֆադարյան Կ.Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952:

ՄԱԹԵՈՍՅԱՆ 1982
Մաթևոսյան Ռ.Ի., Տաշիր-Զորագետ (X դ.–XII դ սկիզբ), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 1977
Մանուչարյան Ա.Ա., Քնություն Հայաստանի IV–XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:

ՅԱԿՈԲԵԱՆ 2011
Յակոբեան Ա.Հ., Գահնամակ Ազատաց և Տանուտէրանց Հայոց // Բազմավէպ, 2011, թիւ 3–4, 485–550:

ՅՈՎՍԷՓԵԱՆ 1944
Յովսէփեան Գ., Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, պրակ Գ, Նիւ Եորք, 1944:

ՇԱՀԻՆՅԱՆ 1974
Շահինյան Ա.Ն., 7-րդ դարի կոթողներ Գեղամա լեռներում // Էջմիածին, 1974, թիվ Է–Ը, 75–80:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ 1980
Պետրոսյանց Վ.Մ., Զովունիի արձանագրությունները // Պատմա-բանասիրական հանդես, 1980, №3, 303–306:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ 1981
Պետրոսյանց Վ.Մ., Մռավյան գյուղի Աստվածածին եկեղեցին և արձանագրությունները // Պատմա-բանասիրական հանդես, 1981, №3, 289–294:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ 1988
Պետրոսյանց Վ.Մ., Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան», 1988:

ՍԱՀԻՆՅԱՆ 1968
Սահինյան Ա.Ա., Զովունիի ճարտարապետական խումբը // Լրաբեր հասարակական գիտությունների, 1968, №1, 101–120:

ՍԱՂՈՒՄՅԱՆ 1978
Սաղումյան Ս.Տ., Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, №4, 61–78:

ՍԱՐԳՍՅԱՆ 2008
Սարգսյան Գ.Գ., Վիմագրագիտական էսքիզներ // Պատմա-բանասիրական հանդես, 2008, №2, 198–209:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ 1996
Տեր-Ղևոնդյան Ա.Ն, Հայաստանը VI–VIII դարերում (արաբական նվաճումների նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, «Գիտություն», 1996:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 2001
Տեր-Մինասյան Ա.Ա., Միանավ եկեղեցի-վկայարանները վաղմիջնադարյան Հայաստանում // Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը (խմբ. Ս.Բ.Հարությունյան, Ա.Ա.Քալանթարյան), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Հայաստան», 2001, 261–266:

РОСТОВЦЕВ 1911
Ростовцев М.И., Апаранская греческая надпись царя Тиридата //Анийская серия, №6, Санкт-Петербург, Имп. Акад. наук, 1911, 32.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Դ. Հ. Միրիջանյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ս. Հ. Աղայան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դիտարկումներ Գնթունյաց իշխանների տիրույթների մասին՝ ըստ արձանագիր և մատենագիր աղբյուրների

Հիմնաբառեր՝ Նիգ գավառ, Գնթունիներ, վաղ միջնադար, տապանաքար, արձանագրություն, թաղումներ, նախարարական տներ, սահմաններ:

Նիգ գավառում Գնթունիների ակտիվ շինարարական գործունեության մասին են խոսում վիմական տվյալները, որոնք պահպանվել են հոգևոր կառույցների պատերին: Գնթունիների տիրույթների հստակեցման համար կարևոր նշանակություն ունեն նաև նրանց տապանաքարերը: Հետաքրքիր է, որ 7-րդ դարից հետո Նիգ գավառում Գնթունիների գործունեությունը փաստող որևէ վկայություն չկա, ինչը, ենթադրաբար, պայմանավորված էր արաբական ավերիչ արշավանքներով: Արդեն 9 դ. Գնթունիները հայտնվում են Գուգարքում, ինչի մասին վկայում է Գոգարանի վաղմիջնադարյան եկեղեցու հարևանությամբ հայտնաբերված արձանագիր տապանաքարը: 9–10-րդ դդ. թվագրվող շիրմաքարը հիմք է տալիս ենթադրելու, որ 7-րդ դարից հետո Գնթունիները կորցնելով իրենց իշխանությունը և տիրույթները Նիգ գավառում՝ տարածվել են դեպի հյուսիս՝ Բագրատունիներից տարածքներ ստանալով Տաշիր գավառում:

D. H. Mirijanyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography

S. H. Aghayan
Institute of Archaeology and Ethnography

Some Observations on the Gntuni Princely House's Domains according to the Gravestone Inscriptions and Historiographic Sources

Keywords: Nig canton, Gntuni, Early Middle Ages, gravestone, inscription, burials, princely house, borders.

Based on the inscriptions on the gravestones of the representatives of the princely house of Gntuni this article aims to present the domains of Gntuni rulers, who were the owners of Nig canton of Ayrarat province.

In historical sources the princely house of Gntuni was first mentioned in the History of Movses Khorenatsi,locating their domains in Nig canton. This information was also confirmed by epigraphic data. In 1908, G. Hovsepyan found the Greek inscription of Armenian king Trdat II in Aparan, informing about the donation of Nig canton to Gntuni as their own domain. According to the Ashkharhatsuyts of Anania Shirakatsi, Nig was the 15th canton of Ayrarat province and occupied the territory of the upper stream of the Kasakh river.

The epigraphic data preserved on the walls of different religious buildings evidence the intensive construction activity of the Gntuni princes in Nig canton.

The gravestones of the Gntuni have also important significance to clarify the borders of the domains of the Gntuni, as the representatives of the ruling house could sponsor the construction of religious buildings in other provinces, but, as a rule, they should be buried in their own domain.

The activity of the princely house of Gntuni is visible in Nig canton during the 3th –7th centuries, which is also evidenced by the presence of gravestones. One of the gravestones was found on the northern side of the base of the St. Vardan Church in Zovuni, the other with the name of David Gntuni is known from the Zovuni gorge, which is now kept in the History Museum of Armenia. Another inscribed gravestone is now in the village of Yeghipatrush.

Interestingly, there is no evidence about the activity of the Gntuni princes in Nig canton after the 7th century, probably, due to the Arab invasions. Later, in the 9th century, the Gntuni rulers reappeared in Gugark region, which is evidenced by an inscribed gravestone found near the early medieval church in Gogaran. The gravestone dated to the 9th –10th centuries let us suppose, that after the 7th century the princely house of Gntuni lost its control and domains in Nig canton and moved to the north receiving territories from the Bagratuni in the Tashir region.

Д. Гр. Мириджанян, *к.и.н.*
Институт археологии и этнографии
С. А. Агаян
Институт археологии и этнографии

К вопросу о владениях княжеского рода Гнтуни согласно надгробным надписям и историографическим источникам

Ключевые слова: Ниг гавар, Гнтуни, раннее средневековье, надгробия, эпиграфика, погребение, княжеские дома, границы.

Статья посвящена описанию доменов Гнтуни, владельцев гавара Ниг в провинции Айрарат, основываясь на надгробия представителей княжеского дома. В исторических источниках княжеский дом Гнтуни впервые упоминается у Мовсеса Хоренаци, который локализует их владения в гаваре Ниг. Эти сведения были также подтверждены эпиграфическими данными. В 1908 году Г. Овсепян в Апаране обнаружил греческую надпись армянского царя Трдата 2-ого, в которой сообщается о пожертвовании гавара Ниг княжескому дому Гнтуни в качестве родового поместья.

Согласно «Ашхарацуйцу» Анании Ширакаци, Ниг являлся пятнадцатым гаваром провинции Айрарат и был расположен у верхнего течения реки Касах. Об интенсивной строительной деятельности князей Гнтуни в гаваре Ниг явствуют эпиграфические данные, сохранившиеся на стенах различных зданий религиозного характера.

Надгробия княжеского рода Гнтуни также имеют важное значение для выявления границ владений Гнтуни, поскольку представители правящего дома могли спонсировать строительство религиозных зданий и в других провинциях, но, как правило, они должны были быть похоронены в собственных областях.

Деятельность княжеского дома Гнтуни прослеживается в регионе Ниг в III–VII веках, о чем свидетельствует наличие надгробий. Одно из надгробий было найдено на северном стилобате церкви Св. Вардана в Зовуни, другое – с именем Давида Гнтуни – было обнаружено в каньоне Зовуни и в настоящее время хранится в музее Истории Армении. Еще одна надгробная плита с надписью на сегодняшний день находится в селе Египратруш.

Следует отметить, что в гаваре Ниг не найдено никаких свидетельств о деятельности князей Гнтуни после VII века, что, вероятно, связано арабскими вторжениями. Позже, в IX столетии, правители Гнтуни появляются в регионе Гугарк, о чем свидетельствует надпись на надгробии, найденном вблизи раннесредневековой церкви в Гогаране. Надгробие IX–X вв., позволяет предположить, что после VII века княжеский дом Гнтуни потерял власть над владениями в районе Ниг и переселился на север, в Таширский район, получив там территории от Багратидов.

Ավետիս Գրիգորյան
ՀԱԻ

ՍՈԹՔ–1 ԱՄՐՈՑԸ ԵՒ ԴՎԻՆ-ՊԱՐՏԱՎ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍՈԹՔՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ[1]

ՀՀ Գեղարքունիքի մարզում «Ուշկիանի» ծրագրով իրականացվող հնագիտական և երկրաբանական ուսումնասիրությունների շրջանակում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Ա.Ա. Բոբոխյան) 2014թ. պեղումներ իրականացրեց Սոթք գյուղում գտնվող Սոթք–1 ամրոցում՝ նպատակ ունենալով պարզելու հուշարձանի հնագիտական ներուժը, ժամանակաշրջանը և նշանակությունը[2]: Պեղումների և Սոթքի լեռնանցք բարձրացող ճանապարհի հետախուզության արդյունքում ձեռք բերված տվյալների համադրմամբ՝ հոդվածում ներկայացվում է Սոթք–1 հուշարձանի թվագրությունը, շերտագրությունն ու հնագիտական միջավայրը: Լրացվում են միջնադարյան Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի Սոթքի գծամասի վերաբերյալ պատմա-հնագիտական տվյալները, որոնք կարևոր են Սևանա լճի հարավ-արևելյան շրջանի վաղմիջնադարյան մշակութային լանդշաֆտը վերակազմելու համար:

Հիմնաբառեր՝ հնագիտություն, Սոթքի տարածաշրջան, ամրոց, պաշտպանական համակարգ, առևտրային ճանապարհ, վաղ միջնադար:

Հուշարձանի դիրքն ու բնութագիրը

Սոթք–1-ը գտնվում է համանուն գյուղի կենտրոնում՝ գետամերձ բլրի բարձունքին և լանջերին[3]: Բլուրն ունի մոտ 1,5 հա մակերես, իսկ պարսպապատ վերնամասը՝ մոտ 0,37 հա [նկ.1, էջ 236]:

Հուշարձանը բավական վնասվել է ուշ շրջանում կատարված թաղումների[4] և շինարարական մի շարք աշխատանքների արդյունքում: Գյուղի մուսուլման բնակիչներն օգտագործել են[5] ամրոցի պարսպաքարերն ու միջնադարյան

---

1 Մասնագիտական խորհուրդների և աջակցության համար խորին շնորհակալություն ենք հայտնում *Հ. Ա. Մելքոնյանին, Ս. Գ. Համայակյանին, Դ. Հ. Միրիջանյանին, Ի. Ա. Քալանթարյանին, Հ. Պ. Հակոբյանին, Ա. Ա. Բոբոխյանին*:

2 Պեղումներին մասնակցել են նաև *Հ. Դանիելյանը, Մ. Ամիրյանը, Հ. Վանյանը, Ս. Զագրեանը, Հ. Սիմոնյանը*:

3 Հուշարձանն ունի աշխարհագրական հետևյալ կոորդինատները՝ հս. 40°11′53.24″, արլ. 45°51′58.90″, բարձր. 2025 մ:

4 Համաձայն տեղացիների բանավոր հաղորդումների՝ Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում «Սոթք–1» բլրի վրա թաղվել են հայ-թաթարական բախումների ժամանակ զոհված գեներալ Մովսես Սիլիկյանի որդին և իր զինակիցները:

5 Սոթքի ուշ շրջանի պատմության վերաբերյալ մանրամասն տես Գրիգորյան 2017, 73–78:

գերեզմանատան տապանաքարերը՝ կառուցապատման և հողերի սահմանաբաժանման նպատակներով: 20-րդ դ. կեսին բլրի կենտրոնական հատվածում կառուցվել է հոսանքի ուժեղացուցիչ կայան, իսկ 2013-ին տեղադրվել է հեռախոսակապի ալեհավաք: Հուշարձանի տարածքում առկա են նաև խորհրդային շրջանի շինությունների կիսաքանդ մնացորդներ, անկախության շրջանի զինվորական խրամատներ և այլ փորվածքներ:

Վարդենիս-Մարտակերտ ներկայիս ճանապարհի եզրին գտնվող Սոթք–1 բլուրն ունի թեք և դարավանդաձև ստորոտներ ու հարթ վերնամաս: Բլուրը երեք կողմերից դժվարամատչելի է և միայն հյուսիսային կողմից է մեղմաթեք: Հարավային կողմով հոսում է ոսկեբեր[6] Սոթք գետը:

Ամրոցն ունի ռելիեֆին համահունչ հատակագիծ. բլրի վերնամասը և հարավային լանջերը շրջապատված են ռելիեֆի ձևը կրկնօրինակող պարսպաշարերով, որոնք երբեմն նստած են հարթեցված ժայռերի վրա: Պարիսպը միաշար է՝ կառուցված մեծ կոպտատաշ քարերով, որոնց վերնամասերը մշակված են հարթեցման եղանակով: Պարսպի առանձին հատվածներում տեսանելի են ուղղանկյուն որմնահեցերի հետքեր:

Դեպի ամրոց տանող միակ մուտքը բլրի հյուսիսային հատվածի թեք ստորոտի՝ դյուրահաս հատվածում է: Մուտքի արևելյան մասում խորհրդային տարիներին բացված ճանապարհի արդյունքում պարսպաքարերը տեղահանվել են, իսկ արևմտյան կողմը համեմատաբար լավ է պահպանված:

Թեև ոչ ուղղակիորեն, բայց հուշարձանն առաջին անգամ ներկայացվում է վիմագրագետ Ս. Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» 3-րդ պրակում: Առանց Սոթք–1 ամրոցի մասին խոսելու՝ հեղինակը հակիրճ նկարագրում է բլրի վրա գտնվող գերեզմանատան ժայռաբեկոր պատվանդանին կանգնած միակ խաչքարի վիմագիրը[7]:

Ամրոցի հաջորդ հիշատակությունը վկայված է հնագետ Ս. Եսայանի հոդվածում, որը վերաբերում է ամրոցի մոտ գտնված մ. թ. ա. 7–5-րդ դդ. դամբարանից 1974-ին պատահաբար հայտնաբերված և Հայաստանի պատմության պետական թանգարան հանձնված բրոնզե իրերի հավաքածուին[8]: Ուշագրավ է, որ ներկայացված երկու աշխատանքներում էլ հաղորդվում են չափազանց կարևոր՝ որևէ այլ տեղ չքննարկված տեղեկություններ այն մասին, որ ամրոցն, անկումից հետո, վերածվել է արձանագիր խաչքարերով և տապանաքարերով հարուստ գերեզմանատան, նաև որ ամրոցը հայտնի է եղել Տիգրանաբերդ անունով (թեև վերջին տեղեկության աղբյուրը չի նշվում):

Հուշարձանի ուսումնասիրությունը

Սոթք–1 ամրոցն առաջին անգամ հետազոտվել է 1990-ականների վերջին Սևանա լճի հարավարևելյան շրջաններում հայ-իտալական արշավախմբի

6 Սոթք գետում ոսկու լվացման հնագույն հետքերի մասին մանրամասն տե՛ս Գևորգյան և այլք 2007, 26:

7 Բարխուդարյան 1973, 331:

8 Եսայան 1979, 277–280; Yengibaryan 2013, 249–254: Ցավոք, մեր արշավախմբին չհաջողվեց գտնել Ս. Եսայանի նկարագրած դամբարանը:

իրականացրած լայնածավալ հետազոտությունների շրջանակում: Հետախուզական աշխատանքի արդյունքում հուշարձանը չափագրվել է, փաստաթղթավորվել, անվանակոչվել և վերգետնյա խեցեղեն նյութի դիտարկման արդյունքում՝ նախնական թվագրման ենթարկվել[9]:

Հուշարձանի հնագիտական ուսումնասիրությունն իրականացրել է ՀԱԻ արշավախումբը (ղեկավար՝ Արսեն Բոբոխյան) 2014-ին: Պեղումներ են կատարվել առանձնացված երկու տեղամասերում՝ հարավ-արևմտյան լանջի պասրպաշարի երկայնքով և բլրի հարթ վերնամասի հարավ-արևելյան կողմում գտնվող երկու պատաշարերի հատման հատվածում:

Պեղավայր «Ա»-ն ունի (3×15 մ) չափեր: Գտնվում է բլրի դարավանդաձև լանջի հարավային եզրին՝ պարսպաշարի գրեթե կ-աձև հատվածում: Ներառում է պարսպաշարի՝ տասը անխաթար պարսպաքարերով միաշերտ հատվածը: Վերին՝ կավախառն հողաշերտում բացվել են քրիստոնեական գերեզմաններ, իսկ բլրի լանջերին՝ լվացման հետևանքով վերևից սահած, անատոմիապես ոչ-ամբողջական մարդկային ոսկորներ: Սրանք խախտել էին պեղավայրի ստորին՝ կավախառն, մոխրագույն հողաշերտը, որը նստած է մշակված ժայռին, բնորոշվում է վաղմիջնադարյան խեցեբեկորներով և խճաքարային կցակառույցների մնացորդներով:

Պեղավայր «Բ»-ն ունի (5×5 մ) չափեր և գտնվում է բլրի հարթ վերնամասի հարավ-արևելյան հատվածում, որտեղ բացվել են երկշերտ պատաշարեր ունեցող կառույցների հատվող հիմնապատեր և ստորին շերտի մեջ մտած, ուշ շրջանի սալածածկ քրիստոնեական թաղումներ [նկ. 2, էջ 236]:

Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի համապատկերը

Միջնադարյան Դվին-Պարտավ առևտրական-քարավանային ճանապարհը մետաքսի ճանապարհի՝ Հայաստանով անցնող ուղեգծերից մեկն էր, որն Արարատյան դաշտը կապում էր Արցախի և Կուրի ավազանի ստորին հոսանքի տնտեսական ու մշակութային կենտրոններին, որտեղից ճանապարհը շարունակվում էր դեպի Ատրպատական[10]:

Իշխանանիստ Սոթք ավանն[11] ընկած էր Դվին-Պարտավ ճանապարհի ճիշտ միջնամասում՝ Գեղարքունի և Հաթերս կայանների միջև, և մասնակցում էր միջազգային տարանցիկ առևտրին (հավանաբար՝ նաև սեփական արտադրանքով)[12]: Սոթք ավանից ոչ-հեռու գտնվում էր առևտրական ճանապարհի երրորդ՝ «Սոթք» կայանը[13], որն արաբական սկզբնաղբյուրներում հիշատակվում է *Ջաութիս* ձևով[14] [նկ. 3[15], էջ 237]: Սոթք–1 ամրոցն ընկած էր այդ ճանապարհի

9 Biscione et al. 2002, 67–72.

10 Հմմտ. Բարխուդարյան 1973, 6; Եղիազարյան 2012, 93–108:

11 Հմմտ. Սեբէոս 1879, 49:

12 Սոթքի ոսկեհանքերի և, մասնավորապես, դրանց հնագույն շահագործման մասին մանրամասն տես Գևորգյան և այլք 2007, 16–17, 55; Bobokhyan et al. 2017, 501–523:

13 Հմմտ. Բարխուդարյան 1973, 331:

14 Մանանդյան 1936, 198:

15 2010 թ. արշավախումբը հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերեց

ռազմավարական կարևոր կետում և փակում էր դեպի լեռնանցք ու ոսկու հանքեր բարձրացող ուղին [նկ. 4, էջ 237]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում համաժամանակյա հուշարձանները սակավ են ուսումնասիրված՝ Սոթք–1-ի պաշտպանական համակարգի և խեցեղեն գտածոների համեմատական վերլուծությունը կատարել ենք՝ զուգահեռներ տանելով Արագածոտն գավառի նյութի հետ՝ հաշվի առնելով վերջինիս համեմատաբար լավ ուսումնասիրված լինելու հանգամանքը[16]:

Ըստ արված դասակարգումների՝ Սոթք–1 ամրոցը պատկանում է ճանապարհային ամրոցների խմբին. այն փոքր կայազորով պետք է վերահսկեր լեռնանցք մտնող առևտրական ճանապարհը՝ շնորհիվ Սևանի հարավ-արևելյան շրջանների պաշտպանությունն ապահովող մոտակա ամրոցների հետ փոխկապվածության և ճանապարհը վերահսկող իր բնական դիրքի: Գործառութային նշանակությամբ և պարսպի շարվածքի ձևով ամրոցն առավել նման է Մաստարայի «Նախավկա», իսկ հատակաձևով՝ Աշնակ–2 և Աշնակ–4 ամրոցներին, որոնք թվագրվել են ուշ անտիկից վաղ միջնադար շրջանով[17]:

Այսպիսով, հուշարձանի հետախուզական պեղումների արդյունքում ձեռքբերված սակավ նյութի հիման վրա կարող ենք նախնական եզրակացություն անել առ այն, որ ամրոց-դիտակետը վաղ միջնադարում, գուցե՝ ընդհուպ մինչ 9-րդ դ., վերահսկել է Դվին-Պարտավ ճանապարհի Սոթքի գծամասի այս հատվածը[18]:

Գտածոների թվագրությունը

Պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոների հիմնական մասը խեցեղեն նյութն է, որը գերազանցապես թվագրվում է 3–5-րդ դարերով: Կան նաև ուշ միջնադարով (14–15-րդ դդ.) թվագրվող բեկորներ[19]:

«Սոթք 11» հուշարձանը, որը ենթադրաբար Ս. Բարխուդարյանի նկարագրած և այդ ժամանակ պահեստի վերածված քարավանատունն է: Ուղղանկյուն հատակագծով և սրբատաշ-զանգվածեղ քարերով շարված կիսագետնափոր կառույցի շրջակայքում հայտնաբերվել են բազմաթիվ այլ օժանդակ կառույցների մնացորդներ, ճանապարհային ուղեցույցների նմանվող քարեր, ևն: Կատարվել է գլխավոր կառույցի նախնական չափագրում և վերգետնյա խեցեղենի հավաքում՝ հիմք նախապատրաստելով հետագա պեղումների և ավելի խորը հետազոտության համար: Ենթադրյալ քարավանատան վերաբերյալ մեր նախնական զեկուցումը տես Գրիգորյան 2016, 66–71:

16 Տես Ասատրյան 1981, 40–41; Սադոյան 1981, 44–45; Կիրակոսյան 2003, 67–68:

17 Արագածոտնի նյութի հետ Սոթք–1-ի ամրաշինության և խեցեղենի զուգահեռները տանելիս՝ օգտվել ենք նաև հետևյալ աշխատանքից՝ Միրիջանյան 2013, 47–63, 93–101:

18 Հայ-իտալական արշավախմբի հետազոտողները, հաշվի առնելով ամրոցի մոտ Ս. Եսայանի նկարագրած՝ ուրարտական ժամանակաշրջանի դամբանային գտածոները (տես սույն հոդվածի ծան. 8), ինչպես և՝ ամրոցի կառուցապատման տեխնիկան, ենթադրում են, որ ամրոցը համաժամանակյա է դամբարանին, ուստի վերգետնյա խեցեղեն բեկորները, նախնական տվյալներով, թվագրում են ուրարտական, հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններով [հմմտ. Biscione et al. 2002, 67–72]:

19 «Սոթք 1» ամրոցից հայտնաբերված խեցեբեկորների թվագրության վերաբերյալ մանրամասն տես Միրիջանյան, Գրիգորյան 2018, 85–100:

Սոթք–1-ի անտիկ ժամանակաշրջանից վաղ միջնադարին անցման փուլի խեցեղենը, պատմական Արագածոտն և Շիրակ գավառների համանման նյութի համեմատությամբ, առանձնանում է՝ խեցու բաղադրության մեջ վանակատի հատիկների քիչ քանակությամբ կամ նույնիսկ բացակայությամբ:

Սոթք–1-ի խեցեղենը բեկորային է. դրա գործառութային նշանակության մասին կարելի է խոսել միայն համեմատական նյութի հիման վրա: Ըստ տիպաբանության՝ խեցեղենը ներկայացված է կարասներով, սափորներով, կճուճներով և քրեղան-թասերով: Հուշարձանի պեղումներով հայտնաբերվել են նաև շրջանաձև հղկված խեցու բեկորներ՝ այսպես կոչված «խաղաքարեր», ինչպես նաև քարե ծանրոց, վանակատե մի քանի ցլեպներ ու ապակե անոթների բեկորներ:

Պեղումների արդյունքում պարզվեց, որ վաղմիջնադարյան ամրոցի անկումից հետո բլուրը վերածվել է գերեզմանատան: Թաղումներն իրականացվել են ինչպես բլրի վերնամասում, այնպես էլ պեղված պարիսպների հատվածում՝ զգալիորեն վնասելով վաղմիջնադարյան շերտերը: Կատարված ռադիոածխածնային անալիզի արդյունքներով՝ բացված թաղումները թվագրվել են 9-րդ դարով:

Հայտնաբերվել են նաև 14–15-րդ դարերով թվագրվող, կենցաղում լայնորեն օգտագործվող կճուճների բեկորներ: Այս ժամանակաշրջանին վերաբերող խեցեբեկորներով շերտը ցույց է տալիս, որ բլուրը բնակեցված է եղել նաև ուշ միջնադարում, սակայն առկա նյութի սակավության պայմաններում՝ առայժմ դժվար է խոսել այդ ժամանակաշրջանում բնակավայրի գործառութային նշանակության մասին:

Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամրակայման բարձր մակարդակ ունեցող Սոթք–1 ամրոց-դիտակետի կենսագործունեության հիմնական շրջափուլը համապատասխանում է Դվին-Պարտավ ճանապարհի գործունեության վաղմիջնադարյան ժամանակաշրջանին: Շնորհիվ հարմարավետ ռազմավարական դիրքի՝ կարծում ենք, որ վերջինիս գործառույթն ուղղակիորեն կապված պետք է լիներ առևտրական-քարավանային ճանապարհի Սոթքի գծամասի վերահսկողության հետ:

Սոթք–1 ամրոցի և տարածաշրջանի համաժամանակյա այլ հուշարձանների հետագա՝ ավելի լայնածավալ պեղումները հնարավորություն կտան առավել ճանաչելի դարձնելու միջնադարյան Սոթք գավառի անցյալի մշակույթը և լրացնելու Դվին-Պարտավ ճանապարհի այս հատվածին վերաբերող պատմական սկզբնաղբյուրների բացը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ՍԵԲԷՈՍ 1879
Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբն նորագիւտ Պատմութեան Մխիթարայ Անեցւոյ, ի լոյս ած Ք[էրովբէ] Պ[ատկանեան], Ս.Պետերբուրգ, Ի տպարանի կայսերական ճեմարանին գիտութեանց, 1879:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1973
Բարխուդարյան Ս.Գ. 1973, Գեղարքունիք (Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ) // Դիվան հայ վիմագրության, պրակ 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:

Ուսումնասիրություններ

ԱՍԱՏՐՅԱՆ 1981
Ասատրյան Ե.Ա., Կաթնաղբյուր բնակավայրի պեղումները // Հայկական ՍՍՀ-ում 1979–1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 40–41:

ԳԵՈՐԳՅԱՆ, ՋԱԼԻԲԵԿՅԱՆ 2007
Գևորգյան Ա.Ց., Ջալիբեկյան Մ.Ա., Հայաստանի ոսկու հանքավայրերը և դրանց շահագործումը հնում // Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ – մ.թ. XIV դար), խմբագիր՝ Ա.Ա.Քալանթարյան, Երևան, «Գիտություն», 2007, 15–31:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2016
Գրիգորյան Ա.Լ, Նոր հետազոտություններ Սոթքում և Ջաութիս կայան-քարավանատան տեղադրության խնդիրը // Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 12–13 դեկտեմբերի, 2016, Երևան, «Գիտություն», 2016, 66–71:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2017
Գրիգորյան Ա.Լ., Սոթքը ԺԸ–Ի դարերում. քրիստոնեական մշակութային լանդշաֆտը և նստակյաց դարձած Կովկասի մահմեդականները // Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը, Բ, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 7–8 դեկտեմբերի, 2017, Երևան, «Գիտություն», 2017, 73–78:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ 2012
Եղիազարյան Ա.Ս., Մետաքսի ճանապարհը և հայոց թագավորությունը IX դարի վերջին և X դարի սկզբին // Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ, Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի, 2011թ., Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար, 88, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ. 2012, 93–108:

ԵՍԱՅԱՆ 1979
Եսայան Ս.Ա., Ուրարտական գոտիով դամբարան Ջողում // Պատմա-բանասիրական հանդես, 1979, №3, 277–280:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 2003
Կիրակոսյան Լ.Վ., Արագածոտնի վաղմիջնադարյան ամրոց բնակատեղիների տիպաբանական վերլուծությունը // Արագածոտն. հոգևոր և մշակութային ժառանգություն, Գիտաժողովի հիմնադրույթներ, Օշական, Ս.Մեսրոպ Մաշտոց դպրատուն, 2003, 67–68:

ՄԱՆԱՆԴՅԱՆ 1936
Մանանդյան Հ.Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պլտինգերյան քարտեզի, Յերեվան, Գիտհրատի տպարան, 1936:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2013 (անտիպ)
Միրիջանյան Դ. Հ., Արագածոտնի վաղմիջնադարյան նյութական մշակույթը. թեկնածուական ատենախոսություն (ղեկավար՝ Ա. Ա. Քալանթարյան), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 2013:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2018
Միրիջանյան Դ. Հ, Գրիգորյան Ա. Լ., Միջնադարյան Սոթքը նորագույն հնագիտական հետազոտությունների լույսի ներքո // «Էջմիածին», 2018, №3, 85–100:

ՍԱԴՈՅԱՆ 1981
Սադոյան Բ. Լ., Հետախուզական պեղումներ Մաստարա գյուղի «Նախավկա» ամրոցում // Հայկական ՍՍՀ-ում 1979–1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 44–45:

BISCIONE et al. 2002
Biscione R., Hmayakyan S. G., Parmegiani N., Sayadyan Y., Description of the sites, The north-eastern frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake basin, I, The southern shores // Dacumenta Asiana, Roma, 2002, vol. VII, 61–249.

BOBOKHYAN et al. 2017
Bobokhyan A. A., Kunze R., Meliksetian Kh. B., Pernicka E., Society and Metal in Bronze Age Armenia // Subartu,, 2017, XXXVIII, 501–523.

YENGIBARYAN 2013
Yengibaryan N. G., The Urartian materials from Sodk // Studii de preistorie, Bucaresti, 2013, 10, 249–254.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Լ. Գրիգորյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Սոթք–1 ամրոցը և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի սոթքյան հատվածը

Հիմնաբառեր՝ հնագիտություն, Սոթքի տարածաշրջան, ամրոց, պաշտպանական համակարգ, առևտրային ճանապարհ, վաղ միջնադար:

Ռազմավարական կետում գտնվող Սոթք–1 հուշարձանի և նրա հնագիտական միջավայրի ուսումնասիրությունը կարևոր է հատկապես միջնադարյան Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի Սոթքի գծամասին վերաբերող մշակութային իրողությունները ճանաչելու համար: Հայաստանի վաղմիջնադարյան ամրաշինական համակարգերի հետ համեմատության և խեցեղեն նյութի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ամրոց-դիտակետի կենսագործունեության հիմնական շրջափուլը վերաբերում է 3–5-րդ դարերին, իսկ գործառույթը, հավանաբար, առնչվել է Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի Սոթքի գծամասի վերահսկողությանը: Սոթք–1 ամրոցի և տարածաշրջանի համաժամանակյա այլ հուշարձանների հետագա՝ ավելի ընդարձակ պեղումները հնարավորություն կտան առավել ճանաչելի դարձնելու միջնադարյան Սոթք գավառի անցյալի մշակույթը և լրացնելու Դվին-Պարտավ ճանապարհի այս հատվածին վերաբերող հնագիտական տեղեկատվությունը:

A. L. Grigoryan
Institute of Archaeology and Ethnography

Sotk section of the Dvin-Partav Trade Route

Keywords: archaeology, Sotk region, fortress, defense system, trade route, Early Middle Ages.

In 2014, the expedition of the Institute of Archaeology and Ethnography NAS RA carried out archaeological excavations at the fortress of Sotk-1. The present research aims to clarify the archaeological potential, dating and role of the site. The fortress was a significant strategic point along the Dvin-Partav trade route. The explorations and archaeological context of the site are very important for clarification the cultural relationships of the Sotk section in the system of Silk roads. The comparison with the other early medieval fortified sites and the analysis of the ceramic material lead to conclude that Sotk-1 actively functioned in the 3th-5th centuries AD to oversee the Sotk section along the trade route. The future excavations of Sotk-1 and other regional simultaneous archaeological sites will give an opportunity to accumulate scientific knowledge about the medieval province of Sotk and increase the archaeological information towards the Sotk section of Dvin-Partav trade route.

А. Л. Григорян
Институт археологии и этнографии

Соткский участок торгового пути Двин-Партав

Ключевые слова: археология, Соткский регион, крепость, защитная система, торговый путь, раннее средневековье.

Экспедицией Института археологии и этнографии НАН РА в 2014 году были проведены раскопки на территории крепости Сотк–1, расположенной в одноименном селе, с целью выяснения археологического потенциала, датировки и значения памятника. Исследования крепости, имевшей стратегически важное расположение, а также ее археологический контекст имеют огромную значимость в осмыслении культурных контактов Соткского участка средневекового торгового пути Двин-Партав. Сравнение памятника с современными ему фортификациями, а также анализ керамики позволили датировать основные этапы функционирования крепости III–V веками. Сторожевая крепость непосредственно контролировала участок важного торгового пути. Дальнейшие, более масштабные раскопки крепости Сотк–1 и современных ему памятников дадут возможность исследовать культурное наследие средневекового района Сотк и расширить археологические знания о Соткском участке торгового пути Двин-Партав.

Ասպղիկ Բաբաջանյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ

Քեթրին Ֆրանկլին, *մ.գ.թ.*
ԼԲՀ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ՝ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածի նպատակն է՝ ուսումնասիրել Վայոց ձորի մարզի միջնադարյան հնագիտական լանդշաֆտը Մետաքսի ճանապարհի մեծ համակարգում (12–15-րդ դդ.): Մեր խնդիրներից է՝ բացահայտել տեղական առօրյա կյանքի բնորոշ գծերն առավել գլոբալ նշանակության երևույթների համակարգում, մասնավորապես՝ փորձելով հասկանալ, թե հաղորդակցության ու փոխանակման միջնադարյան մշակույթն ինչպես էր ընկալվում տեղական համայնքներում, որոնք ապրում էին այդ ճանապարհի երկայնքով:

«Մետաքսի ճանապարհի հնագիտական հետազոտություն Վայոց ձորում» նախագիծն (այսուհետ՝ VDSRS) արդեն երեք տարի այս ուղղությամբ իրականացնում է համակարգված ուսումնասիրություն՝ հիմնվելով տեղազննության ու հնագիտական պեղումներով ստացված տվյալների, ինչպես և պատմական սկզբնաղբյուրների հետ դրանց համադրության վրա: Սույն հոդվածը ներկայացնում է 2015–2016 թթ. հետազոտության նախնական արդյունքները:

Հիմնաբառեր՝ Մետաքսի ճանապարհ, Հայաստան, Վայոց ձոր, հնագիտական լանդշաֆտ, միջնադար, նյութական մշակույթ:

Ներածություն

«Մետաքսի ճանապարհը» հաղորդակցության, առևտրի, ճաշակի ու լեզուների, մշակույթի, կրոնական և փիլիսոփայական գաղափարների փոխանակման ցամաքային այն միջանցքն է, որին լայնորեն ներգրավված էր Հայկական լեռնաշխարհը՝ ոչ միայն իբրև աշխարհագրորեն նպաստավոր տարածք, այլև սեփական հումքով, ապրանքատեսականիով և արտադրանքով հարուստ մի երկրամաս:

Միջնադարում Վայոց ձորում ստեղծված ճանապարհային ցանցը տեղական բնակավայրերը միացնում էր գլխավոր մայրուղիներին ու խոշոր քաղաքներին, ինչպիսիք էին Թավրիզը, Դվինը, Պարտավը, Թիֆլիսը: Մեր հետազոտության թիրախային տարածքը Արփա և Եղեգիս գետերի երկայնքով ձգվող միջպետական նշանակության ճանապարհն է: Այն Դվին-Պարտավ մայրուղու երկրորդ այլընտրանքային ուղեգիծն էր, որը Կոթում միանում էր Դվին-Բերդ-

կունքով և Սևանի հյուսիս-արևմտյան ափով եկող ճանապարհին, ապա Սևանի հարավ-արևելյան ափի երկայնքով շարունակվում դեպի Կաղանկատույք և Պարտավ[1]:

Այս ճանապարհը կենսական նշանակություն ուներ երկրամասի քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացների մեջ Վայոց ձորի գավառը ներգրավելու առումով, քանի որ այն բնութագրվում է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, ձորերի ու կիրճերի կտրուկ անցումներով, որոնք բնական պատնեշ են ստեղծում հարևան գավառների հետ՝ Վայոց ձորը դարձնելով աշխարհագրական մի ամբողջություն[2]:

Պատմական ընդհանուր ակնարկ

Վայոց ձորում մարդու գործունեության վերաբերյալ հնագիտական տվյալները սկսվում են էնեոլիթից՝ մ.թ.ա. 5–4-րդ հազարամյակներից[3] և հասնում մինչև Վանի թագավորության շրջան (մ.թ.ա. 9–6-րդ դդ.)[4]:

Եղեգիս և Արփա գետերի միախառնման վայրը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ. Վանի թագավորության օրոք, այնուհետև վաղ միջնադարում այդ տարածքում՝ անմատչելի լեռների կարևոր հանգույցներում, կառուցվում էին ամրոցներ, ստեղծվում էր բերդերի և ամրացված բնակավայրերի խիտ ցանց, որն ընդգրկում էր ներկայիս Գետափ-Եղեգնաձոր-Ագարակաձոր և վաղուց լքված Աղասափի բնակավայրի միջև ընկած հատվածները[5]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ 12–15-րդ դարերում, Վայոց ձորը հայտնի էր որպես հասարակական-քաղաքական շարժումների, տնտեսության ու մշակույթի զարգացած կենտրոն, որտեղ առաջնային դերակատարություն ունեին Պռոշյան և Օրբելյան իշխանական տները: Երբ 12-րդ դ. վերջին և 13-րդ դ. սկզբին հայ-վրացական միացյալ բանակը Զաքարյանների ղեկավարությամբ ազատագրեց Հայաստանի կենտրոնական, հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջանները, Վայոց ձորում ու Սյունիքում տեղի ունեցած մարտերին (1219/1220 թթ.) իրենց գործուն մասնակցության և ռազմական վաստակի շնորհիվ այստեղ հաստատվելով՝ իշխանական տներ հիմնեցին Վասակ Խաղբակյանն ու Լիպարիտ Օրբելյանը, իսկ Աղթամար Արփացին և Սյունյաց այլ ազնվականներ ամրապնդվեցին իրենց դիրքերում: Զաքարյանների ձեռնարկումների շնորհիվ՝ քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վերելքն, ընդհանուր առմամբ, շարունակվեց մինչև 14-րդ դարի կեսերը:

Օգտվելով Զաքարյանների հանդեպ մոնղոլների անվստահությունից[6]՝ 13-րդ դ. կեսին Օրբելյանները դուրս եկան Զաքարյանների ենթակայությունից և Սյունիքում ստեղծեցին ներքին ինքնավար վիճակ՝ ստանալով «ինջուական»

1 Манандян 1954, 242; տես նաև Ժամկոչյան 2005, 39–46; Փուրմոհամմադի 2012, 64–74:
2 Սարգսյան, Խաչատրյան 1980, 7:
3 Գասպարյան 2014, 185–186; Wilkinson et al. 2012, 20–33; Barnard et al. 2011, 977–984.
4 Melkonyan et al. 2010; 2017; հմմտ. Hammer 2014; Earley-Spadoni 2015.
5 Մելքոնյան 2003, 222:
6 Շահնազարյան 2014, 291–296:

իրավունք[7], որն ապահովեց տնտեսական համեմատաբար կայուն վիճակ և բավարար զարգացում: Մոնղոլ խաների ու կառավարիչների շրջանում Օրբելյանների ձեռք բերած հեղինակությունը նպաստեց Սյունյաց իշխանապետության ռազմատնտեսական հզորության ամրապնդմանը:

Ենթակառուցվածքների զարգացումը Օրբելյանների օրոք

Տարածաշրջանում տնտեսության ու առևտրի զարգացումը խթանելու համար Օրբելյանները՝ հատկապես Սմբատն (1253–1273) ու Տարսայիճը (1273–1290), հատուկ ուշադրություն էին դարձնում ճանապարհների ու ենթակառուցվածքային համակարգի ստեղծմանը՝ վերանորոգելով ու բարեկարգելով վանքերն, ամրոցներն ու բնակավայրերը, կառուցելով բազմաթիվ քարավանատներ, հյուրատներ, կամուրջներ: Վանքերին կից գործող հյուրատների մասին է վկայում մի ընդարձակ արձանագրություն, ուր խոսվում է Նորավանքի պարիսպներից դուրս գտնվող հյուրատանը գյուղեր, ջրաղաց ու այգիներ նվիրելու մասին[8]:

Օրբելյանների քաղաքականության շնորհիվ՝ Վայոց ձորով ու Սյունիքով անցնող ճանապարհները բավական բանուկ էին ու ապահով: Ենթակառուցվածքային համակարգի հանդեպ հատուկ ուշադրությունը պայմանավորված էր մոնղոլական պետական քաղաքականությամբ: Քանի որ քարավանային առևտուրը մոնղոլական կայսրությունում վերահսկվում ու հովանավորվում էր անմիջապես պետության կողմից[9], Օրբելյանները նույնպես ներգրավվեցին այդ համակարգում, որը բխում էր նաև իրենց շահերից: Երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ ձևավորելով իրենց հարկային համակարգը՝ մոնղոլները հատուկ հարկ (*ուլուֆե*) էին սահմանել՝ մոնղոլական պաշտոնյաների կարիքները բավարարելու և նրանց երթևեկությունն ապահովելու համար: Այդ պատճառով ստեղծվում էին հատուկ փոստային կայաններ՝ արագ հաղորդակցության և երթևեկող պաշտոնյաներին սննդով ու փոխադրամիջոցով ապահովելու համար[10]:

Հետազոտություն VDSRS նախագծի շրջանակում

Վայոց ձորում մինչև վերջերս չէին իրականացվել պարբերական հնագիտական հետազոտություններ՝ միջնադարյան լանդշաֆտի վերականգնման ուղղությամբ: 2015–2016 թթ. մեր հետազոտությունը փաստագրեց (հատկապես այցելած բոլոր հուշարձաններից հավաքած վերգետնյա խեցեղենի տվյալներով՝ համալրված Արփա միջնադարյան բնակավայրի պեղումների նյութով), որ Վայոց ձորն, իբրև տեղական աշխարհ, լայնորեն ներգրավված է եղել Մետաքսի մեծ ճանապարհի համակարգում:

---

7 Սյունիքը վասալական կախման մեջ էր անմիջապես մոնղոլական մեծ խանից և չէր ենթարկվում տեղական մոնղոլ կառավարիչներին, Ջաքարյաններին կամ Վրաց արքունիքին

8 Բարխուդարյան 1967, 246:

9 Якубовский 1931, 2–3.

10 Մարգարյան 2014, 284:

VDSRS-ի առաջնային նպատակներից է՝ Վայոց ձորի միջնադարյան հնագիտական լանդշաֆտի քարտեզագրումը[11], որն իրականացվում է ոչ միայն հուշարձանների ճշգրիտ կոորդինատները փաստագրելով, այլև տվյալների համակարգված շտեմարան է ստեղծվում՝ տեղազննությամբ հավաքված վերգետնյա հնագիտական նյութի, պեղումներով ստացված տվյալների, մատենագիր[12], վիմագիր[13], ազգագրական[14] և ուղեգրական[15] աղբյուրների համահավաք հետազոտությամբ[16]: Սա կարևորվում է ոչ միայն հնագիտական լանդշաֆտի վերակազմության, այլև տեղի բնակչության առօրյա կյանքի տարբեր կողմերը հասկանալու համար: Վերջինս ավելի պարզորոշ բացահայտվում է միջնադարյան Արփա գյուղի պեղումներով:

Աղյուսակ 1. *2015–2016 թթ. փաստագրված հնավայրերի ցանկ*[17]

Հ/Հ	Հնավայրի անունը	Հ/Հ	Հնավայրի անունը
1	Ագարակաձոր. գերեզմանոց	20	Տխարբ (Հին Ամաղու). գյուղատեղի
2	Ագարակաձոր. եկեղեցի	21	Ոստինք. բնակավայր
3	Աղավնաձոր. Քարվանսարա տեղավայր	22	Հրասեկաբերդ
4	Աղվանք. վանական համալիր	23	Ձրով վանք
5	Անապատ. բնակավայր	24	Խաչի թիլ. խաչքար
6	Արփա. կամուրջ	25	Հոբկախաչ. մատուռ
7	Բերդաքար. ամրոց-բնակավայր	26	Գետափ.բնակատեղի, մատուռ
8	Բոլորաբերդ. գյուղատեղի	27	Միրաշ/Պտրհան. բնակատեղի
9	Զուբուկ քյորփի. կամուրջ և խաչքարեր	28	Գանձակ. գերեզմանոց (նոր)
10	Ծատուրի կամուրջ	29	Նոր Ամաղու. բնակատեղի
11	Ռինդ. Ճգնավորի խաչ մատուռ	30	Նորավանք. Ս. Փոկաս մատուռ
12	Զոիվանք. մատուռ	31	Ապանա. բնակատեղի
13	Հորբատեղ. եկեղեցի՝ մելիորացված դաշտում	32	Խաչիկ. Ս. Աստվածածին եկեղեցի
14	Դաղալի կամուրջ	33	Արենի. Ս. Սարգիս մատուռ
15	Էրդեչ. ամրոց-բնակավայր	34	Ագարակաձոր. գյուղատեղի
16	Գանձակ. եկեղեցի	35	Շատիվանք
17	Գետափ–1. ամրոց	36	Վերին Ուլգյուր. Ս. Ստեփանոս եկեղեցի
18	Ղշլաղ. եկեղեցի	37	Ծծախաչ
19	Գնիշիկ. եկեղեցի	38	Վանքի ձոր. Ս. Աստվածածին եկեղեցի

11 Տես հնավայրերի ցանկով, կոորդինատներով և նկարագրական տեղեկատվությամբ մանրամասն շտեմարանն՝ առցանց քարտեզի տեսքով, տեղադրված Հարվարդի համալսարանի WorldMap platform-ի բաց աղբյուր համակարգում՝ https://worldmap.harvard.edu/maps/VDSRS:

12 Տես Օրբէլեան 1910:

13 Տես Բարխուդարյան 1967:

14 Տես Լալայան 1904:

15 Տես Ջալալյանց, 2016, 329–404; Քաջբերունի 2003:

16 VDSRS-ի մեթոդների և արդյունքների վերաբերյալ մանրամասն տես Franklin, Babajanyan 2018, 134–141:

17 VDSRS-ը փաստագրել է ժամանակագրական ավելի լայն ընդգրկումով հուշարձաններ, սակայն ցանկում ներկայացված են մեծ մասամբ 12–15-րդ դդ. հնավայրերը:

2015–2016 թթ. VDSRS-ն արձանագրել է Չիվա-Արենի-Աղավնաձոր-Արփի-Ագարակաձոր-Գետափ-Շատին ուղղության միջնադարյան բնակավայրերն ու ճարտարապետական կառույցները (ամրոցներ, վանքեր, կամուրջներ, քարավանատներ), որոնք զարգացած միջնադարում ճանապարհի աշխույժ գործունեության խոսուն վկայությունն են [աղ. 1, նկ. 1, էջ 238]: Արդեն երկու տարվա տեղազննությամբ հավաքված տվյալների ուսումնասիրությամբ հստակ ուրվագծվում են այն հնավայրերը, որոնք աշխուժորեն կենսագործել են վայոցձորյան ճանապարհի հետագծին, իսկ որոշներն էլ, ուղղակիորեն այդ հետագծին չլինելով, ներգրավված են եղել «Մետաքսի ճանապարհային մշակույթ» հասկացությանը: Վերջիններս, Վայոց ձորի հովտային և լեռնային շրջաններում տեղակայված լինելով, ձևավորել են տեղական նշանակության ճանապարհացանցի հանգույցները:

VDSRS-ի նպատակներից առանցքայինը՝ տեղազննությանը զուգահեռ՝ ճանապարհի հետագծին տեղակայված բնակավայրերի հնագիտական ուսումնասիրությունն է պեղումների միջոցով, ինչն ավելի ամբողջական է դարձնում տեղական կյանքի և արտաքին կապերի մասին պատկերացումները: Այս առումով կարևոր նշանակություն ունեցան միջնադարյան Արփա գյուղի պեղումները:

Արփա գյուղը՝ ճանապարհների խաչմերուկում

Արփայի ավերակները գտնվում են ներկայիս Արենի գյուղից 0.5 կմ հյուսիս-արևելք գտնվող բարձրավանդակի վրա՝ հարավում բարձրացող պարսպանման ժայռերի և արևմուտքից հոսող գետի միջև: Հին գյուղում կանգուն են մնացել միայն բարձրավանդակի հյուսիս-արևմտյան եզրին գտնվող՝ Մոմիկ ճարտարապետի կառուցած Ս. Աստվածածին եկեղեցին (1321 թ.), որի շուրջ տարածված է գերեզմանոցը՝ բազմաթիվ խաչքարերով ու տապանաքարերով:

Արփա գյուղը Վայոց ձորի համար ռազմավարական կարևոր հանգույց էր՝ թե՛ որպես քարավանային ճանապարհի հանգուցակետ, թե՛ որպես ռազմական հենակետ, որը փակում էր Շարուրի դաշտից Վայոց ձոր մտնող կիրճը: Հնագույն ժամանակներից՝ Արփա գետի ձախ ափով անցնող ճանապարհը Արաքսի հովտից հասնում էր մինչև Արփա գյուղ, այնուհետև տեղանքի թելադրանքով՝ անցնում Արփա գետի աջ ափը և այստեղ երկատվում՝ մի ճյուղով շարունակվելով մինչև Սևանի ավազան, մյուսով՝ դեպի Սյունիք:

Ճանապարհի գետանցումն ապահովելու համար 13-րդ դ. վերջին՝ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը (1265–1287), Տարսայիճ Օրբելյանի հրամանով, կառուցել է լայնաթռիչք՝ չորս կամարներով կամուրջը, որի մասին վկայում է Ստեփանոս Օրբելյանը[18]: Ցավոք, պատմիչի՝ մանրամասնորեն նկարագրած հոյակերտ այս կամրջից պահպանվել է միայն մի խելը:

[18] «*Այս Տէր Սարգիս, որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ ի Նորավանս, ևս առաւէլ արար գործ մի երևելի, զի ի գիւղն Աուփայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի փաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճին, որոյ վարձատրեսցէ Քրիստոս հազարապատիկ*» [Օրբէլեան 1910, 429–430]:

Մինչև 12-րդ դ. Արփայի վերաբերյալ հիշատակությունները պատմական աղբյուրներում սակավ են (Եղիշե[19], Սեբեոս[20]), այնուհետ Արփայի և Վայոց ձորի մասին բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում Ստեփանոս Օրբելյանը: Դրանք գլխավորապես առնչվում են Օրբելյան իշխանական տանը, թեև գյուղում ապրում էին նաև *Միսթամարյան*, *Մահևանյան*, *Ջուրջյան* տոհմերի ներկայացուցիչներ[21]: Արփան մեծ տնտեսություն, բազմաթիվ այգիներ է ունեցել, որոնց մասին վկայություններ կան բազմաթիվ վիմագրերում[22]:

13-րդ դ. վերջին քառորդից մինչև 14-րդ դ. առաջին քառորդը Արփան կարճ ժամանակով (գուցե կես դար) դարձել էր Օրբելյանների նստավայրը[23], որտեղ Տարսայիճ Օրբելյանը կառուցեց իր ապարանքը և այստեղ էլ մահացավ. «*Իսկ քրիստոսասէր եւ ամենաօրհնեալ իշխանաց իշխանն Տարսայիճ, յետ բազում բարեպաշտութեանց եւ երեւելի գործոց, լցեալ զկէտ կենաց իւրոց՝ վախճանի յիւրում դարապասին յԱրփայ. եւ տարեալ ի Նորավանս մեծ աշխարհաժողով հանդիսիւ դնի ընդ եղբօր իւրում Սմբատայ՝ յիւրում ձեռակերտ դամբարանին, ի թուականին 739* [=1290 թ.]»[24]:

Քաջբերունին 19-րդ դարում ձիթհանի և բազմաթիվ տների ավերակների հետ միասին հիշատակում է Տարսայիճ Օրբելյանի ապարանքի ավերակները, որի քարերը, սակայն, նույն դարի վերջին և 20-րդ դարի սկզբին արդեն օգտագործվել են Արենիի հին թաղամասի տները կառուցելիս[25]: Բնակությունն այստեղ շարունակվել է հավանաբար մինչև 17-րդ դարի սկիզբ, երբ Շահ Աբասի բռնագաղթի հետևանքով հայաթափվեց նաև Արփան: Տեղացիների հաղորդմամբ՝ բնակավայրը վերջնականապես լքվել է 18-րդ դարում, երբ երկրաշարժի հետևանքով փակվեց գյուղ մտնող ջրի աղբյուրը, իսկ հին արփացիները տեղափոխվեցին ներկայիս Արենի գյուղի հարավ-արևմտյան հատվածը:

Արփա գյուղի պեղումները

Միջնադարյան Արփա գյուղատեղիի տարածքում ժամանակակից Արենիի ընդլայնվող գերեզմանոցի և հարավային կողմի ժայռերից հոսող սողանքների հետևանքով ներկայումս էապես խաթարվել է բնակավայրի շերտագրական պատկերը, թեև որոշ տեղերում լավ տեսանելի են միջնադարյան տների ավերակները[26]:

---

19 Ի թիվս այլ ամրոցների ու բնակավայրերի՝ Եղիշեն հիշատակում է Արփանեալը [Եղիշէ 1892, 64], որն ուսումնասիրողները նույնացնում են Արփայի հետ [տե՛ս Սարգսյան, Խաչատրյան 1980, 13]:

20 Պատմիչը հիշատակում է Արփայի բերդը՝ Վահևունյաց տեր Թեոդորոսի կողմից գրավելու առիթով [Սեբէոս 1913, 226–227]:

21 Օրբէլեան 1910, 367–368; Բարխուդարյան 1967, 220, 223, 242, 246.

22 Բարխուդարյան 1967, 223, 246:

23 Նստավայրը Օրբելյանները կրկին տեղափոխում են Եղեգիս՝ հավանաբար 1321 թ. տեղի ունեցած երկրաշարժից հետո [տե՛ս Բարխուդարյան 1967, 29]:

24 Օրբէլեան 1910, 430:

25 Քաջբերունի 2003, 90–99:

26 Արփա գյուղի պեղումների և հնագիտական նյութի մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս Babajanyan, Franklin 2018, 154–182:

Գյուղատեղիի շերտագրությունը և ժամանակագրությունը պարզելու համար՝ 2016-ին բնակավայրի տարբեր հատվածներում պեղվեց 5×5 մ չորս խուզահոր: Բացվեցին բնակելի հատվածներ, որոնք հիմնականում թվագրվում են 13-րդ դարի կեսից մինչև 14-րդ դ. [նկ. 2, էջ 239]: Դրանք տեղական անմշակ քարով և դեղնավուն կավե սվաղով ծածկված պատեր ունեցող տների մնացորդներ են. պատերի շարվածքում հանդիպում են կապույտ բազալտե սրբատաշ քարեր, սյան խարիսխներ, որոնք վերօգտագործվել են նախկինում գոյություն ունեցած շենքերի փլուզումից հետո[27]:

Բնակարանային համալիրները կառուցված են եղել տեղանքին համապատասխան՝ աստիճանաձև դարավանդների վրա, որոնք ստեղծվում էին հենապատերի միջոցով՝ միաժամանակ ամրություն հաղորդելով սեյսմիկ գոտում գտնվող կառույցներին: Տների պարզ ներսույթը ներկայացված է թոնիրներով, օջախներով, տնտեսական հորերով ու պեղված քառակուսիներից մեկում (AS4) հայտնաբերված կավակերտ կառույցով՝ նախատեսված խմորի մշակման համար[28] [նկ. 2բ, էջ 239]:

Պեղումներով հայտնաբերված ամենամեծաքանակ նյութը՝ խեցեղեն գտածոներն են, որոնք լայն ընդգրկմամբ թվագրվում են 12 դարավերջից մինչև 15 դարասկիզբ[29]: Դրանք տնտեսական և կենցաղային տարատեսակ անոթներ են՝ նախատեսված մթերքի պահպանման և վերամշակման համար, խոհանոցային ամանեղեն, ինչպես նաև սեղանի առօրյա սպասք և լուսավորության միջոցներ: Վերջիններս ներկայացված են անջնարակ և ջնարակապատ խմբերով:

Արփայի և Վայոց ձորի բոլոր համաժամանակյա հնավայրերի խեցեղեն հավաքածուներում առանձնանում է կարմրափայլ խեցեղենի մի խումբ, որը թրծման հատուկ տեխնոլոգիայով և վառ կարմիր, փայլեցումով մշակված մակերեսով հիշեցնում է ուրարտական կարմրափայլ խեցեղենը[30]: Խեցեղենի այդ խումբը գերակշռող է 2015–2016 թթ. տեղազննության ընթացքում ուսումնասիրած բնակավայրերում (Չիվա, Միրաշ, Գետափ, Անապատ, Ոստինք), ամրոցներում (Հրասեկաբերդ, Էրդեչ, Բերդաքար) ու վանքերում (Աղվանք, Շատիվանք) [նկ. 3, էջ 240]: Թեև կարմրափայլ խեցեղենը տարածված էր Հայաստանի միջնադարյան հուշարձաններում, սակայն քանակական և որակական առումներով վայոցձորյան խումբն առանձնանում է դրանցից[31]:

---

27 Սրբատաշ քարերով կոթողային շենքերը հավանաբար կործանվել են 1321 թ. երկրաշարժի ժամանակ. դրանք գուցե պատկանել են Արփայում ապրող ազնվականներին:

28 Բուսաբանական մնացորդները թույլ կտան առավել որոշակի պատկերացում կազմել նման կառույցների գործառնական նշանակության մասին: Այդ նմուշների անալիզները դեռևս ընթացքում են. իրականացվում են Օհայոյի պետական համալսարանի լաբորատորիայում:

29 Խեցեղեն հավաքածուում նկատվում են ինչպես 12–13-րդ դդ. ավանդույթները շարունակող, այնպես էլ 14-րդ դարավերջին և 15-րդ դարասկզբին բնորոշ բեկորներ («կապույտ և սպիտակ» տիպի կամ *թեմուրյան* խեցեղեն), որոնք առավել արտահայտված երևում են ջնարակապատ խեցեղենում: Սա ենթադրել է տալիս, սակայն, ընդհանուր բնակավայրի, այլ ոչ թե մեր պեղած հատվածների բնակեցման երկարատև գոյությունը [տես Babajanyan, Franklin 2018, 161–164, 178–182]:

30 Արփայում պեղված խեցեղենի մասին տես Babajanyan, Franklin 2018, 163, 181.

31 Վայոցձորյան կարմրափայլ խեցեղենի մանրամասն ուսումնասիրությունը նախատեսում ենք իրականացնել առաջիկայում:

Արփայի պեղումներով հայտնաբերված և վայոցձորյան այլ հնավայրերից հավաքված՝ ջնարակած խեցեղենը մեծ մասամբ ներկայանում է անգոբի վրա միագույն կամ բազմագույն ենթաջնարակային նկարազարդումով և անգույն ու գունավոր, բայց թափանցիկ ու ողորկ ջնարակով պատած թասերի տեսականիով, որը հիմնականում թվագրվում է 13–14-րդ դարերով [նկ. 4, էջ 240]: Ջնարակած խեցեղենի մեջ հանդիպում ենք նաև ներմուծված օրինակների, որոնք առևտրա-տնտեսական ու մշակութային կապերի արդյունք են:

Ամփոփում

2015–2016 թթ. «Մետաքսի ճանապարհի հնագիտական հետազոտություն Վայոց ձորում» նախագծի տեղազննության և հավաքված նյութի (գերազանցապես խեցեղենի) ուսումնասիրության, նաև Արփայի պեղումների արդյունքների և Վայոց ձորի վերաբերյալ պատմական սկզբնաղբյուրների համադրումը ցույց է տալիս, որ միջնադարում լեռնային ու հովտային շրջաններում գտնվող բնակավայրերը մեկուսացած չէին և ճանապարհներով կապվում էին իրար:

Վայոց ձորի միջնադարյան հնագիտական ժառանգության ուսումնասիրությունը արդիական է ներկայումս տարածաշրջանում ներդրումային ծրագրերի ու հատկապես զբոսաշրջային տնտեսության զարգացման համար[32]: Ենթակառուցվածքների նկատմամբ պետական և մասնավոր հովանավորությունը, որ կարևորվում էր միջնադարում, ներկայումս նույնպես շարունակվում է՝ տարածաշրջանն ինտեգրելով «Նոր մետաքսի ճանապարհի» համակարգում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967
Բարխուդարյան Ս.Գ., Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ // Դիվան հայ վիմագրության, պրակ 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

ԵՂԻՇԷ 1892
Եղիշէի պատմութիւն Վարդանանց ըստ Անձևացեաց օրինակի, ծանօթութիւններով և հայ-ռուսերէն բառագրքով ի լոյս ընծայեց ուսուցիչ Լազարեան ճեմարանի արևելեան լեզուայ Խ. Յովհաննիսեանց, Մոսկուա, Տպարան Մկրտիչ Բարխուդարեանի, 1892:

ՍԵԲԷՈՍ 1913
Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, Էլէկտրատպ. Օր. Ն. Աղանեանի, 1913:

ՕՐԲԷԼԵԱՆ 1910
Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ. Օր. Ն. Աղանեանցի, 1910:

32 World Bank 2015.

Ուսումնասիրություններ

ԳԱՍՊԱՐՅԱՆ 2014
Գասպարյան Բ.Զ., Արենի–1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները // «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» Հայագիտական միջազգային 2-րդ համաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն», 2014, 183–187:

ԺԱՄԿՈՉՅԱՆ 2005
Ժամկոչյան Ա.Ս., Դվին-Պարտավ ճանապարհը վաղ միջնադարում (5–9-րդ դդ.) // «Էջմիածին», 2005, №12, 39–46:

ԼԱԼԱՅԱՆ 1904
Լալայան Ե.Ա., Շարուր-Դարալագյազի գավառ // Ազգագրական հանդես, պրակ 12, Թիֆլիս, 1904, 235–293:

ՄԱՐԳԱՐՅԱՆ 2014
Մարգարյան Հ.Գ., Մոնղոլների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և դրա հետևանքները // Հայոց պատմություն. Հայաստանը զարգացած միջնադարում (4-րդ դարի կես–17-րդ դարի առաջին կես), հ.2, գիրք 2, Երևան, «Զանգակ», 2014, 281–285:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2003
Մելքոնյան Հ.Ա., Ետավարայրյան իրադարձությունները Վայոց ձորում. Մի զորաջոկատի նահանջի ուղին // Ավարայրի խորհուրդը, Երևան, «Մուղնի», 2003, 221–224:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ 2014
Շահնազարյան Ա.Ի., Հայաստանը մոնղոլական կուսակալության շրջանում, // Հայոց պատմություն. Հայաստանը զարգացած միջնադարում (4-րդ դարի կես–17-րդ դարի առաջին կես), հ.2, գիրք 2, Երևան, «Զանգակ», 2014, 285–297:

ՋԱԼԱԼՅԱՆՑ 2016
Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Երևան, «ԴԱԼԼ», 2016 (վերահրատարակված և թարգմանված՝ Ջալալեանց Ս.Արք., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858):

ՍԱՐԳՍՅԱՆ, ԽԱՉԱՏՐՅԱՆ 1980
Սարգսյան Գ.Մ., Խաչատրյան Ա.Օ., Վայոց ձոր (Պատմահայրենագիտական ուրվագիծ), Երևան, «Հայաստան», 1980:

ՓՈՒՐՄՈՀԱՄՄԱԴԻ 2012
Փուրմոհամմադի Փ., Հայաստանի առևտրամշակութային հարաբերությունների պատմությունից (ԺԳ.–ԺԴ. դդ.) // «Էջմիածին», 2012, №8, 64–74:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ 2003
Քաջբերունի (Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան), Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, «Մուղնի», 2003 (վերահրատարակված 19-րդ դ. մամուլից):

МАНАНДЯН 1954
Манандян А.Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (5 в. до н. э. – 15 в. н. э.), Ереван, Изд. ЕУ, 1954.

ЯКУБОВСКИЙ 1931
Якубовский А.Ю., К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая-Берке // Известия Государственной Академии Истории материальной культуры, 1931, т.8, №2-3, 1-48.

BABAJANYAN, FRANKLIN 2018
Babajanyan A.A., Franklin K.J., Everyday life on the medieval Silk road: VDSRS ex-

cavations at Arpa, Armenia // «Aramazd» Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan-Oxford, 2018, vol. 12/1, 154–182.

BARNARD et al. 2011
Barnard H., Dooley A. N., Areshian G. E., Gasparyan B. Z., Faull K. F., Chemical evidence for wine production around 4000 BCE in the late Chalcolithic Near Eastern highlands // Journal of Archaeological Sciences, 2011, № 38, 977–984.

EARLEY-SPADONI 2015
Earley-Spadoni T. C., Landscapes of warfare: Intervisibility analysis of Early Iron and Urartian fire beacon stations (Armenia) // Journal of Archaeological Science, 2015, Reports 3, 22–30.

FRANKLIN, BABAJANYAN 2018
Franklin K. J., Babajanyan A. A., Approaching landscapes of infrastructure: Methods and results of the Vayots Dzor Silk Road Survey // Landscape Archaeology in Southern Caucasia: Finding Common Ground in Diverse Environments (eds. W. Anderson et al.) // OREA, 8, Vienna, 2018, 131–143.

HAMMER 2014
Hammer E., Highland fortress-polities and their settlement systems in the southern Caucasus // Antiquity, 2014, № 88, 757–774.

MELKONYAN et al. 2010
Melkonyan H. A., Karapetyan I. A., Yengibaryan N. G., The excavations of the newly found Urartian fortress in Getap // «Aramazd» Armenian Journal of Near Eastern Studies, 2010, vol. 5. 2, 90–98, 305–315.

MELKONYAN et al. 2017
Melkonyan H. A., Karapetyan I. A., Margaryan H. Z., Main results of the excavations at the fortress of Getap in 2009–2014, // Bridging times and spaces, Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies, honouring Gregory E. Areshian on the occasion of his sixty-fifth birthday, (ed. P.S. Avetisyan, Y.H. Grekyan), Oxford, Archaeopress publishing LTD, 2017, 307–320.

WILKINSON et al. 2012
Wilkinson K. N., Gasparyan B. Z., Pinhasi R., Avetisyan P. S., Hovsepyan R. A., Zardaryan D. E., Areshyan G. E., Bar-Oz G., Smith A., Areni–1 Cave, Armenia: A Chalcolithic-Early Bronze Age settlement and ritual site in the southern Caucasus // Journal of Field Archaeology, 2012, vol. 37, № 1, 20–33.

WORLD BANK 2015
World Bank, Armenia – South corridor tourism development strategy (Armenian), Washington, D.C. : World Bank Group. 2015. http://documents.worldbank.org/curated/en/871171468000295118/Armenia-South-corridor-tourism-development-strategy.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Ա. Բաբաջանյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Քեթրին Ֆրանկլին
Լոնդոնի Բիրբեք համալսարան

Միջնադարյան մշակութային լանդշաֆտը Վայոց ձորում՝ Մետաքսի ճանապարհի համակարգում

Հիմնաբառեր՝ Մետաքսի ճանապարհ, Հայաստան, Վայոց ձոր, հնագիտական լանդշաֆտ, միջնադար, նյութական մշակույթ:

Վայոց ձորի մարզի միջնադարյան մշակութային լանդշաֆտը դիտարկելով Մետաքսի ճանապարհի երևույթով ձևավորված նյութական ու մշակութային փոխանակությունների համատեքստում՝ ցույց է տրվում, որ միջնադարում (հատկապես 13–14-րդ դդ.) Արփա և Եղեգիս գետերի երկայնքով ձգվող մայրուղու շուրջ ձևավորվել էր խիտ ճանապարհացանց, որը տեղական բնակավայրերը միացնում էր խոշոր քաղաքներին և գլխավոր երթուղիներին: Ի լրումն տեղազննության և գրավոր սկզբնաղբյուրների ու նյութական մշակույթի տվյալների հետ դրա համադրման՝ իրականացրել ենք նաև Արփա գյուղատեղիի պեղումները, ուր բացված բնակելի համալիրները ներկայացնում են տեղական առօրյա կյանքի տարբեր կողմերը: Տեղազննությամբ և պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութը (հիմնականում խեցեղեն գտածոներ) թվագրվում է 12–15-րդ դարերով և մեծ մասամբ տեղական արտադրության է, թեև ջնարակապատ խեցեղենում հանդիպում են նաև ներմուծված օրինակներ: Դա ևս վկայում է, որ Վայոց ձորը ներգրավված է եղել Մետաքսի ճանապարհի միջոցով իրականացվող առևտրատնտեսական և մշակութային փոխհարաբերություններին:

Astghik Babajanyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography, NAS RA
Kathryn Franklin, *PhD in Anthropology*
Birkbeck University of London

Medieval cultural landscape in Vayots Dzor within the context of the Silk Road

Keywords: Armenia, Vayots Dzor region, archaeological landscape, Middle Ages, material culture.

This paper discusses preliminary works of Vayots Dzor Silk Road Survey (VDSRS) project revisiting the medieval archaeological landscape in Vayots Dzor region, which was actively integrated into the material and cultural exchanges, formed by Silk Road phenomenon. During the medieval period (especially in the 13th –14th centuries AD), the routes which run along the Arpa and Yeghegis Rivers, formed part of the wider network of roads, connecting local towns and settlements to the cities such as Dvin, Partav, Tbilisi and Tabriz, and the coasts of the Black and Caspian Seas. The VDSRS is also focused on the study of the everyday life in the local communities which lived along the route and questioned how local people were linked with external world.

The VDSRS is based on targeted survey and archaeological excavations of the medieval sites of the 12th-15th centuries, combining historical archaeological methods, including epigraphy and materials detailed analysis. In the 2015-2016 seasons we recorded multifarious sites (settlements, fortresses, caravanserais, bridges, monastic complexes, chapels, khachkars (i.e. cross-stones), cemeteries), mak-

ing up a database with their precise coordinates and descriptions, which is displayed as a map hosted on WorldMap platform by Harvard University.

The survey data was complemented by the excavations at the medieval settlement of Arpa (located to the 0.5 km to the north-east of the contemporary village of Areni) where living contexts were uncovered, demonstrating different aspects of daily life. Archaeological material collected on survey and through excavations at Arpa closely corresponds to late 12th to the beginning of the 15th centuries. The ceramic material is characterized predominantly as a local production; however, we can distinguish imported wares in the glazed pottery. This corroborates the wider arguments that Vayots Dzor region was integrated in the trade-economic and cultural interconnections created by the phenomenon of the Silk Road.

Астхик Бабаджанян, *к.и.н.*
Институт археологии и этнографии, НАН РА
Кэтрин Франклин, *кандидат антропологии*
Лондон, Биркбекский университет

Средневековый культурный ландшафт в Вайоц Дзоре в контексте Шелкового пути

Ключевые слова: Армения, Вайоцдзорская область, археологический ландшафт, средневековье, материальная культура.

В статье обсуждаются предварительные работы в рамках проекта *Исследование Шелкового пути в Вайоц дзоре* (VDSRS), при этом средневековый археологический ландшафт в Вайоцдзорской области рассматривается в контексте процессов материального и культурного обмена, обусловленного Шелковым путем. В средневековый период (особенно в XIII–XIV веках) маршруты, проходившие вдоль рек Арпа и Ехегис, составляли часть более широкой сети дорог и связывали местные поселения с такими большими городами, как Двин, Партав, Тебриз, Тбилиси, а также побережья Черного и Каспийского морей. VDSRS сосредоточен также на изучении повседневной жизни местных общин, живших вдоль дорог, и их связей с внешним миром.

Работы VDSRS основаны на целевых обследованиях и археологических раскопках средневековых памятников XII–XV вв., а также на сочетании исторических археологических методов, включая эпиграфику и подробный анализ материалов. В 2015–2016 гг. нами были зарегистрированы различные памятники (поселения, крепости, караван-сараи, мосты, монастырские комплексы, часовни, хачкары (т.е. крест-камни), кладбища), была составлена база данных с точными координатами и справочной информацией, которая отображена в виде карты, размещенной на платформе WorldMap Гарвардского университета.

Данные археологических обследований дополняются результатами раскопок в средневековом поселении Арпа (0,5 км к северо-востоку от современной деревни Арени), где были выявлены жилые комплексы, демонстрирующие разнообразные аспекты повседневной жизни. Керамический материал, найденный в результате археологических исследований при раскопках в Арпе, соответствует концу XII – началу XV вв. Керамика в основном местного производства, однако среди изделий из глазурированной керамики имеются также образцы не местной продукции. Последнее является свидетельством того, что Вайоцдзорская область благодаря Шелковому пути была вовлечена в торгово-экономические и культурные контакты.

Արսեն Մարտիրոսյան
ՀԱԻ

ԴԱՇՏԱԴԵՄԻ ԱՄՐՈՑԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԱՐԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՇՈՒՐՋ

2015 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ պ. գ. թ. Հ. Ա. Մելքոնյան) պեղումներ իրականացրեց ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղի տարածքում գտնվող ամրոցի շրջակայքում[1]*: Պեղումների արդյունքում, ի թիվս այլ գտածոների, հայտնաբերվեցին տնտեսական և կենցաղային նշանակության քարե առարկաներ*[2]*:*

Սույն հոդվածի նպատակն է՝ անդրադառնալ պեղածո քարե իրերի հետազոտությանը, տիպաբանմանը և կիրառական նշանակությանը՝ դրանք համադրելով համաժամանակյա այլ հնավայրերի գտածոների հետ: Միաժամանակ, դա հնարավորություն է տալիս վերականգնելու ամրոցում տեղական կյանքի որոշ կողմերը և արտադրության հիմնական ուղղությունները:

Հիմնաբառեր՝ սանդ, հավանգ, երկանք, տնտեսություն, մթերքի վերամշակություն, գինեգործություն, ջուլհակություն:

Ներածություն

Միջնադարում Դաշտադեմի ամրոցը կարևոր դիրք է գրավել Անի մայրաքաղաքի պաշտպանական համակարգում: Ամրոցի միջնաբերդը հիմնվել է 10-րդ դարում, ապա՝ 12–14-րդ դդ. համալրվել կիսաբոլոր աշտարակներով ու օղակվել առաջին պարսպաշարով: 1812-ին Երևանի Հուսեյն Քոլի Խան Ղաջարը կառուցում է ամրոցի երկրորդ պարսպաշարը, որն իր մեջ ընդգրկում է միջնադարյան ողջ համալիրը[3]:

Մոնղոլական արշավանքներից հետո ամրոցը, կորցնելով իր պաշտպանական նշանակությունը, շարունակում է գոյատևել իբրև սովորական բնակավայր, ինչի մասին վկայում են 2015 թ. պեղումներով հայտնաբերված՝ 15–19-րդ դարերի բնակելի և տնտեսական համալիրները[4]:

Դաշտադեմից հայտնաբերված քարե գործիքները միջնադարյան Հայաստանի տնտեսության որոշ բնագավառներում կարևոր տեղ են զբաղեցրել: Ընդհանուր առմամբ, դրանց ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 20-րդ դարի

---

1 Այս պեղումների մասին մանրամասն տես Melkonyan et al. 2017, 263–292.

2 Նյութերը տրամադրելու և գծանկարները պատրաստելու համար իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Դաշտադեմի արշավախմբին և ճարտարապետ Սոսե Աղայանին:

3 Melkonyan et al. 2017, 264–266.

4 Melkonyan et al. 2017, 266–267, 274.

կեսին: Վերջիններիս գործառութային նշանակության, տիպաբանության և այլ հարցերով զբաղվել են Ժ.Դ.Խաչատրյանը, Հ.Ս.Եսայանը, Ս.Գ.Հոբոսյանը, Հ.Վ.Բեգլարյանը և ուրիշներ, որոնց շնորհիվ այսօր հնարավոր է դառնում կատարել քարե իրերի տիպաբանական վերլուծություն:

Աղացքարեր

Դաշտադեմում հայտնաբերվել են հինգ տեսակի աղացքարեր՝ *սանդ*, *դինգ*, *հավանգ*, *կառապան* և *երկանք*: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ գործառույթը: Աղացքարերն, ընդհանուր առմամբ, նախատեսված են ընդեղեն, սերմեր և այլ նյութեր աղալու կամ մանրելու համար:

Սանդ: Դաշտադեմ ամրոցի բազալտե (սևակուճ) սանդերն[5] ի հայտ են գալիս տնտեսական կառույցներին (թոնիր, հոր) կից՝ 12–14-րդ և 15–19-րդ դարերով թվագրվող շերտերից:

Ուսումնասիրել ենք չորս սանդ[6], որոնք, ըստ ձևի, բաժանել ենք երկու տիպի.

ա) տիպը ներկայացված է երեք օրինակով: Դրանցից մեկն ամբողջական է [նկ.1, էջ 241], սակայն երկարատև օգտագործումից՝ ակոսի ստորին հատվածը մաշված, կոտրված է՝ առաջացնելով միջանցիկություն: Պահպանվել է այս օրինակի սանդաքարը՝ տոռնը: Նմանատիպ սանդեր հայտնաբերվել են Հայաստանի տարբեր հուշարձաններից՝ Դվինից, Գառնիից. դրանք, առաջին հերթին, օգտագործվում էին ձավարեղեն պատրաստելու, աղը մանրելու և կենցաղային այլ նպատակներով[7]: Այս տիպի երկրորդ օրինակը կողային մասում կոտրված է, սանդակոսի հատակը՝ երկարատև օգտագործումից մաշված [նկ. 2, էջ 241]: Նույն տիպին է պատկանում կլոր, զանգվածեղ նստուկով օրինակը, որը ևս բազալտից է՝ շրջանաձև, կոտրված: Բազալտե սանդի մնացորդ ենք համարում դեկորատիվ մշակմամբ քարե շրջանաձև, սակայն կիսով չափ պահպանված իրը [նկ.3, էջ 241]:

բ) տիպը: Սանդերից չորրորդը տուֆից է [նկ.4, էջ 241], որը հայտնաբերվել է եկեղեցու մոտից, և իր չափերից ու ձևից ելնելով՝ ենթադրում ենք, որ նախապես եկեղեցու քար է եղել: Սանդի հատակին պահպանվել են կրաշաղախի հետքեր, որոնց առկայությունը վկայում է սանդի երկարատև օգտագործման և մաշվածության մասին:

Ըստ երևույթին, այս երկու տիպերի նշված չորս օրինակների հիմնական գործառույթը ձավարի մշակումն է եղել, իսկ այլ տեսակի մթերք մշակելու համար կարող էին բազալտե սանդի փոխարեն օգտագործվել տուֆե կամ կրաքարե գործիքներ:

---

5 Սանդերը կիրառվում էին ցորենի թեփը լրիվ կամ մասնակիորեն հեռացնելու համար, ինչը հարկավոր էր բարձրորակ ալյուր ստանալու համար, մանրամասնորեն տես Բեգլարյան 2014, 67–68:

6 Միջնադարյան սանդերի հիմնական բաղադրամասերի և դրանց՝ անտիկ շրջանի օրինակների տարբերությունների մասին մանրամասն տես Բեգլարյան 2014, 78–79:

7 Պետրոսյան 1988, 107, աղ.LVIII/2–8:

Դինգ: Հայտնաբերվել են մեծ չափերի՝ տուֆե երկու դինգ[8] [նկ. 5, 6, էջ 241], որոնք, ըստ էության, նույն գործառույթն էին կատարում, ինչ սանդերը, սակայն օգտագործվել են նաև յուղատու և եթերային բույսերի մշակման համար: Սրանք երկարաձգված, մի կողմում շրջանաձև, մյուս կողմում նեղացող գործիքներ են, որոնց մակերեսին ակոս է արված՝ նախատեսված ձավարի կամ այլ տեսակի մթերքի տրորման կամ ծեծման համար: Մի դինգը կոտրված է ստորին հատվածում, մյուսը՝ վերին ծեծման շրջանում:

Հավանգը, բացի ձավարից և հացահատիկային մշակաբույսերից, գործածվել է նաև կանեփ, տգկանեփ, կանրջակ, ընկույզ, սակավադեպ՝ ձմերուկի ու սեխի չորացրած սերմեր մանրելու համար[9]:

ա) Հավանգների առաջին խմբում ընդգրկված են տուֆե, վերին մակերեսի կենտրոնում՝ շրջանաձև, ոչ այնքան խորը ակոսով, փոքր-ինչ բեկոտված, տարբեր չափերի, սակայն ձևով նույնատիպ գործիքներ: Սրանցից մեկը ձվաձև է, կենտրոնում՝ շրջանաձև ակոսով: **Խումբն** առանձնանում է տուֆե հավանգի երկու օրինակով, որոնք ձվաձև են թե՛ ծավալով, թե՛ ակոսի ձևով: Միայն թե երկուսի դեպքում էլ ստորին հատվածը ավելի նեղ է և զանգվածեղ, քան վերնամասը, որը փոքր-ինչ ավելի տափակ է և լայն [նկ. 7, էջ 241]:

բ) Հավանգների երկրորդ խմբում ընդգրկել ենք Դաշտադեմի հավանգների մեջ չափով, ձևով և գործառույթով առանձնացող տուֆե մի նմուշ, որը, թերևս, նախատեսված է եղել օծանելիք պատրաստելու համար [նկ. 8, էջ 241]. այն ունի համեմատաբար ավելի փոքր, ոչ այնքան խորն ակոս, որի ստորին մասով մինչև կողային հատվածը արված է միջանցիկ ելուստ: Հավանական է, որ դա արված է բույսերի կամ մթերքի յուղային մասը զատելու համար[10]:

Հատկանշական է, որ հավանգների հետ չեն հայտնաբերվել սանդաքարեր. հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավանգն ավելի փխրուն է, քան բազալտե սանդը՝ հակված ենք համարելու, որ հավանգի մեջ մթերքը ծեծվել է ոչ թե քարե, այլ փայտե տրորիչով:

Տառապան: Սա մթերքի վերամշակման համար նախատեսված առարկա է[11], որի եզրերն ավելի հաստ են, ունի գոգավորություն, իսկ կենտրոնում արված է միջանցիկ ելուստ [նկ. 9, էջ 241]: Այս իրը բազալտից է. դրանով հնարավոր

---

8 Սրանք գործում են միայն ոտքի ուժով: Այժմ հին ձևով Վայոց ձորում և այլուր սրանք հաստատվում են թոնրատան պատի տակ: Շուրջ 2մ երկարության փայտե հաստ լծակի ծայրին ամրացված է քարե *սանդիպոնը* (*սանդաքար*): Լծակի ծայրին ոտքը դնելով ու ճնշելով՝ վեր էր բարձրացվում ծանր քարը և բաց թողնվում սանդի մեջ լցված հատիկի վրա: Ձավար ծեծելու այս եղանակը կատարվում է մե՛կ աջ, մե՛կ ձախ ոտքով, ըստ որում ծեծողը երկու ձեռքով բռնում է գլխավերևում գտնվող լծաձողից և մի տեսակ պարային ռիթմիկ շարժում կատարում [տես Բդոյան 1972, 15–16, նկ. VIII]:

9 Այդ ամենն արվել է հետևյալ կերպ. հատիկները նախապես կավամաններում բովել են, ապա սանդերի մեջ կամ սալ քարերի վրա՝ մակույկաձև ու գնդաձև որձաքարերով տրորել: Ստացված զանգվածի վրա, որը կոչվում էր անուշուրթ, խին կամ խեղեթ, տաք ջուր են լցրել և խառնել, մինչև որ յուղային մասը բարձրանար ջրի երես, որտեղից այն շերեփներով հավաքել են: Այս աշխատանքը կանայք են կատարել [տես Հոբոյան 2007, 30]:

10 Ըստ Ս.Գ. Հոբոյանի բանավոր հաղորդման (17.05.2017):

11 Melkonyan et al. 2017, 268, fig. 6/4.

էր թե՛ հացահատիկային, թե՛ յուղատու մշակաբույսերի վերամշակումն այնպես, ինչպես բազալտե սանդի դեպքում: Այսօրինակ *քառապան*, *որը թվագրվում է 3-րդ դարով*, հայտնի է Ձեվգմայի (Եփրատի ավազան) 2002 թ. պեղումներից[12]:

Երկանք: Վաղ միջնադարից սկսած ի հայտ են գալիս վերին հարթ մակերես ունեցող աղացքարերը, որոնք կիրառությունից դուրս են մղում ավելի քիչ արդյունավետությամբ հայտնի *աղորիք*ներին[13]: Այսպիսի երկանքներ հայտնի են միջնադարյան մանրանկարներում և ազգագրական նկարագրություններում[14]: Երկանքները կազմված են ներքին հարթ աղացքարից՝ կենտրոնում երկաթյա *սոնի*ով և վերին աղացքարից՝ կենտրոնում ելուստով: Աղացքարն անցնում է *քապարակ*ի սոնու վրայով և պտտվում շնորհիվ փոքր փայտե կոթառի, որն ամրացվում էր կլոր 2,5 – 3 սմ տրամագծով և 3 սմ խորությամբ անցքի մեջ[15]:

Երկանքի առավել պարզունակ և նախնական տարբերակը՝ աղորիքն, աշխատում էր ետ ու առաջ տանելու՝ հատիկները տրորելու-աղկելու միջոցով, մինչդեռ երկանքն գործում է առանցքի շուրջը պտտելով՝ հատիկները մանրելու, լոսելու եղանակով: Իր վերջնական ձևն ընդունելուց հետո՝ միջնադարում և մինչև մեր օրերը, երկանքը կառուցվածքային էական փոփոխություններ չի կրել[16]:

Դաշտադեմի երկանքներն իրենց կառուցվածքային առանձնահատկություններով լիովին համապատասխանում են միջնադարյան Հայաստանում օգտագործված աղացքարերին[17]: Դաշտադեմի ամրոցի 2015 թ. պեղումներով հայտնաբերված երկանքների մեջ առկա են թե՛ վերին, թե՛ ստորին աղացքարեր:

ա) Վերին աղացքարերը շրջանաձև, կենտրոնում ելուստով, տափակ բազալտե իրեր են: Հավաքածուում առանձնանում է երկանքի վերին աղացքարի կոտրված օրինակը [նկ. 10, էջ 242], որն ունի եզրային միջանցիկ ելուստ՝ նախատեսված *լիսեռ*ի ամրացման համար: Այս ելուստի շնորհիվ հստակ կարող ենք ասել, որ գործ ունենք վերին աղացքարի հետ: Աղացքարերը սովորաբար կառուցվածքով իրարից գրեթե չեն տարբերվում:

Վերին աղացքարին բնորոշ հատկանիշներ ունի բազալտե խիստ բեկոտված երկանքը [նկ. 11, էջ 242]: Դատելով կենտրոնի ելուստի շուրջ եզերվող հաստ պարանոցի պահպանված մասի չափերից՝ կարելի է եզրակացնել, որ այն

12 Կենտրոնում միջանցիկ ելուստով և վերին մակերեսը՝ գոգավոր այս աղացքարերն ունեին սոնի, որը պահպանում էր ստորին և վերին աղացքարերի հավասարակշռությունը: Դրա շնորհիվ վերին քարը բարձրանում և իջնում էր՝ ապահովելով տարատեսակ մթերքի վերամշակություն [տես Parton 2013, 314–315, Fig. 20a, Q16]:

13 Այս երկանքները ներառվում են Ժ. Խաչատրյանի տիպաբանման երկրորդ խմբում [տես Խաչատրյան 1964, 264, 273, 274]:

14 Минасян 1978, 103–104, табл. 1, 15, 16.

15 Տես Եսայան 1986:

16 Բեգլարյան 2014, 34, տախտ. 2, նկ. 2, 3:

17 Միջնադարյան երկանքները որձաքարից կամ սևակուճից պատրաստված կլոր քարեր են, որոնց տրամագիծը տատանվում է 0,45–060 մ միջև: Վերին քարի մեջտեղում կա կլոր կամ ձվաձև անցք, եզրին ամրացված է ուղղահայաց բռնակը: Ստորին աղացքարի կենտրոնում ամրացված է սոնի, որի վրա էլ անցքով հագնում է վերին աղացքարը [տես Բեգլարյան 2014, 34]:

եղել է կոնաձև: Կոնաձև և ստորին մակերեսում գոգավոր վերին շարժական աղացքարերն առաջացել են մ.թ.ա. 1-ին դարում և օգտագործվել մինչև վաղ միջնադար (5–7-րդ դդ.): Աղացքարի ստորին մակերեսին արված է շեղանկյուն ակոս, որի նպատակն, ըստ էության, եղել է խոշոր հատիկավոր կամ այլ տեսակի սննդամթերք աղալը կամ մանրացնելը: Այս երկանքների՝ ասպարեզից դուրս մղվելուց հետո գործածության մեջ են մտնում հարթ, շփվող մակերեսով ստորին և վերին աղացքարերով երկանքները, որոնք օգտագործվել են մինչև մեր օրերը[18]: Անտիկ երկանքների օրինակներ գտնվել են Հացառատի (5–6-րդ դդ.), Այգեվանի (5–7-րդ դդ.) բնակավայրերից[19]:

Ուշագրավ օրինակ է երկանքի մի բեկոր [նկ.12, էջ 242], որի պահպանված մասի կողային մակերեսին արված է կլոր անցք: Կարծում ենք, որ այդ անցքին ամրացվել է երկաթե կամ փայտե բռնակը՝ աղացքարը պտտելու համար: Հետևաբար կարելի է այն համարել վերին աղացքար:

բ) Ստորին աղացքարի խմբին են պատկանում կոտրված և դրա հետևանքով ենթադրյալ *կոթաո* չունեցող օրինակները: Այս երկանքներն իրենց զուգահեռներն ունեն «Ձաքարի բերդ» բնակատեղիի 3-րդ խմբի[20], Աղստևի հովտի միջնադարյան հնավայրերից հայտնաբերված երկանքների 1-ին տիպի[21], Հացառատի[22], Բերքաբերի[23], Գառնիի[24], Դվինի[25] օրինակներում:

Այս խմբին է պատկանում ստորին աղացքարի մի օրինակ [նկ.13, էջ 242], որն, ի տարբերություն մյուսների, կենտրոնի ելուստին կից՝ աշխատող մակերեսին, ունի ակոս՝ նախատեսված երկաթյա *գաւգարակի* համար: Այսպիսի աղացքարեր հայտնի են Այգեվանից, Դվինից, Գառնիից և Արտաշատից[26]:

Բացի բազալտե երկանքներից՝ հայտնաբերվել է նաև տուֆե մի աղացքարի բեկոր, որի միջանցիկ ելուստին կից՝ ողորկ մակերեսից արված է ակոս, որն էլ, կարծում ենք, որ աղացքարի համար է: Այս աղացքարի[27] [նկ.14, էջ 242] կենտրոնում շատ լավ պահպանված է *գաւգարակի* կամ *գոգանի* փոսիկը: Այսօրինակ աղացքարեր հայտնի են Սոթքից և Մեղրաձորից. նախատեսված են եղել հանքաքարը փշրելու-մանրելու համար: Սակայն, ի տարբերություն Սոթքի և Մեղրաձորի օրինակների, Դաշտադեմի գտածոն չի օգտագործվել որպես շինաքար՝ պահպանված մասում կլոր տրամագծի շնորհիվ:

---

18 Խաչատրյան 1964, 264, 273, 274:

19 Տիրացյան 1963, 109:

20 Асатрян 2005, 64–65.

21 Есаян 1992, 133–134.

22 Տիրացյան 1963, 109:

23 Есаян 1985, 95–96.

24 Առաքելյան, Կարախանյան 1962, 63, նկ.19; Պետրոսյան 1988, 107, աղ.LX 1–5:

25 Ղաֆադարյան 1952, նկ.154:

26 Այս ակոսներում տեղադրվել է երկաթյա *գաւգարակը*՝ միջանցիկ ելուստով, որի տրամագիծը ավելի մեծ էր երկաթյա սոնու տրամագծից, և դրա շնորհիվ վերին աղացքարը չէր տատանվում պտտելիս, այլ իր առանցքի նկատմամբ ամուր էր [տես Есаян 1992, 56. լուս.3, 5, 7; 57. լուս. 1, 2; 57, լուս.5; 136]:

27 Տես Բեգլարյան 2014, 38–39:

Կենցաղային քարե այլ իրեր

Դաշտադեմի պեղումներով հայտնաբերված քարե մյուս առարկաները ներկայացված են առանձին:

Խցանաքար: Դասակարգվում են երեք խմբերում.

ա) խմբում ներառված են տափակ, վերին մակերեսի կենտրոնում ուռուցիկ, երբեմն՝ անմշակ խցանաքարեր: Երկու օրինակներից մեկը տուֆից է՝ կոտրված [նկ. 15, էջ 242], որը մակերեսի կենտրոնում ուռուցիկ է, և երևում են մշակման հետքեր: Երկրորդ օրինակը *պեռլիտ* քարից է, բեկոտված վիճակում:

բ) խմբին է պատկանում ավելի փոքր, շրջանաձև տուֆե կափարիչը՝ կենտրոնում միջանցիկ ելուստով [նկ. 16, էջ 242]:

գ) խմբով կարելի է առանձնացնել երկու օրինակ, որոնցից մեկն անմշակ տափակ թերթաքար է: Մյուս օրինակը բազալտից է, որի միջնամասը փոքր-ինչ կոր է, կոտրված, դրսային մակերեսը պատված է սպիտակ կավի շերտով: Այս կափարիչը գինու կարասը ծածկելու համար է, ինչի մասին վկայում է դրա կենտրոնում առկա ելուստը, որը կարող էր նախատեսված լինել գազերի դուրս մղման համար: Ինչպես այս, այնպես էլ վերոնշյալ կափարիչները, բացառությամբ մեկի, ըստ ամենայնի, օգտագործվել են կարասները ծածկելու համար[28]: Սակայն ՀՀ-ում՝ թե՛ վաղ շրջանի, թե՛ միջնադարյան հուշարձաններում (Էջմիածին[29]) գտնված՝ գինու կարասի այլ խցանաքարերը՝ ոչ միշտ է, որ միջանցիկ ելուստներ ունեն:

դ) խմբով առանձնացրել ենք սնկակերպ կառուցվածքով տուֆե մեկ խցան [նկ. 17, էջ 242]: Այս խցանաքարն, ամենայն հավանականությամբ, եղել է ավելի փոքր կուժի խուփ: Չի բացառվում նաև *աղորիքի* կամ *հավանգի* համար որպես *վարսանդ* օգտագործվելու տարբերակը:

Ծեծիչ: Նախատեսված է տրորելու համար [նկ. 18, էջ 242]. ստորին՝ բոնակի հատվածում ավելի հարթ է և զանգվածեղ, քան վերին մասում, որն ավելի ողորկ է: Սակայն միանշանակ որոշել, թե ինչ էին դրանով մշակում, հնարավոր չէ: Այդպիսի ծեծիչներ հայտնաբերվել են Գլաձոր-Թանահատ վանական համալիրի պեղումներից[30]:

Կոկիչ: Սրանց մեջ առանձին խումբ են կազմում տուֆե [նկ. 19, էջ 242] և խեցեղեն փոքր իրերը, որոնց հիմնական գործառույթը կարող էր փայտի և կաշվի մշակումը լինել[31]: Չի բացառվում նաև, որ նման իրերը միջնադարում օգտագործված լինեին կավե անոթները հարթեցնելու, արտաքին երեսները փայլեցնելու համար[32]: Նմանատիպ իրերի առկայությունը Դաշտադեմում վկայում է, որ այդտեղ եղել են արհեստավորներ, որոնք ոչ միայն պատրաստում էին տուֆե և բազալտե գործիքներ, այլև ավելի բարձրորակ, լավ հղկված քարե առարկաներ:

---

28 Ս. Գ. Հոբոսյան, բանավոր հաղորդում (մայիս 2017):

29 Варданян и др. 2012, 125.

30 Ղարիբյան 1983, 77:

31 Խեցուց պատրաստված նմանատիպ առարկաները ծառայում էին որպես գործիք կաշեգործության մեջ [տես Բաբաջանյան 2015, 94]:

32 Առաքելյան, Կարախանյան 1962, 63:

Մանածագործական իրեր: Սրանց թվում ընդգրկված են ջուլհակի՝ մեկ ամբողջական և մեկ կոտրված դազգահի *կախիկներ* [նկ. 20, 21, էջ 242], որոնք իրենց զուգահեռներն ունեն միջնադարյան այլ հնավայրերից հայտնաբերված հավաքածուներում[33]: Միջանցիկ անցքով առարկաները (տրամագիծը՝ 8–10 սմ, հաստությունը՝ 1 – 1,5 սմ) ծառայել են որպես *ծանրոց-կախիչ*, այսինքն՝ *իլիկի* գլուխ՝ տնային պայմաններում բրդից թել մանելու համար[34]:

Փքելք: Դաշտադեմի քարե գտածոներում առանձնահատուկ ուշադրության է արժանի տուֆե *փքելքը*, որն օգտագործվել է վառարանի ծխի դուրս մղման համար [նկ. 22, էջ 242]: Լայնացող հատվածում փքելքը մրոտված է, ինչը վկայում է երկարատև օգտագործված լինելու մասին. դրա հետ անհրաժեշտ կլիներ եղեգնյա փողի կիրառումը:

Կշռաքար: Սրանք բազալտե կլոր երկու գլաքարեր են: Ամենայն հավանականությամբ, կիրառվել են կամ որպես կշռաքար[35], կամ որպես պարսաքարեր ռազմական գործողությունների ժամանակ[36] [նկ. 24, էջ 242]:

Դաշտադեմի պեղումներով հայտնաբերվել են իրեր [նկ. 23, էջ 242], որոնք կոնաձև, երկու սմ բարձրությամբ առարկաներ են՝ ստորին մակերեսին փոսիկներով[37]: Դրանց նշանակությունը և գործածությունը կպարզվի ավելի մեծ թվով նմանատիպ իրերի հայտնաբերման և գտնվելու հանգամանքի առկայության պարագայում:

Եզրահանգումներ

Առկա տվյալները ցույց են տալիս, որ Դաշտադեմի քարե իրերը բնորոշվում են մեծ բազմազանությամբ՝ թե՛ տեսակով, թե՛ մթերքի վերամշակման գործառույթներով: Ի տարբերություն բազալտե երկանքի և սանդի, որոնցով հնարավոր էր մշակել ամեն տեսակի մշակաբույս՝ ընդ որում, մթերքի վերամշակման տարբեր փուլերում, տուֆե գործիքները կարող էին օգտագործվել միայն որոշ բուսատեսակների համար՝ այն էլ մթերքի վերամշակման որոշակի փուլում[38]:

Դաշտադեմի քարե գործիքների թվագրության խնդրին որոշակի վերապահումով ենք մոտենում: Հաշվի առնելով, որ դրանք մեծ մասամբ հայտնա-

---

33 Աբրահամյան 1956, 169, նկ. 64, 65; Акопян 2008, 51; Բաբաջանյան, Միրիջանյան 2013, 149, աղ. VII:

34 Բաբաջանյան 2015, 94, աղ. 17, նկ. 5:

35 Լոռե բերդաքաղաքից ևս հաճախ գտնվել են քարե կլոր գնդեր, որոնք հավանաբար օգտագործվել են որպես կշռաքար [տես Ղարիբյան 2009, 175]:

36 Որպես հնագույն հարվածող մարտական զենք՝ հիշվում է պարսատիկը, որը շատ հասարակ կառուցվածք ունի. այն կաշվից երկար երիզ է, որի կենտրոնը՝ լայն և կրկնածալ գոգավոր մաս ունի, որտեղ դրվում է պարսաքարը [տես Աբրահամյան 1950, 47]:

37 Այս իրերը նման են Երևանի վաղերկաթեդարյան Համո–1 քարայրից գտնված արձանիկներին, որոնք բնորոշվել են որպես պտղաբերության աստվածությունների նշանակային վերարտադրություններ՝ պայմանական երկսեռությունն ընդգծող որոշակի մանրամասներով [տես Դեմիրխանյան, Ազիզյան 1985, 9–10]:

38 Այս եզրահանգման համար հիմք է ծառայում քարի տեսակը, թեև տուֆե դինգերը կարող էին օգտագործվել վերամշակման սկզբնական փուլում՝ ինչպես բազալտե սանդերը:

բերվել են ավելի ուշ շրջանում կառուցված տնտեսական կառույցներում, կարելի է դրանք թվագրել 15–19-րդ դարերով, թեև քարե գործիքների որոշ ձևեր անփոփոխ պահպանվել են ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբ:

Այսպիսով, Դաշտադեմի քարե գործիքների տիպաբանական քննությունը հնարավորություն է ընձեռում իրականացնելու դրանց դասակարգումը, ինչպես նաև դիտարկելու մթերքի տեսակների և դրանց վերամշակման փուլերի հաջորդականությունը: Հնագիտական այլ գտածոների (հատկապես խեցեղենի) հետ զուգորդումը և համալիր ուսումնասիրությունը, ինչպես նաև հնաբուսաբանական նմուշների վերլուծությունը կնպաստեն Դաշտադեմի ամրոցի տնտեսական-արտադրական որոշ ճյուղերի առավել ամբողջական պատկերի վերականգնմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1950
Աբրահամյան Վ. Ա., Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները // ՀՍՍՌ ԳԱ պետական պատմության թանգարանի «Աշխատություններ», № 2, Երևան, 1950:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1956
Աբրահամյան Վ. Ա., Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956:

ԱՌԱՔԵԼՅԱՆ, ԿԱՐԱԽԱՆՅԱՆ 1962
Առաքելյան Բ. Ն., Կարախանյան Գ. Հ., Գառնի III (1949–1956 թթ. պեղումների արդյունքները) // Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 10, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 2015
Բաբաջանյան Ա. Ա., Հայաստանի XIV–XVII դդ. խեցեղենը (թեկնածուական ատենախոսություն), Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ (ղեկավար՝ Հ. Ա. Մելքոնյան), 2015:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ, ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2013
Բաբաջանյան Ա. Ա., Միրիջանյան Դ. Հ., Թեղենյաց վանքի խեցեղենը // Պատմա-բանասիրական հանդես, 2013, № 1, 134–150:

ԲԴՈՅԱՆ 1972
Բդոյան Վ. Հ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

ԲԵԳԼԱՐՅԱՆ 2014
Բեգլարյան Հ. Վ., Երկրագործական մթերքների վերամշակումը միջնադարյան Հայաստանում, Երևան, Հեղ. հրատ., 2014:

ԴԵՄԻՐԽԱՆՅԱՆ, ԱԶԻԶՅԱՆ 1985
Դեմիրխանյան Ա. Հ., Ազիզյան Հ. Ա., Կուռքեր Համո–1 քարայրից // Հայկական ՍՍՀ-ում 1983–1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ, Երևան, ապրիլ 1985, 9–10:

ԵՍԱՅԱՆ 1986
Եսայան Հ. Ս., Երկանքի օգտագործումը միջնադարյան Հայաստանում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 12, 69–74:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1964
Խաչատրյան Ժ. Դ., Երկանքի առաջացումն ըստ Գառնիի պեղումներից հայտնաբերված նյութերի // Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 1, 264–274:

ՀՈԲՈՍՅԱՆ 2007
Հոբոսյան Ս. Գ., Հայոց ձիթհանության մշակույթը (XIX դ.– XX դ. առաջին կես). պատմազգագրական ուսումնասիրություն (խմբ. Գ. Գ. Սարգսյան) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, Երևան, «Գիտություն», 2007, 7–98:

ՂԱՐԻԲՅԱՆ 1983
Ղարիբյան Ի. Գ., Գլաձոր. Տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 1983:

ՂԱՐԻԲՅԱՆ 2009
Ղարիբյան Ի. Գ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, «Գիտություն», 2009:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1952
Ղաֆադարյան Կ. Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1952:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 1988
Պետրոսյան Հ. Լ., Գառնին IX–XIV դարերում Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:

ՏԻՐԱՑՅԱՆ 1963
Տիրացյան Գ.Ա., Հացառատի ամրոցի 1962 թ. պեղումները // ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963, №12, 103–110:

АКОПЯН 2008
Акопян Н. Г., Раскопки Центрального квартала. Двин, IV. Город Двин и его раскопки (1981–1985 гг.), ред. А. А. Калантарян // Археологические раскопки в Армении, № 24, Ереван, «Гитутюн», 2008.

АСАТРЯН 2005
Асатрян Е. А, Закари берд (результаты раскопок), Институт археологии и этнографии НАН РА // Археологические раскопки в Армении, № 19, Ереван, «Гитутюн», 2005.

ВАРДАНЯАН и др. 2012
Варданян Л. М., Сарксян Г. С., Тер-Саркисянц А. Е., Армяне, серия «Народы и культуры», Москва, «Наука», 2012.

ЕСАЯН 1992
Есаян Г. С., Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье, Ереван, изд. ЕГУ, 1992.

ЕСАЯН 1985
Есаян Г. С., Раскопки средневекового поселения в Беркабере // Вестник общественных наук АН, 1985, № 6, 92–100.

МИНАСЯН 1978
Минасян Р. С., Классификация ручного жернового постава // Советская археология, № 3, Москва, 1978, 101–112.

MELKONYAN et al. 2017
Melkonyan H. A., Babajanyan A. A., Harutyunyan A., Davtyan D., Aghaian S. H., The excavations of Dashtadem fortress: preliminary report on 2015 fieldwork activity // Aramazd: Armenian journal of Near Eastern studies, 2017, vol. XI: 1–2, 263–292.

PARTON 2013
Parton H., Milling and Weaving Equipment, including Hand-held Stone Tools, Mortars, Querns, and Stone Vessels, Loom Weights, and Spindle Whorls // Excavations at Zevgma, Vol. 3 (ed. William Aylward), The Packard Humanities Institute, Chapter six, Los Altos, California, 2013, 295–344.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Ա. Մարտիրոսյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Դաշտադեմի ամրոցի 2015 թվականի պեղումներով հայտնաբերված կենցաղային քարե առարկաների տնտեսական բաղադրիչի շուրջ

Հիմնաբառեր՝ սանդ, հավանգ, երկանք, տնտեսություն, մթերքի վերամշակություն, գինեգործություն, ջուլհակություն:

Դաշտադեմի քարե իրերը բնորոշվում են մեծ բազմազանությամբ՝ թե՛ տեսակով, թե՛ մթերքների վերամշակման գործառույթներով: Քարե գործիքները դիտարկվում են մթերքի վերամշակման տեսանկյունից՝ փորձելով վերականգնել տնտեսության հիմնական ուղղություններին վերաբերող պատկերը (ալյուրի, հացամթերքի արտադրություն, ձիթագործություն, գինեգործություն, ջուլհակություն, ևն): Միաժամանակ, բացահայտվում են մի շարք խնդիրներ, որոնք հետագա ուսումնասիրության առարկա կարող են դառնալ: Դրանցից առաջինը կապվում է սանդի, հավանգի և երկանքի գործառութային տիպաբանման հետ:

A. A. Martirosyan
Institute of Archaeology and Ethnography

On the Economic Component of Household Stone Production Objects unearthed from the 2015 Excavations of the Dashtadem Fortress

Keywords: mortar, hand millstone, economy, food reprocessing, winemaking, weaving.

The stone tools of the Dashtadem fortress are observed from the point of view of food processing, restoring the main directions of the economy. The data collected in the results of the 2015 archaeological excavations indicate that the stone products of the Dashtadem fortress are characterized by a large diversity, either type or function. At the same time, there are a number of questions that can be further studied.

The first of these is related to the function and quality of used material of the mortars and spindles. Unlike basalt mortars which cultivate all kinds of crops at different stages of the food processing, the tools made from tuff can be used only for certain plant species at a certain stage of products processing.

It is also important to clarify the archaeological context. The study of unearthed architectural complexes and a rich assemblage of archaeological material argues that the fortress actively functioned in the 12th century to the 1st quarter of 14th century further became an ordinary settlement. The stone items mainly have been found in the residential and economic complexes (granaries, clay ovens) of the later periods which allow us to date them to the 15th –18th centuries.

Thus, typological classification of stone tools unearthed during the excavations in Dashtadem allow us to control the sequence of products and their processing phases. Combining with other archaeological finds (especially ceramics) as well as analyzing archaeological samples, the complex research, will contribute to a more comprehensive study of some of the economic and manufacturing sectors in the Dashtadem fortress.

А. А. Мартиросян
Института археологии и этнографии

Об экономическом компоненте бытовых каменных производственных предметов, найденных из раскопок крепости Даштадем

Ключевые слова: ступка, жернова, хозяйство, переработка продуктов, виноделие, ткачество.

Каменные предметы, найденные в результате раскопок крепости Даштадем отличаются многообразием как в плане ассортимента, так и функций переработки сырья. Рассмотрение этих предметов с точки зрения переработки продуктов поможет восстановлению общей картины основных направлений экономики (производство муки, хлебных изделий, растительного масла, вина и т. д.). В свете сказанного возникает ряд вопросов, которые могут стать предметом дальнейших исследований.

В частности, вопрос, связанный с функциональной типологией ступок и жерновов: В отличие от базальтовых ступок, с помощью которых можно культивировать все виды сельскохозяйственных культур на разных этапах переработки продуктов, ступки из туфа могут использоваться лишь для определенных видов растений и на определенном этапе переработки.

Весьма важно уточнение археологического контекста. Изучение архитектурных комплексов и богатого археологического материала показывает, что крепость активно функционировала в XII в. – до первой четверти XIV в., впоследствии она превратилась в обычное поселение. Каменные предметы в основном были найдены в жилых и хозяйственных комплексах (в зернохранилищах и глиняных печах) более поздних периодов, что позволяет датировать их XV–XVIII вв.

Таким образом, типологическиеая классификация каменных предметов, выявленных во время раскопок в Даштадеме, дает возможность проследить последовательность и фазы переработки продуктов. Комплексное исследование каменных и других археологических находок (особенно керамики) будет способствовать более всестороннему изучению экономического и производственного секторов в крепости Дащтадем.

Елена Васильева
ИА РАН

АРХЕОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ ГОРОДСКИХ И МОНАСТЫРСКИХ НЕКРОПОЛЕЙ В РОССИИ СЕГОДНЯ

Городские некрополи и кладбища исследуются в России с 19-го века. В этот период чаще всего в научный оборот вводится информация о захоронении или группе захоронений, а также об отдельных находках и погребальных конструкциях. Одним из наиболее изученных элементов погребального комплекса являются намогильные памятники, в том числе их эпиграфика.

Археология монастырских некрополей как самостоятельное научное направление стала складываться лишь с 1980-х годов. В последние десятилетия большее внимание уделяется локализации, восстановлению монастырских некрополей и отдельных захоронений наиболее почитаемых лиц.

С 2013 года в России введен столетний рубеж древности для археологических объектов. Сейчас некрополи 18–19-ых вв. и даже начала 20-го в. стали предметом археологического изучения.

В настоящий момент выходят обобщающие работы, посвященные архитектурно-археологическим исследованиям монастырей, церквей и некрополям при них. Ведутся работы по созданию хронологической шкалы для некрополей с преобладанием безынвентарных захоронений.

Ключевые слова: археология, исторические некрополи, прицерковные кладбища, городские некрополи, монастырские некрополи.

Общая часть

В настоящее время в российской методической литературе используется следующее определение термина некрополь, а именно – слово «кладбище», в самом общем значении. Кроме того, введен термин исторический некрополь – кладбища 16 – начала 20-го вв.; погребенные на этих кладбищах лица упомянуты в письменных источниках или известны по другим документам; кладбища, сохранившие внешнюю структуру к моменту раскопок. Таким образом, к историческим некрополям относятся также погребения вне кладбищ, представляющие интерес для истории, а также массовые (братские) захоронения и военные кладбища[1].

[1] Алексеев 2013, 3; Беляев 2011а, 5.

Необходимо подчеркнуть, что наземная часть большого количества некрополей в России на настоящий момент утрачена или существенно повреждена. В некоторых случаях утрачены и здания церквей, к которым относились кладбища. Связано это не только с атеистическими мероприятиями середины 20-го в. – появление практики вторичного использования надгробных памятников относится к значительно более раннему времени (согласно церковному праву, остатки церковных сооружений, к которым причислялись и надгробия, можно было использовать в церковном строительстве).

Еще относительно недавно граница «научной археологии» строго отделяла 17-ый в. от 18-го, и погребения позже 1700 г. к археологии не имели отношения[2]. В 1980-х гг., когда началось восстановление религиозных объектов, появилась практическая необходимость археологического изучения исторических некрополей. В последние десятилетия, после передачи Русской православной церкви крупнейших монастырских комплексов, наблюдается повышенный интерес к этой теме со стороны церковных властей. Проблемная ситуация, суть которой заключалась в том, имеет ли право на существование археология 17–20-ых вв. как самостоятельное научное направление, особенно остро проявилась в Сибири[3]. Многие охранные научно-исследовательские работы ведутся в соответствии с общепринятыми на тот момент для эксгумации поздних погребений правилами методики.

В 2013 году были приняты поправки к Федеральному закону 73-ФЗ «Об объектах культурного наследия (памятниках истории и культуры) народов Российской Федерации», по которым введен столетний рубеж древности для археологических объектов[4]. Таким образом, сейчас некрополи 17–19-ых вв. и даже начала 20-го в. стали предметом обязательного изучения.

В настоящее время можно назвать несколько основных целей проведения археологических исследований на участках городских и монастырских некрополей в России:

– осуществление спасательных археологических полевых работ (работ по сохранению объектов археологического наследия в случае невозможности обеспечения их физической сохранности, проводимых методами научных исследований объектов археологического наследия с полным или частичным изъятием археологических предметов из раскопов в целях их сохранения и получения научных знаний)[5],

– локализация некрополей и планирование мероприятий по обеспечению их сохранности,

– персонификация погребений для последующего восстановления некрополей и отдельных захоронений наиболее почитаемых лиц.

---

2 Беляев 2011а, 9.

3 Молодин 2011, 5.

4 ФЗ от 25.06.2002 N 73–ФЗ, Статья 18.12.

5 ППАПРСНОД 2013, 4.

Методические принципы

Структура описания погребальных комплексов разработана на семинаре «Морфология древностей» Скукиной Е. В.[6]. Погребальный комплекс рассматривается как самостоятельная подсистема, выделены структура и составляющие элементы погребального комплекса. Сформирован список признаков и их значений, признаки объединены в группы, описывающие структурные части погребального комплекса. Получено 248 классов погребального комплекса, каждый класс определен набором конструктивных элементов[7].

Типовые характеристики исторических некрополей как археологических объектов, включая могильные ямы, внутримогильные и намогильные сооружения, подробно описаны Беляевым Л.А.[8].

Одним из важных методологических принципов является разработка типологий элементов погребальных комплексов по материалам раскопок некрополей и отдельных захоронений. Эта проблематика разрабатывалась Сагайдаком М., Ивакиным В. Г., Пановой Т. Д., Беляевым Л. А.

Типология Сагайдака М. и Ивакина В. Г. разрабатывалась на основе материалов, полученных в ходе исследования городских кладбищ Киева 11 – первой половины 13-го вв.[9]. Ими рассмотрено 39 некрополей (1006 захоронений), топография захоронений, различные категории погребальных памятников, виды погребальных сооружений.

Пановой Т. Д. разработана типология погребальных сооружений 11 – 16-ых вв. Данная типология отражает многообразие всех типов погребальных сооружений, включая надгробные памятники[10].

Работы Беляева Л. А. внесли крупный вклад в разработку типологии намогильных сооружений, встреченных при раскопках некрополей Москвы.

Полевые археологические работы на территории некрополей ведутся с учетом общепринятой методики изучения грунтовых могильников и подземных архитектурных сооружений[11].

Современный опыт археологических работ показывает, что археология исторических некрополей – это особая методическая задача[12]. Становится ощутимым отсутствие специальных методических рекомендаций при исследовании и сохранении этих памятников. Первой попыткой заполнить пробел стала работа Л. А. Беляева «Опыт изучения исторических некрополей и персональной идентификации методами археологии», вышедшая в серии «Методика полевых археологических исследований», издаваемой Институтом археологии РАН.

6 Лихтер 2015, 284.
7 Скукина 1997, 11–13.
8 Беляев 2011а, 12–20.
9 Івакін 2008, 95.
10 Панова 2004, 65.
11 ППАПРСНОД 2013.
12 Макаров et al. 2015, 8-9.

Несомненно, что методика проведения археологических исследований некрополя зависит от целей, поставленных перед специалистом, и наиболее полно методические аспекты разрабатываются в тех случаях, когда задачей является комплексное исследование некрополя в целом. Таким примером могут служить работы Института археологии РАН, проведенные в 2014 году на некрополе Московской духовной академии (Троице-Сергиева лавра, Московская область, г. Сергиев Посад). Целью этих работ являлись локализация, определение структуры, планиграфии, временных рамок существования и персонификация погребений. Был привлечен обширный круг специалистов из разных областей науки, и именно благодаря этому, а также слаженной работе всех участников, количество персонифицированных погребений на настоящий момент уже составляет 60% от общего количества захоронений[13].

В случае, когда целью работ является персонификация конкретного погребения[14], или идентификации семейных захоронений[15], круг методических разработок может дополняться новыми, более детализированными аспектами (проведение генетических экспертиз и пр.).

Впоследствии планируется обобщение данных методических принципов для утверждения общей методической нормы археологического исследования исторических некрополей.

Археологическое изучение городских и монастырских некрополей

В России в настоящее время число археологических источников и объем информации по городским и монастырским некрополям постоянно растет.

Начиная с 19-го в. внимание исследователей привлекают материалы древних городских некрополей и кладбищ, однако для историографии 19 – начала 20-го вв. характерна, как правило, только констатация факта находки отдельных или групп захоронений, погребальных сооружений или намогильных памятников[16].

В советский период накопление данных о средневековых городских захоронениях шло намного быстрее в связи со значительным расширением программ по исследованию древнерусских городов. Однако для публикаций по данной теме характерно, как правило, введение в научный оборот отдельных находок и их групп, без рассмотрения истории ритуала захоронения в целом. Следует отметить, что в советский период наиболее полно обработаны и изданы сведения о древнерусских некрополях такого крупного центра, как Киев[17]. Древнерусские кладбища других городов представлены в исторической литературе эпизодически и кратко. Часто подобные публикации посвящены изучению отдельных конкретных деталей погребального обряда.

---

13 Энговатова et al. 2016a, 381–397.

14 Энговатова et al. 2016c, 240–243.

15 Энговатова et al. 2015, 123–125; Энговатова et al. 2016b, 398–409.

16 Мурзакевич 1837; Мурзакевич 1899; Бобринский 1905, 31–32; Романцев 1908.

17 Голубева 1949, 103–118; Каргер 1958; Каргер 1961.

Что касается археологии монастырских некрополей, то она как самостоятельное научное направление стала складываться сравнительно недавно, хотя определенный интерес к этой теме прослеживается еще с 19-ого в. (работы А.С. Уварова 1852 г. в Суздале).

С середины 20-ого в. археологические исследования монастырей ограничивались в основном сопровождением реставрационных работ на памятниках архитектуры. Поэтому в поле зрения ученых попадали отдельные, случайно обнаруженные погребения или группы погребений, которым грозила неминуемая утрата в ходе восстановления архитектурного облика обителей и иных строительных мероприятий.

Лишь сравнительно недавно, в конце 80-х гг. прошлого века, при масштабных работах на территориях отдельных монастырских комплексов появилась возможность изучения обширного материала, связанного с некрополями[18].

В последние десятилетия, после передачи крупнейших монастырских комплексов Русской православной церкви, кроме реставрационных работ и благоустройства территорий стало уделяться внимание локализации и, по возможности, восстановлению монастырских некрополей и отдельных захоронений наиболее почитаемых лиц.

Непрерывно на протяжении последних пятнадцати лет археологические работы ведутся на территориях монастырей и церквей не только в Москве и Московской области (Зачатьевского, Ново-Иерусалимского, Новодевичьего монастырей, Троице-Сергиевой лавры), но и в других регионах европейской части России, среди них: Кирилло-Белозерский, Соловецкий, Ферапонтов, Спасо-Елеазаровский, Мальский, Пантелеймонов, Михайло-Клопский, Деревяницкий и другие монастыри в Новгородской, Тверской, Архангельской, Вологодской, Владимирской, Псковской, Нижегородской, Ярославской областях; в Санкт-Петербурге и Ленинградской области. В восточных регионах страны исследования некрополей немногочисленны. Можно отметить впечатляющие результаты, полученные в ходе археологических раскопок якутских погребений[19], а также работы по исследованию приходских кладбищ в Иркутске[20].

Имеются опубликованные материалы по результатам археологических исследований прицерковных кладбищ в городах Москве[21], Можайске[22], Дмитрове[23], Звенигороде[24], Пскове[25], Старой Руссе[26], Суздале[27].

---

18 Беляев 2011а, 9.

19 Крюбези, Алексеев, 2012, 15.

20 Молодин 2011, 6.

21 Баталов et al. 2010; Панова 1989, 219–234.

22 Энговатова 1994, 155.

23 Энговатова, Гончарова 2002.

24 Алексеев 2005; Алексеев 2013.

25 Кузьмин 2009, 58–66; Харлашев 2009, 187–197; Новоселов 2008, 103–108.

26 Торопова et al. 2009, 266–273.

27 Нестерова 2009, 191–199.

В настоящий момент выходят обобщающие работы, посвященные архитектурно-археологическим исследованиям монастырей и церквей различных регионов европейской части России[28].

Проблематика работ

Одной из особенностей некрополей, особенно поздних, является их тесная связь с настоящим, в связи с этим часто подобные работы вызывают неприятие общественности. Поэтому при изучении монастырских некрополей крайне важен этический аспект, связанный с персонификацией погребений и судьбой находящихся в них реликвий.

Специалист-археолог, ведущий раскопки на территории некрополя действующего монастыря или церкви, постоянно сталкивается с вопросами о вывозе обнаруженных останков для дальнейших в процессе лабораторных исследований, а также проблемами перезахоронения останков. До сих пор не разрешена коллизия между правом государства и общества на обнаруженные при раскопках объекты культурного наследия и практикой перезахоронения найденных вещей вместе с останками. Здесь необходима проработка юридических норм, определяющих порядок взаимодействия науки, государства, церкви и общества в свете подобных довольно часто возникающих проблем.

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

АЛЕКСЕЕВ 2005
Алексеев А.В., Описание охранных археологических исследований на участке восстановления храма Вознесения Господня в г. Звенигороде в 2004 г. // Охранные исследования церкви Вознесения Господня на Нижнем посаде Звенигорода {Труды Подмосковной экспедиции Института археологии РАН}, том 3, Москва, ИА РАН, 2005.

АЛЕКСЕЕВ 2013
Алексеев А.В., Звенигородский некрополь. Исторические кладбища города и округи, Звенигород, ГБУК МО «Звенигородский историко-архитектурный и художественный музей», 2013.

БАТАЛОВ, БЕЛЯЕВ 2010
Баталов А.Л., Беляев Л.А., Сакральное пространство средневековой Москвы, Москва, «Дизайн. Информация. Картография», 2010.

БАТАЛОВ, БЕЛЯЕВ 2012
Баталов А.Л., Беляев Л.А., Московский Новодевичий монастырь. К 500-летию основания, Антология, Москва, «АртКитчен», 2012.

БАТАЛОВ, БЕЛЯЕВ 2013
Баталов А.Л., Беляев Л.А., Церковь Вознесения в Коломенском: архитектура, археология, история, Москва, МГОМЗ, 2013.

БЕЛЯЕВ 2011а
Беляев Л.А., Опыт изучения исторических некрополей и персональной идентификации методами археологии (Методика полевых археологических исследований), Москва, ИА РАН, 2011.

28 Баталов et al. 2013; Беляев 2011б; Баталов et al. 2012; Буров 2013.

БЕЛЯЕВ 2011б
Беляев Л. А., Некрополь Данилова монастыря в Москве XVII–XIX вв.: историко-археологические исследования 1970–2000-х годов, Москва, «Даниловский благовестник», 2011.

БОБРИНСКИЙ 1905
Бобринский А. А. (председатель Императорской Археологической Комиссии), Гробница Святого Владимира // ИАК, СПб, Приб. к вып. 14, 1905, 31–32.

БУРОВ 2013
Буров В. А., Государево богомолье – Соловецкий монастырь: Проблемы истории великой северной обители (XV – XIX века), Москва – Архангельск, ИА РАН, 2013.

ГОЛУБЕВА 1949
Голубева Л. А., Киевский некрополь // МИА, N 11, том 1. Москва-Ленинград, АН СССР, 1949.

ІВАКІН 2008
Івакін В. Г., Християнські поховальні пам'ятки давньоруського Києва, Київ, КИТ, 2008.

КАРГЕР 1958
Каргер М. К., Древний Киев, том 1, Москва-Ленинград, АН СССР, 1958.

КАРГЕР 1961
Каргер М. К. Древний Киев, том 2, Москва-Ленинград, АН СССР, 1961.

КРЮБЕЗИ, АЛЕКСЕЕВ 2012
Крюбези Э., Алексеев А., Мир древних якутов: опыт междисциплинарных исследований (по материалам саха-французской археологической экспедиции), Якутск, издательско-полиграфический комплекс СВФУ, 2012.

КУЗЬМИН 2009
Кузьмин В. Г., Моровые кладбища средневекового Пскова // Археология и история Пскова и Псковской земли, Семинар имени академика В.В. Седова, Материалы 54-го заседания (15 – 17 апреля 2008 года) ИА РАН, Псков, Дом печати, 2009, 58–66.

ЛИХТЕР 2015
Лихтер Ю. А., Вещественный источник и база данных – принципы взаимодействия, Москва, ООО «ТМ Продакшн», 2015.

МАКАРОВ, ЭНГОВАТОВА 2015
Макаров Н. А., Энговатова А. В., Археология исторических монастырских некрополей: методика, открытия, проблемы восстановления // Вторая ежегодная конференция «Археология и общество», Москва, ИА РАН, 2015, 7–10.

МОЛОДИН 2011
Молодин В. И. (отв. ред.), Лица первых иркутян // альбом графических реконструкций, Иркутск, «Амтера», 2011.

МУРЗАКЕВИЧ 1837
Мурзакевич Н. Н., Об открытии гробницы в окрестностях Смоленска // ТЛОИДР, ч. 8, Москва, Университетская типография, 1837, 307–309.

МУРЗАКЕВИЧ 1899
Мурзакевич Н. Н., О древних гробницах, найденных в Старой Рязани в 1830 г. // ТРУАК, том 14, вып. 3, Рязань, Тип. Губ. Правл, 1899, 313–380.

НЕСТЕРОВА 2009
Нестерова Н. В., Городские некрополи средневекового Суздаля по данным археологических исследований // Археология Владимиро-Суздальской земли, выпуск 2, Москва, 2009, 191–199.

НОВОСЕЛОВ 2008
Новоселов Н.В., Первоначальный замысел и последующее изменение архитектурной концепции церкви Дмитрия Солунского в Пскове // Археология и история Пскова и Псковской земли. Семинар имени академика В.В. Седова, Материалы LIII заседания (10 – 13 апреля 2007 года), Псков, Российский гуманитарный научный фонд, Институт археологии РАН, Псковский археологический центр, 2008, 103–108.

ПАНОВА 1989
Панова Т.Д., Погребальные комплексы XIV–XVII вв. на территории Московского Кремля // Советская археология. 1989, N 1, Москва, ИА РАН, 219–234.

ППАПРСНОД 2013
Положение о порядке проведения археологических полевых работ и составления научной отчетной документации, Москва, ИА РАН, 2013 // http://www.archaeolog.ru/media/2018/Polozhenie_2018_2.pdf.

РОМАНЦЕВ 1908
Романцев И.С., Ковалевская находка // Сборник Новгородского общества любителей древностей, 1908, выпуск 1, Новгород, 78–84.

СКУКИНА 1997
Скукина Е.В., Погребальные памятники Тверского Поволжья X–XII вв., Автореферат диссертации, Москва, Московский государственный унивеситет им. М.Б. Ломоносова, 1997.

ТОРОПОВА et al. 2009
Торопова Е.В., Колосницын П.П., Воронков И.А., Археологические исследования у церкви Святого Великомученика Мины в Старой Руссе в 2007 г. // Археология и история Пскова и Псковской земли, Семинар им. академика В.В. Седова, Материалы 54-го заседания (15 – 17 апреля 2008 года), ИА РАН, Псков, Дом печати, 2009, 266–273.

ФЗ 25.06.2002 N 73–ФЗ
Федеральный закон от 25.06.2002 N 73–ФЗ (ред. от 29.07.2017) “Об объектах культурного наследия (памятниках истории и культуры) народов Российской Федерации”.

ХАРЛАШОВ 2009
Харлашов Б.Н., Археологические раскопки церкви Иоанна Милостивого в Пскове // Археология и история Пскова и Псковской земли, Семинар им. академика В.В. Седова, Материалы 54-го заседания (15 – 17 апреля 2008 года), ИА РАН, Псков, Дом печати, 2009, 187–197.

ЭНГОВАТОВА 1994
Энговатова А.В., Погост начала XV века в г. Можайске // Макариевские чтения «Памятники древнерусской культуры» (материалы II Российской научной конференции 8–10 июня 1994 года, посвященной памяти святителя Макария), вып. 2, ч. 1, Можайск, «Можайский полиграфкомбинат», 1994, 155–169.

ЭНГОВАТОВА, ГОНЧАРОВА 2002
Энговатова А.В., Гончарова Н.Н., Предварительные результаты исследования средневекового могильника на территории кремля г. Дмитрова // Археологическое изучение Подмосковья (Дмитров, Мытищи, Тарасовка), Труды Подмосковной экспедиции Института археологии РАН, том 1, Москва, ИА РАН, 2002, 203–295.

ЭНГОВАТОВА et al. 2015
Энговатова А.В., Медникова М.Б., Радюш О.А., Шведчикова Т.Ю., Решетова И.К., Васильева Е.Е., Семейная усыпальница Ермоловых в Орле // Институт археологии: новые экспедиции и проекты, Москва, ИА РАН, 2015, 123–125.

ЭНГОВАТОВА et al. 2016а
Энговатова А. В., Медникова М. Б., Добровольская М. В., Решетова И. К., Шведчикова Т. Ю., Тарасова А. А., Васильева Е. Е., Панченко К. И., Никитин С. А., Исследование некрополя Московской духовной академии в 2014 году // Археология Подмосковья: Материалы научного семинара, выпуск 12, Москва, ИА РАН, 2016, 381–397.

ЭНГОВАТОВА et al. 2016б
Энговатова А. В., Медникова М. Б., Васильева Е. Е., Яганов А. В., Решетова И. К., Тарасова А. А., Шведчикова Т. Ю., Археологические исследования у Духовской церкви Троице-Сергиевой лавры в 2014 году (к вопросу о возможностях исторических идентификаций) // Археология Подмосковья: Материалы научного семинара, выпуск 12, Москва, ИА РАН, 2016, 398–409.

ЭНГОВАТОВА et al. 2016с
Энговатова А. В., Добровольская М. В., Медникова М. Б., Васильева Е. Е., Курицын М. А., История идентификации архиепископа Никона Рождественского в процессе археологических раскопок у церкви Сошествия Святого Духа в Троице-Сергиевой лавре // Средневековая личность в письменных и археологических источниках: Московская Русь, Российская империя и их соседи: материалы научной конференции, Москва, ИА РАН, ИРИ РАН, 2016, 240–243.

СПИСОК СОКРАЩЕНИЙ

АН СССР – Академия наук СССР
ГБУК МО – Государственное бюджетное учреждение культуры Московской области
ИА РАН – Институт археологии РАН
ИИАК – Известия Императорской Археологической Комиссии
ИРИ РАН – Институт российской истории РАН
МГОМЗ – Московский государственный объединенный музей-заповедник
МИА – Материалы и исследования по археологии СССР
СВФУ – Северо-Восточный федеральный университет имени М.К. Аммосова
СПб – Санкт-Петербург
ТЛОИДР – Труды и летописи Императорского Московского общества истории и древностей Российских
ТРУАК – Труды Рязанской ученой архивной комиссии

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ե. Ե. Վասիլևա
Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության ինստիտուտ

Եկեղեցիների տապանաբակերի և վանական գերեզմանատների հնագիտական ուսումնասիրությունն արդի Ռուսաստանում

Հիմնաբառեր՝ հնագիտություն, պատմական գերեզմանոց, եկեղեցու տապանաբակ, քաղաքային գերեզմանոց, վանական գերեզմանոց:

19-րդ դարից սկսած՝ Ռուսաստանում ուսումնասիրության առարկա են դարձել եկեղեցիների տապանաբակերը և քաղաքային գերեզմանոցները: Հետազոտությունների արդյունքում բազմաթիվ տեղեկություններ են հավաքվել ինչպես մեկ մասնավոր թաղման, այնպես էլ խմբակային թաղումների, ննջեցյալի հետ դրված իրերի, գերեզմանային կառույցների մասին: Թաղման համալիրների առավել ուսումնասիրված բաղադրիչներից են տապանաքարերը:

Վանական գերեզմանատների հնագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտական ուղղություն, ձևավորվել է 1980-ականներին: Ներկայումս բազմաթիվ ուսումնասիրություններ նվիրված են վանական գերեզմանատների տեղադրությանը կամ պատմական անհատների թաղումներին: Միաժամանակ զարգանում են վանական գերեզմանատների հետազոտման և պահպանման մեթոդները :

Վերջին 15 տարվա ընթացքում պեղումներ են իրականացվում ինչպես Մոսկվայի և հարակից շրջանների վանքերի ու եկեղեցիների տարածքում (Զաչատիևսկի, Նովո-Երուսալիմսկի, Նովոդևիչի վանական համալիրներ, Տրինիտի-Սերգիուս Լավրա), այնպես էլ Ռուսաստանի եվրոպական մասի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Կիրիլլո-Բելոզերսկի, Սոլովոցկի, Ֆերապոնտով, Սպասո-Ելեազարովսի, Մալսկի, Պանտելեիմոնով, Միխայլո-Կլոպսկի, Դերևյանսկի և Նովգորոդի, Տվերի, Արխանգելսկի, Վոլոգդայի, Վլադիմիրի, Պսկովի, Նիժնի Նովգորոդի, Յարոսլավսկի շրջանների բազմաթիվ այլ վանքերում, Սանկտ-Պետերբուրգում և Լենինգրադի նահանգում:

2013-ին մշակութային ժառանգության պահպանության օրենսդրության մեջ փոփոխություններ տեղի ունեցան, որոնց համաձայն՝ հնագիտական հնավայր սկսեցին համարվել նաև 100 տարի առաջ կառուցված շինությունները: Ուստի այժմ հնագիտական ուսումնասիրության առարկա են նաև 18–20-րդ դդ. գերեզմանատները: Միաժամանակ, ընդհանրացնող աշխատություններ են հրատարակվում՝ նվիրված վանքերի, եկեղեցիների և դրանց գերեզմանատների հնագիտական հետազոտությանը:

E. E. Vasileva

Institute of Archaeology of the Russian Academy of Sciences

Archaeological Study of Churchyards and Monastic Necropolises in Russia Today

Keywords: archaeology, historical necropolises, churchyard necropolis, city cemetery, monastic necropolises.

Churchyards and city cemeteries have been studied in Russia since the 19th century. As a result of these researches we received information about one particular burial or a group of burials, funeral inventory and burial's structure. One of the most studied elements of the burial complex was the gravestones.

The archaeology of monastic necropolises has become as an independent scientific direction since the 1980s. Now there are many researches which are dedicated to the localization of monastic necropolises and burials of historical individuals. At the moment, special methodological recommendations for the study and preservation of monastic necropolises are developed.

During the last fifteen years, archaeological works have been carried out on the territories of monasteries and churches not only in Moscow and the Moscow Region (Zachatievsky, Novo-Ierusalimsky, Novodevichy monasteries, the Trinity-Sergius Lavra), but also in other regions of the European part of Russia, among them: Kirillo-Belozersky, Solovetsky, Ferapontov, Spaso-Eleazarovsky, Malsky, Panteleimonov, Mikhailo-Klopsky, Derevyanitsky and other monasteries in Novgorod, Tver, Arkhangelsk, Vologda, Vladimir, Pskov, Nizhny Novgorod, Yaroslavskoy areas, as well as St. Petersburg and the Leningrad region.

In 2013 there were changes in legislation in the field of protection of cultural heritage sites. The hundred-year boundary for archaeological sites was introduced. Thus, the necropolises dated to the 18th to the beginning of the 20th centuries are the subject of archaeological studies now.

At the moment, general works about archaeological research of monasteries, churches and their necropolises are published. Also, a chronological scale for burials without funeral inventory are created.

Е. Е. Васильева
Институт археологии Российской академии наук

Археологическое изучение городских и монастырских некрополей в России сегодня

Ключевые слова: археология, исторические некрополи, прицерковные кладбища, городские некрополи, монастырские некрополи.

Городские некрополи и кладбища исследуются в России с 19-го века. Чаще всего в научный оборот вводится информация о захоронении или группе захоронений, а также об отдельных находках и погребальных конструкциях. Одним из наиболее изученных элементов погребального комплекса являются намогильные памятники.

Что касается археологии монастырских некрополей, то она как самостоятельное научное направление стала складываться лишь с 1980-х годов. В последние десятилетия большее внимание уделяется локализации, восстановлению монастырских некрополей и отдельных захоронений наиболее почитаемых лиц. В настоящий момент разрабатываются специальные методические рекомендации при исследовании и сохранении монастырских некрополей.

Непрерывно, на протяжении последних пятнадцати лет, археологические работы ведутся на территориях монастырей и церквей не только в Москве и Московской области (Зачатьевского, Ново-Иерусалимского, Новодевичьего монастырей, Троице-Сергиевой лавры), но и в других регионах европейской части России, среди них: Кирилло-Белозерский, Соловецкий, Ферапонтов, Спасо-Елеазаровский, Мальский, Пантелеймонов, Михайло-Клопский, Деревяницкий и другие монастыри в Новгородской, Тверской, Архангельской, Вологодской, Владимирской, Псковской, Нижегородской, Ярославской областях, в Санкт-Петербурге и Ленинградской области.

К 2013 году относятся изменения законодательства в сфере охраны объектов культурного наследия. Введен столетний рубеж древности для археологических объектов. Сейчас некрополи XVIII – XIX вв. и даже начала XX в. стали предметом археологического изучения.

В настоящий момент выходят обобщающие работы, посвященные архитектурно-археологическим исследованиям монастырей, церквей и некрополей при них. Ведутся работы по созданию хронологической шкалы для некрополей с преобладанием безынвентарных захоронений.

III

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍ ԵՎ ԲԱՆԱՐՎԵՍՏ

Նվարդ Վարդանյան, *բ.գ.թ.*
ՀԱԻ, ԵՊՀ

«ԹԱԳՎՈՐԻ՛ ՄԵՐ, ԴՈՒ՛ՐՍ ԱՐԻ» ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ ԵՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԾԵՍՈՒՄ

Հայոց հարսանեկան երգերի բնագրերի մեջ տարբերակների մեծ թվով առանձնանում է «Թագվորի մե՛ր, դու՛րս արի» սիրված կատակերգը: Երգի՝ փեսայի տան շեմի ծեսերին զուգահեռ կատարման մասին է վկայում Հայաստանի բազմաթիվ շրջաններից հավաքված ազգագրական և բանագիտական նյութը: Մեր օրերում թեև հարսանեկան երգերը հիմնականում կորցրել են իրենց ծիսական նշանակությունը և շատ հազվադեպ են կատարվում, սակայն հիշյալ կատակերգը երբեմն շարունակում է հնչել հարսանեկան տոնական սեղանների շուրջ: Ծիսերգի՝ մերօրյա ժողովրդականությունը պայմանավորված է նաև Կոմիտասի ստեղծած հիանալի մշակմամբ, որն այսօր կարծես մոռացնել է տվել երգի մյուս բոլոր տարբերակները և շարունակում է կատարվել թե՛ բեմերից ու թե՛ ժողովրդի մեջ:

Հայ բանագետների աշխատություններում այս ծիսական կատակերգը առանձին քննության չի ենթարկվել: Ներկա հոդվածում դիտարկվելու են նշված ծիսերգի 18 տարբերակներ, քննվելու են դրանց կառուցվածքային և հորինվածքային յուրահատկությունները, ծեսում ունեցած գործառույթն ու իմաստաբանությունը:

Հիմնաբառեր՝ հարսանեկան ծիսերգեր, շեմի ծեսեր, կատակերգ, կառուցվածք, գովք, ծաղր, հարս, սկեսուր:

Կատակերգի տեղը ծիսական համալիրում

«Թագվորի՛ մեր, դու՛րս արի» հարսանեկան սիրված կատակերգի կատարման ժամանակը ծիսական շղթայում բավական կայուն է: Ազգագրական գրառումները փաստում են, որ ծիսերգը կատարվել է *հարսնաբերի* կամ, այլ կերպ ասած, *դոնբացեքի* ծեսի ժամանակ, երբ հարսին իր հայրական տնից վերցրած և արդեն եկեղեցուց վերադարձող հարսնևորները մոտենում էին փեսայի դռան շեմին, ուր նրանց սովորաբար դիմավորելու էր դուրս գալիս փեսայի մայրը: Ահա հենց այստեղ՝ «*շեմի ծես*»-երին զուգահեռ, սովորաբար երգվում էր քննարկվող կատակերգը, որի կատարողները բացառապես փեսայի կողմի հարսնևորներն էին:

Ծիսական գործողությունների շղթայում երգի կատարման մասին բազմաթիվ վկայություններ կան: Հարսնաբերի ծիսերգերի մասին հարուստ տեղեկություններ թողած՝ բանագետ-ազգագրագետ Սահակ Մովսիսյանը (Բենսեն)

նշում է, որ փեսայի շեմի առջև՝ դոնբացեքի ծեսին զուգահեռ, մի երիտասարդ երգում էր «Մեր թագվորին ի՞նչ պիտեր», «Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց» երգերը, որից հետո երգվում էր «Թագվորամե՛ր, դուս արի» ուրախ կատակերգը.

Թագվորի մեր, դու՛ս արի,
Տե՛ս, քըզի ի՞նչ ինք բերի,
Քըզի քֆրող ինք բերի,
Գլուխ քթվող ինք բերի,
Քըզի բամբող ինք բերի[1]:

Արճակում նույնպես, ըստ ընդունված սովորության, երգը կատարվում էր *դոնբացեքի* ծեսին զուգահեռ[2]: Վանում «*Թագվորի մէր, դուսիւ արե*» կատակերգը կատարվել է ամուրի երիտասարդների (*մակների*) խմբի կողմից, որոնք երգելով պար էին բռնում փեսայի մոր շուրջը՝ ոտքի դոփյուններով թնդացնելով գետինը[3]: Կատակերգի՝ Ջավախքից, Գեղարքունիքից, Թալինից, Լոռուց, Բալուից և այլ ազգագավառներից գրառված տարբերակների դեպքում ևս մեծ մասամբ նշվում է դրանց կատարումը *դոնբացեքի* շեմային ծեսի ժամանակ:

Եթե հարսնաբերի ընթացքում երգվող օրհնաբանական ձոներգերը կարող են երգվել ծեսի այլ փուլերում ևս, ապա «*Թագվորի մե՛ր, դու՛րս արի*» կատակերգի տեղը բավական կայուն է ծեսում: Հարաբերականորեն կայուն է նաև նրա առկայությունն ընդհանրապես հայոց հարսանեկան ծիսերգերի շղթայում. այս մասին վկայում է Հայաստանի ազգագրական ամենատարբեր շրջաններից գրառված՝ կատակերգի տարբերակների քանակը (ուսումնասիրությունը կատարելիս ձեռքի տակ ենք ունեցել կատակերգի 18 տարբերակ[4]):

«*Թագվորի մեր, դուրս արի*» կատակերգը տիպիկ իրավիճակային է: Առանցքային մոտիվը փեսամորն ուղղված կոչն է՝ դուրս գալու և դիմավորելու նորահարսին: Կատակերգի որոշ տարբերակներ նաև այլ նկարագրական մասեր ունեն, ուր խոսքային պատկերումներ են գտնում կատարվող ծիսական գործողությունները: Այսպիսին է, օրինակ, Սրվանձտյանցի գրառած տարբերակը.

Թագվորի մեր, դուրս էլի,
Քե ի՞նչ վը ի՞նչ եմ բիրե.
Քաղցր ու բաղարջով արե,
Արաղի փարչով արե,
Բարեկամներով արե:

---

1 Մովսիսյան 1972, 97, 109:

2 Ավագյան 1978, 68:

3 Տեր-Մկրտչյան 1970, 170:

4 «Թագվորի՛ մեր, դո՛ւրս արի» կատակերգի տարբերակները տե՛ս հետևյալ աղբյուրներում. Սրվանձտյանց 1978, 263–264; Լալայան 1983, 161–162; Տեր-Մկրտչյան 1970, 170; Մովսիսյան 1972, 97, 109; Ավագյան 1978, 68; Գրիգորյան 1983,197; Խաչատրյան 1999, 116; Գևորգյան 1999, 178; Թոռլաքյան 1986, 144; Բրուտյան 1985,157; Ալահայտոյեան 2009, 115; Հայկունի 1906, 35, 39; Կոմիտաս 1969, 3, 73; Հարությունյան և այլք 2015, 434–435. № 6 (513), 435. № 7 (514), Քաջբերունի 1901, 193–194:

Թագվորի մեր, դուրս էլի,
Ճրագ մոմերով արե,
Բարեկամներով արե,
Քավորկնիկով արե[5]:

Նկարագրական այս հատվածները բավական հարազատորեն են արտացոլում կատարվող ծիսական գործողությունները: Ազգագրական գրառումներում նշվում է, որ հարսին ու փեսային դիմավորելու դուրս եկած սկեսուրը սովորաբար մի մեծ ափսեի մեջ բերում էր բաղարջներ, շաքարահացեր, քաղցրեղեն, պտուղներ[6]:

Կատակերգի՝ շեմի ծեսերում գերակա դերակատարումը որոշակի վաղ հավատալիքային ընկալումներով է պայմանավորված: Բուն նպատակը՝ հումորի և զվարճության, ծիծաղի ու կենսուրախության մթնոլորտի ստեղծումն է ծիսական այս կարևորագույն պահին, երբ ի վերջո պետք է կատարվի հարսանիքի առանցքային իրադարձությունը՝ հարսի մուտքը փեսայի տուն: Եթե *հարսնաբերի*, այսինքն՝ հարսի՝ հայրական տան շեմից դուրս գալու ծեսը սովորաբար լացերգերով էր ուղեկցվում, ինչը խորհրդանշում էր հարսի սիմվոլիկ մահը հայրական տանը, ապա փեսայի տան շեմի ծիծաղը պետք է հաստատեր հարսի «վերածնունդը»՝ անցումային ծեսին բնորոշ խորհրդանշական դրսևորումներով: Կատակերգը ծիծաղ է հարուցում, որն իր կենսաստեղծ և կենսահաստատ ուժով ամրագրում-խորհրդանշում է հարսի և նոր ընտանիքի ծնունդը[7]:

Սկսվածքային բանատողը

Հարսնաբերի փուլում առանձնահատուկ տեղ է գրավում փեսայի մոր կերպարը, որը սովորաբար իրավունք չուներ գնալու եկեղեցի, այլ մնում էր տանը՝ ստանձնելով նորապսակներին դիմավորելու պարտավորությունը: Սրանով պայմանավորված՝ այս ծեսի և զովքերին, և կատակերգերին բնորոշ ու ամենահաճախ հանդիպող կայուն բանատողը փեսամորն ուղղված դիմում-կոչն է՝ «***Թագվորի՛ մեր, դու՛րս արի***»[8], որն, ըստ էության, իր մեջ ամփոփում է այս փուլի ծիսական առանցքային գործողությունը: Այս դիմում-կոչը հիմնատող է դառնում հատկապես կատակերգերում՝ հանդես գալով և՛ որպես երգի սկզբնատող, և՛ հարակրկնություններով իր վրա վերցնելով երգի իմաստային ծանրաբեռնվածությունը:

Հակառակ սկսվածքային բանատողի հարաբերական կայունությանը՝ այն որոշ տարբերակներում հանդես է գալիս փոփոխակներով: Երբեմն այդ տարբերակները չեն փոխում բուն բովանդակավորումը («*Հարսի կեսուր դուրս էլի*» , «*Վի՛ր իլը հայ, վի՛ր իլը, // Թագվորը մեր վի՛ր իլը*»[9], ևն), սակայն

5 Սրվանձտյանց 1978, 263–264:

6 Տես, օրինակ, Տեր-Մկրտչյան 1970, 170:

7 Ռուս բանագետ Վլադիմիր Պրոպը ծննդյան մի շարք հավատալիքների ու սովորույթների քննությամբ ցույց է տալիս, որ ժողովուրդը ծիծաղն ընկալել է որպես կենսաստեղծ հմայական միջոց [տե՛ս Пропп 1976, 189]:

8 Ալահայտոյեան 2009, 115:

9 Հարությունյան և այլք 2015, 435:

որոշ դեպքերում իմաստային նոր լիցք են հաղորդում՝ բացահայտելով ծիսական վաղնջական պատկերացումներ: Այսպես, երգի տարբերակներից մեկի սկսվածքային բանատողն ի հայտ է գալիս «*Թագվորի մայր, բարի լոյս*»[10]՝ ծեգի ողջույնի տարբերակով: Սկսվածքի ինքնատիպ մի օրինակ ենք գտնում նաև Հայկունու գրառած՝ Ալաշկերտի բարբառային տարբերակում, որը թագվորագովքերի ընդարձակ երգաշարի մաս է կազմում. «*Եկ բարև, եկ բարև,/Թագուորին շատ արև/Թագուորի մէր, դուս արի*»[11]:

Ծեգի ողջույնների առատությունը փեսայի շեմի ծիսերգերում հատկապես նկատելի է ծիսապաշտամունքային բնույթի բնագրերում, և դա ունի իր բացատրությունը: Եկեղեցուց վերադարձող հարսն ու փեսան ծագող արևի հետ են նույնացվում, և անկախ այն բանից, թե նրանց մուտքը փեսայի շեմ համընկնում էր արևածագին[12], թե ոչ, նրանց դիմավորում էին ծեգի ողջույն-բանաձևերով՝ պայմանավորված նոր սկսվող կյանքի իմաստաբանությամբ[13]: Ուշագրավ է հատկապես «*Եկ բարև...*» սկսվածքով տարբերակը, ուր կատակերգի սկզբնատողը հավանաբար փոխարինվել է այգի ողջույնի հայտնի ծիսերգի սկզբնատողերի («*Էգ, բարև, էգ, բարև,/Էգն արևուն տէր բարև*»)՝ փոփոխված տարբերակով. «Էգ, էք, այգ»՝ ծեգի ողջույնի կոչերը այս տարբերակում փոխարինվել են թագվորամորն ուղղված «եկ» հրամայականով:

Գովքի ու ծաղրի մոտիվները

Տան շեմն անցումային այն գոտին է, որ բաժանում է «յուրային» և «օտար» տարածքները[14]: Փեսայի տան շեմի առջև կանգնած հարսը, որը մուտք գործելով պետք է դառնա յուրային, դեռևս օտար է և այդքանով՝ վտանգավոր ու կասկածելի: Ծիսական առումով, հարսի այս երկակի բնույթով է պայմանավորված քննարկվող կատակերգում նորահարսին երկակի՝ դրական և բացասական գծերով բնութագրող մոտիվների առկայությունը: Նորահարսին «բացասական» բնութագրող մոտիվները ծաղրական երանգ են ստանում փեսամոր կերպարի առնչությամբ, քանի որ հարսի հետագա դրական կամ բացասական պահվածքն անմիջականորեն անդրադառնում է սկեսրոջ վրա, հետևաբար «*Թագվորի՛ մեր, դու՛րս արի*» կատակերգում հարսնևորների խոսքերի հասցեատերը փեսայի մայրն է: Ծիսերգի՝ մեր ուսումնասիրած տարբերակներում միայն մի դեպքում է փեսայի մոր կողքին հիշատակվում նաև հայրը.

---

10 Թոռոլաքյան 1986, 144:

11 Հայկունի 1906, 35:

12 Վանում, օրինակ, ընդունված է եղել եկեղեցում պսակը արևածագից առաջ կատարել: Նորապսակները, արևի ծագելուն պես, դուրս էին գալիս եկեղեցուց, որպեսզի նորելուկ արևի ճառագայթները, նորապսակների վրա ընկնելով, նրանց նոր կյանք պարգևեն [Տեր-Մկրտչյան 1970, 169]: Ուշագրավ է, որ նույն՝ Վանի ավանդազրույցներից մեկում նորապսակները արևածագից առաջ են դուրս գալիս եկեղեցուց և նույն վայրկյանին քարանում են [Ղանալանյան 1969, 68]:

13 Վարդանյան 2017, 397–398:

14 Շագոյան 2011, 409:

Թաքյվորի խեր, տուս արե,
Տե մենք քյե ինչ ենք պիրե,
Ոտըտ լվացող ենք պիրե,
Տունդ շենցուցող ենք պիրե[15]:

Մնացած բոլոր դեպքերում հարսնևորների երգային ակնարկները միմիայն փեսամորն են ուղղվում, և երգի սյուժետային առանցք են դառնում հարս ու սկեսուր ապագա փոխհարաբերությունները: Հարսին դրականորեն բնութագրող մոտիվները ընդգծում են նրա՝ հետագա հարգալից վերաբերմունքը փեսամոր հանդեպ («Ձեռքդ պագնող մը բերինք», «Գլուխդ քթվող մը բերինք», «Գլուխդ սանտրող մը բերինք», «Բապուճդ տվող մը բերինք», «Ծամ իստըկող եմ բիրե», «Սոլեր շիտկող եմ բիրե», «Գլուխ լվացող եմ բիրե»): Սրան հակառակ, հարսին բացասականորեն բնութագրող մոտիվներում անխնա ծաղրով ներկայացվում են սկեսուրի՝ հարսի կողմից արհամարհանքի և անարգանքի արժանանալու մոտիվները. «Գլխիդ բամբող եմ բերե», «Մազեր պոկող եմ բերե», «Կլուխ դմպող իմ պերի», «Ծամիր՝ ջերոող իմ պերի», «Քու դուն՝ ավրող իմ պերի», «Մազերդ քաշող մը բերինք», «Քըզի քֆրող ինք բերի»):

Թեման բավական սիրված է բանահյուսության մեջ: Այն հաճախ է երգիծական կամ խրատական արտահայտումներ գտնում ժողովրդական զրույցներում, անեկդոտ-զվարճապատումներում և իրապատում հեքիաթներում: Ինչպես նկատում է Սարգիս Հարությունյանը՝ «*հարս-սկեսուր զույգը ժողովրդական ավանդության մեջ սովորաբար երկակի հակադրության ամենաբնորոշ դրսևորումներից է*»[16]:

Փեսայի շեմը այն սահմանն է, որ պետք է հավետ միավորի այս «հակամարտող» զույգին մի հարկի տակ, և պատահական չէ, որ ծեսի հենց այս փուլում են հնչում հարս-սկեսուր փոխհարաբերություններին նվիրված երգերը: Այս առումով ուշագրավ է Սրվանձտյանցի գրառած երգիծական մի զրույց, ուր *շեմի ծես*ի ժամանակ սկեսուրի և հարսի ցածրաձայն երգային երկխոսությունը անեկդոտային բնույթ է ստացել.

Երբ հարսը եկեղեցիէն փեսայի տունը կը բերեն, կեսուրը տան դրան առջև կ'ելնէ խաղալով հարսին դիմաց. հարսին գլուխը համբուրելու ժամանակ, զանի վախցնելու համար կ'ըսէ.

Երկաթ եմ ես,
Պողպատ եմ ես:

Հարսն ալ կեսրոջ ձեռքը համբուրելով՝ քօղի տակէն կ'ըսէ.

Կեցիր մինչ ոտքս ձգեմ 'ի ներս,
Երկաթ, պողպատ քամեմ, դու տես[17]:

Այս զվարճապատում զրույցում ուշագրավն այն է, որ հարս-սկեսուր հա-

15 Ավագյան 1978, 68:
16 Հարությունյան 2000, 244:
17 Սրվանձտյանց 1978, 271:

կամարտությունը ներկայացվում է հենց շեմի ծեսի ժամանակ, երբ նրանք դեռ գտնվում են յուրային-օտար դիրքերում:

Համամարդկային այս թեման իր արտացոլումն է գտել նաև այլ ժողովուրդների հարսանեկան երգերում, ընդ որում, երբեմն շատ ավելի սուր՝ թշնամական արտահայտումներով[18]: Հայոց հարսանեկան ծիսերգերում թեև նմանատիպ ակնարկների չենք հանդիպում, սակայն սկեսուրից սպասվելիք վտանգի, ապագա փոխհարաբերությունների բարդության մասին մտավախություններ որոշ երգերում առկա են («*Հարսն վարթ ա, // Կիսոր դարդ ա*»[19]):

Կառուցվածքային տիպերը

Ինչպես նշեցինք, ծիսերգը բաղկացած է իրարամերժ՝ հարսին դրական և բացասական գծերով բնութագրող մոտիվներից, որոնց տեղաբաշխումը երգային բնագրերում նույնական չէ: Այս հակադիր մոտիվները ծիսերգի որոշ տարբերակներում տրամախոսական հակամարտության ձևով են կառուցվում, որոնք, անշուշտ, երգի առավել նախնական տարբերակներ են ներկայացնում[20]:

Երգային երկխոսությունը տեղի է ունենում երկու կողմերի միջև, որոնք ծիսական յուրային-օտար հակադրություն են ներկայացնում: Ի տարբերություն *հարսնաոի* երգերի, ուր ծիսական հակամարտող կողմերը տրամախոսական բնույթի կատակերգերում՝ երկու կողմի խնամիներն են, *շեմի ծիսերգեր*ում աղջկա կողմի խնամիները չեն հիշատակվում որպես տրամախոսող կողմ: Կատակերգի՝ Ձավախքում գրառված տարբերակում հակադիր կողմերը հարսին բերողները և փեսամոր հետ նրանց դիմավորողներն են, և եթե առաջինները գովում են նորահարսին, ապա երկրորդները՝ հակառակը.

Թագվորցիք շարունակում են.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.
Քու խաչ որդիդ էկեր է,
Տներդ ավլող բերեր է:

Մոր կողմինները.

Թագվորամե՛ր, դուս գնա,
Դսի դռան դեմ գնա,
Քու խաչ որդիդ էկեր է,
Մազդ փետող բերեր է[21]:

---

18 Ուշագրավ է, օրինակ, լատիշական հարսանեկան երգերից մեկը, ուր փեսայի մայրը անվանվում է «ուրիշի մայր», «ծխացող խողովակ»: Երգում անգամ հիշատակվում է, որ չար սկեսուրին պատժելու համար հարսի ճամպրուկի հատակում ճիպոտ է դրված [Лигере 1975, 191]:

19 Գրիգորյան 1983, 197:

20 Տրամախոսությունը ծիսական բանահյուսության մեջ դիտվում է որպես հմայական խոսքի հնագույն տիպ, տես Круглов 1982, 50:

21 Լալայան 1983, 161–162:

Վանում գրառված տարբերակներից մեկում երկխոսող հակադիր կողմերը տղաներն ու աղջիկներն են: Տվյալ դեպքում յուրային-օտար հակամարտությունը դրսևորվում է յուրաքանչյուր խմբի սեռային պատկանելությամբ:

Տղաների խումբ

Քըզի մի խարս իմ պիրի,
Քը գլոխ բամփող իմ պիրի.

Աղջիկների խումբ

Քըզի մի խարս իմ պիրի,
Քը ոտ մաժող իմ պիրի[22]:

Երկխոսական տարբերակներում գովքի և ծաղրի մոտիվների հաջորդական հակադիր զույգերը երբեմն կազմվում են բառախաղի միջոցով.

Թնդիրդ վառող բերեր է / Թնդիր կոխողդ բերեր է[23]:
Քը աչք խանող իմ պիրի /Քը աչքիդ լուս իմ պիրի[24]:

Սակայն միշտ չէ, որ երգի երկխոսական բնույթը պահպանվում է և կամ՝ գովքի ու ծաղրական մոտիվներն ի հայտ են գալիս հաջորդաբար ու նույն համամասնությամբ: Որոշ տարբերակներում գերիշխող են գովքի մոտիվները, մյուսներում էլ լիովին բացակայում են դրանք, և ամբողջ կատակերգը ծաղրական բնույթ է ստանում: Վերջին տեսակի տարբերակները շատ հազվադեպ են և առավել սուր երգիծական բնույթ ունեն: Կատակերգի՝ Լոռիում գրառված նման մի տարբերակ արդեն իսկ սկսվածքային բանատողի իր ինքնատիպ փոփոխակով փեսամորը ուղղված՝ ոչ թե ելքի կոչով, այլ համբերությամբ զինվելու հորդորով է սկսվում («*Թագվորի մեր, դիմացի, / Դիմացի, վայ, դիմացի*»[25]):

Կառուցվածքային մեկ այլ տիպ է ներկայացնում Համշենում գրառված տարբերակը, ուր կատակերգը հստակ երկու մասի է բաժանվում: Առաջին մասում հարսնևորները գայթակղում են փեսայի մորը անհոգ և երջանիկ ապագայի հեռանկարով, որով ոգևորված՝ փեսայի մայրն իբրև թե դուրս է գալիս և վարդաջրով ցողում նորահարսին, այնուհետև երգի երգիծական շարունակությունը ծաղրում է խաբված սկեսուրին («*Վարդաջուրդ շուտ տար ներս, / Մազերդ քաշող մը բերինք*»[26]):

Կատակերգի այն տարբերակները, որոնցում բացակայում է տրամախոսությունը, աչքի են ընկնում երգի զարգացման ինքնատիպ եղանակով. որոշ տարբերակներում երգը սկսվում է հարսի գովքով և ավարտվում հետզհետե խտացող բացասական, ծաղրական մոտիվներով:

Ուշագրավ է ծիսերգի Վանա տարբերակը: Երգի առաջին հատվածը գովաբանում է հարսի գեղեցկությունը՝ ժողովրդական գովքի երգերին բնորոշ

22 Բրուտյան 1985, 157:
23 Լալայան 1983, 161–162:
24 Բրուտյան 1985, 157:
25 Գևորգյան 1999, 178:
26 Թոռլաքյան 1986, 144:

կայուն մակդիրներով (*վարթ ու ծաղիկ, մեխակ շուշան, սարի կաքլավ, սարի մարալ, իսրոպ ջէյրան*), նրա աշխատասիրությունն ու մաքրասիրությունը, սկեսուրին հարգելու և մեծարելու պատրաստակամությունը, և միայն երգի վերջին հինգ տողերում են գովքի մոտիվները փոխվում ծաղրականի[27]: Նման կառուցվածք ունի նաև կատակերգի՝ Կոմիտասի գրառած տարբերակը. երգի չորս տներից առաջին երեքը ավարտվում են գովքի մոտիվով, չորրորդը՝ ծաղրական[28]:

Իհարկե, երգի կառուցման վերոնշյալ սկզբունքը կատակերգի ոչ բոլոր տարբերակներին է բնորոշ: Գովքի և ծաղրի մոտիվները մի շարք կատակերգերում ի հայտ են գալիս տարերայնորեն՝ առանց որևէ սկզբունքային օրինաչափության:

Ետհարսանեկան կենցաղի արտացոլումը

Շեմի ծիսերգերում լայնորեն կենցաղավարող «*Թագվորի մեր, դուս արի*» կատակերգը, ուրախ-երգիծական բնույթ ունենալով հանդերձ, ենթատեքստում խրատական է: Թվարկելով բոլոր այն լավ և դրական սպասելիքները, որ փեսայի ընտանիքն ունի նորահարսից («*Տունդ շենցուցող ենք պիրե*»[29])՝ միևնույն ժամանակ, կատակային եղանակով հիշվում են նաև նրանք, որ կարող են նորաստեղծ ընտանիքի դժբախտության պատճառ դառնալ («*Քու դուն՝ ավրող իմ պերի*»[30]):

Դրականների մեջ քանակապես գերակշռում են կենցաղային այն պարտավորությունները, որոնք պետք է ստանձնի հարսը՝ թեթևացնելով սկեսուրի հոգսը: Կենցաղային որոշակի պարտավորությունների ստանձնումը նորահարսի կողմից ծիսականորեն կանոնակարգված բնույթ էր կրում և մաս կազմում ետամուսնական շրջանի հարսանեկան սովորույթների: Ազգագրական գրառումները փաստում են, որ եթե ամուսնության սկզբնական շրջանում նորահարսը համեմատաբար ավելի թեթև կենցաղային պարտավորություններ էր ստանձնում՝ տան տղամարդկանց ոտքերը լվանալ (հմմտ. վերը հիշված՝ փեսահորն ուղղված բանատողերը), ձեռքերին ջուր լցնել, գուլպաները հագցնել, տունը ավլել, ջուր բերել[31], ապա հետագայում հարսի պարտավորությունները հետզհետե շատանում էին: Կատակերգում թվարկվող պարտավորություններն ընդգրկում են գրեթե բոլոր այն ոլորտները, որոնք ըստ հայ ավանդական ընտանեկան հարաբերությունների՝ բաժին էին ընկնում տան երիտասարդ հարսներին («Եմիշ ժողվող եմ բիրե», «*Կարկտան արող եմ բիրե, / Սոլեր շիտկող եմ բիրե, / Ոչխար կթող եմ բիրե, / Բուրդի գզող եմ բիրե, / Ճախրակ մանող եմ բիրե*»[32], ևն):

Հարսի պարտավորությունների թվարկումը ընդարձակ մոտիվաշարեր է առաջացնում, որոնք կրկնվում են յուրաքանչյուր հաջորդ դիմում-կոչից հետո:

27 Տեր-Մկրտչյան 1070, 170:
28 Կոմիտաս 1969, 73:
29 Ավագյան 1978, 68:
30 Խաչատրյան 1999, 116:
31 Շագոյան 2011, 510–515:
32 Սրվանձտյանց 1978, 263–264:

Որպես հարսի ապագա պարտավորություններ՝ թվարկվում են նաև կար անելը, հաց թխելը, լվացք անելը, տաշտ ավլելը, բուրդ գզելը, իլիկ մանելը, աման լվանալը և բազում այլք[33]:

Փեսամոր բեռը թեթևացնող՝ կենցաղային նման պարտավորությունների ստանձնումը հղի է մեկ այլ վտանգով. այն կարող է հանգեցնել տան մեջ նորահարսի դերի մեծացմանը՝ ի հաշիվ սկեսուրի դերի նվազման: Նման դեպքերում ժողովուրդը նախապես սկեսուրին խորհուրդ է տալիս «շերեփը չզիջել» հարսին, ինչը պատկերավոր լեզվով նշանակում է՝տան կենցաղի կառավարման ղեկը իր ձեռքում պահել. («*Շերեփդ խլող ենք բերել*, / *Բալնիքդ առնող ենք բերել*, / *Տեղդ գրավող ենք բերել*»[34]):

Եզրահանգումներ

Այսպիսով, տեսնում ենք, որ փեսայի շեմի ծեսերի ընթացքում լայնորեն կենցաղավարող «*Թագվորի՛ մեր, դու՛ռս արի*» կատակերգը իրավիճակային է, որոշ տարբերակներում՝ նաև նկարագրական. սրանով էլ պայմանավորված է նրա կատարման կայունությունը հարսանեկան ծիսական շղթայում: Կատակերգը լավագույնս արտահայտում է շեմային իրավիճակին բնորոշ՝ յուրային-օտար հակադրությունը, որով պայմանավորված՝ երգային տրամախոսություն է ծավալվում ծիսական հակադիր կողմերի միջև:

Կատակերգի առանցքում հարս-սկեսուր բանահյուսական սիրված հակադրազույգի ապագա փոխհարաբերությունների պատկերումն է, ուր հակասական բնութագիր է ստանում դեռևս «օտար» տարածքում գտնվող հարսի կերպարը, ծավալվում են հարսին գովող և երգիծող մոտիվների ընդարձակ շարքերը: Ծիսական հակադրությունը առավել ակնհայտ է երգերի տրամախոսական տարբերակներում, ուր հիշյալ մոտիվները հնչում են հակադիր խմբերի երգային հատվածներում:

Լինելով երգիծական բնույթի՝ կատակերգը, միևնույն ժամանակ, խրատական ենթատեքստ ունի, որով հարսանքավորները խոսքային մակարդակում ամրագրում են կենցաղային և բարոյական այն դերակատարումը, որ հարսը պետք է ստանձնի փեսայի տանը՝ երջանկացնելով և շենացնելով նոր օջախը, կամ, հակառակ դեպքում, դժբախտացնելով այն:

Կատակերգը բացահայտում է ետհարսանեկան կենցաղի պատկերը և բավական հարուստ նկարագիր է պարունակում հայ ավանդական ընտանեկան հարաբերություններում հարսի ունենալիք պարտականությունների մասին:

33 Հարությունյան և այլք 2015, 435:

34 Գևորգյան 1999, 178:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ 2009
Ալահայտոյեան Պ.Հ., Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ազգագրական հաւաքածոյ, Կլենտէյլ, Գալիֆորնիա, «Դրազարկ», 2009:

ԱՎԱԳՅԱՆ 1978
Ավագյան Ս.Մ., Արճակ // ՀԱԲ, հ.8, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:

ԲՐՈՒՏՅԱՆ 1985
Բրուտյան Ա.Հ., Ռամկական մրմունջներ, Երևան, «Սովետական գրող», 1985:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1983
Գրիգորյան Ռ.Հ, Գեղարքունիք // ՀԱԲ, հ.14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

ԳԵՒՈՐԳՅԱՆ 1999
Գևորգյան Թ.Հ., Լոռի (Տաշիր-Ձորագետ), ՀԱԲ, հ.20, Երևան, «Գիտություն», 1999:

ԹՈՌԼԱՔՅԱՆ 1986
Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության (ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Բ.Գ.Թոռոլաքյանը), Երևան, ԵՊՀ հրատ., 1986:

ՀԱՅԿՈՒՆԻ 1906
Հայկունի Ս. (հավաքող), Ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երդում, օրհնանք, անեծք և այլն // Էմինեան ազգագրական ժողովածու, հ.Զ, Մոսկուա-Վաղարշապատ, Լազարեան ճեմարան արևելեան լեզուաց, 1906:

ԼԱԼԱՅԱՆ 1983
Լալայան Ե.Ա., Երկեր, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1999
Խաչատրյան Ռ.Հ., Թալին // ՀԱԲ, հ.19, Երևան, «Գիտություն», 1999:

ԿՈՄԻՏԱՍ 1969
Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ.3. Խմբերգեր (խմբագրեց՝ Ռ.Ա.Աթայան), Երևան, «Հայաստան», 1969:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2000
Հարությունյան Ս.Բ., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Վահէ Սէթեան», 2000.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ և այլք 2015
Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս.Բ.Հարությունյան (գիտ. ղեկավար), Է.Հ.Խեմչյան, Մ.Հ.Խեմչյան, Ա.Կ.Պողոսյան, Երևան, «Գիտություն», 2015:

ՄՈՎՍԻՍՅԱՆ 1972
Մովսիսյան Ս.Մ.(Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ) // ՀԱԲ, հ.3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

ՇԱԳՈՅԱՆ 2011
Շագոյան Գ.Հ., «Յոթ օր, յոթ գիշեր». Հայոց հարսանիքի համայնապատկեր, Երևան, «Գիտություն» , 2011:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2017
Վարդանյան Ն.Խ., Ծիսապաշտամունքային մոտիվները փեսայի շեմին կատարվող հարսանեկան ծիսերգերում // «Կաճառ». գիտական տարեգիրք, Երևան, 2017, «Զանգակ», 395–400:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1978
Սրվանձտյանց Գ.Հ., Երկեր, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1978:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ 1970
Տեր-Մկրտչյան Ե.Կ., Վանեցոց հարսանիքը // ՀԱԲ, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ 1901
Քաջբերունի, Հայկական սովորութիւններ // Ազգագրական հանդէս, VII–VIII, Թիֆլիս, տպարան Կ.Մարտիրոսեանցի, 113–204:

ЛИГЕРЕ 1975
Лигере М., Влияние обрядности на создание поэтических образов в латишских народных песнях свадебного цикла // Проблемы фольклора (отв. ред. Н.И.Кравцов), Москва, «Наука», 1975, 184-190.

КРУГЛОВ 1982
Круглов Ю.Г., Русские обрядовые песни, Москва, «Высшая школа», 1982.

ПРОПП 1976
Пропп В.Я., Ритуальный смех в фольклоре // Фолклор и действительность. Избранные статьи, Москва, «Наука», 1976, 175-204.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԱԲ Հայ ազգագրություն և բանահյուսություն

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ն.Խ. Վարդանյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան

«Թագվորի՛ մեր, դու՛րս արի» հարսանեկան կատակերգի հորինվածքը և գործառնականությունը ծեսում

Հիմնաբառեր՝ հարսանեկան ծիսերգեր, շեմի ծեսեր, կատակերգ, կառուցվածք, գովք, ծաղր, հարս, սկեսուր:

Խնդրո առարկա կատակերգի 18 տարբերակների հիման վրա բացահայտվում են երգերի հորինվածքային առանձնահատկությունները, քննվում կառուցվածքային տիպերը, մոտիվների տեղաբաշխման յուրահատկությունները տարբերակներում, ինչպես նաև՝ ծիսերգերի գործառնականության յուրահատկությունները ծիսական համատեքստում: Կատակերգի երգիծանքի առանցքում հարս-սկեսուր բանահյուսական հայտնի հակադրազույգն է, ըստ այդմ այն, ուրախ-երգիծական բնույթ ունենալով հանդերձ, ենթատեքստում նաև խրատական է: Ծիսերգում իրենց խոսքային ամրագրումներն են գտնում ետհարսանեկան կենցաղի մանրամասները: Ծաղրական մոտիվները հաճախ կառուցվում են գովքի մոտիվների համաբանությամբ, դրանց ծաղրանմանակման ճանապարհով՝ ստեղծելով իրար հակադրվող հաջորդական մոտիվներ:

N. Kh. Vardanyan, *PhD*
Institute of Archaeology and Ethnography
Yerevan State University

Composition and Functionality of Wedding Joke Song "Mother of Groom, Come out" in Ceremony

Keywords: wedding ceremonial songs, threshold ceremonies, joke song, structure, praise, mockery, daughter-in-law and mother-in-law.

The article discusses the beloved joke song starting with the phrase "Mother of groom, come out" (Թագվորի՛ մեր, դու՛րս արի – Tagvori mer, durs ari), prominent among wedding ceremonial songs with its widespread presence and number of versions. The ceremonial song was performed during the ceremony of bringing the bride to the groom's house, in front of the groom's door in parallel with the threshold ceremonies. Both the singing time and the starting phrase of the joke song are quite stable.

Within the framework of this report, 17 versions of the joke song are discussed. The study goes the way of discovering compositional peculiarities of songs and discusses the structural types and idiosyncrasies of motive distribution in the versions, as well as the functionality peculiarities in ceremonial context.

The threshold of the house is the transitional area, which divides "familiar" and "foreign" areas. The bride standing in front of the groom's house is still foreign and as such is dangerous and suspicious. This is the reason of contradicting motives characterizing the bride: positive as someone "bringing prosperity to the groom's house" and negative as someone "ruining/destroying the house". In some versions of the ceremonial song, these opposing motives are built in the form of dialectic contradictions, which certainly represent older versions of the song. The singing dialogue occurs between opposite parties, representing ceremonial opposition between familiar and foreign. The motives of praise and mockery are distributed differently in the versions of the joke song, creating various structural types.

The couple – daughter-in-law / mother-in-law – famously antagonistic in folklore, is the axis of the satire in the song. Although the satirical allusions of the song characterize the daughter-in-law, the target of satire is the mother-in-law.

In spite of the happy and satirical nature, the joke song has a didactic subtext. The ceremonial song verbally establishes the details of the daily routine after the wedding, the duties that the bride has to assume in the new house, and hints at the neglect of duties, which can have undesired consequences. The satiric motives are often built analogous to the motives of praise, parodying them and creating sequential opposing motives.

Н. Х. Варданян, *к.ф.н.*
Институт археологии и этнографии
Ереванский государственный университет

Композиция и функциональность в ритуале шутливой свадебной песни «Мать жениха, выходи»

Ключевые слова: свадебные обрядовые песни, пороговые ритуалы, шуточная песня, структура, похвала, издевательство, невестка и свекровь.

В статье рассматривается пользовавшаяся популярностью шуточная песня, начинающаяся фразой «Мать жениха, выходи» (Թագվորի մեր, դուրս արի – Тагвори мер, дурс ари). Песня исполнялась во время свадебной церемонии, когда невеста должна была переступить порог жениха. Время исполнения песни и ее стартовая фраза оставались неизменными.

В рамках данной статьи обсуждаются 17 вариантов этой шуточной песни с их композиционными особенностями, структурными типами и функциональными особенностями в ритуальном контексте.

Порог дома – это переходная грань, разделяющая «свое» и «чужое» пространство. Невеста, стоящая перед домом жениха, пока чужая и, как таковая, она вызывает опасения и подозрения. Это являлось причиной противоречивых мотивов – позитивного, «приносящего процветание дому жениха» и отрицательного, как «разрушающего дом». В ряде вариантов песни эти противоположные мотивы представлены в форме диалектических противоречий, что, безусловно, имеет место в более старых версиях песни. Диалог происходит между противоположными партиями, представляя собой ритуальную оппозицию между своими и чужими. Мотивы похвалы и высмеивания по-разному представлены в версиях шуточной песни, создавая различные структурные типы.

Антагонистическая фольклорная пара – невестка/свекровь – является сатирическим стержнем песни. Хотя и сатирические мотивы относятся к характеристике невестки, но объектом высмеивания является свекровь.

Несмотря на веселый и сатирический характер, шуточная песня имеет также дидактический подтекст. В ритуальной песне говорится об обязанностях невестки в новом доме, пренебрежение которыми чревато нежелательными последствиями. Сатирические мотивы находят отражение в пародировании и создании бинарных противоположностей.

Նայիրի Խաչատուրեան
ԿԹԻ

ԵՐԱԺՇՏԱԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԺԱՆՐԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐՕՐՆԵՐՈՒՄ

Ժողովրդական երգարուեստի հնագոյն և կենսունակ ժանրերից է օրորը (օրորոցային, օրորերգ, օրորոցային երգ): Լինելով երաժշտական բանահիւսութեան ամենամտերմիկ տեսակներից մէկը՝ օրորը խորհրդանշում է այն հոգևոր և ֆիզիկական աներևոյթ կապը, որն առկայ է ծնողի ու մանկան միջև: Նախնական օրորները իւրատեսակ օրհնաբանական երգեր էին՝ ձօնուած երեխային: Օրորներն օժտուած էին տարատեսակ բանաստեղծական հնարքներով և հմայական ասոյթներով: Սակայն դարերի ընթացքում և կենցաղի զարգացմանը զուգընթաց՝ ժողովրդական երգարուեստի մի շարք այլ ժանրերից զանազան տարրեր են ներթափանցել օրորի մէջ՝ այդպիսով ազդելով օրորներում որոշակի տողերի ու պատկերների, ինչպէս և դրանցից բխող եղանակաւորման վրայ: Օրորներով զբաղուող հետազօտողները դեռևս յատուկ ուշադրութեան առարկայ չեն դարձրել այդ մակաշերտերի քննութիւնը: Յօդուածի նպատակն է՝ վերհանել հէնց այդ տարրերը, որոնք սկզբնապէս խորթ են եղել բուն օրորներին և արդիւնք են տարբեր երաժշտաբանահիւսական ժանրերի փոխներգործութեան, ինչպէս և կենցաղային պայմանների ազդեցութեան:

Հիմնաբառեր՝ օրոր, երաժշտաբանահիւսութիւն, ժանր, մանկական երգ, պատմական երգ, լալիք, վիպաքնարական երգ, պարերգ, աշուղական երգ, աշխատանքային երգ:

Իբրև ներածական

Օրորը համաշխարհային երաժշտագիտութեան և բանագիտութեան մէջ ընդունուած է սահմանել իբրև հանդարտեցնող ու հանգստացնող երգ, որը կատարւում է ծնողների (յատկապէս՝ մօր) կողմից երեխա(ներ)ին քնեցնելիս՝ իր(ենց) գրկում կամ օրորոցում: Օրորները ընորոշ են աշխարհի բոլոր ժողովուրդներին, զարգացման բոլոր աստիճաններում ու փուլերում: Օրորոցային երգերը, որպէս կանոն, ունենում են համամարդկային արժէքների վրայ հիմնուած բովանդակութիւն, միևնոյն ժամանակ նաև՝ ազգային առանձնայատկութիւններ:

Ըստ ֆրանսիացի երաժշտագէտ Բերնար Լորթա-Ժակոբի՝ օրորն ունի բազմատեսակ գործառոյթներ՝ հաղորդակցուել, ռիթմիկ ազդակ տալ, յուզել, կրթել, շարժումներ համակարգել, հանգստացնել, մօր և երեխայի վախերը չէզոքացնել, քնքշութիւն ցուցաբերել, ևն[1]: Ամերիկացի բանագէտ Ջոն Մինթոնն աւելացնում է, որ օրորը սովորաբար երգւում է մեղմ ձայնով կամ նոյնիսկ՝ շշու-

[1] Lortat-Jacob 1992, 7.

կով, շատ քիչ արտայայտչականութեամբ, բայց նշանակալի կրկնութիւններով: Օրօրի թեման հիմնականում ծաւալւում է մի քանի պայմանական թեմաների շուրջ: Երգասացը կարող է մանուկին տարբեր պարգևներ առաջարկել՝ լաւ վարքի կամ շուտ քուն մտնելու դիմաց, և, ընդհակառակը, սպառնալիքներ հաղորդել՝ եթէ երեխան ուշ քնի: Երգը կարող է նկարագրել ընտանիքի կամ աշխարհի անդորրը, ընտանիքի անդամների ազնուութիւնն ու բարութիւնը, կամ էլ այն կարող է պարզապէս երեխայի արտաքինի ու բնաւորութեան գովքն անել՝ կանխագծելով նրա համար փառահեղ ապագայ: Քունն ինքնին կարող է անձնաւորուած լինել կամ նկարագրուել որպէս առասպելական մտացածին երկիր[2]:

Ամերիկացի երաժշտա-բանագէտ Լեսլի Գէյը նշում է, որ օրօրների երաժշտութեան (երաժշտական լեզուի) վերաբերեալ համեմատաբար աւելի քիչ հետազօտութիւններ են եղել, քան բանաստեղծական տեքստերի մասին[3]: Օրօրի մեղեդին սովորաբար կրկնուող է. միօրինակութիւնը կարծէք թէ գործառութային բացատրութիւն ունի, քանի որ ռիթմիկ չափաւորուած բնոյթը համապատասխանում է օրօրոցի ճօճուելու գործընթացին: Պատահական չեն, օրինակ, օրօրոց բառի *ճօճ*, *ճօճք*, *ճօճիկ* հոմանիշները[4], որոնք տարածուած են հայկական բարբառներում: Արդարև, օրօրելու հիմքում ընկած են համաչափ պարբերական շարժումները՝ ճօճումները:

Ալբանացի սոցիոլոգ և ազգագրագէտ, Ֆրանսիայում հետազոտութիւններ իրականացնող Ալբերտ Դոժան գտնում է, որ օրօրների նպատակները բազմազան են. քուն բերելուն զուգահեռ՝ դրանք մշակութային գիտելիք և աւանդոյթներ են փոխանցում երեխային, զարգացնում նրա հաղորդակցական հմտութիւնները, կենտրոնացնում ուշադրութիւնը և կարգաւորում վարքը[5]:

Օրօրները և «օրօրագիտութիւն»ը հայոց մէջ

Հայ երաժշտագիտութեան և բանագիտութեան մէջ օրօրը սահմանւում է որպէս երաժշտաբանահիւսական հնագոյն և կենսունակ տեսակներից մէկը, որը բովանդակում է տարբեր՝ սկսած պարզունակ բնազդային բնաձայնութիւններից և վաղնջական հմայական ասոյթներից մինչև փաղաքշական արտայայտութիւններ ու համեմատութիւններ մարդու և բնութեան ամենանուրբ ըմբռնումների ու երևոյթների հետ:

Հայ ժողովրդական օրօրների ժառանգութիւնը հարուստ է ու բազմատեսակ: Բնականաբար, Հայկական լեռնաշխարհի ազգագրական տարբեր գօտիներում գրառուած օրօրներն ունեն իրենց առանձնայատկութիւնները: Ըստ երաժշտագէտ Ռոբերտ Աթայեանի՝ հայկական ժողովրդական օրօրները կարելի է երկու խմբի բաժանել: Առաջինը՝ սոսկ կիրառական եղանակ ունեցող օրօրներն են՝ մեքենայաբար կրկնուող կարճառօտ հատուածով, որոնք թէև կիրառական նպատակին համապատասխանող յուզական որոշակի լիցք են կրում

2 Minton 1998, 294–295.

3 Gay 2011, 514–515.

4 Բարբառային նշուած ձևերը յայտնի են Երևանում (*ճօճ*[*ք*]), Վանում (*ճօճիկ*), Ախալցխայում, Արցախում (*ճօճք*) և այլուր [տես Աճառեան 1913, 739]:

5 Doja 2014, 118–120.

իրենց դիւթող՝ անվերջ կրկնուող կառուցուածքով, բայց աւարտուն երգ չեն կարող համարուել: Երկրորդ խմբի օրօրներն արդէն ինքնուրոյն գեղարուեստական ստեղծագործութիւններ են: Օրինակ՝ Ակնայ շրջանի գրեթէ բոլոր օրօրները պատկանում են երկրորդ տեսակին[6]: Ակնայ օրօրներն ունեն համեմատաբար ծաւալուն ու ծորուն եղանակ և միջնադարեան հայրենների չափով յօրինուած բանաստեղծական տեքստեր[7]:

Հայ բանագիտութեան մէջ յատուկ օրօրներով առաջինը զբաղուել է բանագէտ Ռոզա Գրիգորեանը[8]: Իր ուսումնասիրութիւնները սկսելով յունահայկական գրական կապերից՝ յետագայում նա զուգահեռաբար զբաղուել է բանահաւաքչական և բանագիտական աշխատանքով՝ կենտրոնանալով հայ ժողովրդական օրօրոցային և մանկական երգերի վրայ: Մանկական բանահիւսութեան տեսակային խմբերի մէջ Ռ. Գրիգորեանն առաջինը նշում է «մանկատածութեան երգեր»-ը, որոնց կրողները մեծահասակներն են՝ մայրերը, տատիկները, տարեց կանայք են: Այս խմբի մէջ Ռ. Գրիգորեանն օրօրոցային երգերը տարանջատել է մանկախաղաց երգերից: Ըստ բանագէտի՝ նախնական օրօրները կազմուած են եղել պարզունակ ձայնարկութիւններից և հմայական ասոյթներից, ուղեկցուել են չար ուժերը վանելուն միտուած հմայական գործողութիւններով՝ օրօրոցի ճօճում, ձեռքերի շարժում, երեխայի հագուստի թափահարում: Ռ. Գրիգորեանն ընդգծում է, որ դարերի ընթացքում օրօրոցային երգը կրել է «ժանրային էական փոփոխութիւններ՝ բանադրանք-հմայանքից վերաճելով օրօրոցայինի»[9]: Այդ նոր օրօրների մէջ մայրը գովերգում է իր երեխային և նրան շրջապատող բնութիւնն ու կենդանական աշխարհը: Այդ եղանակով երեխան աստիճանաբար ծանօթանում է իրեն շրջապատող աշխարհին:

Ժանրային դասակարգումների խնդիրը

Հարկ է նշել, որ օրօրը տարբեր մասնագէտներ դասել են տարբեր երաժշտաբանահիւսական «ժանրերի» կամ «ենթաժանրերի» մէջ: Ըստ Կոմիտասի՝ օրօրոցային երգը շինական, այլ կերպ ասած՝ աշխատանքային երգի ժանրին է պատկանում[10]: Մայրն իր աշխատանքային առօրեայի ընթացքում, ինչպէս որ ճախարակ է մանում, բուրդ է գզում կամ գիւղատնտեսական գործերով է զբաղուում, այնպէս էլ երեխայ է օրօրում:

Այլ մասնագէտներ օրօրին առանձին կայուն (ենթա)ժանրի տեղ են յատկացնում: Ըստ երաժշտագէտ Մարգարիտ Բրուտեանի՝ օրօրն «*առանձնանում է* [*իրեն*] *բնորոշ թեմատիկայով, երաժշտական լեզուի առանձնայատկութիւններով և ֆունկցիայով*»[11]: Բանագէտ Ռոզա Գրիգորեանը օրօրն ընդգրկում է բանահիւսութեան քնարական ժանրի մանկական ենթաժանրի մէջ՝ ընդգծելով, որ *մանկական բանահիւսութիւն* եզրոյթը ներառում է բանարուեստի բոլոր այն

6 Կոմիտաս 1999, 186:
7 Կոմիտաս 1999, 165–166:
8 Գրիգորյան 1970, 7–99:
9 Գրիգորյան 2002, 20:
10 Կոմիտաս 2005, 331:
11 Բրուտյան 1983, 194–197:

ստեղծագործութիւնները, «որոնք նախատեսուած են երեխաների համար, և որոնց կրողները երեխաներն են կամ մեծահասակները»[12]:

Սոյն յօդուածում հիմնականում կանդրադառնանք օրօրների «եկամուտ տարրերին», որոնք ի սկզբանէ բնորոշ չեն եղել այս ժանրին: Դարերի ընթացքում օրօրոցային երգի կրած բովանդակային փոխակերպումները, այլ կերպ ասած՝ երաժշտաբանահիւսական այլ ժանրերի ազդեցութիւններն ու ներթափանցումը օրօրների մէջ, արտայայտուել են մի շարք ուղիներով.

ա) թափառող սիւժէների միջոցով,
բ) թեմատիկ խաչաձևումների միջոցով,
գ) պատրաստի եղանակի գործածմամբ,
դ) կնոջ աշխատանքային գործունէութեան բազմավեկտորութեան հետևանքով:

Եթէ առաջին երեք կէտերի դէպքում կարևոր դեր է խաղացել մտաւոր և հոգևոր գործօնը, ապա չորրորդի պարագային առաջնայինը գործնական՝ պրակտիկ շարժառիթներն են: Առաջին կէտի ուսումնասիրութեան մեթոդական դաշտը պատկանում է բանագիտութեան և միջնադարեան գրականագիտութեան ոլորտներին, երկրորդ և երրորդ կէտերի ուսումնասիրման մէջ աւելանում է նաև էթնո-երաժշտագիտական մեթոդների կիրառումը, իսկ չորրորդի մէջ առաջնային դերը վերապահուած է ազգագրական մեթոդի գործադրմանը: Յաջորդիւ համառօտակի կանդրադառնանք նշուած չորս կէտերից իւրաքանչիւրին:

Թափառող սիւժէների գործօնը

Ժողովրդական երգի իւրայատկութիւններից մէկն այն է, որ բազմաթիւ քառեակներ լինելով թափառող՝ լեզուա-բովանդակային փոփոխութիւններով կամ անփոփոխ կառուցուածքով երգուել են և՛ իբրև սիրերգ, և՛ իբրև մահերգ կամ իբրև պանդուխտի երգ, ևն: Անանուն հեղինակները զանազան քառեակների մէջ մի քանի բառ կամ կապակցութիւն փոխելով՝ յարմարեցրել են տարբեր բովանդակութեան երգերի: Այսպէս, օրինակ, Ակնայ շրջանի մի քառատողի տարբերակը ժողովուրդը երգել է որպէս օրօրոցային՝ երեխայի գովերգ[13], իսկ մէկ այլ դէպքում, մի քանի բառ աւելացնելով՝ որպէս լացի երգ՝ մահերգ[14]: Մէկ ուրիշ թափառող սիւժէ՝ ծառի և սոխակի բանաստեղծական կայուն պատկերներով ու համեմատութիւններով, գտնում ենք միաժամանակ օրօրոցային երգի քառատողում[15] և հարսանեկան երգում[16]:

---

12 Գրիգորյան 2002, 18:

13 *Օրօր, օրօր, անանման,/ Մարը չէ բերեր նման./ Ուչ մարն է բերեր նման,/ Ուչ արևն ու ուչ լուսնկան* [Դաւթեան 1898ա, 87]:

14 *Ա՛յ իմ՝ անանման նման,/ Չէր բերեր մարը քու նման./ Ո՛ւչ մարն է բերեր նման,/ Ո՛ւչ արևն ու ո՛ւչ լուսընկան:/ Բերեր է բուռ մանուշակ,/ Հոգին անուշ, չունէր ժամանակ* [Ճանիկեան 1895, 475]:

15 *Օրօր, օրօր հայրենի՛,/ Հայրենի՛, ծառդ արմաւենի, է՛, է՛, է՛./ Արմաւդ քու ծառդ կու լինի,/ Պիւլպիւլը քու ճեղդ կու թառի, է՛, է՛, է՛* [Դաւթեան 1898բ, 601]:

16 *Ա՛յ իմ հարսպի դստրիկ,/ Ծոցդ էգի, ծառդ արմաւենի./ Արմաւդ քու ծառդ կու լինի,/ Պիւլպիւլը քու ճեղդ կու թառի* [Ճանիկեան 1895, 417]:

Մի կողմից ժողովրդական քառեակների նմանօրինակ փոփոխութիւնները ստեղծում են միևնոյն երգի նոր տարբերակներ, սակայն միւս կողմից էլ կարելի է համարել, որ ունենալով նոր բովանդակութիւն ու գործառոյթ՝ դրանք տարբեր երգեր են՝ համընկնող սիւժէներով ու մոտիւներով:

Թեմատիկ խաչաձևումներ

Մարդկային հանրոյթի և կենցաղի զարգացմանը զուգընթաց ձևափոխուելով և նոր յատկանիշներ ձեռք բերելով՝ օրօրների զանազան տեսակներ յաճախ շատ աւելի լայն բովանդակութիւն և ձև են ընդունել, քան զուտ միայն մանկանն ուղղուած օրհնանքների և մաղթանքների երգափունջ լինելը: 19–20-րդ դարերում բանահաւաքների գրառած նիւթերում հանդիպում ենք օրօրերգերի նմուշների, որոնք այս կամ այն չափով կրում են այլ բանահիւսական ժանրերի ներգործութիւնը:

Բազմաթիւ օրօրների մէջ կարող ենք առանձնացնել՝

1. պատմական ժանրին բնորոշ տարրեր,
2. լալիքի և ողբի տարրեր,
3. վիպաքնարական ժանրին պատկանող տարրեր:

Այդ տարրերը կարող են նկատելիօրէն ազդել օրօրներում որոշակի տողերի ու պատկերների, ինչպէս և դրանցից բխող եղանակաւորման վրայ:

Պատմական ժանրին պատկանող տարրեր: Պատմական դէպքերն ու դրանց ողբերգական հետևանքները արտացոլուել են մի շարք օրօրոցային երգերում[17]: Մայրը երեխային օրօրելիս արտայայտել է իր հոգեվիճակն ու իրեն յուզող զգացումները, տառապանքը, յուշերն ու հոգու տուայտանքները: Պատմական բովանդակութիւն ունեցող ժողովրդական օրօրների նմուշների մեծ մասը, որ հասել է մեզ, արտացոլում է նախորդ դարասկզբի Հայոց Ցեղասպանութեան յիշողութիւնը: Նման մի նմուշ է գրառել Կոմիտասի՝ Էջմիածնում դասաւանդութեան տարիների սաներից մէկը՝ Սպիրիդոն Մելիքեանը: «Նանա բալիկս»[18] օրօրոցային երգի բանաստեղծական տեքստը ամբողջովին նկարագրում է, թէ մայրն ինչպէս է փախել և եկել Վան՝ փրկուելով թուրքերի ձեռքից, թէ ինչպէս է երեխան կորցրել իր հօրն ու քրոջը:

Եւս մի օրօրի նմուշ, որն աղերսւում է պատմական երգերին և ողբերին, գրառել է երաժշտագէտ-բանագէտ Ստեփան Դեմուրեանը[19]: Մայրն իր երեխային օրօրելիս նկարագրում է, թէ ինչպէս է արտասուքով լուանում ամուսնու

---

17 Մեր օրինակները հիմնւում են միայն գեղջկական երգերի վրայ և ոչ գրական մշակուած բանաստեղծութիւնների, որոնք աւելի ուշ տարածուել են ժողովրդի մէջ, ինչպէս, օրինակ, Ռափայէլ Պատկանեանի բանաստեղծութեան հիմամբ ստեղծուած «Արի՛, իմ սոխակ» երգը:

18 *Նանա բալիկս, նանա,/ Չուր չքնես, չեմ խանա,/ Լուրիկ, լուրիկ, լուրիկ,/ Փախեր եկեր ենք Վանա,/ Տաճկու ձեռքեն դիվանա* [Մելիքեան, Տէր-Ղևոնդեան 1917, 44]:

19 *Դա շապիկն է այն մարդու քաջ,/ Բալա ջան,/ Որ քեզի հայր նա կոչում էր,/ Օրո՛ր, օրո՛ր, բալա ջան,/ Արիւնոտ էր, կարմիր ներկուած,/ Բալա ջան,/ Արտասուքով ես լուացի,/ Օրո՛ր, օրո՛ր, բալա ջան* [Դեմուրեան 1907, 11]:

արիւնոտ, կարմիր ներկուած շապիկը, և երեխային մաղթում է, որ շուտ մեծանայ, շուտ «բոյ քաշի», և «չարի արիւն խմել սովորի»: Հասկանալի է, որ նման երգը երգուել է տղայ երեխային քսեցնելիս, ում հետ ծնողը կապել է, թէ՛ ընտանիքի և թէ՛ երկրի ու ժողովրդի ծանր ու լուրջ հոգսերի լուծումը: Վերոնշեալ երկու նմուշների մէջ օրօրոցայինին բնորոշ միակ տարրերը կրկնակներն են:

Լալիքի և ողբի տարրեր: Ինչպէս գրում է ազգագրագէտ Հռիփսիմէ Պիկիչեանը՝ «*ենթադրում է, որ օրօր ասողը, բացի մանկիկից, այլ «ունկնդիր» չունի և կարող է ազատութիւն տալ զգացմունքներին, մտորումներին ու անհանգստութիւններին, երազել կամ սգալ*»[20]: Այդ իսկ պատճառով՝ բանահաւաքներին պատահել է օրօր գրառել, որը ձեռք է բերել լալիքի երանգներ և աստիճանաբար վերածուել ողբի: Օրօր երգելիս երգասացն ընկել է յիշողութեան գիրկը, անդրադարձել կորցրած հարազատներին ու, իր համար աննկատ, օրօրը վերածել լացի, ապա նաև ողբի: Այսպէս, օրինակ, Միհրան Թումաճանի գրառած՝ Պարտիզակի «Սալընջախ եմ ձգեր» օրօրն, ըստ բանասացի բացատրութեան, նաև որպէս ողբ երգում էին գերեզմանոցներում՝ մեռելոցի օրերին[21]:

Ժանրային անցումային կամ «լողացող» այս երևոյթը, Հ. Պիկիչեանի խօսքով, ոչ միայն հայկական ժողովրդական երաժշտարուեստին է բնորոշ: Շուէդ երաժշտագէտ Ժան Լինգը նշում է, որ օրօրի և լացի երգերի միջև շատ նմանութիւններ կան՝ սկսած իրենց ռիթմիկ ճօճուող շարժումներից, այնուհետև՝ մեծամասնութեամբ կին երգասացներից, մինչև այդ երգերի եղանակաւորումը: Լինգը նոյնիսկ նշում է, որ Սարդինիայում *attituidi* «լալիք» բառը ծագում է *attittai* «երեխային կաթ տալ» բառից[22]: Ֆրանսիացի երաժշտագէտ-բանագէտ Էսթել Ամի դը լա Բրըտեքը իր բանահաւաքչական աշխատանքի արդիւնքում, որը կատարել է Հայաստանի եզդիների և Թուրքիայի քրդերի մէջ, նոյնպէս նշում է լաց-ողբերի և օրօրների առընչութիւնը, որոնք երկուսն էլ, փաստօրէն, կանանց մենակեաց արտայայտուելու երգեր են, հիւսւում են նմանատիպ բանաստեղծական պատկերներով, քնի և մահուան այլաբանութիւններով: Դը լա Բրըտեքի մենագրութեան մի գլուխը նուիրուած է «օրօր-ողբ»-երի տեսակին, որը նա անուանում է «սահմանային ժանր», «խառը ժանր»[23]:

Վիպաքնարական ժանրին պատկանող տարրեր: Պատմական, լալիքի և ողբի թեմատիկա շօշափող օրօրների կողքին հանդիպում են նաև վիպաքնարական (սիրոյ, օտարութեան) տարրեր կրող օրօրներ: Այսպէս, մեզ են հասել «Առնոս» կոչուող օրօրոցայինի մի քանի տարբերակներ, որոնք իրենց անուանումը ստացել են Շատախի ու Մոկսի միջև ընկած՝ պաշտամունքային մեծ նշանակութիւն ունեցող Առնոս լեռնագագաթից: Երգասաց Հայրիկ Մուրադեանն այս երգի մասին պատմում է Շատախում տարածուած մի աւանդազրոյց. «*Սիրահարուած երիտասարդ տղան ու աղջիկը անհաւատ սիրոյ երդումով հրա-*

20 Պիկիչյան 2012, 20:

21 Թումաճան 1972, 198:

22 Ling 1997, 63.

23 Amy de la Bretèque 2014, 105–114.

ժեշտ են տալիս միմեանց, և տղան գնում է պանդիստութեան: Նախքան տղան կվերադառնար՝ աղջկայ ծնողները, հակառակ դպրեր կամքին, նրան ամուսնացնում են մէկ որիշի հետ: Պանդիստութիւնից վերադարձած տղան, յուսախաբ, աղջկայ տան երդիկի մօտ, աղջիկն էլ՝ երեխայի օրօրոցի առջև, երգով խօսում են իրար հետ»[24]: Իրենց սէրը քօղարկում են՝ երգին օրօրոցայինի բնոյթ տալով: Վիպական մեղեդային կառուցուածքով և սիրային բովանդակութեամբ այս օրօրը տարածուած է եղել Վասպուրականի գրեթէ բոլոր գաւառներում:

Ի դէպ, ըստ Մանուկ Աբեղեանի՝ երդիկն առանձնայատուկ դեր ունէր գիւղական սիրահարների համար՝ յաճախ դառնալով նրանց տեսակցութեան վայրը. տղան գալիս էր երդիկից ներքև՝ աղջկան նայելու: Այդ պատճառով երդիկը յաճախ է յիշատակւում հայրեններում ու ժողովրդական երգերում[25]: Բացի «հայրուր, հայրուր» կրկնակից, որը Շատախի բարբառով նշանակում է «օրօր, օրօր», վիպերգային գողտրիկ այս նմուշի բանաստեղծական տեքստի միակ մասը, որն օրօրոցային է յիշեցնում, աւարտն է. *Կամիշ քյի որրոց,/ Թավշին քյի ծածկոց,/ Հարաֆ քյամին քյի տանի ու պիտի,/ Վէրու մաքյին ծիծ տա քյի*: Այս համեմատութիւններն ու պատկերները տիպական քարացած բանաձևեր են, որոնք առկայ են բազմաթիւ օրօրներում: Ինչպէս տեսնում ենք, այստեղ օրօրացային երգի թեմատիկ և կիրառական դաշտի ընդլայնման հետևանքով՝ օրօրն այն աստիճան է վերափոխուել, որ գործնականում բոլորովին նոր որակ է ձեռք բերել և վերածուել նոր ժանրային երգի:

Մի շարք օրօրներում հանդիպում ենք նաև անսէր ամուսնութեան, ինչպէս և օտարութեան մեկնած ումուսնու հետ բաժանման թեմաների[26]: Ֆիզիկական կամ հոգեկան մեկուսացման պայմաններում, օրօրոցի կողքին՝ երգասացը ինքնամոռացութեան մէջ կիսւում է իր մանկիկի հետ այն ամենի մասին, ինչ որ այլ պայմաններում չէր կարողանայ պատմել:

Պատրաստի եղանակի գործածում

Մի շարք օրօրներում հանդիպում ենք տարբեր երաժշտական ժանրերին պատկանող մեղեդու, այդ թւում՝ պարերգային և աշուղական կառուցուածքի մեղեդիների, որոնք յարմարեցուած են օրօրելու պահին:

Թալինի շրջանում գրառուած «Ա՛յ մարդ, վե՛ր կաց» օրօրը հիմնուած է աշուղական մեղեդու վրայ[27]: Սա պատահական չէ, քանզի մայրերը հաճախ վերցրել են պատրաստի աշուղական մեղեդիներ, յարմարեցրել իրենց ապրումին և օրօրելու գործընթացին՝ երգելով դրանք որպէս օրօրոցայիններ: Աշուղական մեղեդու կառուցուածքից զատ, երգասացները նաև օգտուել են աշուղական երգի բանաստեղծական տեքստից՝ դրան աւելացնելով օրօրի ժանրին բնորոշ բանաձևեր: Ըստ բանագէտ Արուսեակ Սահակեանի՝ նման դէպքերում հոգեբանական գործօնը մեծ դեր ունի. կանայք առիթ և ազատութիւն քիչ ունե-

24 Փահլևանյան 2007, 37–39, 59–60:
25 Աբեղեան 1940, 139, 285:
26 Գրիգորյան 1970, 30:
27 Բրուտյան 1984, 191, 195:

նալով՝ երգելու մեծ հաւաքներին (հարսանիք, օդա, աշուղական մրցոյթ), տնից դուրս երգուող ժանրերը տեղափոխում են տուն: Այդ միջոցով՝ մանկանն օրօրելիս, նրան խաղացնելիս կամ առտնին աշխատանքների ժամանակ՝ գտնում ենք ժանրային տարբեր փոխներթափանցումներ[28]:

Մէկ այլ դէպքում հանդիպում ենք կառուցուածքով՝ պարերգային, թեմատիկայով՝ օրօր-սիրերգային մի նմուշի, որն ազգագրագէտ և բանահաւաք Պետրոս Ալահայտոյեանի՝ Բալուին նուիրուած ժողովածուում ընդգրկուած է օրօրի ժանրի մէջ: «Պարտէզ կախիմ կախօրրան» երգը[29] պարերգային յայտնի եղանակի վրայ հիւսուած սիրերգ-օրօր է, որն ունի Տարօնից սերող յայտնի «Նարոյ, Նարոյ» պարերգի եղանակը[30]: Այս նմուշի մէջ օրօրին բնորոշ միայն մէկ երկտող կայ՝ *Պարտէզ կախիմ կախօրրան,/ Բլլբուլները գան վրրան*, մինչդեռ մնացած բանաստեղծական տեքստը սիրերգային բնոյթի է: Ըստ երգասաց Մարօ Նալպանտեանի՝ «Ասիկա թէ՛ աղօթք է, թէ՛ օրօր»[31]: Մայրը, երեխային քնեցնելու պահին, իր երգին տալիս է անձնական աղօթքի երանգ, ուր ներկայ են սիրային երգի տարրեր:

Կնոջ աշխատանքային գործունէութեան կնիքը

Ինչպէս վերը նշուեց, աշխատանքային գործունէութեան բնոյթից ելնելով, երբ կինը միաժամանակ մի քանի գործ է կատարել և իւրաքանչիւր գործին ձայնակցել համապատասխան երգով՝ այդ երգերն անմիջականօրէն ազդել են մէկը միւսի վրայ: Արդիւնքում ստեղծուած «բազմաժանր» երգերը նման համաժամանակեայ գործունէութեան ապացոյցներից մէկն են:

Ազգագրական և այլ բնոյթի աղբիւրները նոյնպէս վկայում են, որ կինը, երիտասարդ մայրը յաճախ միաժամանակ մի քանի գործ է արել: Օրինակ, նման գործունէութիւն նկարագրող մի պատկեր ենք գտնում լուսանկարիչ Դմիտրի Երմակովի հաւաքածուում, որն արուել է 1910-ին Սևանի աւազանում (Նոր Բայազէտ). այստեղ մայրը նստած բուրդ է գզում սանդերքի վրայ և իր կողքին օրօրոցը ճօճում [նկ. 1, էջ 243]: Նման մի լուսանկար կայ նաև Գրիգոր Գալուստեանի հրատարակած «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն» գրքի երկրորդ հատորում, ուր նոյնպէս մարաշցի հայ մայրը նստած է ճախարակի մօտ, գրկին՝ երեխան և կողքին՝ օրօրոցը [նկ. 2, էջ 243]:

Տարօնցի երգասաց Արմենուհի Գևոնեանի երգած «Հա, ձձում»[32] օրօրում կանանց աշխատանքային երգերին բնորոշ ժանրային տարրեր կան, մասնաւորապէս՝ ձձում՝ խնոցի հարելու երգային տարրեր: Բանաստեղծական տեքստը բաժանւում է երկու մասի՝ նախ մայրը քնեցնում է երեխային, իսկ յետոյ խնոցի է հարում: Երգի երաժշտական լեզուն նոյնպէս ընթացքում փոխւում է: Օրօրոցային մասը լայնաշունչ կառոյց ունի, իսկ խնոցի հարելու մասն աւելի չափաւոր

28 Բրուտյան 1984, 25:
29 Ալահայտոյեան 2009, 194:
30 Բրուտյան 1984, 89–90:
31 Ալահայտոյեան 2009, 195:
32 Գալշոյան 1978, 54:

է: Խնոցի հարելն ընդհանրապէս երիտասարդ աղջիկների և հարսների գործն էր, իսկ թանը քամելու և իղը հանելու գործին հսկում էին աւելի փորձառու և տարեց կանայք: Ձնումի երգային տարրեր բազմիցս հանդիպում են ոչ միայն օրօրոցային, այլև մանկախաղաց երգերում[33]:

Եզրափակում

Սոյն յօդուածը նախնական հպանցիկ մի ակնարկ է, որի մէջ փորձել ենք մատնանշել և բացատրել օրօրներում առկայ երաժշտաբանահիւսական տարբեր ժանրերի մակաշերտերը, այսինքն՝ այն տարրերը, որոնք սկզբնապէս խորթ են եղել բուն օրօրներին և արդիւնք են փաստօրէն ոչ միայն երաժշտաբանահիւսական զանազան ժանրերի փոխներգործութեան ու փոխներթափանցման, այլև կենցաղային պայմանների ազդեցութեան: Շատ դէպքերում սահուն անցումներ են կատարուել մի երգից ու ժանրից դէպի միւսը: Նշուած բոլոր դէպքերում բանասաց-երգասացն, ըստ էութեան, հանդէս է գալիս երաժշտաբանահիւսական ժանրերը կապողի և կամրջողի դերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱԲԵՂԵԱՆ 1940
Աբեղեան Մ.Խ., Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, «Արմֆան», 1940:

ԱԼԱՀՀԱՅՏՈՅԵԱՆ 2009
Ալահայտոյեան Պ.Յ., Բալուի և տարածաշրջանի երաժշտական ազգագրական հաւաքածու, Կլենտէյլ, «Դրազարկ», 2009:

ԱՃԱՌԵԱՆ 1913
Աճառեան Հ.Յ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան Ճեմարան Արևելեան Լեզուաց, 1913:

ԲՐՈՒՏՅԱՆ 1983
Բրուտյան Մ.Ա., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, «Լույս», 1983:

ԲՐՈՒՏՅԱՆ 1984
Բրուտյան Մ.Ա. (խմբ.), Թալին. հայկական ժողովրդական երգեր և նվագներ, Երևան, «Սովետական գրող», 1984:

ԳԱԼՇՈՅԱՆ 1978
Գալշոյան Մ.Հ. (խմբ.), Տարոնի ժողովրդական երգեր, ձայնագրված Արմենուհի Գևոնյանի կատարումից, Երևան, «Սովետական գրող», 1978:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1970
Գրիգորյան Ռ.Հ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2002
Գրիգորյան Ռ.Հ., Հայ մանկական բանահյուսություն, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2002:

ԴԱՒԹԵԱՆ 1898ա
Դաւթեան Ս., Օրօր // «Բիւրակն» լրագիր (շաբաթաթերթ), ԺԶ. տարի, նոր շրջան, թ.6 (22 յունուար, 1898), 87:

33 Գրիգորյան 2002, 177–178:

ԴԱՒԹԵԱՆ 1898բ
Դաւթեան Ս., Մանկական օրօր // «Բիւրակն» լրագիր (շաբաթաթերթ), ԺԶ. տարի, նոր շրջան, թ. 33 (1 հոկտեմբեր, 1898), 601–602:

ԴԵՄՈՒՐԵԱՆ 1907
Դեմուրեան Ս. Գ., Քնար, Ս. Պետերբուրգ, Պուշկինեան տպարան, 1907:

ԹՈՒՄԱՃԱՆ 1972
Թումաճան Մ. Թ., Հայրենի երգ ու բան (խմբ. Ռ. Ա. Աթայան), հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

ԿՈՄԻՏԱՍ 1999
Կոմիտաս, Երկերի ժողովածու (խմբ. Ռ. Ա. Աթայան), հ. 9, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երևան, «Գիտություն», 1999:

ԿՈՄԻՏԱՍ 2005
Կոմիտաս, ուսումնասիրութիւններ և յօդուածներ (խմբ. Գ. Գասպարեան), գիրք Ա., Երևան, «Սարգիս Խաչենց» 2005:

ՃԱՆԻԿԵԱՆ 1895
Ճանիկեան Յ. Կ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, Տպարան Մ. Դ. Ռօտինեանց, 1895:

ՄԵԼԻՔԵԱՆ, ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ 1917
Մելիքեան Ս. Ա., Տէր-Ղևոնդեան Ա. Գ., Շիրակի երգեր, հ. Ա., Թիֆլիս, Թ.Հ. Երաժշտական ընկերութեան հրատ., 1917:

ՊԻԿԻՉՅԱՆ 2012
Պիկիչյան Հ. Վ., Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երևան, «Ամրոց Գրուպ», 2012:

ՓԱՀԼԵՒԱՆՅԱՆ 2007
Փահլևանյան Ա. Ա. (խմբ.), Հայրենի երգեր, Երևան, «Նոր գիրք», 2007:

AMY DE LA BRETEQUE 2014
Amy de la Bretèque E., Lamentations de femmes kurdes déplacées : les chemins de l'identitn kurde en Turquie aujourd'hui, Paris, Universitn Paris–8 Saint-Denis, 2014.

DOJA 2014
Doja A., Socializing Enchantment: A Socio-Anthropological Approach to Infant-Directed Singing // Music Education and Cultural Socialization International Review of the Aesthetics and Sociology of Music, 2014, Vol. 45, № 1 (June), 115–147.

GAY 2011
Gay L., Lullaby // Folklore: An Encyclopedia of Beliefs, Customs, Tales, Music, and Art (edited by McCormick Charlie T., White Kim Kennedy), Vol. 1, ABC-CLIO, Santa Barbara, 2011, 514–515.

LING 1997
Ling J., A History of European Folk Music, Rochester, University of Rochester Press, 1997.

LORTAT-JACOB 1992
Lortat-Jacob B., La berceuse et l'épopée: questions de genre//Revue de musicologie, 1992, T. 78, № 1, 5-25.

MINTON 1998
Minton J., Lullaby // American Folklore: An Encyclopedia (edited by Brunvand J. H.), Routledge, Abingdon Oxford, 1998, 294–295.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ն. Յ. Խաչատուրեան
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

Երաժշտաբանահիւսական տարբեր ժանրերի փոխազդեցութիւնն ու փոխներթափանցումը հայ ժողովրդական օրօրներում

Հիմնաբառեր՝ օրօր, երաժշտաբանահիւսութիւն, ժանր, մանկական երգ, պատմական երգ, լալիք, վիպաքնարական երգ, պարերգ, աշուղական երգ, աշխատանքային երգ:

Օրօրները դարերի ընթացքում կրել են բովանդակային փոխակերպումներ՝ թէ՛ բանաստեղծական և թէ՛ երաժշտական: Դրանք սկզբնապէս օրհնաբանական երգեր էին՝ ձօնուած երեխային, միևնոյն ժամանակ՝ խաղաղ մթնոլորտ ստեղծելու միջոց էին՝ երեխային ընդարմացնելու և քնեցնելու համար: Մարդկային հանրոյթի և կենցաղի զարգացմանը զուգընթաց՝ օրօրներն առաւել լայն բովանդակութիւն ու ձև են ընդունել: Ներկայումս բազմաթիւ նմուշներ կրում են այլ բանահիւսական ժանրերի ներգործութեան հետքերը, այդ թւում՝ պատմական, լալիքի և ողբի, քնարական և աշխատանքային ժանրերին բնորոշ տարրեր: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ երաժշտաբանահիւսական այլ ժանրերի ազդեցութիւններն ու ներթափանցումը օրօրների մէջ արտայայտուել են բազմատեսակ ուղիներով. թափառող սիւժէների և թեմատիկ խաչաձևումների միջոցով, պատրաստի եղանակի գործածմամբ, ինչպէս և կնոջ աշխատանքային գործունէութեան բազմավեկտորութեան հետևանքով: Այդ «եկամուտ» տարրերը նկատելիօրէն ազդել են օրօրներում որոշակի տողերի ու պատկերների, նաև դրանցից բխող եղանակաւորման վրայ:

N. H. Khatchadourian
Komitas Museum-Institute

Interaction and Interpenetration of Different Music Folklore Genres in Armenian Folk Lullabies

Keywords: Lullaby, folk music, genre, children's song, historical song, lament, epic-lyrical song, dance song, troubadour song, work song.

The lullaby is considered as a distinct and stable genre in folk music. Unlike the ritual hymns, which are perhaps the oldest in the history of music, the lullaby or cradle-song can be described as one of the first pillars of secular singing oral tradition. In ancient times, lullabies were born from primitive onomatopoeia and ideophonic words which received melodic rhythmic tone. On one hand, they were used as blessing songs dedicated to the child, and on the other hand they also had a practical purpose to create a relaxing atmosphere for the child and to lull him to sleep.

Along with the development of the society and the lifestyle, lullabies have undergone significant changes. By developing and acquiring new features, the many varieties of lullabies often have received a much greater content and style than being merely a song bouquet of wishes and blessings sung to the child. In the 19th and 20th centuries, we find examples of lullabies, which somehow carry the influence of other folklore genres. In many lullabies, song elements belonging to historical, lament, love, and other genres can be distinguished. In this paper, an attempt is made to identify the above-mentioned strata that were originally spurious to the very essence of lullabies and are actually the result of the impact of various genres.

The study shows that the interaction and interpenetration of different music folklore genres in Armenian folk lullabies have been expressed in different ways: through wandering plots and thematic mergers, through the use of already created melodies, and from the result of women's multifunctional work. These elements have a noticeable impact on certain lines and images, as well as on the melody originated from them.

Н. А. Хачатурян
Музей-институт Комитаса

Взаимодействие и интерпенетрация разных музыкальных фольклорных жанров в армянских народных колыбельных

Ключевые слова: колыбельная, музыкальный фольклор, жанр, детская песня, историческая песня, плач, эпическая лирическая песня, танцевальная песня, ашугская песня, рабочая песня.

Колыбельная считается отдельным и устойчивым жанром народной музыки. В отличие от ритуальных гимнов, которые, возможно, являются старейшими в истории музыки, колыбельную можно назвать одним из первых жанров светской певческой устной традиции. В древние времена колыбельные рождались из примитивных звукоподражаний и ономатопоэтической лексики, что получало то или иное мелодико-ритмическое оформление. С одной стороны, они были песнями-благословениями, посвященными ребенку, а с другой – преследовали практическую цель убаюкать малыша.

По мере развития общества и изменения образа жизни человечества колыбельные также претерпевали значительные изменения. В связи с новой функциональностью разновидности колыбельных обретали иное содержание, менялся также их стиль, это уже не были сугубо песни-пожелания либо песни-благословения. В XIX–XX веках находим примеры колыбельных, которые в той или иной степени являются отражением влияния других фольклорных жанров. Во многих колыбельных можно различить элементы песен, относящихся к жанру плача, к историческому, любовному и иным жанрам. Данная статья являет собой попытку идентификации вышеупомянутых жанровых пластов, которые изначально были чужды колыбельным и являются результатом воздействия других жанров.

Исследование показывает, что взаимодействие и взаимопроникновение различных жанров музыкального фольклора в армянских народных колыбельных находит выражение в странствующих сюжетах и тематических «скрещиваниях», в использовании уже имеющихся мелодий, а также обусловлено спецификой многовекторного женского труда. Эти элементы оказывают заметное влияние на содержание и мелодию песен.

IV

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Միքայելյան
Ս. Փարաջանովի թանգարան

ԲԱՆՏԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդվածի նպատակն է՝ արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ լրացնել խորհրդային շրջանի բանտային մարդաբանության պատկերը: Խնդիրը քննարկվում է անվանի կինոբեմադրիչ և արվեստագետ Սերգեյ Փարաջանովի (Սարգիս Փարաջանյանց) կոլաժների, գծանկարների և ֆիլմի սցենարի ուսումնասիրության միջոցով: Փարաջանովը չորս տարի է անցկացրել բանտում, որտեղ իրենց պատիժը կրում էին ծանր հանցանք գործած բանտարկյալներ: Այդ ընթացքում նա ծանոթացել է բանտային առօրյային, կանոններին և բանտարկյալների ճակատագրերին, որոնք պատկերել է իր ստեղծագործություններում: Հոդվածում վերլուծվում են այս, ինչպես և թանգարանում նրա աշխատանքները ներկայացնելու հարցերը: Փարաջանովի՝ նշված ստեղծագործությունները մշակութաբանական հարուստ նյութ են պարունակում բանտային միջավայրի և բանտարկյալների վերաբերյալ:

Հիմնաբառեր՝ խորհրդային բանտ, բանտային ազգագրություն, բանտարկյալների առօրյա, բանտային սովորույթներ, բանտարկյալի ստեղծագործություններ, կոլաժ, թանգարանային ցուցադրություն:

«Նրանք կարծում էին, թե բանտում կդառնամ հակասովետական մարդ,
իսկ ես ուսումնասիրեցի կյանքը մեկուսիչ պայմաններում»:
Սերգեյ Փարաջանով

Խորհրդային բանտը՝ մշակութային մարդաբանի աչքերով

1973–1977 թթ. Ս. Փարաջանովը բանտարկված է եղել Ուկրաինայի խիստ ռեժիմի ճամբարներում: Մեկուսարանի պայմաններում նրա ստեղծած գծանկարների, կոլաժների և ֆիլմի սցենարի միջոցով փորձել ենք ուսումնասիրել 1970–1980-ականների խորհրդային բանտի մշակութային մարդաբանությունը: Նշված ժամանակահատվածի խորհրդային բանտային մարդաբանության վերաբերյալ ամբողջական պատկերացում են տալիս Եկատերինա Եֆիմովայի և Լև Սամոյլովի (իրական անունը՝ Լև Սամուիլի Կլեյն) ուսումնասիրությունները:

Ե. Եֆիմովան՝ իբրև մշակութային մարդաբան, ուսումնասիրել է տվյալ ժամանակաշրջանի բանտի կենցաղը, ավանդույթներն ու բանահյուսությունը՝ հարցազրույցներ վարելով և արտաքին դիտարկումներ անելով բանտում՝ որպես մշակութաբանական դաշտում[1]: Լ. Սամոյլովը, մասնագիտությամբ մոտ լինելով մշակութային մարդաբանությանը և հանգամանքների բերումով հայտնը-

[1] Ефимова 2004,

վելով ազատազրկման մեջ, բանտային ենթամշակույթն (*սուբկուլտուրան*) ուսումնասիրել է որպես ներգրավված դիտարկող: Իր դիտարկումների ընթացքում, ուշադրություն դարձնելով ճամբարում քրեական միջավայրի *սահմանակարգմանն* ու *կյանքի ծիսականացմանը*, հանցագործ հանրույթի ինքնագործ կառույցներին, նա եզրակացրել է, որ ճամբարում ձևավորված է յուրահատուկ քրեական հանրույթ, որը տիպաբանորեն համադրելի է արխաիկ հասարակությանը, և այն կարոտ է ուսումնասիրության[2]:

Դաշտում ներգրավված լինելու հանգամանքով՝ Փարաջանովն ավելի մոտ է Սամոյլովին, սակայն, ի տարբերություն նրա, Փարաջանովն այս թեմային չի անրադարձել որպես մշակութային մարդաբան: Բանտային առօրյան, կարգ ու կանոնները, բանտարկյալների ճակատագրերը Փարաջանովի համար ստեղծագործելու նյութ են եղել: Չնայած երկուսն էլ անցել են բանտային կյանքի նմանատիպ տառապանքներով, սակայն Սամոյլովի ներգրավված դիտարկումները կարծես թե հնարավորություն են տվել գոնե որոշ չափով տարանջատելու իրեն նկարագրածից, մինչդեռ Փարաջանովի «ստեղծագործություն-ուսումնասիրությունը»՝ հենց իր պատմությունն ու իր ապրածն է:

Խորհրդային բանտը հատկանշվում էր իր ներքին կանոններով և արժեքներով: Այստեղ կարևոր տեղ էր գրավում բանտային ժարգոնը, բանտարկյալների կարգավիճակը և միմյանց հետ շփման արարողակարգը: Կնոջը գրած իր առաջին նամակներից մեկում Փարաջանովը պատմում է, որ հայտնվել է մի աշխարհում, որից ինքը ոչինչ չի հասկանում, չգիտի խոսել ժարգոնով, չի ծխում կամ չի խմում *չիֆիր*՝ չափազանց մուգ թեյ, չունի դաջվածքներ և շրջապատված է մի քանի անգամ դատապարտված գողերով ու կրկնահանցագործներով (*ռեցիդիվիստներ*), որոնցից պետք է զգուշանալ և ոչ մի դեպքում չի կարելի ընկերանալ նրանց հետ[3]: Բանտում հայտնվելով՝ Փարաջանովը սկսում է ստեղծագործել՝ օգտագործելով ձեռքի տակ եղած ցանկացած նյութ՝ թղթից ու թաշկինակից մինչև չորացրած ծաղիկներ ու կաթի շշերի կափարիչներ:

Բանտային իրականության դրսևորումները Փարաջանովի գործերում

Ռուսական բանտում հնուց տարածված էր *դաջվածք* ստանալու արարողությունը, որի հանդեպ բանտարկյալներն ունեցել են հատուկ վերաբերմունք: Բանտային պայմաններում ազատազրկվածի համար միակ «մասնավոր սեփականությունը» իր մարմինն էր, որի վրա նա կրում էր ամբողջական տեղեկատվություն իր անձի մասին. մարմինը հանդես էր գալիս որպես զարդարանք և յուրատեսակ գաղտնալեզու հանցավոր աշխարհում[4]: Բանտարկյալների դաջվածքները ևս արվեստի նյութ են դարձել Փարաջանովի համար. նրա պլաստիկ արվեստում առանձնահատուկ տեղ ունեն «*Մի քանի դրվագ Ջոկոնդայի կյանքից*» *մետամորֆոզները*, որոնք ծնվել են հենց բանտային մշակույթից:

---

2 Самойлов 1990.

3 Параджанов 2000, 41. Ս. Փարաջանովի նամակների նոր հրատարակությունը տես Параджанов 2018.

4 Ефимова 2004, 191.

«**Մի քանի դրվագ Ջոկոնդայի կյանքից**». Փարաջանովի հետ միասին նստած բանտարկյալներից մեկը թիկունքին ունեցել է Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդայի» պատկերով դաջվածք, որն, ըստ Փարաջանովի, դեմքի տարբեր արտահայտություններ էր ընդունում՝ մերթ լացում էր, մերթ աչքով էր անում կամ ծիծաղում. տպավորությունն այն էր, թե Ջոկոնդան ողջ է[5]: Այսինքն՝ այն, ինչն այսօր թանգարանում ներկայացվում է որպես արվեստի ստեղծագործություն, մշակութային մարդաբանական նյութ է պարունակում բանտային կյանքից:

«**Կենտ**». այս շարքում բանտային բազմաթիվ պատկերներով Փարաջանովն արտացոլել է խորհրդային կալանավորի՝ *զեկ*ի կերպարը, ստեղծելով համաճամբարակիցների մի ամբողջ պատկերասրահ: Եթե Լ. Սամոյլովը և Ե. Եֆիմովան նկարագրում են, թե ով էր իսկական *զեկ*ը բանտում, ապա Փարաջանովն այդ մարդուն ներկայացնում է գծանկարի միջոցով: Բանտային ժարգոնում զեկը՝ ճամբարը (*զոնը*) նայողն է, որին բոլորը լսում և հարգում են, որին նաև ենթարկվում են: Յուրաքանչյուր ոք չէր կարող լինել *զեկ*: Իսկական *զեկ* դառնալու համար բանտարկյալը պետք է ունենար համապատասխան բնավորության գծեր, կարգավիճակ: Նա պետք է ունենար համախոհներ, նրան պետք է հարգեին կամ վախենային նրանից[6] [նկ. 1, էջ 244]:

«**Լվացք: Լոգանքի օր զոնայում**» գծանկարում Փարաջանովը ցույց է տալիս, թե ինչպես է մարդը համակերպվում անազատությանը և թրծվում այնտեղ՝ ակամայից փորձելով հարմարվել նրա պայմաններին, ուր փշալարն, անհրաժեշտության դեպքում, կարող է վերածվել լվացքապարանի: Նկարիչն ընդգծում է բանտարկյալի անպաշտպանությունը. ամբողջությամբ մերկ՝ միայն երկարաճիտ կոշիկներով, այլայլված մարդը կանգնած է իր մարմնի ինտիմ հատվածով լրիվ բաց՝ թիկնապահների բանակ, պահակային դիտանոցներ և փշալարե ցանկապատ ունեցող հզոր համակարգի առջև[7]: Փաստորեն, ընդամենը մեկ մերկ բանտարկյալի միջոցով Փարաջանովն ամբողջացրել է լոգանք ընդունելու բանտային արարողակարգը [նկ. 2, էջ 244]:

«**Ճապոնական կայսեր առագաստը**». այս նկարով Փարաջանովն անդրադարձել է բանտային կենցաղում կարևորագույն տեղ զբաղեցնող պոռնոգրաֆիային: Իրականում այս ստեղծագործության մեջ բանտային առօրյան արտացոլված չէ ուղղակիորեն: Նկարն, ի սկզբանե *զեկ*երի պոռնոգրաֆիկ պատվեր լինելով, վերածվել է արվեստի բարձրարժեք գործի: Փարաջանովի բանտային շարքում սա միակ պահպանված գործն է, որ կարելի է դասել պոռնոգրաֆիկ ժանրին՝ թեկուզև իր ստեղծման պատմությամբ[8] [նկ. 3, էջ 245]:

---

5 Катанян 1994, 24.

6 Ռուս. *зек* (*зэка*, ЗК) բառեզրը հապավում է, որ գալիս է «заключенный каналоармеец» («ազատազրկված ջրանցքաբանակային») կապակցությունից. պաշտոնական փաստաթղթերում գործածվել է 1920–1950-ականներին՝ Բելոմոր-բալթիական ջրանցքի շինարարության ժամանակ, հետագայում տարածվել է բոլոր կալանավորների վրա:

7 Гучинова 2013, 48.

8 Թանգարանի այցելուներն ու նույնիսկ՝ որոշ մեկնաբաններ նույն ժանրին են դասում նաև «Սիֆիլիսը զոնայում» և նմանատիպ այլ գործեր, որոնք, սակայն, չեն հետապնդում

«**Ինքնաշեն խաղաքարտեր**». ինչպես հայտնի է, թղթախաղը խորհրդային բանտային կյանքի անբաժան մասն էր: Բանտակից ընկերներին զբաղմունք ստեղծելու համար Փարաջանովը նկարում է խաղաքարտեր՝ թղթախաղի պրակտիկան համակցելով իր ստեղծագործական արվեստին [նկ. 4, էջ 245]:

«**Ես և իմ կաթողիկոսը**». առաջին անգամ բանտում հայտնվելը՝ մարդու մեջ առաջացնում է անհասկանալի, քաոսային մի իրավիճակ: Այդ նոր հանրային միջավայրին հարմարվելը և գոյատևման օրենքները յուրացնելը երբեմն ուղեկցվում է հորինվածքներով և առասպելներով[9]: Փարաջանովի «*Ես և իմ կաթողիկոսը*» կոլաժը, կարող ենք ասել, որ այդպիսի մի հորինվածք է, որտեղ նա, օգտագործելով բանտային տարրերը, ստեղծել է արվեստ: Նրա՝ բանտում գտնվելու տարիներին հաճախ էին լուրեր պտտվում, թե ինքը մահացել է. փաստորեն, Փարաջանովն ինքը այդ լուրերն օգտագործել է, և նույնիսկ երազել, թե կաթողիկոսը կմասնակցի իր թաղմանը: Այսինքն՝ իր անձը և իր հորինվածքն օգտագործել է բանտային թեման արտացոլելու համար [նկ. 5, էջ 246]:

Ֆիլմերում ազգագրական և մարդաբանական տարրերի խնդիրը

Փարաջանովն իր ֆիլմերում, ինչպես հայտնի է, առատորեն օգտագործել է ազգագրական իրողություններ և տարրեր: Ազգագրությունն ու մշակութային մարդաբանությունն այն նյութն է, որից նա ստեղծում էր իր արվեստը՝ հաճախ այն ոճավորելով, իսկ երբեմն էլ՝ հորինելով[10]: Ոմանք Փարաջանովի՝ նման ֆիլմերը դասում են վիզուալ մարդաբանության՝ *պսեվդո-ազգագրական* ոլորտին[11]: Ի տարբերություն Փարաջանովի հայտնի «պսեվդո-ազգագրական» ֆիլմերի՝ իր բանտային սցենարներն առնչվում են թեև հորինովի, սակայն ճշգրիտ բանտային իրականությանը՝ որքան էլ որ դրանք գերիրապաշտական (*սյուրռեալիստական*) և առասպելաստեղծ թվան ընթերցողին և, հուսանք, դրանցով նկարահանվելիք ֆիլմերի դիտողին: Հենց դա էլ հիմք է տալիս պնդելու, որ այս դեպքում իսկապես գործ ունենք բանտի մշակութային մարդաբանության հետ:

Եթե Փարաջանովը հաճախ որպես իր ֆիլմերի նյութ էր դարձնում գրքերից վերցրած կամ հորինած ազգագրականը և դրա միջոցով էր ստեղծում իր բանաստեղծականությունն (*պոետիկան*) ու գեղագիտությունը (*էսթետիկան*), ապա իր ապրած և դիտարկած բանտային կյանքն արտացոլված է իր բանտային շրջանի արվեստում՝ թե՛ գծանկարների ու տիկնիկների մեջ և թե՛ չիրագործած ֆիլմերում:

էրոտիկ նպատակ: Դրանք պարզապես պատկերում են զեկերի մերկ մարմիններ, ինչն ուղղակի բանտարկյալների դաժան առօրյայի արտացոլանքն է, այլ ոչ թե զվարճանքի միջոց: Այս շարքն ավելի ճիշտ կլիներ բնութագրել որպես «դաժան ռեալիզմ», որն այսօր ընկալվում է որպես սյուրռեալիզմ: Այսուհանդերձ, չի բացառվում, նույնիսկ՝ խիստ հավանական է, որ Փարաջանովի համաճամբարակիցներն այդ գործերը կարող էին ընկալել որպես պոռնոգրաֆիա:

9 Ефимова 2004, 19–20.

10 Abrahamian 2001–2002, 67–91.

11 Աբրահամյան 2016, 22-րդ բոպե:

Բանտարկյալի կյանքը նկարագրող ֆիլմը

Իր նամակներից մեկում Փարաջանովը գրում է, որ դարձել է բանտարկյալներից շատերի խոստովանահայր, և նրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը մի ֆիլմի սցենար է: «Կարապի լիճը. զոնա» ֆիլմի սցենարը հենց այդպիսի պատմություն է՝ մի *զեկ*ի ճակատագրի մասին[12]: Այս պատմությունը Փարաջանովը, *զոնա*յից դուրս գալուց հետո, բանավոր կերպով փոխանցել է բեմադիր Յուրի Իլենկոյին՝ Կիևում: Վերջինս ձայնագրել է Փարաջանովին և դրա հիման վրա, նշելով նրան իբրև համասցենարիստ, 1990 թ. նկարահանել է «Կարապի լիճը. զոնա» կինոնկարը, որը Կաննի փառատոնում արժանացել է երկու մրցանակի:

Եթե համեմատենք Ա. Սոլժենիցինի «Իվան Դենիսովիչի մեկ օրը» հանրահռչակ վիպակը Փարաջանովի՝ բանտային կյանքին վերաբերող այս սցենարի հետ, ապա կարելի է նկատել, որ Սոլժենիցինը մանրամասնորեն նկարագրում է բանտային առօրյան, մինչդեռ Փարաջանովի սցենարը զուրկ է ճշգրիտ նկարագրական տվյալներից: Սցենարի սկզբնական տողերից երևում է, որ այն ոչ թե պարզապես պատմում է բանտարկյալի փախուստի մասին, այլ դրա համար ստեղծում է մտացածին իրականություն: Արվեստագետն ու բեմադրիչը այդ անտանելի իրականությունն այնպես են ներկայացնում, որ ընթերցողին թվում է, թե ինքը կարդում է մի *սյուրռեալիստական* ստեղծագործություն: Սակայն այդ բանտային գերիրապաշտությունը (*սյուրռեալիզմն*) այնքան «հասկանալի էր» խորհրդային մարդուն, որ շատերը կարծում էին, թե սցենարի սյուժեն հիմնված է իրական դեպքի վրա:

Խորհրդային խիստ ռեժիմի ճամբարն ուներ անմարդկային պայմաններ, որտեղից փախուստի մասին խոսք անգամ լինել չէր կարող, սակայն հերոսին հաջողվում է փախչել բանտից: Ճանապարհին տեղակայված թիթեղյա մարզային նշանը՝ աշխատավոր դասի խորհրդանիշ «մուրճ և մանգաղ»-ը դառնում է բանտարկյալի միակ ապաստարանը, որտեղ նա հանդիպում է մի կնոջ և սիրահարվում: Կինն ամեն օր արևածագից առաջ հերոսին տաք ուտելիք է բերում և հեռանում մթնով:

Մի օր էլ կինն, այցելելով իր սիրեցյալի ապաստարանը, այն դատարկ է գտնում: Տունդարձի ճանապարհին՝ ոստիկանատան մոտ, նա տեսնում է պաստառը՝ «Փնտրվում է հանցագործ» վերտառությամբ, խնամքով պոկում է սիրեցյալի պատկերը, այնուհետև տանը տեղադրում շրջանակի մեջ ու դնում սուրբ Նիկոլայի թղթե սրբապատկերի կողքին: Այս դրվագում գողին սրբացնելու, սրբի կողքին տեղադրելու մոտիվը համադրելի է մարդասպանի մարմնի վրա արված՝ Տիրամոր կամ Հիսուսի դաջվածքին[13]: Այսինքն՝ այն, ինչ Փարաջանովն արտահայտել է գերիրապաշտական (*սյուրռեալիստական*) եղանակով, իրականում կար և գոյություն ուներ բանտային առօրյայում:

Ֆիլմի վերջում փախստական բանտարկյալը, վերադառնալով բանտ, լաք խմելով ինքնասպանության փորձ է կատարում, ինչը հակասում էր իր խա-

12 Параджанов 2001, 341–364. Այս ֆիլմի մասին տես նաև Աբրահամյան 2014:

13 Балдаев 2001, 33–36, 140. Նման դաջվածքները հաճախ դասվում են «հմայիլ» («оберег») խմբին:

վում (*կապտա*, *մասպ*) ընդունված օրենքներին: Խնդիրն այն է, որ հերոսը պատկանում էր «*բրդյաների*» («шерстяные») արտոնյալ կաստային, որի անդամները *զոնայում* (կալանավայրում) ոչինչ չէին խմում՝ նույնիսկ *օդեկոլոն* (օծանելիք)[14]:

Մահացածին պետք է տանեին հարևան գյուղ, որպեսզի հանձնեին դիարան՝ մահը վկայելու համար: *Զոնա*յում սկսվում են քննարկումներ, թե ո՛վ և ինչպե՛ս դա պետք է անի: Այստեղ Փարաջանովը մեջբերում է մահվան վկայության բազմաթիվ՝ մեկը մյուսից անհեթեթ, առասպելախառն միջոցներ, օրինակ՝ հեծանվաճաղով բանտարկյալի սիրտը խոցելը, ընդ որում՝ *զոնա*յի պետի կողմից[15]: Ուշ երեկոյան մահացածին, խոտածածկ կառքով, վերահսկիչի ուղեկցությամբ, տեղափոխում են դիարան, որտեղ էլ պարզվում է, որ նա ողջ է, և քանի որ վերահսկիչի արյան խումբը համընկնում է հերոսի արյան խմբին, ապա վերահսկիչն, իր արյունը տալով, փրկում է նրա կյանքը:

Փարաջանովի սցենարում պարադոքսն այն է, որ *զոնա*յից վերահսկիչն է «մահացած» *զեկ*ին տանում դիարան, իսկ այնտեղից արդեն *զեկ*ն է թուլացած վերահսկիչին բերում *զոնա*: Բայց այստեղ սկսվում են ամենադրամատիկ իրադարձությունները, քանի որ հերոսը խախտել էր բանտային օրենքները՝ թույլ էր տվել, որ *օվչարկա*յի («մենթ շան») արյունն իր արյան մեջ ներարկեն: Բանտարկյալները ֆիլմի հերոսին սկսում են համարել «պիղծ մարդ», որն իրավունք չունի դիպչելու «սուրբ կերակրին»: Ի վերջո հերոսը կտրում է իր երակները և արնաքամ լինում:

Եզրահանգումներ

Փարաջանովն իր ստեղծագործություններով ստեղծել է բանտային առօրյայի պատկերը, ուստի դրանք վեր են զուտ բանտարկյալի աշխատանքներ համարվելուց: Մեր կարևորագույն խնդիրներից մեկն էլ այն է, թե ինչպես է պետք ներկայացնել Փարաջանովի աշխատանքները թանգարանային ցուցադրության մեջ. համարել դրանք պարզապես բանտարկյալի ստեղծագործություններ, կենսագրության մի մա՞ս, թե՞ բանտի մշակութային մարդաբանություն[16]:

Ի տարբերություն Սամոյլովի, ով բանտային առօրյայի մասին գրել է իր հիշողությունների ու օրագրերի վրա հենվելով, Փարաջանովը բանտային թեմայով իր աշխատանքների զգալի մասը ստեղծել է տեղում՝ ճամբարում: Այ-

---

14 Параджанов 2001, 355. Փարաջանովը չի բացատրում այդ կաստայի առանձնահատկությունները: «Բրդյաներ» կաստայի («մաստի») վերաբերյալ իրարամերժ մեկնաբանությունները տե՛ս Alfa Forex կայքէջի 2013 թ. մայիսի 28-ի հարց ու պատասխանի ֆորումում. Существуют три масти на зоне, Alfa Forex, 28 мая 2013 – http://www.vturme.ru/asked/2013/05/sushhestvuet-tri-masti-na-zone/ (24.10.2017).

15 Параджанов 2001, 341–364.

16 1996 թ. այսպիսի մի խնդիր էր ծագել Փարաջանովի թանգարանի ներկայիս տնօրեն Զավեն Սարգսյանի և կինոգետ Գարեգին Զաքոյանի միջև՝ Ժողովրդական արվեստի թանգարանում «Զոնայի արվեստը» ցուցահանդեսի կազմակերպման ժամանակ: Զավեն Սարգսյանը՝ այն ժամանակ նաև այդ թանգարանի տնօրենը, տրամադրելով Փարաջանովի բանտային աշխատանքները, այդուհանդերձ համարում էր, որ դրանք ոչ թե սովորական բանտարկյալի ստեղծագործություն են, այլ բարձրարվեստ գործեր: Ուստի նա պնդում էր, որ Փարաջանովի գործերը չկախվեն շարքային զեկերի ստեղծագործությունների կողքին [Абрамян 2011, 15]:

նուամենայնիվ, կան նաև գործեր, որոնք նա արել կամ լրացրել է բանտից դուրս գալուց հետո, օրինակ՝ «*Գողը երբեք լվացարար չի դառնա*» գործը: Այս *սասամբլաժ*ում Փարաջանովն իրեն պատկերել է բանտում՝ ձեռքին ավելի կոթ, որի համար օգտագործել է ջութակի աղեղ: Այսինքն՝ վերաձևակերպելով այս *սասամբլաժ*ի անվան՝ բանտային հանրահայտ առածը («Գողը երբեք լվացարար չի դառնա»), կարելի է հասկանալ՝ «արվեստագետը միշտ կմնա արվեստագետ» [նկ. 6, էջ 246]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2014
Աբրահամյան Լ. Հ., Փարաջանովի հետ մեկ օր, որ մի ամբողջ կյանք արժե (ազգագրագետ Լևոն Աբրահամյանի հուշերը, պատրաստեց՝ Ն. Փայտյան) // Kino աշխարհ, 2 Դեկտեմբեր 2014,18:04, https://kinoashkharh.am/2014/12/փարաջանովի-հետ-մեկ-օր-որ-մի-ամբողջ-կյան/

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2016
Աբրահամյան Լ. Հ., «Վիզուալ մարդաբանություն» դասախոսությունը, «Ազգագրական մտքի պատմություն» շարք, թեմա 35 // Բուն TV, 2016: http://boon.am/levon–35/

АБРАМЯН 2011
Абрамян Л.А. Визит в музей кинорежиссера, обернувшийся праздником // «Թանգարան» հանդես, Երևան, 2011, 15-16:

БАЛДАЕВ 2001
Балдаев Д. Татуировки заключенных, из личного собрания, Санкт-Петербург, «Лимбус пресс», 2001.

ГУЧИНОВА 2013
Гучинова Э.-Б., Черное солнце и огороженный простор: образы неволи в творчестве Сергея Параджанова и Кадзуки Ясуо // Imagining the Landscape: Views from Armenia and Japan (ed. Tadashi Nakamura) // Comparative Studies on Regional Powers, № 12, Sapporo, Slavic Research Center, Hokkaido University, 2013, 45-58. http://src-h.slav.hokudai.ac.jp/rp/publications/no12/12-03_Guchinova.pdf

ЕФИМОВА 2004
Ефимова Е., Современная тюрьма. Быт, традиции и фольклор, Москва, Объединенное гуманитарное изд. ЗАО, 2004.

КАТАНЯН 1994
Катанян В., Параджанов. Цена вечного праздника, Москва, «Четыре искусства», 1994.

ПАРАДЖАНОВ 2000
Параджанов С.И., Письма из зоны (автор проекта и главный редактор Г.Закоян), Ереван, «Фильмадаран», 2000.

ПАРАДЖАНОВ 2001
Параджанов С.И., Исповедь: Киносценарии. Письма, Санкт-Петербург, «Азбука», 2001.

ПАРАДЖАНОВ 2018
Параджанов С.И., Изоляция (составитель З. Саргсян), Ереван, Музей С. Параджанова, 2018.

САМОЙЛОВ 1990
Самойлов Л., Этнография лагеря // Советская этнография, 1990, № 1, 96-108.

ABRAHAMIAN 2001–2002
Abrahamian L.H. Toward a Poetics of Parajanov's Cinema // Armenian Review, 2001–2002, Vol. 47/48, 67–91.
http://www.vturme.ru/asked/2013/05/sushhestvuet-tri-masti-na-zone/

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Գ. Միքայելյան
Սերգեյ Փարաջանովի թանգարան

Բանտի մշակութային մարդաբանությունն՝ ըստ Փարաջանովի ստեղծագործությունների

Հիմնաբառեր՝ խորհրդային բանտ, բանտային ազգագրություն, բանտարկյալների առօրյա, բանտային սովորույթներ, բանտարկյալի ստեղծագործություններ, կոլաժ, թանգարանային ցուցադրություն:

Նշանավոր արվեստագետ Սերգեյ Փարաջանովի կոլաժների, գծանկարների և ֆիլմի սցենարի նկարագրության միջոցով փորձ է կատարվում վերլուծելու բանտի մշակութային մարդաբանության արտացոլումը արվեստի գործերում:

A. G. Mikayelyan
S. Parajanov Museum

Ethnography of Prison Based on Parajanov's Works

Key words: prison ethnography, daily life of prisoners, collage.

The article presents the social anthropology of the Soviet prison in the 1970s based on the collages, graphic works and a film script created in prison by the famous film director and artist S. Parajanov. Parajanov was not a researcher while reflecting the prison cultural anthropology in his artworks; he used the prison daily life, its order and internal rules, the tattooing, the image of capo, the card game and the pornography as a material to create. Since Parajanov's art is famous for his pseudo-ethnographic characters and realities, the prison art is studied in this way also through his film script of "Swan Lake: Zone".

А. Г. Микаелян
Музей С. Параджанова

Тюремная этнография согласно произведениям Параджанова

Ключевые слова: тюремная этнография, повседневная жизнь заключенных, коллаж.

В статье на основе творчества (коллажей, графических работ и сценариев) известного кинорежисера и художника С. Параджанова представлена социальная антропология советской тюрьмы 1970-ых годов. Тюремная жизнь, её законы, образ зека, карточные игры и порнография послужили материалом для творчества С. Параджанова. Поскольку творчество Параджанова известно своими псевдоэтнографическими персонажами и реалиями, то тюремное искусство можно воспринять через сценарий "Лебединое озеро. Зона".

Հայկուհի Մուրադյան
ԵՊՀ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ[1]

Մշակույթի տները Խորհրդային Հայաստանում, ինչպես և ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, խորհրդային «կուլտուրական շինարարության» հիմնական ինստիտուտներից էին: Դրանք ձևավորվել էին՝ խորհրդային արդիականացման, հանրության մշակութային կյանքի աշխուժացման, խորհրդային գաղափարախոսության և իշխանությունների քաղաքական ու սոցիալ-մշակութային նպատակների իրագործման համար:

Հոդվածի նպատակներից մեկն է՝ դիտարկել խորհրդային շրջանում մշակույթի տների դերակատարությունը, գործառույթները, կառուցվածքը, հիմնական միջոցառումները: Երկրորդ նպատակը՝ հետազոտել, թե ետխորհրդային շրջանում ինչպիսի իմաստաբանական և գործառութային փոխակերպումների են ենթարկվել Մշակույթի տները:

Հետազոտությունը հիմնված է դաշտային աշխատանքի վրա, որը կատարվել է Երևան քաղաքում, Արարատի մարզի շուրջ երեսուն գյուղական համայնքներում, Մասիս, Արտաշատ, Վեդի, Արարատ քաղաքներում: Խորհրդային Մշակույթի տների քննությանը մեծապես նպաստել է նաև ժամանակի մշակութային ամսագրերի, թերթերի համապատասխան նյութերի ուսումնասիրությունը («Կուլտուր-լուսավորական աշխատանք», «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ», «Սովետական գրականություն», ևն):

Հիմնաբառեր՝ *Մշակույթի տուն, Խորհրդային Միություն, մշակութային քաղաքականություն, խորհրդային արդիականացում, կուլտուրական շինարարություն, Խորհրդային Հայաստան, փոխակերպումներ, ետխորհրդային Հայաստան*:

Մշակույթի տների ստեղծման նախադրյալներն ու նպատակները

Ամբողջատիրության (*տոտալիտարիզմի*) արդի տեսաբանների կարծիքով՝ Խորհրդային Միությունում (ԽՍՀՄ) ամբողջատիրական գաղափա-

[1] Դաշտային հետազոտությունն իրականացվել է «Մշակութային քաղաքականությունը ՀՀ-ում 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին» ատենախոսական թեզի շրջանակում 2016-ի հունիս-օգոստոս ամիսներին: Խորացված հարցազրույցներ են անցկացվել Արարատի մարզի գյուղական համայնքների և քաղաքների Մշակույթի տների տնօրենների, աշխատակիցների, այցելուների, համայնքապետարանի և քաղաքապետարանի աշխատակիցների հետ:

ռախոսության քարոզչության համար օգտագործվում էին մամուլը, ռադիոն, կինեմատոգրաֆիան, մշակութային այլ ինստիտուտներ: Մշակույթի գաղափարականացումը հետզհետե վերացնում էր տարբերությունը կրթության և քարոզչության միջև[2]: Այդ նպատակով ձևավորվում էին մշակույթը կառավարելու, վերահսկելու և տարածելու մեխանիզմներ: Խորհրդային Միությունում այդ մեխանիզմների մեջ էական դեր էին խաղում Մշակույթի տները, որոնք համարվում են ԽՍՀՄ խորհրդանիշներից մեկը:

Ոչ միայն Մշակույթի տների, այլև առհասարակ «կուլտուր-լուսավորական հիմնարկների» ողջ համակարգի ձևավորումը կարելի է դիտարկել երկու տարբեր տեսանկյունից:

1. Խորհրդային արդիականացման համապատկերում[3], որը նպատակ ուներ ձևավորելու կրթված հասարակություն: ԽՍՀՄ կազմի մեջ մտնում էին զարգացածության և ազգային-ավանդական ներուժի տարբեր մակարդակ ունեցող հանրապետություններ: Իշխանությունները ձգտում էին նրանց բերել մոտավորապես նույն կրթական-մշակութային աստիճանի, որպեսզի դյուրացվեր քաղաքական գաղափարների տարածումը նրանց մեջ[4]:

2. Քաղաքական քարոզչության (*ագիտացիայի*) համապատկերում. «Կուլտուր-լուսավորական հիմնարկները» ձևավորվում էին որպես քարոզչության հիմնական գործիք:

Մշակույթի տների հիմնումն ու զարգացումը

Սկզբնապես Մշակույթի տների նախատիպեր էին խրճիթ-ընթերցարանները, գյուղական ակումբները, կարմիր անկյունները, որոնք ընդհանրական անունով կոչվում էին «կուլտուր-լուսավորական» հաստատություններ, և որոնց զարգացման հիմքը դրվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի Գլխավոր քաղաքական լուսավորչական կոմիտե ձևավորելու մասին *դեկրետով* (1920-ի նոյեմբեր)[5]: 1930–1931 թվականներին Կոմկուսի Կենտկոմի որոշմամբ՝ խրճիթ-ընթերցարանները վերածվեցին գյուղական ակումբների: Խորհրդային Հայաստանում Մշակույթի տներ կառուցելու մասին առաջին որոշումն ընդունեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն 1932 թ. մարտի 12-ին: Խնդիր դրվեց նաև բոլոր շրջկենտրոններում կազմակերպել «կուլտուրայի տներ» այն հաշ-

---

2 Работяжев 1998, 6; Фицпатрик 2008, 86.

3 Խորհրդային արդիականացումը կամ *մոդեռնիզացիան* բնորոշվում է հասարակության արդյունաբերականացման, գյուղական կյանքի աշխուժացման, *ուրբանիզացման*, գրագիտության տարածման, *սոցիալական մոբիլության* աճով, ինչպես նաև կրոնական գաղափարախոսությունից աշխարհիկ գաղափարախոսություն անցումով [տես Suny 1993, 135].

4 Նման մոտեցումը տեսականորեն հիմնավորվում էր, նախ և առաջ, Վ. Լենինի մի շարք մեջբերումներով, օրինակ՝ «*Որպեսզի կարելի լինի քաղաքական խնդիրները դնել ժողովրդի առաջ..., հարկավոր է հասկանալ, որ այստեղ պահանջվում է բարձրացնել մասսաների կոլտուրական մակարդակը... Առանց դրանց՝ չի կարելի գործնականում իրականացնել մեր խնդիրները*» [Ֆոլյան 1933, 3]:

5 Ղազանչյան 1964, 172:

վով, որ նրանք դառնան գյուղի վերակառուցվող քաղլուսահիմնարկների աշխատանքի կազմակերպման կենտրոններ[6]:

Մշակույթի տները ԽՍՀՄ-ում զանգվածային տարածում ստացան միայն Հայրենական մեծ պատերազմից հետո: Պատերազմի տարիներին իշխանությունների վերհսկողությունը մշակույթի ոլորտում որոշ չափով թուլացել էր, որովհետև ուշադրության կենտրոնում ռազմաճակատն էր: Պատերազմի ավարտից հետո իշխանությունները կարծեք թե վերհիշեցին մշակութային ճակատում իրենց աշխատանքների կարևորությունը և վերսկսեցին ստուգայցերը: Խորհրդային Հայաստանում առաջին այսպիսի ստուգայցը կատարվեց 1946-ին. ի ցույց դրվեց «կուլտուր-լուսավորական հիմնարկների անգործությունը», նյութա-տեխնիկական բազայի բացակայությունը, պատասխանատուները քննադատվեցին՝ հիմնական գործառույթների մեջ թերանալու համար[7]: Սկսվեց շրջանային, գյուղական Մշակույթի տների և ակումբների զանգվածային հիմնումն ու վերահիմնումը:

Ի տարբերություն նախորդ տարանուն և տարագործառույթ հաստատությունների, որոնց հիմնական խնդիրը՝ հանրությանը կրթելն ու գրագետ դարձնելն էր, Մշակույթի տների նպատակը շատ ավելի ընդհանրական էր՝ քաղաքակրթել արդեն գրագետ քաղաքացիներին, արմատավորել խորհրդային գաղափարախոսությունը, ստեղծել «ձևով սոցիալիստական, իսկ բովանդակությամբ՝ ազգային մշակույթ»[8]: Կարևոր է ընդգծել, որ Մշակույթի տները ձևավորվեցին որպես վարչական միավորներ, որոնք վերահսկում էին տվյալ շրջանի մշակութային-լուսավորական հաստատությունների ցանցը:

«Ձնհալ»-ի տարիները և «Ազգային զարթոնք»-ը

Ն. Խրուշչովի քննադատությունն՝ ուղղված Ստալինի դրաշրջանում «անձի պաշտամունքին» և բռնաճնշումների դատապարտումը որոշ չափով մեղմացրեցին վերահսկողությունը մշակույթի ոլորտում և նպաստեցին մշակութային կյանքի ազատականացմանը: Այս շրջանում մշակութային հիմնարկների սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրները փոփոխություններ կրեցին: Նախ, «սոցիալիստական ժողովուրդներին» կրթելու, գրագետ դարձնելու առաջնային առաքելությունն ավարտվել էր դեռևս նախապատերազմյան տարիներին: Ուստի «կարմիր անկյունների», խրճիթ-ընթերցարանների թիվը նվազել էր: Հանրակրթական գործառույթն այլևս միայն միջնակարգ դպրոցներին էր պատկանում: Միևնույն ժամանակ, լայն տարածում ստացան Մշակույթի տները և պալատները, որոնք «ձնհալի» տարիներին, բացի «բովանդակությամբ սոցիալիստական» մշակույթից, շոշափում էին նաև «ազգային» մշակույթի որոշ թեմաներ:

6 Մարտիրոսյան 1975, 17:

7 Гукасян, Юханаев 1962, 101.

8 Խորհրդային մշակույթ ստեղծելու՝ Լենինի սահմանած հիմնական բանաձևը՝ «ձևով ազգային, իսկ բովանդակությամբ պրոլետարական», մեր դիտարկումների համաձայն, 1960-ականներին՝ «Ձնհալի» և ազգային զարթոնքի շրջանում, կարծեք թե փոխում է իր բովանդակությունը:

«Ձնհալի» տարիներին Մշակույթի տների ցանցի ընդլայնումը և աշխույժ գործունեությունը վերահսկում էր 1953-ին ստեղծված *Կուլտուրայի մինիստրությունը*: Մշակույթի տները մի կողմից համարվում էին այդ նախարարությունը ներկայացնող պետական կառույցներ, որոնք իրենց հերթին վերահսկում և ուղղորդում էին շրջանների մշակութային կյանքը, մյուս կողմից՝ ազատականացման շրջանում, նկատվեցին Մշակույթի տներում ընթացող ներքին գործընթացներ, մասնավորապես՝ մշակութային ինքնագործունեության ծավալում:

Մշակույթի տներում մարդիկ ոչ միայն կուսակցա-քաղաքական որոշումներին էին ծանոթանում, այլև ունկնդրում էին թեմատիկ դասախոսություններ, կազմակերպում ազգային-պատմական թեմաներով քննարկումներ: 50–60-ականները կարելի է բնորոշել որպես *դոգմատիզմի* խարխլման ժամանակաշրջան, որի հետևանքները, նախ և առաջ, արտահայտվեցին մշակույթի ոլորտում՝ «Ազգային զարթոնք»ի տեսքով:

Այս ժամանակ էր, որ առաջին անգամ բարձրաձայնվեց արցախյան խնդիրը, արծարծվեցին Հայոց Ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի հողերի վերադարձի հարցերը: 1965-ին Ցեղասպանության 50-ամյակին նվիրված միջոցառումների ցանկ կազմվեց[9], ցույցեր կազմակերպվեցին, որոնց ընթացքում թռուցիկներ էին տարածվում «Հետ տվեք մեր հողերը» գրությամբ[10]:

Մշակույթի տներում սկսեցին ձևավորվել ազգային երգ ու պարի համույթներ: Գեղանկարչության մեջ, բացի *սոցռեալիզմի* թեմաներից, սկսեցին նկարել պատմական թեմաներով (օրինակ՝ Ս. Մուրադյանի «Կոմիտաս. Վերջին գիշեր» (1956), «Զարթոնք» (1963), Հ. Զարդարյանի «Գարուն» (1956), «Զգտում» (1960) կտավները, ևն[11]):

Մամուլի անդրադարձը

Մշակույթի տների գործունեությանը հանգամանորեն անդրադառնում էր պաշտոնական մամուլը, հատկապես «Կուլտուր-լուսավորական աշխատանք» ամսագիրը: Վերջինս պարբերաբար ընտրում էր Մշակույթի տների հաջողված օրինակներ և լուսաբանում՝ միաժամանակ նաև քննադատելով «անգործության» կամ «անտարբերության» մատնված Մշակույթի տները: Մանրամասնորեն ուսումնասիրելով այս ամսագրի 1962-ի հունվարից մինչև 1965-ի դեկտեմբեր լույս տեսած բոլոր համարները՝ նկատում ենք, որ Մշակույթի տներին առնչվող հոդվածները բաժանվում են երկու խմբի.

ա. Օրինակելի Մշակույթի տներ, որոնց գործունեությունը գնահատվում է բարձր: Այս հոդվածներում նշվում է, թե տվյալ շրջանային Մշակույթի տունը ինչ դասախոսություններ է կազմակերպել, թեմատիկ զեկուցումները, շենքային լավ հնարավորությունները, շրջանի մյուս կուլտուր-լուսավորական հիմնարկներին տրամադրած աջակցությունը, *գիտա-աթեիստական* քարոզչության արդյունքները, «ակումբավարի» կամ «դիրեկտորի» ակտիվ գործունեու-

9 Քոչինյան 2003, 25–27, 33–43:

10 Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 13, թպ. 1064, ֆ. հ. 4752:

11 Սարգսյան 2015:

թյունը, քաղաքական համագումարների որոշումների տարածումը և հանրայնացումը (*պրոպագանդան*)[12]:

բ. Բարձիթողի Մշակույթի տներ, որոնց քննադատությունը դառնում է միջոց՝ մնացած Մշակույթի տների գործունեությունը կազմակերպելու և վերահսկելու համար: Այս հոդվածներում քննադատվում է Մշակույթի տների վարած գործունեությունը, ինչպես և շենքային բացասական պայմանները, քարոզիչների (*ագիտպրոպ*ների) անգործությունը, ևն[13]:

Մշակույթի տան գործառույթները

Այսպիսով, Մշակույթի տները 50–60-ականներին զանգվածային տարածում ստացած պետական միավորներ էին, որոնց գործառույթները կարելի է խմբավորել երեք հիմնական կետերի ներքո.

ա. Վարչական. տարածաշրջանի մշակութային մյուս հաստատությունների գործունեության վերահսկում, մշակութային միջոցառումների նյութատեխնիկական բազայի ապահովում, մշակութային գործընթացի մասին հաշվետվությունների կազմում (Մշակույթի տունը կապող օղակ էր համայնքի և իշխանությունների միջև):

բ. Պրոպագանդիստական. կուսակցա-քաղաքական որոշումների տարածում, գիտա-աթեիստական քարոզչություն, թեմատիկ դասախոսությունների, զեկուցումների և քննարկումների կազմակերպում (Մշակույթի տունը կոչված էր ապահովելու համայնքի յուրաքանչյուր անդամի ներգրավվածությունը հանրապետության քաղաքական և մշակութային կյանքին):

գ. Ինքնագործունեական. հատկապես «ձնհալի» տարիներին՝ համայնքի յուրաքանչյուր անդամի մշակութային ինքնադրսևորման և ինքնագործունեության հնարավորության ընձեռում՝ սոցիալ-մշակութային ընդհանրական տարածքի միջոցով (երբեմն, սակայն, մշակութային ինքնագործունեությունը դուրս էր գալիս վերահսկողությունից՝ արժանանանալով իշխանությունների քննադատությանը):

Մշակույթի տան՝ որպես *ագիտ-պրոպի* կարևոր լծակի գործունեությունը գերիշխող մնաց մինչև Խորհրդային Միության փլուզումը:

Մշակույթի տան փոխակերպումները ետխորհրդային շրջանում

Հասարակարգի փոփոխությունը և ֆինանսավորման կտրուկ նվազումը պատճառ դարձան ետխորհրդային շրջանում Մշակույթի տան իմաստային, խորհրդաբանական և գործառութային փոխակերպումների: Մշակույթի տների մի մասն ընդհանրապես դադարեց գոյություն ունենալ:

Վերջին տարիներին նկատվում են Մշակույթի տների իմաստային և գործառութային վերակազմություններ: Մեր հետազոտության արդյունքում հա-

[12] Կիրակոսյան 1962, 13; Մելքոնյան 1962, 14–15; Գրիգորյան 1962, 12:

[13] Գևորգյան 1962, 9–10; Հայրապետյան 1963, 30–31; Սմբատյան 1963, 24–25; Աղաջանյան 1963, 27–29; Գրիգորյան 1963, 23–24:

վաքած նյութերն ի հայտ են բերում Մշակույթի տների վերօգտագործման (*recycling*) մի քանի օրինաչափություն[14].

- Վերանորոգումից հետո Մշակույթի տների մի մասը վերածվել է երգ ու պարի խմբակներ աշխատեցնող հաստատության[15]:
- Մշակույթի տները վաճառվել են մասնավոր անձանց, ովքեր վերածել են դրանք տարբեր արտադրական կառույցների (Ազատավան, Դալար, Բուրաստան, ևն): Դալար գյուղում, օրինակ, Մշակույթի տունը գնել էր մասնավոր մի ձեռներեց, ով այն դարձրել էր գորգագործական ֆաբրիկա[16]:
- Մշակույթի տների շենքերը վերանորոգվել, այստեղ տեղակայվել են համայնքապետարանները և սոցիալական այլ հիմնարկներ, օրինակ՝ բուժկետ, փոստային բաժանմունք, ևն (Մրգավան, Բերքանուշ, Նոր Կյանք, ևն):
- Մշակույթի տան շինությունը կողոպտվել է և ավերվել: Օրինակ՝ Ազատավան գյուղի բնակիչները դժգոհում էին, որ խորհրդային շրջանում ամենամեծ ակումբն ունեցող գյուղն այսօր ոչինչ չունի, գյուղի երեխաները որևէ խմբակ հաճախելու համար պետք է գնան հարևան գյուղ կամ Արտաշատ քաղաք, ինչը ո՛չ բոլորին է հասանելի:
- Մշակույթի տների շենքերը վերածվել են ընտրատեղամասերի, որոնք ընտրություններից հետո մատնվում են անգործության:
- Մշակույթի տները գյուղապետերի կամ երբեմն մասնավոր անհատների նախաձեռնությամբ վերածվել են «ուրախության և տխրության» տների: Սա հատկապես վերաբերում է այն համայնքներին, որտեղ սգո արարողությունները կազմակերպելու կամ ուրախ առիթները նշելու համար առանձին դահլիճներ չկան: Նման դեպքերում երբեմն Մշակույթի տան դահլիճը հարմարեցվում է այդ ծառայությունները մատուցելուն:
- Մշակույթի տունը դեռևս 90-ականներին դարձել է Բաքվի փախստականների համար կացարան (Բաղրամյան գյուղ): Հետաքրքրական է, որ թեև Մշակույթի տուն չի գործում այս համայնքում, բայց համայնքապետարանում մինչ օրս կա Մշակույթի տան տնօրենի *ֆորմալ* հաստիք[17]:

---

14 Խորհրդային ժառանգության վերաիմաստավորված վերօգտագործման խնդիրը ուսումնասիրվել է Սոնյա Լյուրմանի (S. Luehrman) կողմից, որն էլ առաջ է քաշել recylcling-ի հայեցակարգը [տե՛ս Luehrmann 2013, 36–38]:

15 Հետազոտությունը ցույց է տալիս, որ քաղաքային տարածքներում Մշակույթի տները ավելի կենսունակ են և կարողանում են քաղաքապետարանների ու անհատ ներդրողների շնորհիվ պահպանել իրենց գոյությունը՝ թեև հիմնականում մի քանի խմբակների գործունեության տեսքով:

16 Այս ֆաբրիկան որոշ ժամանակ բավական արդյունավետ աշխատել էր՝ ըստ համագյուղացիների խոսքերի: Սակայն գործարանատիրոջ սպանությունից հետո այն դադարել էր գործել՝ վերածվելով լքված տարածքի:

17 Բաղրամյան գյուղում Մշակույթի տան տնօրենի հետ զրույցից պարզեցինք, որ նա զբաղվում է համայնքապետարանի թղթաբանական հարցերով:

Եզրահանգումներ

Մի քանի կետով ընդհանրացնենք Մշակույթի տների վերօգտագործման տեխնիկական տիպաբանությունը.

ա. Հասարակարգի փոփոխության արդյունքում այս կառույցներն այլևս քաղաքական քարոզչության խնդիր չեն ունեցել, ուստի կարիք է զգացվել դրանց վերիմաստավորման և նոր գործառույթների որդեգրման, ինչը հիմնականում տեղի չի չունեցել: Այլևս չկար պետական աջակցություն, և այն Մշակույթի տները, որոնք չկարողացան ինքնուրույն գտնել ներդրումներ, դադարեցին գոյություն ունենալ:

բ. Հայաստանի անկախացումից հետո կտրվեց Մշակույթի տների կապը Մշակույթի նախարարության հետ, ինչով նրանք զրկվեցին պետական ֆինանսավորումից: Եթե 1960-ականներին Մշակույթի տունը վարչական կապող օղակ էր կենտրոնական պետական մարմինների և համայնքի միջև, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո այդ գործառույթը վերացավ:

գ. 1990-ականների սկզբի համատարած սեփականաշնորհման գործընթացի ժամանակ Մշակույթի տները նույնպես շատ դեպքերում սեփականաշնորհվեցին և վաճառվեցին անհատների: Սակայն այս գործընթացը համատարած բնույթ չկրեց, քանի որ շահաբերության տեսանկյունից Մշակույթի տները պակաս հետաքրքիր էին ներդրողների համար:

դ. «Երկաթե վարագույրի» բացվելուց հետո՝ Հայաստան ներթափանցեցին մշակութային զանազան հոսանքներ և ժամանցային *պրակտիկաներ*, հետևաբար Մշակույթի տները մասամբ դրանց զիջեցին բնակչության ժամանցը կազմակերպելու իրենց գործառույթները:

ե. Մշակույթի տները հանձնվեցին տեղական համայնքներին և փաստորեն լուծարվեցին, ինչի արդյունքում ամենամեծ կորուստը կրեց համայքը, որն, ի դեմս Մշակույթի տան, կորցրեց այն ընդհանուր սոցիալ-մշակութային տարածքը, որը համայնքի բնակչության համատեղ քննարկումների, որոշումների կայացման և խնդիրների հանրայնացման հարթակ էր[18]:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՌԾ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԿԼԱ «Կուլտուր-լուսավորական աշխատանք» ամսագիր, Երևան (1961–1988 թթ.)
ՀԱԱ Հայաստանի ազգային արխիվ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մամուլի հրապարակումներ

ԱՂԱՋԱՆՅԱՆ 1963
Աղաջանյան Վ., Կուլտուրայի տու՞ն, թե ... արհեստանոց // ԿԼԱ, 1963, №5, 27–29:

ԳԱՍՊԱՐՅԱՆ 1962
Գասպարյան Ս., Հասարակության կուլտուրական կյանքի բազմակողմանի զարգացման համար // ԿԼԱ, 1962, №4, 3–4:

18 ԱՀՌԾ 2003, 104–105:

ԳԵՒՈՐԳՅԱՆ 1962
Գևորգյան Գ., Շրջանային կուլտուրայի տունի չի օգնում // ԿԼԱ, 1962, №5, 9–10:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1962
Գրիգորյան Ա., Նոր Հաճընի կուլտուրայի տանը // ԿԼԱ, 1962, №6, 12:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1963
Գրիգորյան Բ., Գոնե ձեր հարևանների օրինակին հետևեցեք // ԿԼԱ, 1963,№6, 23–24:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1962
Կիրակոսյան Խ., Աշխատավորների կուլտուրական զարգացման համար // ԿԼԱ, 1962, №1, 13:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1963
Հայրապետյան Ն., Անտարբերությունը վերջ պետք է ունենա // ԿԼԱ, 1963, №3, 30–31:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 1962
Մելքոնյան Խ., Գեղարոտի ակումբում // ԿԼԱ, 1962, №4, 14–15:

ՍՄԲԱՏՅԱՆ 1963
Սմբատյան Մ., Նոր խմբակների ստեղծմանը խանգարում է շենքի նեղվածությունը // ԿԼԱ, 1963, №4, 24–25:

ՂԱԶԱՆՋՅԱՆ 1964
Ղազանջյան Վ.Հ., Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964:

ՔՈՉԻՆՅԱՆ 2003
Քոչինյան Ա.Ե., Փաստաթղթեր, նամակներ, հուշեր (կազմեցին՝ Է.Վ.Հովսեփյան, Ա.Հ.Հարությունյան, գլխ. խմբ. Ա.Ս.Վիրաբյան), Երևան, ՀԱԱ, 2003:

ՖՈԼՅԱՆ 1933
Ֆոլյան Պ., Ակումբային աշխատանքը գյուղում, Հայաստանի ԽՍՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ, Երևան, Պետհրատ, 1933:

Ուսումնասիրություններ

ԱՀՌԾ 2003
Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, 2003:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 1975
Մարտիրոսյան Մ.Գ., Կուլտուր-լուսավորական հիմնարկների ստեղծումն ու զարգացումը Սովետական Հայաստանի գյուղերում // Լրաբեր հասարակական գիտությունների, №12, 1975, 13–21:

ՍԱՐԳՍՅԱՆ 2015
Սարգսյան Լ., «Ձնհալը», «ազգայինը» և հայ գեղանկարչությունը (դրվագներ 1950-ական թթ. խորհրդային քննադատության էջերից) // «Արտերիա» մշակութային քննադատական ամսագիր (http://www.arteria.am/hy/1449062694), 04, 12, 2015:

ГУКАСЯН, ЮХАНАЕВ 1962
Гукасян В.М., Юханаев Н.Ф., Культурное строительство Армянской ССР, Ереван, Госстатиздат, 1962.

РАБОТЯЖЕВ 1998
Работяжев Н.В., Политическая система тоталитаризма: структура и характерные особенности // Вестник Московского университета, сер. Политические науки, № 1, Москва, 1998, 3-23.

ФИЦПАТРИК, 2008
Фицпатрик Ш., Посвседневный сталинизм, Социальная история Советской России в 30-е годы, Москва, РОССПЭН, 2008.

LUEHRMANN 2013
Luehrman S., Recycling Cultural Construction: Desecularisation in Post soviet Mari El // Religion, State & Society 33 (1), Keston Institute, 35–56.

SUNY 1993
Suny R.G., Looking Towards Ararat: Armenia in Modern History, Bloomington, Indiana Uni. Press, 1993.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Հ. Մ. Մուրադյան
Երևանի պետական համալսարան

Մշակույթի տները խորհրդային և ետխորհրդային Հայաստանում. ժառանգականությունը, գործառութային և իմաստային փոխակերպումները

Հիմնաբառեր՝ Մշակույթի տուն, Խորհրդային Միություն, մշակութային քաղաքականություն, խորհրդային արդիականացում, կուլտուրական շինարարություն, Խորհրդային Հայաստան, փոխակերպումներ, ետխորհրդային Հայաստան:

Հոդվածն անդրադառնում է Խորհրդային Հայաստանում Մշակույթի տների դերակատարությանն ու դրանց ձևավորմանը, ինչպես և իմաստաբանական ու գործառութային փոխակերպումներին ետխորհրդային Հայաստանում: Առանցքային է համարվում այն իրողությունը, որ խորհրդային գաղափարախոսության կոնկրետ նպատակների ծառայող այս հաստատությունները, ԽՍՀՄ փլուզումից հետո, որոշ բացառություններով, հիմնականում կորցրեցին իրենց նշանակությունը համայնքի կյանքում:

H. M. Muradyan
Yerevan State University

"Chambers of Culture" in Soviet and Post-Soviet Times: Semantic and Functional Transformations and Heredity

Keywords: Chamber of Culture, Soviet Union, cultural policy, Soviet modernization, cultural construction, Soviet Armenia, transformations, Post-Soviet Armenia.

The paper aims to investigate the role and functions of "Chambers of Culture" in Soviet and post-Soviet Armenia. The "Chamber of Culture" used to be a key institution for cultural activities and for the implementation of state cultural policies not only in Armenia but in all socialist countries.

In the post-Soviet period the "Chambers of Culture" underwent a deep economic and symbolic crisis, with many of them ultimately being closed down. Recently there have been signs of a re-orientation concerning the missions and the functions of the "Chambers of Culture". This paper discusses the new functions and meanings of these institutions for the communities that they are meant to serve; their role in social education of the community. The paper is based on the hypothesis that the "Chambers of Culture" no longer appeal to parts of the local communities, which are more at-

tracted to new (often commercial) forms of leisure and creative self-expression. However, in many cases the "Chambers of Culture" continue to play a pivotal role in the social and cultural life of the community.

The survey is based on the fieldwork conducted in about thirty rural communities in the region of Ararat and in the cities of Masis, Artashat, Vedi and Ararat. In addition to the fieldwork, cultural journals and newspapers published in Soviet Armenia (such as "Culture-Enlightenment", "Soviet Armenia", "Soviet Art", "Soviet Literature", etc.) have been studied.

А. М. Мурадян

Ереванский государственный университет

«Дома культуры» в советский и постсоветский период: семантические и функциональные преобразования и наследие

Ключевые слова: Дом культуры, Советский Союз, культурная политика, советская модернизация, культурное строительство, Советская Армения, трансформации, постсоветская Армения.

Статья посвящена на исследованию роли и функций «Домов культуры» в советской и постсоветской Армении. «Дом культуры» был ключевым институтом культурной деятельности и осуществления государственной культурной политики не только в Армении, но и во всех социалистических странах. В постсоветский период «Дома культуры» переживали глубокий экономический и символический кризис, многие из них в конечном итоге были закрыты. В последнее время наблюдается тенденция переориентации миссии и функций «Домов культуры». Предметом нашего рассмотрения являются новые функции и значения этих учреждений с точки зрения людей, для которых они изначально были предназначены. Статья основана на гипотезе о том, что «Дома культуры» больше не представляют интереса для людей данной местности. В современном мире их больше привлекают новые (часто коммерческие) формы досуга и творческого самовыражения. Однако во многих случаях «Дома культуры» продолжают играть ключевую роль в социальной и культурной жизни сообщества. Данная статья содержит материалы полевых исследований, проведенных примерно в тридцати сельских общинах в Араратской области и в городах Масис, Арташат, Веди и Арарат. В дополнение к полевым работам были изучены также издававшиеся в Советской Армении газеты и журналы, имеющие отношение к культуре (такие как «Культура-Просвещение», «Советская Армения», «Советское искусство», «Советская литература» и т.д.).

Աննա Նալբանդյան
ԵՊՀ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Պետությունների կողմից հաճախ է ռազմական կամ տնտեսական ուժ գործադրվում՝ խելամիտ ժամկետներում ցանկալիին հասնելու համար: Ի հակադրություն սրա՝ «փափուկ ուժի» կիրառումը շատ ավելի բարդ գործընթաց է, քանի որ դրա պաշարների մեծ մասը կառավարությունների վերահսկողությունից դուրս է, իսկ հաջողությունը կախված է դրա հասցեատեր լսարանի ընդունումից: Այս է պատճառը նաև, որ «փափուկ ուժի» միջոցով ցանկալի արդյունքին հասնելու համար երբեմն պահանջվում են տարիներ, իսկ դրա լծակները հաճախ աշխատում են անուղղակի՝ հող նախապատրաստելով քաղաքականության համար:

1990-ականներից ի վեր թուրք-վրացական հարաբերությունները քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային ասպարեզներում ասպիճանաբար զարգացում են ապրել՝ վերածվելով համագործակցության՝ էներգետիկայի, առևտրի, տնտեսության, անվտանգության, ինչպես նաև մշակույթի բնագավառներում: Վերջին ժամանակներում հետաքրքրություն է նկատվում այս հարցի հանդեպ, և արված անդրադարձները, մեծ մասամբ, վերաբերում են երկու երկրների միջև քաղաքական, ռազմական, տնտեսական համագործակցությանը: Մշակութային գործընթացների, դրանց ունեցած դերի վերաբերյալ ուսումնասիրությունները, սակայն, հատուկենտ են: Ներկա հոդվածում փորձ է արվում լրացնելու դրանք՝ սահմանելով ԽՍՀՄ փլուզումից ի վեր Վրաստանում Թուրքիայի կողմից «փափուկ ուժի» կիրառումը, դրա արտահայտման միջոցները, բաղադրիչները, գաղափարական շրջանակները:

Հիմնաբառեր՝ մշակութային քաղաքականություն, «փափուկ ուժ», թուրք-վրացական հարաբերություններ, «զրո խնդիր հարևանների հետ», արտաքին քաղաքական հարաբերություններ, գյուլենական դպրոցներ:

Մշակութային քաղաքականության սահմանումները

Յուրաքանչյուր պետության մշակութային քաղաքականությունը ենթադրում է հանրույթի զարգացում՝ ըստ սեփական պատկերացումների, շահերի և տեսլականի: Այն իրականացվում է կամ հանրույթին պարտադրելու, կամ հանրույթի անդամների վրա նպատակային ազդեցություն գործելու միջոցով: Հետևաբար մշակութային քաղաքականությունը կարելի է սահմանել որպես հիմնավոր կերպով ընտրված և հմտորեն ներարկվող մշակութային նորմերի, քարոզվող արժեքների շրջանակում՝ հանրույթի կամ դրա մի մասի զարգացումն ապահովող նպատակային, երկարաժամկետ գործունեություն[1]:

[1] Синецкий 2011, 71–73.

Սովորաբար տեսաբանները, խոսելով մշակութային քաղաքականության մասին, առավելապես շեշտը դնում են ներքին քաղաքականության իրականացման մեխանիզմների վրա, այնինչ հարկ է առանձնացնել նաև մշակութային քաղաքականության արտաքին քաղաքական կողմը, որը հիմնականում կապված է տվյալ երկրի մշակույթի՝ արտերկիր արտահանման, դրա միջոցով դրական իմիջի կերտման և ազդեցության լծակների ձեռքբերման հետ: Սա կարելի է բնութագրել իբրև «փափուկ ուժի» դրսևորում, երբ ցանկալի արդյունքը հասանելի է ավելի շատ գրավչության, քան հարկադրանքի կամ բացահայտ գումար առաջարկելու/ծախսելու միջոցով:

Որևէ պետության գործադրած «փափուկ ուժը» տվյալ երկրի մշակույթի, քաղաքական *իդեալների* և իրականացվող հաջող քաղաքականության հետևանքով առաջացած գրավչությունն է: Հետևաբար, համաձայն «փափուկ ուժի» տեսաբան Ջոսեֆ Նայի, այն մեծ մասամբ հենվում է երեք *ռեսուրսի* վրա՝ 1. սեփական մշակույթի (երբ այն այլոց համար գրավիչ է դառնում), 2. սեփական քաղաքական արժեքների (երբ դրանք բավարարում են նրանց պահանջները տանը և դրսում), 3. սեփական արտաքին քաղաքականության (երբ այն դիտվում է որպես օրինական)[2]:

Ռազմավարական խորք. «զրո խնդիր» հարևանների հետ

Թուրքիայի կողմից արտաքին քաղաքականության ոլորտում «փափուկ ուժի» կիրառման առավել նշանակալի ժամանակաշրջանի սկիզբ կարելի է համարել 2002 թվականը, երբ «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) որդեգրած նոր տեսլականի և դրա «գլխավոր ճարտարապետ» Ահմեթ Դավութօղլուի «Ռազմավարական խորք»[3] հայեցակարգի շնորհիվ սկսեցին մշակվել արտաքին քաղաքական նոր մոտեցումներ: Համաձայն Դավութօղլուի՝ պատմությունը, աշխարհագրությունը, բնակչությունը և մշակույթը ուժի հաստատուն չափորոշիչներն (Հ�չ) են, իսկ տնտեսական, ճարտարագիտական և ռազմական կարողությունները՝ *պոտենցիալ* չափորոշիչներ (Պ�չ): Երկրի ուժն, ըստ նրա, ունի հետևյալ հավասարումը՝

$$\text{Ուժ} = (\text{ՀՉ} + \text{ՊՉ}) \times (\text{ՌՄ} \times \text{ՌԾ} \times \text{ՔԿ})$$

որտեղ ՌՄ-ն Ռազմավարական մտածելակերպն է, ՌՊ-ն՝ Ռազմավարական ծրագրավորումը, իսկ ՔԿ-ն՝ Քաղաքական կամքը: Այս համատեքստում Դավութօղլուն կարևորում է մշակույթի դերը՝ այն համարելով երկրի հաստատուն ուժի չափորոշիչները պոտենցիալ ուժի չափորոշիչներին կապող ամենակարևոր տարրը[4]:

Ըստ Դավութօղլուի՝ Թուրքիան պետք է իր պատմական և քաղաքական խորքին համապատասխան *ակտիվ* քաղաքականություն սկսեր իրականաց-

2 Nye 2004, 11.

3 Համանուն գիրքը լույս է տեսել՝ Davutoğlu 2001 (մեր հոդվածում օգտվել ենք լրամշակված հրատարակությունից՝ Davutoğlu 2004a):

4 Davutoğlu 2004a, 17–23.

նել՝ հիմք ընդունելով իր պատմական և մշակութային կապերը բոլոր այն տարածաշրջանների պետությունների հետ, որոնց ինքը պատկանում է: Սրանից ելնելով է, որ ի հայտ է գալիս Թուրքիայի *գլոբալ* ռազմավարական հավակնություններում հաջողության հասնելու երկու պայման՝ ներքին կայուն քաղաքականություն և «զրո խնդիր» հարևանների հետ[5]:

Հարկ է նշել, որ «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը՝ որպես ԱԶԿ կառավարության արտաքին քաղաքականության հինգ հիմնական սկզբունքներից մեկը, առաջին անգամ Դավութօղլուն շրջանառության մեջ է դրել դեռևս 2004-ի փետրվարին թուրքական «Ռադիքալ» թերթում լույս տեսած՝ իր «Թուրքիան պետք է կենտրոնական երկիր լինի» (“Türkiye merkez ülke olmali”) վերտառությամբ հոդվածում: Այստեղ նա նշում է, որ «զրո խնդիր…» սկզբունքը սահմանվում է «Թուրքիայի շուրջբոլորը տևականորեն թշնամիներով է շրջապատված» հոգեբանությունից և սրա հետ կապված պաշտպանական *ռեֆլեքսից* հրաժարվելու և բոլոր հարևանների հետ հարաբերությունները կարգավորելու համար:

Շեշտենք, որ այս մոտեցումը հատկապես կարևոր դեր խաղաց թուրքական «փափուկ ուժի» ռազմավարության ձևավորման գործում, որի հիմնական նպատակն էր՝ քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային գործիքների միջոցով էական ազդեցություն թողնել թիրախ երկրներում: Հետաքրքիր է, որ Դավութօղլուի գնահատմամբ՝ տվյալ ռազմավարության ամենահաջողված օրինակներ են Վրաստանի և Սիրիայի հետ հարաբերությունները[6]:

Թուրք-վրացական հարաբերությունների պատմական ակնարկ

Նպատակ չունենալով զատ-զատ անդրադառնալու թուրք-վրացական համագործակցությանը էներգետիկայի, տնտեսության և առևտրի, պաշտպանության և անվտանգության ոլորտներում[7], պարզապես հակիրճ վերլուծենք երկու երկրների անցած համատեղ ուղին:

Վրաստանի խորհրդայնացումից և Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) ձևավորումից ի վեր՝ Թուրքիայի և Վրաստանի միջև երկկողմ հարաբերություններ գոյություն չունեին, քանի որ յուրաքանչյուր կապ վերահսկում էին Մոսկվայի կենտրոնական իշխանությունները, իսկ խորհրդային կարգերի փլուզումից հետո Թուրքիան, նախագահ Օզալի հայտարարած «գալիք թյուրքական դարաշրջանի» տեսլականի շրջանակում, իր ազդեցությունը փորձեց տարածել Կենտրոնական Ասիայի և Կովկասի նոր ձևավորված հանրապետություններում[8]: Հենց սա է պատճառը, որ Թուրքիան առաջիններից էր, որ ճանաչեց Վրաստանի անկախությունը 1991-ի նոյեմբերի 1-ին. դիվանագիտական հարաբերությունները, սակայն, հաստատվեցին միայն 1992-ի մայիսին:

5 Grigoriadi, 2010, 5.

6 Davutoğlu 2004b.

7 Այս մասին տես՝ Տեր-Մաթևոսյան 2016, 33–57; Ter-Matevosyan 2015, 103–125; Modebadze et al. 2014, 359–369.

8 Vindimian 2010, 2.

Որպես թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների ժամանակակից փուլի սկիզբ է ընդունված Խորհրդային Միության փլուզումը 1991-ին, թեև հետաքրքրական է, որ դեռևս 1988-ին Սարփի գյուղում երկու երկրների միջև բացվել էր առաջին սահմանակետը, որը հազարավոր վրացիների հնարավորություն տվեց աշխույժ առևտրային գործունեություն ծավալելու Թուրքիայում[9]: Արդեն 1990-ականների ընթացքում Թուրքիան և Վրաստանը էներգետիկայի, ռազմական և անվտանգության ոլորտներում կարևոր գործընկերներ էին, ինչին էապես նպաստում էին Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին համարկվելու և ռազմական ուժն արդիականացնելու ձգտումները:

1998-ի հոկտեմբերի 29-ին ստորագրվեց, իսկ 2002-ի սեպտեմբերից սկսվեցին «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթատարի կառուցման աշխատանքները: 2007-ին ստորագրվեց տասը տարի անց՝ 2017-ի հոկտեմբերի 30-ին բացված Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը կառուցելու պայմանագիրը: Ձեռք բերված այս համաձայնությունների շնորհիվ Վրաստանը դարձավ արևելք-արևմուտք *էներգետիկ* միջանցքի և Եվրոպա-Կովկաս-Կենտրոնական Ասիա տրանսպորտային հանգույցի կարևոր օղակ, իսկ Անկարան հնարավորություն ստացավ ներկայանալու որպես արևելք-արևմուտք «միջանցք»[10]:

Վրաց-թուրքական հարաբերությունները հատկապես ջերմացան Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու «ոսկեդար»-ի օրոք (վերջինս այսպես է անվանել Վրաստանի և Թուրքիայի երկկողմ հարաբերություններն իր կառավարման ժամանակ): Սաակաշվիլու ընդգծված դրական վերաբերմունքը թուրքական մշակույթի, քաղաքական համակարգի, «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքի հանդեպ՝ դրսևորվել է իր մի շարք հայտարարություններում[11]:

Վրաստանում Թուրքիայի սոցիալ-մշակութային քաղաքականությունն իրականացնողներին կարելի է բաժանել երկու՝ երբեմն իրարից անկախ, երբեմն էլ իրար փոխլրացնող բևեռների. ա) ոչ-պետական խաղորդներ (*ակտորներ*), օրինակ՝ գյուլենական, նուրջուական համայնքներ, և բ) պետական կառույցներ, օրինակ՝ ԹՀ կրոնական հարցերի բաժին (*Diyanet*), «*Յունուս Էմրե*» թուրքական մշակութային կենտրոններ:

Ոչ-պետական խաղորդներ

Խորհրդային Միության փլուզման արդյունքում անկախացած հարավկովկասյան և կենտրոնասիական թյուրքական հանրապետություններում աշխույժ գործունեություն ծավալած և ազդեցիկություն ձեռք բերած *գյուլենական* շարժումը չշրջանցեց նաև Վրաստանը[12]: Ընդ որում, դեռևս խորհրդային կարգերի փլուզման նախաշեմին՝ 1990-ի հունվարի 11-ին, *գյուլենականների* առաջին խումբը, Սարփի անցակետում հատելով թուրք-վրացական սահմանը, ժամանել

9 Modebadze et al. 2014, 360.

10 Аршакян 2015, 122–128.

11 Տեր-Մաթևոսյան 2016, 36:

12 *Գյուլենական* շարժման՝ վերոնշյալ տարածքներում գործունեության մասին մանրամասն տես Շաքարյան 2011, 102–114:

է Աջարիա և Թբիլիսի՝ «հետախուզական» այցով, իսկ մայիսին՝ 37 հոգանոց երկրորդ խումբն այցելել է կրկին Աջարիա և Թբիլիսի՝ իր հետ բերելով բազմաթիվ գրքեր, ձայնագրություններ ու նվերներ[13]: Սա փաստում է Վրաստանի հանդեպ *գյուլենականների* ունեցած հեռահար ծրագրերի մասին: 1993-ից ի վեր և մինչ վերջերս Վրաստանում գործել են *գյուլենականներին* պատկանող 7 դպրոց, 1 համալսարան և 1 մասնագիտական դպրոց: Այս կրթական հաստատությունների կառավարումն ու դասավանդումն իրականացնում են մեծ մասամբ Թուրքիայի քաղաքացիները[14]:

Առաջին հայացքից Վրաստանը *գյուլենական* դպրոցների համար պարարտ հող չի թվում՝ հաշվի առնելով Վրաց Ուղղափառ Եկեղեցու էական ազդեցությունը և մուսուլմանների համեմատաբար փոքր թվաքանակը: Բայց այստեղ, ինչպես և այլ երկրներում, *գյուլենական* դպրոցների ներկայացուցիչներն իրենց առաքելությունը մեկնաբանելիս շեշտում են, որ այն հիմնված է բացառապես կրթական սկզբունքների և ո՛չ թե կրոնի վրա: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ արդեն 2000-ականների կեսին Աջարիայում գործում էին նաև այլ «*միսիոներ*-քարոզիչներ»՝ ի դեմս *նուրջուական* շարժման ներկայացուցիչների (օրինակ՝ Մուստաֆա Սունգուրի հետևորդների, ովքեր Բաթումի արվարձաններում ունեին 6 *մեդրեսե*) և *նաքշբանդի*ների փոքր խմբի[15]:

Վերադառնալով գյուլենական դպրոցների գործունեությանը և ունեցած հաջողությանը՝ բերենք մի օրինակ: 2013-ի տվյալներով՝ Վրաստանում մասնավոր դպրոցների տարեկան վարձավճարները հասնում էին 11 585 ԱՄՆ դոլարի, մինչդեռ ամսական միջին աշխատավարձը կազմում էր 638 լարի (386 ԱՄՆ դոլար). միևնույն ժամանակ, Բաթում քաղաքից ոչ հեռու գտնվող Ռեֆահիդդին Շահինի անվան Բարեկամության դպրոցն աչքի էր ընկնում իր խելամիտ վարձավճարով (2000 ԱՄՆ դոլար տարեկան): Դպրոցն ապահովում էր անգլերենի գերազանց իմացություն և հնարավորություն ընձեռում ուսումը շարունակելու արտերկրում: Այս դպրոցն ուներ 46 վրացի և 14 թուրք ուսուցիչ, 350 վրացի և 50 թուրք աշակերտ: Վերջիններս մեծ մասամբ թուրք դիվանագետների կամ գործարարների զավակներն էին: Սովորաբար դասարանում աշակերտների քանակը հասնում էր 15-ի, որը համարյա 3 անգամ նվազ էր վրացական պետական դպրոցների դասարաններում սովորող աշակերտների քանակից, իսկ դասաժամերը կրկնակի ավելի շատ էին[16]:

Նմանատիպ կրթարանները հատկապես գրավիչ են դառնում իրենց շենքային լավ պայմաններով և ժամանակակից տեխնիկայով, տարբեր միջոցառումներին մասնակցելու, Թուրքիայի, ԱՄՆ-ի և Եվրոպայի գիտական ու կրթական հաստատություններ այցելելու, այնտեղ կրթություն ստանալու, ինչպես նաև համալսարանում սովորելիս զեղչից օգտվելու հնարավորությունն-

13 Киреев 2007, 354.

14 Տեր-Մաթևոսյան 2016, 47:

15 Иванов 2011.

16 Ի դեպ, նշենք, որ պետական դպրոցների դասարաններում աշակերտների մեծ թիվը հաճախ է դառնում ծնողների դժգոհության պատճառ [տե՛ս Corso, Vela 2013]:

րով: Թեև Բարեկամության դպրոցի տնօրեն Մեհմեթ Սալիհ Քոչը նշում է, որ այստեղ որևէ բացահայտ քարոզչություն չի իրականացվում ո՛չ հօգուտ Թուրքիայի, ո՛չ էլ՝ գյուլենական շարժման, դպրոցում չի դասավանդվում Գյուլենի ուսմունքը, և իրենք «փորձում են կրթության միջոցով խաղաղություն սերմանել», այսուհանդերձ միայն այն փաստը, որ ուսանողներն ու աշակերտները պարբերաբար առնչվում են թուրքական խորհրդանիշներին, արդեն կարելի է համարել որոշակի քարոզչություն[17]:

Ավելորդ չէ հավելել նաև, որ Բաթումի դպրոցի հավատարմագրումն աղմուկ առաջացրեց, երբ 2010-ին՝ նոր շենք տեղափոխվելիս, ընդդիմադիր Լեյբորիստական կուսակցությունը հայտարարեց, որ այն ժամանակվա Վրաստանի նախագահ Սաակաշվիլու մայրը՝ Գյուլի Ալասանիան, ով, ի դեպ, գյուլենական Միջազգային Սևծովյան համալսարանի *պրոռեկտորն* էր, նպաստել է դպրոցի հավատարմագրմանը, իսկ Սաակաշվիլին այցելել է կառույցի բացմանը[18]:

Պետական կառույցների գործունեությունը

Ինչպես վերը նշվեց, Վրաստանում թուրքական մշակութային քաղաքականության հիմնական դերակատար է պետությունը՝ ի դեմս Թուրքիայի արտգործնախարարության, Թուրքական համագործակցության ու համակարգման գործակալության (TOKA), ԹՀ կրոնական հարցերի բաժնի (Diyanet), ինչպես նաև «Յունուս Էմրե» թուրքական մշակութային կենտրոնների: 1991-ի անկախացումից հետո Վրաստանի և Թուրքիայի միջև, ի թիվս այլ ոլորտների, ստորագրվել են նաև սոցիալ-մշակութային հարցերին առնչվող տարբեր համաձայնագրեր:

1992-ի մայիսին՝ Թուրքիայի այդ ժամանակվա արտգործնախարար Հիքմեթ Չեթինի՝ Վրաստան կատարած այցից և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի և Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի միջև «Բարեկամության, համագործակցության և բարիդրացիության պայմանագիր» ստորագրվեց: Նույն թվականի հուլիսի 30-ին երկու երկրների միջև կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներին վերաբերող գործակցության ևս մեկ համաձայնություն ձեռք բերվեց:

Մշակութային հարաբերությունների սկիզբ համարվող այս շրջանում «Մշակույթի, կրթության, գիտության և տեղեկատվության ոլորտներում համագործակցության Սևծովյան համաձայնագիր»-ն էլ 1993-ի մարտի 6-ին կնքվեց Ստամբուլում: Համաձայնագրի նպատակն էր՝ կողմ հանդիսացող պետությունների (Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Ուկրաինա և Թուրքիա) միջև մշակութային, կրթական, գիտական և տեղեկատվական փոխանակման հարցերում համագործակցությունը:

17 Ter-Matevosyan 2015, 115.

18 Corso, Vela 2013.

Մինչ օրս Թուրքիայի և Վրաստանի միջև բարձրագույն կրթության ոլորտում առկա է ուսանողների փոխանակում: Վրաստանում Թուրքիայի իրականացրած մշակութային քաղաքականության հիմնաքարային կրթական ծրագրերի դրսևորում է՝ 1995-ին հիմնված Միջազգային Սևծովյան համալսարանը: Այն ստեղծվել է Թանսու Չիլլերի և Էդուարդ Շևարդնաձեի համատեղ որոշմամբ՝ Վրաստանի Ազգային կրթության նախարարության, Դուշեթի քաղաքապետարանի և թուրքական Մարս և Չաղլար կազմակերպությունների հովանավորությամբ[19]:

Այդ ուղղորդված կրթական քաղաքականության շարունակություն պետք է համարել նաև 2015-ին «*Մեպրո հոլդինգ*»-ի հովանավորությամբ ԹՀ Ազգային կրթության նախարարությանը կից 6000 մ^2 տարածք զբաղեցնող և 725 աշակերտի համար նախատեսված՝ Վրաստանում առաջին թուրքական պետական դպրոցի հիմնումը: Վերջինս, թերևս, ստեղծվել է որպես հակակշիռ վերոնշյալ գյուլենական Ռեֆահիդդին Շահինի անվան Բարեկամության դպրոցի, քանի որ 2016–2017 ուսումնաշրջանից ի վեր արդեն 100-ից ավելի աշակերտ Բաթումի Շահին դպրոցից այս նոր հիմնադրված դպրոց է տեղափոխվել[20]:

Եթե TİKA-ի ծրագրերը Վրաստանում հիմանականում միտված են տնտեսական համագործակցության, զբոսաշրջության, կրթական ոլորտներին, իսկ «Յունուս Էմրե» կենտրոնները զբաղվում են թուրքերեն լեզվի, թուրք գրականության, պատմության և մշակույթի տարածմամբ, ապա Diyanet-ի գործունեության թիրախը մեծ մասամբ երկրի մուսուլման համայնքներն են, որոնք հատկապես ակտիվ են Աջարիայում: Diyanet-ի գործառույթների մեջ է մտնում *իմամների* կրթումը, աստվածաբանների վերապատրաստումը, իսլամական գրականության տարածումը, *հաջջի* կազմակերպումը, հին մզկիթների վերականգնումն ու նորերի շինարարությունը: Հարկ է նշել, որ նոր մզկիթների կառուցման և հների վերակառուցման դեմ լուրջ պայքար է մղում Վրաց Ուղղափառ Եկեղեցին, որը հանդես է գալիս Աջարիայի մուսուլմանների վերաքրիստոնեացման, ինչպես նաև Թուրքիայի տարածքում վրացական եկեղեցիների վերակառուցման կոչերով[21]:

Նշված կառույցների ներկայությունը, ինչպես նաև թուրք բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես նախագահ Էրդողանի՝ 2016-ի հոկտեմբերին իր անունը կրող համալսարանի վերամուտի արարողության ժամանակ Սիրիայում և Մոսուլում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հայտարարությունն առ այն, որ Ռիզեն հնարավոր չէ տարանջատել Բաթումից[22], չէր կարող արձագանք չունենալ վրաց հասարակության մեջ և դժգոհությունների ալիք չբարձրացնել: Թբիլիսիում Թուրքիայի դեսպանը հետագայում ստիպված էր պարզաբանել, որ վրացիները սխալ են հասկացել Էրդողանի հայտնած միտքը՝ հիշեցնելով, որ Վրաստանի հարևանների մեջ Թուրքիան միակ երկիրն

19 Yildirim 2013.

20 Kachkachishvili 2016.

21 Ter-Matevosyan 2015, 113–114.

22 Çelikkan 2016.

է, որ սահմանային խնդիր չունի Վրաստանի հետ: «Բաթումը Վրաստան է, իսկ Ռիզեն՝ Թուրքիա»,— հավելել է դեսպան Լևենթ Գյումրյուքչյուն[23]:

Եզրափակում

Այսպիսով, Խորհրդային Միության փլուզումով Վրաստան մուտք գործած Թուրքիան, տնտեսական ու ռազմական ոլորտներում համագործակցության և ներդրումների արդյունքում ունեցած հաջողություններին զուգահեռ, սկսեց գործի դնել նաև իր արտաքին մշակութային քաղաքականության ծրագրերը՝ փորձելով կրոնական, գաղափարական և մշակութային ազդեցություն տարածել: 25 տարվա երկկողմ գործակցության ընթացքում թուրքական մշակութային քաղաքականության հիմնական թիրախը Վրաստանում կրթական համակարգն է, որի միջոցով փորձ է արվում թուրքական մշակույթն ավելի հասու դարձնել վրաց ժողովրդին՝ հատուկ շեշտ դնելով թուրքերենի, թուրք գրականության և պատմության դասավանդման վրա:

Որքան էլ Թուրքիան ջանա այս գործունեությունը հիմնավորել բարեկամությամբ, միայն այն փաստը, որ թուրքական ֆինանսավորում ստացող ուսանողներն ու աշակերտները պարբերաբար առնչվում են թուրքական խորհրդանիշներին, արդեն որոշակի քարոզչություն է պարունակում: Միանշանակ պատասխան չի կարող լինել այն հարցին՝ արդյոք այս քաղաքականությունը դրական լույսի ներքո՞ է ընկալվում վրաց հասարակության մեջ, թե՞ բացասական: Վրաստանում Թուրքիայի գործադրած բազմավեկտոր «փափուկ ուժը» և դրա ներկայիս արդյունքները հաստատում են այն դրույթը, որ «փափուկ ուժի» միջոցով ցանկալի արդյունքին հասնելու համար երբեմն պահանջվում են տարիներ, իսկ երբեմն էլ այդ տարիները չնախատեսված արդյունքի կարող են հանգեցնել:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԿ	«Արդարություն և զարգացում» կուսակցություն
ԹՀ	Թուրքիայի Հանրապետություն
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
TİKA	Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı (Թուրքական համագործակցության ու համակարգման գործակալության)

23 Kucera 2017.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԱՔԱՐՅԱՆ 2011
Շաքարյան Ա.Կ., Արարատից այն կողմ. ապակողմավորելով Թուրքիան, Երևան, «Զանգակ–97», 2011:

ՏԵՐ-ՄԱԹԵՈՍՅԱՆ 2016
Տեր-Մաթևոսյան Վ.Հ., Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում // «21-րդ դար», 2016, №1 (65), 33–57:

АРШАКЯН 2015
Аршакян Г.М., Основные направления турецко-грузинских отношений в контексте региональной политики Турции в начале XXI века // Проблемы национальной стратегии, 2015, № 6 (33), 122-143.

ИВАНОВ 2011
Иванов В., Турецко-грузинские отношения в контексте этноконфесиональной политики Турции в Аджарии и деятельности Грузинской Православной Церкви // Научное Общество Кавказоведов, 11.08.2011, http://www.kavkazoved.info/news/2011/08/11/turecko-gruzinskie-otnoshenija-v-kontekste-adzharii-i.html (last access: 24.12.2018).

КИРЕЕВ 2007
Киреев Н.Г., История Турции: XX век, Институт востоковедения РАН, Москва, «Крафт+», 2007.

СИНЕЦКИЙ 2011
Синецкий С.Б., Культурная политика XXI века: от прецедента Истории к проекту Будущего, Челябинская Государственная Академия Культуры и искусств, Челябинск, «Энциклопедия», 2011.

CORSO, VELA 2013
Corso M., Vela J., Georgia: Gülen Schools Flourishing // Eurasianet, 06.05.2013, http://www.eurasianet.org/node/66929 (last access: 24.12.2018).

ÇELİKKAN 2016
Çelikkan E., Erdoğan: Türkiye sadece Türkiye değildir [Էրդողան. Թուրքիան միայն Թուրքիա չէ] // Hürriyet, 16.10.2016, http://www.hurriyet.com.tr/erdogan-turkiye-sadece-turkiye-degildir-40250602 (last access: 24.12.2018).

DAVUTOĞLU 2001
Davutoğlu A., Stratejik derinlik: Türkiye'nin uluslararasi konumu [Ռազմավարական խորք. Թուրքիայի միջազգային դիրքը], Aksaray, İstanbul, «Küre Yayinlari», 2001.

DAVUTOĞLU 2004a
Davutoğlu A., Stratejik derinlik: Türkiye’nin uluslararasi konumu [Ռազմավարական խորք. Թուրքիայի միջազգային դիրքը], İstanbul, «Küre yayinlari», 2004.

DAVUTOĞLU 2004b
Davutoğlu A., Türkiye merkez ülke olmali [Թուրքիան պետք է կենտրոնական երկիր լինի] // Radikal, 26.02.2004, http://www.radikal.com.tr/yorum/turkiye-merkez-ulke-olmali-702116/.

GRIGORIADI 2010
Grigoriadi I.N., The Davutoğlu doctrine and Turkish foreign policy // ELIAMEP (Hellenic Foundation for European & Foreign Policy) Working Paper, 2010 (April), № 8, 1-11.

KACHKACHISHVILI 2016
Kachkachishvili D., Gürcistan'da ilk Türk devlet okulu açildi [Վրաստանում բացվեց

առաջին թուրքական պետական դպրոցը] // Anadolu ajansi, 19.09.2016, http://aa.com.tr/tr/dunya/gurcistanda-ilk-turk-devlet-okulu-acildi/648494 (last access: 24.12.2018).

KUCERA 2017
Kucera J., Georgians wary of Turkey's rising influence in Batumi // Eurasianet, 09.03.2017, http://www.eurasianet.org/node/82751.

MODEBADZE et al. 2014
Modebadze V., Sayin F.M., Yilmaz R., Georgian-Turkish relations since the breakdown of Soviet Union // Çankiri Karatekin Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi [Չանքրրրի Քարաթեքին համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ամսագիր], 2014, № 4 (1), 359-369.

NYE 2004
Nye Jr. J. S., Soft power: the means to success in world politics, New York, «Public Affairs», 2004.

TER-MATEVOSYAN 2015
Ter-Matevosyan V.H., Cooperation paradigms in the South Caucasus: Making sense of Turkish-Georgian relations // Études arméniennes contemporaines, Bibliothèque Nubar de l'UGAB, 2015, № 4 (2014), 103-125.

VINDIMIAN 2010
Vindimian M., Evolution of Turkish foreign policy towards Georgia // ISPI (Instituto per gli Studi di Politica Internazionale) Policy briefly, 2010, № 196, 1-9.

YILDIRIM 2013
Yildirim H., Türkiye-Gürcistan İlişkileri: İşbirliği Alanlari, Sorunlar ve Çözüm Önerileri (2) [Թուրքիա-Վրաստան հարաբերություններ. համագործակցության շրջանակները, խնդիրները և լուծման առաջարկությունները] // Academic perspectif, 18.01.2013, http://akademikperspektif.com/2013/01/18/gecmisten-gunumuze-turkiye-gurcistan-iliskileri-isbirligi-alanlari-sorunlar-ve-cozum-onerileri-2/.

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ա. Ն. Նալբանդյան
Երևանի պետական համալսարան

Թուրքիայի մշակութային քաղաքականությունը Վրաստանում

Հիմնաբառեր՝ մշակութային քաղաքականություն, «փափուկ ուժ», թուրք-վրացական հարաբերություններ, «զրո խնդիր» հարևանների հետ, արտաքին քաղաքական հարաբերություններ, գյուղենական դպրոցներ:

Թուրքական մշակութային ներկայությունը Վրաստանում ներկայացված է երկու բևեռներով՝ ի դեմս պետական և ոչ-պետական կառույցների: Հոդվածում մանրամասնորեն քննարկվում է նշված երկու բևեռների գործունեությունը: Թուրք-վրացական քսանհինգամյա համագործակցության ընթացքում Թուրքիայի մշակութային քաղաքականությունը տվել է իր համար ցանկալի արդյունքները՝ մուտք գործելով Վրաստանի կրթական համակարգ և շարժելով վրացիների հետաքրքրությունը թուրքական մշակույթի հանդեպ՝ թուրքերենի, թուրք գրականության և պատմության ուսումնասիրության միջոցով: Հոդվածով փորձ է արվել ուսումնասիրելու ետխորհրդային Վրաստանում Թուրքիայի սոցիալ-մշակութային գործունեությունը՝ ներկայացնելով այն որպես մշակութային քաղաքականության արտաքին բաղադրիչ: Հոդվածի տեսական հիմք են կազմում Ջոսեֆ Նայի «փափուկ ուժի» տեսությունը և Ահմեթ Դավութօղլուի առաջարկած «0 խնդիր հարևանների հետ» սկզբունքը:

A. N. Nalbandyan
Yerevan State University

Turkish Cultural Policy in Georgia

Keywords: cultural policy, "soft power", Turkish-Georgian relations, "zero problems with neighbors", foreign policy relations, Gülen schools.

This article examines the socio-cultural activities of Turkey, conducted in Georgia after the collapse of the USSR, as a foreign component of cultural policy. In our opinion, this factor contributes to the formation of a positive image of the country and the acquisition of certain levers of influence, which, in turn, can be described as a demonstration of "soft power". The theoretical basis of the article is the theory of "soft power" of Joseph Nye and the principle of Ahmet Davutoğlu "zero problems with neighbors". Turkey's cultural presence in Georgia is manifested by two, sometimes independent, sometimes complementary poles – that is, through state and non-state institutions. During the 25 years of Turkish-Georgian bilateral cooperation, Turkish cultural policy has produced a desired result in the educational system of Georgia, provoking the interest of the Georgian people in the Turkish culture through the study of the Turkish language, literature and history.

А. Н. Налбандян
Ереванский государственный университет

Культурная политика Турции в Грузии

Ключевые слова: культурная политика, «мягкая сила», турецко-грузинские отношения, «ноль проблем с соседями», внешнеполитические отношения, гюленовские школы.

В статье рассматривается проводимая в Грузии после распада СССР деятельность Турецких структур в социально-культурной сфере, являющаяся внешнеполитическим компонентом культурной политики. На наш взгляд, этот фактор способствует формированию положительного имиджа данной страны и приобретению определенных рычагов влияния, что, в свою очередь, можно охарактеризовать как проявление «мягкой силы». Теоретической основой статьи является теория «мягкой силы» Джозефа Ная и принцип Ахмета Давутоглу «ноль проблем» с соседями. Культурное присутствие Турции в Грузии проявляется двумя, иногда независимыми, иногда взаимодополняющими полюсами – то есть через государственные и негосударственные институты. За 25-летный период турецко-грузинского двустороннего сотрудничества турецкая культурная политика привела к желаемым результатам в образовательной системе Грузии, вызвав интерес грузинского народа к турецкой культуре через изучение турецкого языка, литературы и истории.

ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Արման Անդրիկյան
ՀԱԻ

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական աթոռներից է, կոչվում է նաև Պատրիարքություն Հայոց Թուրքիո: Պոլսո Հայոց պատրիարքությունը հիմնադրվել է 1461-ին, երբ Կոստանդնուպոլսի գրավումից հետո սուլթան Մեհմեթ II-ը Բուրսայից հրավիրում է տեղի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսին (1461–1478), որի աթոռանիստն էր Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցին, և որն էլ դառնում է նորաստեղծ պատրիարքության առաջնորդը: Սակայն միայն 1543-ին՝ Աստվածատուր Ա-ից սկսած է կիրառվում *Հայոց պատրիարք* տիտղոսը: Մինչև օրս Պոլսո Հայոց պատրիարքությունն ունեցել է 84 գահակալ: 1641-ից մինչ օրս Պատրիարքարանը գտնվում է Գումգափուում:

Նախքան պատրիարքության հաստատումը՝ Օսմանյան պետության սահմաններում ապրող հայ համայնքներն ընդգրկված էին երեք թեմերում՝ *Սվազի*, կենտրոնը՝ Ս. Նշան վանք, *Էնկյուրիի* (Անկարա), կենտրոնը՝ Ս. Աստվածածին կամ Կարմիր վանք, *Բուրսա* (Պրուսա)–Քյոթահյա (Կուտինա)–Գարամանի, կենտրոնը՝ Բուրսա: Վերջինիս առաջնորդն էր Հովակիմ եպիսկոպոսը: 14-րդ դարի սկզբին Կ. Պոլսում գործել են Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, լատինադավան Ս. Նիկողայոս եկեղեցու մի մասը, որը հատկացվել էր հայածես արարողությունների համար: Պոլսո պատրիարքության հիմնադրումից հետո՝ արդեն 17-րդ դարի սկզբին, նրան էին պատկանում Օսմանյան կայսրության տարածքում գոյություն ունեցող բոլոր առաքելական եկեղեցիները: 1900-ականների սկզբին պատրիարքությունն ունեցել է 1181 եկեղեցի և 132 վանք: Այսօր Պոլսո պատրիարքության իրավասության տակ են գտնվում ընդհանուր առմամբ 43 եկեղեցի, որոնցից 42-ը՝ Թուրքիայում, իսկ մեկը՝ Կրետե կղզում: Թուրքիայի 42 հայկական եկեղեցիներից 6-ը գտնվում են Ստամբուլից դուրս՝ Կեսարիայում, Դիարբեքիրում, Դերիքում, Իսքենդերունում, Քըրքքիանում և Վաքըֆլը գյուղում: Պատրիարքության ուղղակի կամ անուղղակի տնօրինության տակ են նաև բազմաթիվ այլ հաստատություններ[1]:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքներն օժտված են ընդարձակ կրոնական և աշխարհական մասնակի իրավունքներով, նրանք տնօրինել են Թուրքիայի վարչական իրավասության ներքո գտնվող հայության կրթությունն ու լուսավորությունը, տպագրության գործը, բարեգործական և մշակութային հաստատությունները, պետության և համայնքի օգտին հավաքել մասնակի հարկեր[2]: Օսմանյան կայսրության

* Նյութը գրվել է նախքան Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի մահը (08.03.2019) (Խմբ.):

1 Տես՝ *Միմավորյան Ա.*, Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները, Երևան, 2011, էջ 8–9:

2 Տես՝ նույն տեղում, էջ 20:

սահմանների ընդարձակմանն ու զորացմանը զուգահեռ՝ ընդարձակվել են նաև Պատրիարքության իրավասության աշխարհագրական սահմանները, բարձրացել է նրա դերն ու հեղինակությունը, քանի որ պետության տարածքում բնակվող հայության պաշտոնական ներկայացուցիչ է ճանաչվել Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը:

17-րդ դարի սկզբին պատրիարքության իշխանությունը տարածվել է օսմանյան տիրակալության բոլոր հայաբնակ շրջանների վրա: Սսի կաթողիկոսարանը, Աղթամարի կաթողիկոսությունը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը իրենց առաջնորդության իրավունքը զիջել են Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին: Որոշ ժամանակաշրջան փորձ է արվել ինքնիշխան դիրք գրավել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, սակայն դա չի իրագործվել, և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունն օրինաչափորեն ընդունել է Մայր Աթոռի գերագահությունը: Օսմանյան շրջանի վերջին Հայոց պատրիարքը՝ Զավեն Տեր-Եղիայանը, որը բավական աշխույժ գործունեություն է վարել հատկապես 1918-1922 թվականներին, քեմալական իշխանությունների պարտադրանքով ստիպված էր լքելու Թուրքիան 1922-ին: Դրանից հետո մինչև 1927 թ. Պոլսո Հայոց պատրիարքի գահը թափուր է մնացել, և 1923-1927 թթ. այն վարել է տեղապահ ընտրված Գևորգ եպիսկոպոս Ասլանյանը[3]:

Թուրքիայի Հանրապետությունում առաջին անգամ Հայոց պատրիարքի ընտրություններ տեղի են ունեցել 1927-ին, և պատրիարք է ընտրվել Մեսրոպ Նարոյանը (1927–1944): Նրա մահից հետո պատրիարքական գահը կրկին թափուր է մնում, և Գևորգ եպիսկոպոս Ասլանյանը երկրորդ անգամ է դառնում տեղապահ (1944–1950 թթ.): Միայն 1950-ի վերջին, երբ անց են կացվում պատրիարքի ընտրություններ, ընտրվում է Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, որն այդ ժամանակ Լատինական Ամերիկայի Հայոց հոգևոր առաջնորդն էր: 1951-ին վերադառնալով Թուրքիա՝ նա ստանձնում է պատրիարքի պարտականությունները: 1961-ին Խաչատուրյանի մահից հետո պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, որն այդ աթոռի ամենաերկարակյաց գահակալներից էր (1961–1990 թթ.): Նրա ջանքերով համայնքային կյանքում նկատվում է աշխուժություն, աշխատանքներ են տարվում գավառահայության վիճակի բարելավման համար:

1990-ին Շնորհք պատրիարքի մահից հետո Պոլսո Հայոց 83-րդ պատրիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս Քազանջյանը (1990–1998 թթ.), իսկ վերջինիս մահից հետո՝ 1998-ին, պատրիարք է ընտրվում Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը[4]:

Պատրիարքները երկար ժամանակ ընտրվել են համայնքի կողմից: Պատրիարքարանը վերահսկելու թուրքական պետության ջանքերն ավելի պարբերական դարձան 1960-ի ռազմական հեղաշրջումից հետո: 1961-ին նախարարների խորհուրդը որոշում ընդունեց, ըստ որի՝ պատրիարքի ընտրությունները պետք է անցկացվեին այն օրը և այն վայրում, որ կընտրեր Ստամբուլի նահանգապետարանը: Դրանից հետո յուրաքանչյուր կառավարություն տարբեր մեթոդներով փորձել է վերահսկել այդ ընտրությունները:

2007-ին տեղի ունեցած ողբերգական միջադեպը ճանապարհ հարթեց, որպեսզի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունն իրականացնի

3 Տես՝ *Գաբրիելյան Հ.*, Թուրքիայի ներքին քաղաքականությունը, Երևան, 2015, էջ 5–7:

4 Տես՝ *Մելքոնյան Ռ.*, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմություն, Երևան, 2010, էջ 104–105:

հայկական ընտրություններին երբևէ ամենակոպիտ միջամտությունը: Այդ տարի Ն. Ա. Տ. Մեսրոպ Ս. Պատրիարքը, որն ընտրվել էր 1998-ին, հիվանդացավ: Նրա հիշողությունն ու մտավոր ունակությունները մեծապես վնասված էին, և նա չէր կարողանում կատարել իր պարտականությունները: Մեսրոպի անաշխատունակության պայմաններում իրադրությունից դուրս գալու հարցի շուրջ պատրիարքարանում երկու հակադիր տեսակետ ծագեց: Փոխզիջում փնտրելու փոխարեն՝ երկու կողմերն իրենց հայցերը ներկայացրին ներքին գործերի նախարարություն: Թաղականների խորհուրդը, որը համարվում է պատրիարքարանի «քաղաքացիական թևը» խնդրեց տալ նոր պատրիարքի ընտրության թույլտվություն: Հոգևոր խորհուրդը՝ հոգևորականների մի խումբ, նախարարությանը խնդրեց հավանություն տալ աթոռակից պատրիարքի ընտրությանը: Նախարարության որոշումն անսպասելի էր երկու կողմերի համար էլ: Որոշման համաձայն՝ քանի որ գործող պատրիարքը դեռ ողջ էր, չէր կարող ընտրվել ո՛չ նոր պատրիարք, ո՛չ էլ՝ աթոռակից պատրիարք: Փոխարենը՝ պետք է ընտրվեր պատրիարքի տեղապահ: Այդպիսով, ստեղծվեց «պատրիարքական փոխանորդ» պաշտոնը, որն աննախադեպ էր Հայոց եկեղեցու պատմության և ավանդույթների տեսանկյունից[5]:

Գաղտնիք չէ, որ այսօր պոլսահայ համայնքը կանգնել է մի շարք լուրջ խնդիրների առջև, և պատրիարքի փաստացի բացակայության պայմաններում այդ խնդիրները լուծում չստանալով՝ էլ ավելի են սրվում: Մութաֆյան պատրիարքի անգործունյա վիճակը ստիպեց պատրիարքությանն ու համայնքին՝ ելքի ուղիներ փնտրել ստեղծված վիճակից: Հիմք ընդունելով Հայ Առաքելական եկեղեցու ներքին կանոնադրական որոշակի նորմեր՝ որոշում կայացվեց անցկացնելու աթոռակից պատրիարքի ընտրություններ: Ըստ թուրքական օրենքների՝ պատրիարքի ընտրության թույլտվություն է տալիս Ստամբուլի նահանգապետարանը, որն էլ, իր հերթին, դա ստանում է ներքին գործերի նախարարությունից: Հայոց պատրիարքության անունից դիմում էր ներկայացվել Ստամբուլի նահանգապետարան՝ խնդրանքով, որ թույլ տան աթոռակից պատրիարքի ընտրություններ անցկացնել, իսկ որոշ ժամանակ անց համայնքի անդամներից ձևավորված Նախաձեռնող խումբը, իր հերթին, դիմել էր նահանգապետարան՝ խնդրելով պատրիարք ընտրելու թույլտվություն: Այսինքն՝ հայ համայնքի կողմից երկու տարբեր դիմումներ են ներկայացվել, որոնցում կար մի կարևոր իրավական տարբերություն՝ ընտրել պատրիա՞րք, թե՞ աթոռակից պատրիարք: Այս հարցը որոշակի խնդիրներ ի հայտ բերեց համայնքում, և արդեն առկա տարաձայնություններն էլ ավելի խորացան, իսկ թուրքական իշխանություններն այս իրավական անորոշությունը պատրվակ համարելով՝ ամիսներ շարունակ անպատասխան թողեցին երկու դիմումն էլ: Սկսված գործընթացը ենթադրում էր նաև թեկնածուների առաջադրում: Ըստ Հայոց եկեղեցական ու Թուրքիայի օրենքների՝ Հայ Առաքելական եկեղեցու միայն ութ բարձրաստիճան հոգևորական իրավունք ունեին հավակնելու պատրիարքի աթոռին, որոնցից հինգը հենց սկզբից հրաժարվեցին ընտրություններին մասնակցելուց: Մնացած երեքը՝ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը և Պոլսի պատրիարքության Գերագույն հոգևոր խորհդի նախագահ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, հայտարարեցին, որ մասնակցելու են ընտրություններին[6]:

---

5 Տես՝ *Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը*, Երևան, 2009, էջ 154-155:

6 Տես՝ *Մելքոնյան Ռ.*, Պոլսո հայոց պատրիարքության ներկա վիճակը (Զեռնարկ), Երևան, 2016, էջ 8-10:

Ի սկզբանե ակնհայտ էր, որ թուրքական իշխանություններն անպայման միջամտելու են այս խնդրին և փորձելու են պատրիարքի գահին տեսնել իրեն նախընտրած թեկնածուին, որը, շատերի կարծիքով, Թուրքիայի քաղաքացի Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն էր: Սակայն քարոզարշավը հետաքրքիր ընթացք ունեցավ, և թեկնածուների այցերն ու հանդիպումները համայնքի հետ էապես փոխեցին թուրքական իշխանությունների նախատեսած սցենարը:

Գարեգին և Սեպուհ սրբազաններն այցելեցին Ստամբուլ և համայնքի հետ հետաքրքիր ու բազմամարդ հանդիպումներ ունեցան: Հատկապես տպավորիչ հանդիպումներ ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ սրբազանը. արդյունքում՝ համայնքում լուրջ ոգևորություն առաջացավ, և կարելի է ասել, որ հենց հայաստանցի թեկնածուն էլ դարձավ ընտրությունների հավանական *ֆավորիտը*[7]:

Հարկ է նկատել, որ համայնքային խնդիրները խորանում են նաև առկա լճացած պայմանների հետևանքով, և ձևավորված *ստատուս քվո*յի պահպանումը կարող է կործանարար լինել: Թուրքական իշխանություններին, իհարկե, ձեռնտու չեն գործունյա հովվապետի ընտրությունն ու հայ համայնքի առողջացումը, ուստի կանխատեսելի էր, որ նրանք ամեն ինչ անելու էին ճահճացած իրավիճակի պահպանման համար: Համայնքում աթոռակից պատրիարքի ընտրության հետ կապված սպասողական վիճակն արդեն մի քանի ամիս շարունակվում էր, և միայն հունիսի 29-ին Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը Ստամբուլի նահանգապետարանի միջոցով, ի վերջո, պատասխանեց հայ համայնքի դիմումներին, որոնցում նշվում էր, որ իշխանությունները նպատակահարմար չեն գտնում ո՛չ պատրիարքի, ո՛չ էլ աթոռակից պատրիարքի ընտրությունները, այլ թույլտվություն են տալիս պատրիարքի տեղապահ ընտրելու համար[8]: Նկատենք, որ արդեն իսկ կար պատրիարքի տեղապահ՝ ի դեմս Պոլսո աթոռի ամենատարեց հոգևորական Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի, որը հիշյալ պատասխանից հետո անմիջապես հրաժարական տվեց, և մի քանի ժամ անց պատրիարքության հոգևոր խորհուրդը հապշտապ պատրիարքի տեղապահ ընտրեց Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին: Այս ամբողջ գործընթացն ապացուցում է, որ թուրքական իշխանությունները մեծապես հետաքրքրված էին և ուղղակի միջամտեցին հարցին:

Մյուս կողմից, նրանց քայլերի տրամաբանությունը հուշում է, որ տեղապահ ընտրելու թույլտվության որոշմանը նրանք հակվել են այն բանից հետո, երբ հասկացել են, որ առկա ռեսուրսները բավարար չեն համահամայնքային ընտրություններում իրենց նախընտրելի թեկնածուի հաղթանակի համար: Այս ամենը բավական բացասական ազդեցություն կունենա Թուրքիայի հայության վրա, և կխորանա համայնքի լճացած ու անորոշ վիճակը: Այն ոգևորությունը, որ նկատվում էր համայնքում քարոզարշավի ժամանակ, անմիջապես տեղը զիջեց հուսախաբությանն ու անորոշությանը: Բացի այդ, ներհամայնքային երկպառակությունները և խմբավորումների միջև պայքարն է՛լ ավելի են սրվել: Կարելի է ասել նաև, որ Հայոց պատրիարքի ընտրությունն անպայմանորեն կապվում է հայ-թուրքական հարաբերությունների հետ, և թուրքական կողմն այն համարում է իր խաղաքարտերից մեկը, որը հարմար պահի կարող է դրվել շրջանառության մեջ:

---

7 Տես՝ *Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը*, էջ 157-158:

8 *Նույն տեղում*, էջ 159-160:

Ավելորդ չէ հիշել, որ նմանատիպ վիճակ, երբ արգելվել է ընտրել Հայոց պատրիարք, Թուրքիայում ստեղծվել էր երկու անգամ. առաջինը, երբ իշխանության եկան քեմալականներն, ու ծավալվեց քեմալական ազգայնականությունը, և երկրորդը՝ 1940-ականներին, երբ երկրում վերելք էին ապրում ազգայնամոլությունն ու պանթյուրքիզմը: Երկու դեպքում էլ համայնքում արձանագրվեցին ետընթաց, խնդիրների սրում ու երկպառակության խորացում: Հաշվի առնելով ներքին գործերի նախարարության որոշումը՝ Հոգևոր խորհուրդը 2010-ի հուլիսին ընտրեց իր ղեկավարին՝ արքեպիսկոպոս Արամ Աթեշյանին՝ որպես պատրիարքական փոխանորդ: Դեպքերի նման ընթացքը հանգեցրեց լուրջ երկպառակության և սրեց լարվածությունը հայկական համայնքի ներսում: Ներքին գործերի նախարարությանը ներկայացված երկու դիմումները միտված էին այնպիսի ընտրական գործընթացի կազմակերպմանը (նոր պատրիարքի կամ աթոռակից պատրիարքի), որ համայնքի բոլոր անդամները պետք է քվեարկեին: Փոխարենը՝ հոգևորականների փոքր մի խումբ ընտրեց պատրիարքական փոխանորդ[9]:

Հայերի համար ներքին գործերի նախարարության միջամտությունն անարդար էր և հակասող իրենց ավանդույթներին: Նրանք արձագանքեցին նախ ստորագրահավաքի կազմակերպմամբ: Մարդիկ, որոնք կարծում էին, թե պատրիարքը պետք է ընտրվի ամբողջ համայնքի կողմից, հավաքեցին 5350 ստորագրություն և 2010-ին ներկայացրին նախարարութուն՝ սակայն ապարդյուն: Ապա դատական հայց ներկայացրին վարչական դատարան՝ ձգտելով չեղյալ հայտարարել Ներքին գործերի նախարարության որոշումը: Համայնքի իրավաբանները պնդում էին, որ արքեպիսկոպոս Արամ Աթեշյանին նշանակելով որպես պատրիարքական փոխանորդ՝ նախարարությունը միջամտել է հայկական համայնքի ներքին գործերին և խախտել պետության ու եկեղեցու տարանջատման սկզբունքը: Սա է այն գործը, որ ներկայումս քննում է Թուրքիայի պետական խորհուրդը:

Ներհամայնքային երկպառակության լարվածության աստիճանը երևում է բառապաշարից, որը գործածում է «Ակօս» հայկական հեղինակավոր շաբաթաթերթը՝ Աթեշյանի մասին խոսելիս: Վերնագրերից մեկում, օրինակ, պարբերականն Աթեշյանին ընդգծված անվանում է արքեպիսկոպոս՝ ցույց տալու համար, որ չի ճանաչում նրան որպես գործող պատրիարք: Այսպիսով, ընտրված պատրիարքի ողբերգական հիվանդությունը, հետագայում հայկական համայնքի՝ փոխզիջում գտնելու հարցում ձախողումը և նրա որոշումը՝ դիմել պետության միջնորդությանը (ի հավելումն նրա, որ կառավարությունը յուրաքանչյուր իրավիճակ դիտարկում է որպես պատրիարքարանը վերահսկելու ոսկե հնարավորություն) միասին հանգեցրին սուր ճգնաժամի, որը կարող է տարիներ տևել: Ճգնաժամը վկայում է ոչ միայն պետության հետ հայկական համայնքի ունեցած բարդ հարաբերությունների, այլև թուրքական պետության՝ չնայած կառավարությունների փոփոխությանը, փոքրամասնությունների հանդեպ վարած միջամտության ու մանիպուլյացիայի անփոփոխ քաղաքականության մասին: Պետությունը դիմում է դասական «բաժանիր, որ տիրես» մարտավարությանը, որը ոտնահարում է կրոնական ազատությունն ու չի ծառայում ո՛չ հայկական համայնքին, ո՛չ թուրքական ժողովրդավարությանը[10]:

---

9 Տես՝ *Չաքրյան Հ.*, Կ.Պոլսի պատրիարքարանի ներկայիս իրավիճակը (Զեռնարկ), Երևան, 2014, էջ 8- 10:

10 Տես՝ *Սիմավորյան Ա.*, նշվ.աշխ., էջ 13-15:

2016-ին պաշտոնաթող արվեց Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը: Համապատասխան որոշումը կայացրել է Պոլսո Հայոց պատրիարքարանի հոգևոր խորհուրդը, որի նիստը նախագահել է Սահակ եպս. Մաշալյանը: Պոլսո Հայոց պատրիարքարանում հոկտեմբերի 26-ին կայացած եկեղեցական ժողովի ժամանակ Մեսրոպ Բ Մութաֆյանը համարվել է «հանգստյան կոչված պատրիարք»: Մութաֆյանը ծանր հիվանդության պատճառով արդեն մի քանի տարի է, ինչ չի կարողանում կատարել իր գործառույթները, և եկեղեցական օրենքների համաձայն՝ որոշվել է պաշտոնաթող անել նրան ու սկսել պատրիարք ընտրելու գործընթաց:

Նիստում հաշվի է առնվել, որ չկան Մութաֆյանի առողջական վիճակի բարելավման մասին լավատեսական կանխատեսումներ: Պոլսո Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արք. Աթեշյանը հայտարարել է, որ իրենք դիմելու են իշխանություններին՝ պատրիարքի ընտրությունները թույլատրելու համար: Աթեշյանն ընդգծել է, որ հայտնի չէ, թե երբ կստացվի թույլտվությունը, որի համար կարող է պահանջվել մեկ կամ երեք ամիս: Սահակ եպս. Մաշալյանն իր հերթին հայտարարել է, որ պատրիարքի ընտրությունների անցկացման թույլտվության համար դիմելու են նոյեմբերին: Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը, որը 84-րդ պատրիարք էր ընտրվել 1998-ին (ներկա դրությամբ նա Թուրքիայի Հանրապետությունում ընտրված 5-րդ պատրիարքն է), 2008-ից անբուժելի հիվանդության պատճառով անգիտակից վիճակում գտնվում է Սուրբ փրկիչ հիվանդանոցում՝ չկարողանալով կատարել իր գործառույթները: Ըստ եկեղեցական օրենքների՝ եթե պատրիարքը 8 տարի փաստացի չի պաշտոնավարում, խորհուրդն իրավունք ունի նոր պատրիարքի ընտրություն անցկացնելու:

Ներկա դրությամբ շրջանառվում է Պոլսո Հայոց պատրիարքի պաշտոնի 4 թեկնածուի անուն՝ Պոլսո Հայոց պատրիարքի ներկայիս փոխանորդ Արամ արք. Աթեշյան, Պոլսո Հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի նախագահ Սահակ եպս. Մաշալյան, Գերմանիայի հայ համայնքի հոգևոր առաջնորդ, Գարեգին արք. Բեքչյան և Լոռիի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյան[11]: Կարելի է կարծել, որ Թուրքիայի իշխանությունների համար ցանկալի տարբերակը Արամ արք. Աթեշյանն է, որը քանիցս հանդես է եկել հայերի շահերին, մեղմ ասած, չհամապատասխանող հայտարարություններով, նախաձեռնություններով, որոնցից մեկը 2016-ի հունիսի 2-ին Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումից 5 օր անց Էրդողանին նամակ հղելն էր, որում ափսոսանք էր հայտնել տվյալ բանաձևի ընդունման համար: Այդ ամենի հետևանքով բավական ցածր է նրա վարկանիշը Թուրքիայի հայ համայնքի և Հայաստանի Հանրապետությունում (Էրդողանին հղած հայտնի նամակից հետո չեղարկվել էր Աթեշյանի այցը Հայաստան՝ կապված նրա գործունեությունից առկա մեծ դժգոհությունների հետ):

Դրա համար էլ Թուրքիայի իշխանությունները կարող են ձգձգել 85-րդ պատրիարքի ընտրության գործընթացը (համապատասխան թույլտվությունը պետք է տա Թուրքիայի ՆԳՆ-ն) կամ էլ հետագայում ճնշումներ գործադրել բուն ընտրական գործընթացի վրա: Ընտրական գործընթացը ձգձգելու համար կարող են օգտագործվել Ստամբուլի հայ համայնքի որոշ շրջանակի դժգոհությունները, որոնք պահանջում են հարգել պատրիարքարանի օրենքները, ըստ որոնց՝ պատ-

[11] Տես՝ *Չաքրյան Հ.*, նշվ.աշխ., էջ 13-15:

րիարքը կառավարում է ցմահ, և նպատակահարմար չէ Մեսրոպ Բ Մութաֆյանի ողջության օրոք նոր պատրիարք ընտրել:

ՀՀ-ի և ընդհանրապես Թուրքիայի հայ համայնքի համար լավագույն տարբերակը, թերևս, Սեպուհ արք. Չուլջյանն է, որը Պոլսո Հայոց աթոռակից-պատրիարքի երեք թեկնածուներից մեկն էր 2010-ին (2009-ին պատրիարքական կրոնական խորհուրդը Թուրքիայի կառավարությունից համապատրիարքի ընտրություններ անցկացնելու թույլտվություն էր խնդրել): Այն ժամանակ հայաստանցի թեկնածուն դարձել էր աթոռակից պատրիարքի ընտրությունների հավանական *ֆավորիտը*՝ ընդգծելով, որ Պոլսո Հայոց պատրիարքարանը պետք է հոգևոր և մշակութային կամուրջ դառնա Երևանի, Անկարայի և հայկական սփյուռքի միջև՝ հատկապես կարևորելով հայերի և թուրքերի երկխոսությունը[12]: Սեպուհ արք. Չուլջյանը, շարունակելով Հրանտ Դինքի ուղին, պնդում էր, որ Հայոց պատրիարքարանը պետք է քաղաքականությունից զերծ մնա: Սակայն 2010-ի հունիսի 29-ին Թուրքիայի կառավարությունը հայտարարեց, որ նպատակահարմար չի գտնում ո՛չ պատրիարքի, ո՛չ էլ աթոռակից պատրիարքի ընտրությունները, և թույլ է տալիս ընտրել միայն պատրիարքի տեղապահ, որն էլ արդյունքում դարձավ Արամ արք. Աթեշյանը: Ըստ ամենայնի, այս անգամ էլ Սեպուհ արք. Չուլջյանը կդառնա *ֆավորիտ*:

Պատրիարքական տեղապահի առաքելությունը լինելու է մայիսի 28-ին կայանալիք պատրիարքական ընտրությունների կազմակերպումը:

Պոլսո հայոց պատրիարքի տեղապահի ընտրություններում 2017-ի մարտի 15-ին տեղապահ է ընտրվել Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեքչյանը: Տեղապահի ընտրություններին մասնակցել է 2 թեկնածու՝ ներկայիս փոխպատրիարք, Արամ արք. Աթեշյանն ու Հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեքչյանը: Պոլսո պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ, եպիսկոպոս Սահակ Մաշալյանը ևս առաջադրվել էր, սակայն վերջին պահին հանել էր իր թեկնածությունն՝ արք. Բեքչյանի օգտին: Ընտրությունից հետո նախատեսվում է տեղապահի գլխավորությամբ ստեղծել հանձնաժողով, որը կզբաղվի պատրիարքի ընտրությունների կազմակերպմամբ: Սակայն ընտրություններից անմիջապես հետո Արամ արք. Աթեշյանը հրապարակեց Ստամբուլի նահանգապետարանի նամակը, որում ասվում է, թե իրավական տեսանկյունից հնարավոր չէ ընտրական գործընթաց սկսել: Իբրև պատճառ առաջ են բերվում ներհամայնքային խռովություններն ու տարաձայնությունները, ինչպես նաև ներկա պահին արդեն իսկ ճանաչված պատրիարքական փոխանորդի առկայությունը[13]:

12 Տես՝ *Հացպանյան Ս.*, Հայությունը Թուրքիայում, Երևան, 2017, էջ 8-9:

13 Տես՝ Hraparak.am, Ստամբուլի նահանգապետարանը չեղյալ է հայտարարել պատրիարքական տեղապահի ընտրությունը, http://hraparak.am/?p=140674&l=am%2Fstambuli+nahangapetarany+chexyal+e+haytararel+patriarqakan+texap ahi+yntrutyuny, 15.03.2017:

Arman Andrikyan
Institute of Archaeology and Ethnography NAS RA,
Department of Diaspora researches,

The Current State of the Patriarchate of Constantinople

Keywords: Patriarchy, Apostolic church, Ateshyan, elections, Turkey, pan-Turkism, priest

Summing up we should say, that in the first chapter we spoke about the religious problems of Armenians in Turkey and about the policy led by Turkish government. Living in a country which government has no adequate attitude towards religious minorities, we need some effective steps to ensure their safety. Because of the lack of these steps Armenian figures in Turkey like Hrant Dink or Sevak Shahi Blkchan became victims of the policy led by Turkey. They repeatedly called for religious and political solidarity to Turkish and Armenian population living in Turkey, but as we saw the Turkish government showed its anti-Armenian policy and revenged on them. On January 19, 2007, Hrant Dink was killed, and on April 24, 2011, Sevak Shahi Blkchan serving in the Turkish army was killed for wearing cross. These two assassinations have not been disclosed yet and to my opinion they will continue until the Armenians in Turkey have power defending their interests both in political and religious platforms.

Speaking about the problems of Islamized Armenians we can say that the situation is the same. Because of the lack of Armenian churches and schools cryptic Armenians do not recognize their identity. And those who recognize their identity do not utter about it being afraid of the pressure of the Turkish government. On my last visit, communicating with the Islamized Armenians I was informed that they were afraid to be converted, as the nationalists, especially “Gray wolves” organization threatened to revenge on them. In those conditions as our church and government act in different international platforms defending the religious problems of Armenians in Syria, so they must defend the interests of Islamized Armenians in Turkey, too.

А. Г. Андрикян
Институт археологии и этнографии НАН РА,
Отдел исследований диаспоры

Современный статус Константинопольского патриархата

Ключевые слова: патриархат, апостольская церковь, Атешян, выборы, Турция, пантюркизм, священнослужитель.

Турецкое правительство проявляет неадекватное отношение к религиозным меньшинствам, что требует предпринять практические шаги по обеспечению их безопасности. В силу отсутствия последних турецкие граждане Грант Динк и Севак Шахи Блкчан стали жертвами политики, проводимой в современной Турции. Власти Турции неоднократно обращались к турецкому и армянскому населению с призывом к религиозной толерантности и политической солидарности, однако на практике турецкое правительство продемонстрировало свою антиармянскую настроенность. 19 января 2007 г. Грант Динк был убит, а 24 апреля 2011 г. ар-

мянский солдат Севак Шахи Блкчан, служивший в турецкой армии, был убит из-за ношения креста. Эти два убийства до сих пор не раскрыты, и на наш взгляд, подобное может иметь продолжение до тех пор, пока армянское население Турции не сможет защитить свои интересы как на политической, так и на религиозной платформе.

Такова же ситуация и в среде исламизированных армян. Из-за отсутствия армянских церквей и школ криптоармяне не ассоциируют себя с армянской идентичностью. Подавляющее большинство этих армян скрывает свое происхождение, боясь гонений со стороны турецкого правительства.

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
ԵՎ
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ



Նկար 1. Օդապարուկների նմուշներ Հայաստանում
ա. Արագածավան, ՀՀ, բ. Արտենի, ՀՀ

Նկար 4. Օդապարուկի աշտարակ (Քարակերտ, ՀՀ)



Նկար 1. Երկրաբանական նմուշների վերլուծության դիագրամը ըստ Fe/Rb հարաբերակցության



Նկար 2. Ծաղկասար հուշարձանի նմուշների վերլուծության դիագրամները ըստ Fe/Rb, Zr/Nb հարաբերակցությունների



Նկար 3. Ծաղկասար հուշարձանի վանակատրի օգտահանման մոդելը



Նկար 4. Ագարակ հուշարձանի նմուշների վերլուծության դիագրամները



Նկար 5. Ագարակ հուշարձանի վանակատի օգտահանման մոդելը



*Նկար 6. Թեղուտ Ագարակ հուշարձանի նմուշների վերլուծության դիագրամները ըստ Fe/Rb, Sr/Zr, Fe/Nb, (CaO*Y)/Th հարաբերակցությունների*



Նկար 7. Թեղուտ հուշարձանախմբի վանակատի օգտահանման մոդելը

Աղյուսակ 1
Լճաշենի դամբանադաշտի խցերի երկարության համեմատական պատկեր (n=247)



Աղյուսակ 2
Լճաշենի դամբանադաշտում տղամարդկանց և կանանց թաղումներում մահացության ցուցանիշը (n=196)



Աղյուսակ 3
Լճաշենի դամբանադաշտում աճյունի ուղղության ցուցանիշները



Աղյուսակ 4
Լճաշենի դամբանադաշտի թաղման կառույցների ուղղությունը. դամբաններ (n=227), դամբանաբլուրներ (n=30)



Աղյուսակ 5
Թաղման սրահների կողմնորոշման փոփոխությունը ըստ դարաշրջանի (n=671)



Աղյուսակ 6
Լճաշենի դամբանադաշտում աշխատանքային գործիքների բաշխվածությունը տղամարդկանց և կանանց թաղումներում (n=224)





Figure 1. Some seed remains from a jar-burial of Mastara–3 archaeological site (Vessel #4.1 of Burial #4, square H3).
1 – charred grain of free-threshing wheat (Triticum aestivum/durum),
2 – charred internode of common bread wheat (Triticum cf. aestivum ssp. aestivum (vulgare)),
3 – charred grain of wheat, possibly emmer (Triticum cf. dicoccum),
4–5 – charred spikelet bases of emmer (Triticum cf. dicoccum),
6 – charred grain of barley (Hordeum vulgare),
7 – seed of Adonis sp., 8 – charred capsule of Euclidium syriacum,
9 – charred mericarps of Galium cf. spurium, 10 – charred mericarps of cf. Asperula sp.,
11–16 – biomineralized erems: 11- Anchusa arvensis,
12 – Alkanna orientalis, 13–16 – Buglossoides arvensis.

Նկար 1. Ջովռնիի Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային պատի որմնամոյթի վրա փորագրված արձանագրությունը



Նկար 2. Հայաստանի պատմության թանգարանում գտնվող տապանաքարը



Նկար 3. Ջովռնիի Սուրբ Վարդան եկեղեցու հյուսիսային հատվածից հայտնաբերված տապանաքարը



Նկար 4. Եղիպատրուշ գյուղի հյուսիսային կողմում գտնվող տապանաքարերից մեկը



Նկար 5. Եղիպատրուշ գյուղի հյուսիսային կողմում գտնվող անարձանագիր տապանաքարերից մեկը



Նկար 6. Եղիպատրուշ գյուղի հյուսիսային կողմում գտնվող արձանագիր տապանաքարը

Նկար 1. Սոթք–1 հուշարձանը արևելքից

Նկար 2. Սոթք–1, պեղավայր Բ, տեսարան արևմուտքից

Նկար 3. Սոթքի քարավանապան ավերակները

C *Նկար 4. Տեսարան Սոթքի լեռնանցքից*



Նկար 1. VDSRS-ի 2015–2016 թթ. հետազոտության տարածքը և փաստագրած հնավայրերը

Նկար 2. Բնակելի հատվածներ Արփայում (լուսանկարները՝ VDSRS-ի)



Նկար 3. Անջնարակ խեցեղեն 12–15-րդ դդ.,
VDSRS-ի 2015–2016 թթ. հետազոտած հնավայրերից (լուսանկարները՝ VDSRS-ի)



Նկար 4. Ջնարակած խեցեղեն՝ 12–15-րդ դդ.,
VDSRS-ի 2015–2016 թթ. հետազոտած հնավայրերից (լուսանկարները՝ VDSRS-ի)



1. Բազալտե սանդ՝ սանդիտրոնով, 2. Բազալտե սանդ,
3. Բազալտե սանդ՝ սանդիտրոնով և դեկորատիվ մշակմամբ,
4. Տուֆե սանդ՝ կրկնակի օգտագործմամբ (եկեղեցու քար)



5. Տուֆե դինգ, 6. Տուֆե դինգ, 7. Տուֆե օվալաձև հավանգ,
8. Տուֆե հավանգ՝ օծանելիքի համար, 9. Բազալտե մեծ գաոռապան



10. Բազալտե երկանքի վերին աղացքար՝ լիսեռի անցքով, 11. Բազալտե երկանքի ստորին աղացքար՝ տապարակի սոնու համար նախատեսված անցքով, 12. Բազալտե երկանքի վերին կոնաձև աղացքարի մնացորդ, 13. Բազալտե երկանքի վերին աղացքարի բեկոր՝ կողային մակերեսին լիսեռի համար նախատեսված անցքով, 14. Տուֆե երկանքի ստորին աղացքար, 15. Տուֆե՝ ռոռացիկ մակերեսով կոտրված իցանաքար, 16. Տուֆե՝ կենտրոնում միջանցիկ ելուստով իցանաքար, 17. Տուֆե սնկակերպ փոքր իցան



18. Բազալտե ծեծիչ, 19. Տուֆե կոկիչ, 20. Ջուլհակի դազգահի տուֆե կախիկ 21. Տուֆե մանածագործական իր, 22. Տուֆե փքելք, 23. Տուֆե իր, 24. Կշռաքար

Նկար 1. Հայ կինը բուրդ գզելիս սանդերքի և օրօրոցի մօտ
[Vahramian Herman (ed), Ermakov, Armenia, 1910, Casa Editrice Armena, 1982, p. 12]



Նկար 2. Մարաշցի մայրը, որ ճախարակ է մանում՝ իր կողքն ունենալով իր մանկիկի օրօրոցը [Գալուստեան Գրիգոր, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, հատոր Բ., Նիւ Եորք, 1988]:

Նկար 1. «Կենտ» սերիայից, 1974–1977 թթ.

Նկար 2. «Լվացք: Լոգանքի օր զոնայում», 1974–1977 թթ.

Նկար 3. «Ճապոնական կայսրի առագաստը», 1976թ.

Նկար 4. «Ինքնաշեն խաղաքարտեր», 1982թ.



Նկար 5. «Ես և իմ կաթողիկոսը», 1974–1977 թթ.

Նկար 6. «Գողը երբեք լվացարար չի դառնա», 1978 թ.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աղայան Սոսե Հայկազի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի ճարտարապետ-հետազոտող
soseh.aghaian@gmail.com

Բաբաջանյան Աստղիկ Ալեքսանդրի
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
babajanyanastghik@yahoo.com

Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, Վաղ հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ
arsenbobokhyan@yahoo.com

Գրիգորյան Ավետիս Լորիսի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
grigoryan.avetis.9@gmail.com

Դալալյան Տորք Սամվելի
բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչի պաշտոնակատար
torqdal@yahoo.com

Խաչատուրեան Նայիրի Յարութիւնի
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի Գիտացուցադրական բաժնի վարիչ
n.khatchadourian@gmail.com

Հարությունյան Տաթևիկ Էդվարդի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի ավագ լաբորանտ
tatevharutyunyan@yahoo.com

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության խմբի ավագ գիտաշխատող
roman.hovsepyan@iae.am

Մարտիրոսյան Արսեն Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի ավագ լաբորանտ
arsen-martirosyan-1989@mail.ru

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության
բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Միքայելյան Անահիտ Գագիկի
Սերգեյ Փարաջանովի թանգարանի գիտաշխատող
anahitam@mail.ru

Մուրադյան Հայկուհի Մանվելի
Երևանի պետական համալսարանի Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ
Haykuhi.muradyan@ysu.am

Նալբանդյան Աննա Նորայրի
Երևանի պետական համալսարանի Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ
nalbandyananna@yahoo.com

Շախմուրադյան Մարիամ Սամվելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի ավագ լաբորանտ, ասպիրանտ
mariam.shakhmuradyan@gmail.com

Ջուհարյան Ալեքսան Կարենի
երկրաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի գիտաշխատող
lyosh777@gmail.com

Վասիլևա Ելենա Եվգենիի
Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ
vasilieva.elena.ivanovo@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հայցորդ
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի Հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ
nvardv@yahoo.com

Ֆրանկլին Քեթրին Ջեյն
մարդաբանության թեկնածու, Պատմության, անտիկ ուսումնասիրությունների և հնագիտության ֆակուլտետ, Բիրբեքի համալսարան, Լոնդոն
(Department of History, Classics and Archaeology, Birkbeck University of London)
kathryn.j.franklin@gmail.com

Անդրիկյան Արման Գևորգի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի լաբորանտ
armanandrikian@gmail.com,

CONTENTS

PREHISTORICAL SOCIETIES

A. A. Bobokhyan
Vishap Stelae according to Archival Materials of Atrpet 8

M. S. Shakhmuradyan
Structure and Forms of 'Desert Kites' 21

A. K. Juharyan
Principles of Using Obsidian on the Territory of the Republic of Armenia
in the Bronze Age according to the Data of pXRF Analysis 36

T. E. Harutyunyan
Chronology and Typology of the Newly Discovered Pins of the Karashamb Site 47

B. V. Vardanyan
Issues of Sociodemographic Differentiation for the Late Bronze Age in the Territory
of Kura-Arax Mesopotamia according to the Lchashen Cemetery (16–13th cc. BC) 77

Roman Hovsepyan
Plant Remains From Classical Period Jar-Burials
in the Mastara–3 Archaeological Site (Republic of Armenia) 79

MIDDLE AGES

T. S. Dalalyan
Some Notes on Conceptual Thoughts Pertaining
to the Musical Instruments in the 13th Century 92

D. H. Mirijanyan, S. H. Aghayan
Some Observations about the Gntouni Princely House's Domains
according to the Gravestone Inscriptions and Historiographic Sources 106

A. L. Grigoryan
Sotk section of the Dvin-Partav Trade Route 117

Astghik Babajanyan, Kathryn Franklin
Medieval cultural landscape in Vayots Dzor in the context of the Silk Road 125

A. A. Martirosyan
On the Economic Component of Household Stone Production Objects
Found from the Dashtadem Fortress 137

E. E. Vasileva
Archaeological Study of Churchyards and Monastic Necropolises in Russia Today 148

TRADITIONAL RITUAL AND FOLKLORE

N. Kh. Vardanyan
Composition and Functionality of Wedding Joke Song
"Mother of Groom, Come out" in Ceremony 160

N. H. Khatchadourian
Interaction and Interpenetration of Different Music Folklore Genres
in Armenian Folk Lullabies 173

SOVIET AND POST-SOVIET PERIODS' SOCIAL ANTHROPOLOGY AND CULTURAL STUDIES

A. G. Mikayelyan
Ethnography of Prison Based on Parajanov's Works 186

H. M. Muradyan
«Houses of culture» in Soviet and Post-Soviet Times:
Semantic and Functional Transformations and Heredity 194

A. N. Nalbandyan
Turkish Cultural Policy in Georgia 204

DIASPORA ISSUES

A. G. Andrikyan
The Current State of K. Pols Patriarchy 215

Information about authors 224

СОДЕРЖАНИЕ

ПЕРВОБЫТНЫЕ ОБЩЕСТВА

А. А. Бобохян
Вишапоидные стелы согласно архивным материалам Атрпета 8

М. С. Шахмурадян
Структура и формы «пустынных змей» 21

А. К. Джугарян
Принципы утилизации обсидиана в эпоху бронзы
по данным pXRF анализа образцов с территории РА 36

Т. Э. Арутюнян
Хронология и типология новонайденных карашамбских булавок 47

Б. В. Варданян
Вопросы палеодемографических исследований
в эпоху поздней бронзы Куро-араксского междуречья
по материалам лчашенского могильника (16–13 вв. до н. э.) 65

Р. А. Овсепян
Растительные остатки из карасных захоронений античного периода
археологического памятника Мастара–3 (Республика Армения) 79

СРЕДНЕВЕКОВЬЕ

Т. С. Далалян
Некоторые замечания к мировозренческому восприятию
музыкальных инструментов в 13-ом веке 92

Д. Гр. Мириджанян, *С. А. Агаян*
Некоторые замечания о владениях княжеского рода Гнтуни согласно
надгробным надписям и историографическим источникам 106

А. Л. Григорян
Соткский участок торгового пути Двин-Партав 117

Астхик Бабаджанян, Кэтрин Франклин
Средневековый культурный ландшафт в Вайоц Дзоре
в контексте Шелкового пути 125

А. А. Мартиросян
Об экономическом компоненте бытовых каменных производственных
предметов найденных из раскопок крепости Даштадем 137

Е. Е. Васильева
Археологическое изучение городских и монастырских некрополей
в России сегодня 148

ТРАДИЦИОННЫЙ РИТУАЛ И ФОЛЬКЛОР

Н. Х. Варданян
Композиция и функциональность в ритуале шутливой свадебной песни
«Мать жениха, выходи» 160

Н. А. Хачатурян
Взаимодействие и интерпенетрация разных музыкальных
фольклорных жанров в армянских народных колыбельных 173

СОЦИАЛЬНАЯ АНТРОПОЛОГИЯ И КУЛЬТУРОЛОГИЯ СОВЕТСКОГО И ПОСТСОВЕТСКОГО ПЕРИОДОВ

А. Г. Микаелян
Тюремная этнография согласно произведениям Параджанова 186

А. М. Мурадян
«Дома культуры» в советский и постсоветский период:
семантические и функциональные преобразования и наследие 194

А. Н. Налбандян
Культурная политика Турции в Грузии 204

ДИАСПОРАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ

А. Г. Андрикян
Современный статус Константинопольского патриархата 215

Сведения об авторах 224

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3

Ձևավորումը և էջադրումը՝
Արթուր Հարությունյանի

Տպագրված է «Քոփի Պրինտ» ՍՊԸ տպարանում
Տպաքանակը՝ 200 օրինակ

ISBN 978-9939-9178-9-4